

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽՊԱՏՐԱՍՏԱՆ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ



ԱՐԵՎՄՏԱԿԱՅՈՒԹՅԱՆ  
**ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹՅԱՆ**  
**ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

3(47.925)  
Կ-86

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՄԱՆ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

**ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ  
ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

(գիտագործնական միջազգային գիտաժողով)  
Կիպրոս-Նիկոսիա  
18-19 ապրիլի 2008թ.

**ԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

ԵՐԵՎԱՆ-2009

**INTERNATIONAL ORGANIZING COMMITTEE FOR THE PREPARATION  
OF THE WESTERN ARMENIAN NATIONAL CONGRESS**

**THE PROBLEMS  
OF WESTERN ARMENIAN'S CLAIMS**

**COLLECTION OF CONFERENCE PAPERS**

YEREVAN - 2009


**МЕЖДУНАРОДНЫЙ ОРГАНИЗАЦИОННЫЙ КОМИТЕТ  
ПО ПОДГОТОВКЕ НАЦИОНАЛЬНОГО СЪЕЗДА ЗАПАДНЫХ АРМЯН**

**ОСНОВОПОЛАГАЮЩИЕ  
ПРАВОВЫЕ ТРЕБОВАНИЯ  
ЗАПАДНОГО АРМЯНСТВА**

**СБОРНИК НАУЧНЫХ ДОКЛАДОВ**

ЕРЕВАН – 2009

4304



Ա 863

«Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները»  
գիտական զեկուցումների ժողովածու:

Գիտ. խմբ. Արտաշես Շահնազարյան, Հարություն Մարության,  
կազմողներ Անդրանիկ Արշակյան, Վլադիմիր Վարդանյան:

- Եր.: Արևմտահայերի ազգային համագումարի  
նախապատրաստման միջազգային կազմակերպչական կոմիտե,  
2009. - 296 էջ + 4 էջ ներդիր:

Ժողովածուն ընդգրկում է 2008թ. ապրիլի 18-19-ին  
Նիկոսիայում (Կիպրոս) Արևմտահայերի ազգային  
համագումարի նախապատրաստման միջազգային  
կազմակերպչական կոմիտեի կողմից կազմակերպված  
«Արևմտահայության պահանջատիրության  
հիմնախնդիրները» գիտագործնական միջազգային  
գիտաժողովի զեկուցումները:

Ժողովածուն կարող է օգտակար լինել նրանց համար, ովքեր  
հետաքրքրվում են Հայկական հարցի ներկա վիճակով:

ԳՄԴ 63.3 (27)

Ա 863


«Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները» գիտական զեկուցումների ժողովածու:  
Գիտ. խմբ. Արտաշես Շահնազարյան, Հարություն Մարության, կազմողներ Անդրանիկ Արշակյան, Վլադիմիր Վարդանյան:  
- Եր.: Արևմտահայերի ազգային համագումարի նախապատրաստման միջազգային կազմակերպչական կոմիտե, 2009. - 296 էջ + 4 էջ ներդիր:

Ժողովածուն ընդգրկում է 2008թ. ապրիլի 18-19-ին Նիկոսիայում (Կիպրոս) Արևմտահայերի ազգային համագումարի նախապատրաստման միջազգային կազմակերպչական կոմիտեի կողմից կազմակերպված «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները» գիտագործնական միջազգային գիտաժողովի զեկուցումները:  
Ժողովածուն կարող է օգտակար լինել նրանց համար, ովքեր հետաքրքրվում են Հայկական հարցի ներկա վիճակով:

ԳՄԴ 63.3 (23)



Անուշավան  
ԴԱՆԻԵԼՅԱՆ



Կարեն  
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

## ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

ՀԱՅՈՑ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ  
ԿԱՐՈՂ Է ԻՐԱԿԱՆ ԼԻՆԵԼ,  
ԵՐԲ ՁԵՎԱՎՈՐՎԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ

Միջազգային կյանքում ինքնուրույն  
հայկական գործոնի ձևավորման  
ճանապարհին

**Ի**ր պատմության (հատկապես վերջին 150 ճակատագրական տարիների) ընթացքում հայերի պարտությունների և կորուստների գլխավոր պատճառներից մեկն ազգի ամբողջական ներուժի (հավաքական միտք, կամք, ուժ) գործադրմամբ, ազգովի կշռադատված ու պա-

տասխանատու որոշումներ ընդունելու և միասնաբար համաձայնեցված գործողությունների կատարման մեխանիզմների բացակայությունն է (տես «Կարող էին արդյոք հայերը խուսափել նոր պարտություններից և կորուստներից», «Հայաստանի Հանրապետություն, 20 փետրվարի, 2007թ.):

Դրա պատճառով հայերը.

- Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ չկարողացան խուսափել վտանգներից, մեծամասշտաբ աղետներից, ուրոնց, իբր թե, «անխուսափելիությունը» մշտապես և մեթոդապես արմատավորվում էր ազգային գիտակցության մեջ՝ հանուն ինքնարդարացման և ազգային-ազատագրական պայքարի ուղու վերագնահատման հրաժարման:

- Չկարողացան կենսագործել Սևրի պայմանագրի որոշումները: Համաշխարհային հանրությունը հայերին դե-յուրե տրամադրեց դեպի ծով ելք ունեցող այնպիսի տարածք, որը բավարար էր կենսունակ պետություն ստեղծելու համար, սակայն ուժերը չբավարարեցին փաստացի (դե-ֆակտո) պահպանելու և զարգացնելու այդ պետությունը: Հայկական պետականության վերականգնման գործում, ըստ էության, Սևրի պայմանագիրն ավելի վճռորոշ էր, քան հրեական պետության ստեղծման մասին ՄԱԿ-ի գլխավոր զազաթաժողովի որոշումը: Հրեաները նախապես պատրաստվել էին հետ մղելու թշնամու հարձակումները, պաշտպանելու իրենց ազատությունն ու ապագան: Իսկ այժմ մենք ունենք, ինչ որ ունենք, նրանք ունեն այն, ինչ որ ունեն:

- Չկարողացան կասեցնել խորհրդա-քենալական ազրեսիան և կանխել Հայաստանի առաջին Հանրապետության բռնի խորհրդայնացումն ու մասնատումը՝ կորցնելով ոչ միայն տարածքներ, այլև՝ անկախություն և ազատություն:

- Պատրաստ չէին «վերակառուցմանը», ԽՍՀՄ փլուզմանը, սպառնացող վտանգներին, և միայն հրաշքը (ԱԴՊԿ (ԴԿԿՊ) չիա-

**ջողված խռովություն) հայերին փրկեց ավելի մեծ աղետներից, քան հայերի կոտորածներն ու անդառնալի կորուստներն Ադրբեջանում:**

Հայոց ազգային շահերի պաշտպանության մտածելակերպը և գործելակերպը խորհրդային չարիքի կայսրության պայմաններում, առավելապես նրա հոգեվարքի շրջանում, կարող էին ավելի պատասխանատու և հեռանկարային լինել, եթե գիտակցվեին այն սխալները, որոնք թույլ էին տրվել հատկապես Օսմանյան կայսրությունում՝ սկսած XIXդ. 60-ական թվականներից:

Իսկ հիմա պատրաստ են արդյոք հայերը (համաշխարհային հայությունը) պահպանելու և զարգացնելու այն, ինչ ունենք այսօր՝ փաստացի մասնակիորեն ազատագրված հայկական տարածքները դարձնելու դե-յուրե, պահպանելու և զարգացնելու պետականությունը, դիմադրելու թշնամական ուժերին և ժամանակի մարտահրավերներին:

Կարելի է համարել, որ Հայաստանի Հանրապետությունում և ԼՂՀ-ում հայերը կազմակերպված են, և միայնակ, իրենց կարողության չափով, առանց համաշխարհային հայության էական մասնակցության, նոր, ավելի բարենպաստ պայմաններում, դնում են հայկական պետականության հիմքերը: Պատմական հայրենիքից դուրս՝ սփյուռքում, հայերն ազգի մեծ մասն են կազմում և՛ քանակապես (երկու երրորդը), և՛ էապես (շատ առումներով): Սփյուռքը Հայաստանի հուսալի և արդյունավետ գործառնության հիմնական ռեսուրսն է, որն ի զորու է ապահովելու նրա անվտանգ և հեռանկարային զարգացումը: Սակայն սփյուռքը կազմակերպված չէ այնպես, որ համապատասխանի իր պատմական առաքելությանը, համայն հայության նպատակներին և խնդիրներին: Այդ իսկ պատճառով, հայկական պետականության կայացման և զարգացման գործում նշանակալի չեն սփյուռքի ներդրումը և մասնակցությունը: Այս իրողությունն աններելի է և

վտանգավոր, եթե նկատի առնենք Հայաստանի Հանրապետության իրական, սահմանափակ կարողությունները, հայկական պետության, ընդհանրապես ամբողջ ազգի առջև ծառայած սպառնալիքներն ու մարտահրավերները (ռազմական, տնտեսական և այլն) և գլոբալացման ու մրցակցության պայմաններում ազգի ուժացման և ազգային ինքնագիտակցության թուլացման վտանգը:

Հայրենիքում ապրող հարազատներին ու մերձավորներին անհատական օգնությունը և առանձին մասնավոր ներդրումները տարերային բնույթ են կրում, թեպետ և դրանց ծավալները կազմում են հարյուր միլիոնավոր դոլարներ: Այդուհանդերձ, դրանք այն ներդրումներն ու օգնությունը չեն, որոնք կարող են որոշիչ նշանակություն ունենալ պատմական հայրենիքի և ամբողջ ազգի ճակատագրի համար:

Սփյուռքի կազմակերպվածության և արդյունավետության առկա անբավարար մակարդակը պայմանավորված է հայկական համայնքներում գոյություն ունեցող ձախողումներով ու նահանջներով, ինչպես նաև «Հայաստան համահայկական հիմնադրամի» տարեկան ընդամենը մի քանի տասնյակ միլիոն դոլարի հասնող կարողությունը, մինչդեռ ազգի հնարավորություններն ու կարիքները բազմամիլիարդ են:

Ազգային խնդիրներին համարժեք՝ սփյուռքի կազմակերպվածության, ինչպես նաև պատմական հայրենիքի հետ փոխհամագործակցության համապատասխան մեխանիզմների բացակայությունը բացասաբար է անդրադառնում նաև լոբբիստական, տեղեկատվական և այլ ոլորտների վրա:

Համահայկական կառույցների կազմակերպման փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առավել հաջողված եղել են այն դեպքերը, երբ կազմակերպության հիմնական սկզբունքը եղել է ոչ թե ամբիցիոզ առաջնորդի կողմից ղեկավարվող նեղ կուսակցական, նեղ դասակարգային-խմբակային շահը, այլ երբ

հայերը ղեկավարվել են համազգային նպատակներով ու խնդիրներով և երբ կիրառվել են ժողովրդավարական, կազմակերպական հանընդհանուր ընդունված մեթոդներ: Նորագույն պատմության շրջանում նման հաջողված օրինակ է մինչխորհրդային Նոր Նախիջևանի հայերի ինքնակազմակերպումը, երբ մարզը հասավ զարգացման (նաև ազգային-մշակութային) օրինակելի աստիճանի (տես «Статут Нахичеванской н-д Армянской общины», 1918թ.), ինչպես նաև 1917թ. սեպտեմբեր-հոկտեմբերին Թիֆլիսում կայացած արևելահայերի համագումարի կազմակերպումը, երբ Ռուսաստանի բոլոր հայկական համայնքներից թվով 228 պատգամավորներ ընտրեցին արևելահայերի լիազոր ներկայացուցչական մարմիններ՝ Ազգային ժողով ու Ազգային խորհուրդ, որոնք հետագայում դարձան Հայաստանի առաջին Հանրապետության իշխանական կառույցների հիմքը: Նման հաջող օրինակ են 1917, 1919թթ. Երևանում գումարված Արևմտահայերի առաջին ու երկրորդ համագումարները և 1919-1920թթ. Փարիզում գումարված Արևմտահայերի Ազգային համագումարը, որոնք մեծապես նպաստեցին Սևրի պայմանագրի ընդունմանը:

Խորհրդա-քենալակական ագրեսիայից Հայաստանի Հանրապետության պարտությունը, մասնատումը և մնացած փոքր մասի բռնի խորհրդայնացումն էին այն հիմնական պատճառները, որ Սևրի պայմանագիրը կյանքի չկոչվեց, չլուծված Հայկական հարցը (թե՛ Արևմտյան Հայաստանի, թե՛ Արևելյան Հայաստանի պարագայում) տասնամյակներ շարունակ մոռացության մատնվեց, լռություն տիրեց հայերի ցեղասպանության դատապարտման, բարոյական, նյութական և տարածքային վնասների փոխհատուցման հարցերի շուրջ:

1917թ. հոկտեմբերյան հեղաշրջումից հետո սկսվեց սառը պատերազմը: Խորհրդայնացված Ռուսաստանը դուրս եկավ Անտանտի կազմից՝ հրաժարվելով Փարիզի Խաղաղության կոնֆերանսում

մասնակցել աշխարհի վերափոխման գործընթացին, իսկ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո անցավ ռուսական պետականության թշնամիների՝ Գերմանիայի և Թուրքիայի կողմը՝ 1918թ. կնքելով Բրեստ-Լիտովսկյան դավաճանական դաշնագիրը, 1921թ. քեմալական Թուրքիայի հետ բարեկամության ու եղբայրության դաշնագիրը: Եվ այդպիսով տասնամյակներ շարունակ Հայկական հարցի (բոլոր առումներով) լուծմանը խոչընդոտում էր երկու թշնամական ճամբարների հակամարտությունը:

Այս պայմաններում, հետագայում ևս փորձեր արվեցին (Գառնուզյան, Ջիլավյան, Աբրահամյան) համասփյուռքյան կազմակերպություններ ստեղծելու ուղղությամբ, սակայն վերը նշված պատճառների հետևանքով դրանք հաջողություն չունեցան:

Քանի որ սփյուռքահայերի ճնշող մեծամասնությունը ցեղասպանությունից փրկված արևմտահայերի ժառանգներն են, սփյուռքը կազմակերպելու լավագույն միջոց է արևմտահայերի ժառանգների ներկայացուցիչների նոր համագումարի հրավիրումը լիազոր ներկայացուցչական մարմիններ՝ Արևմտահայերի Ազգային ժողով և Ազգային խորհուրդ (համապատասխան հանձնախմբերով) հիմնելու համար:

Երկու տարի առաջ ստեղծված և Փարիզում գրանցված Արևմտահայերի ժառանգների ներկայացուցիչների համագումարի նախապատրաստման և անցկացման Միջազգային կազմակերպչական կոմիտեի առաջարկներն ու գործունեության ծրագրերը հիմնված են այն փաստի վրա, որ սփյուռքը, վերջին հաշով, Օսմանյան կայսրությունում հայության հանդեպ գործված ջարդերի և բռնությունների հետևանք է, ինչի կիզակետը դարձան Մեծ եղեռնը, Արևմտյան Հայաստանի հայ բնակչության բնաջնջումը և տեղահանությունը, բուն հայկական հողերի մեծագույն մասի կորուստը:

Ցայսօր Հայկական հարցի լուծումն արևմտահայության առու-

մով սխալմամբ հանգեցվում է միայն համաշխարհային հանրության կողմից ցեղասպանության փաստի ճանաչմանը: Մինչդեռ, խոսքը պետք է հասցված վնասի փոխհատուցման վերաբերյալ Թուրքիային պահանջներ ներկայացնելու հնարավորության մասին լինի: Դրանք կարող են ներկայացվել միայն արևմտահայերի ժառանգների լիազոր ներկայացուցչական մարմինների կողմից, այն ժառանգների, որոնք ոչ լրիվ տվյալներով՝ կազմում են մոտ յոթ միլիոն: Նրանք սփռված են աշխարհով մեկ, այդ թվում և Հայաստանի Հանրապետությունում:

Չնայած ՀՀ իշխանությունների, Հայ դատի հանձնախմբերի, Ամերիկայի Հայկական Համագումարի, տարբեր երկրների և կազմակերպությունների կողմից ցեղասպանության փաստի ճանաչմանն ուղղված գնահատելի ջանքերին՝ Արևմտահայերի ժառանգների լիազոր ներկայացուցչական մարմինների բացակայության պայմաններում նշված բոլոր ձգտումներն ու գործողությունները, այնուամենայնիվ, մնում են թերի, ապակողմնորոշող և անհեռանկարային: Այդպիսով անհնար է միջազգային իրավունքի չափանիշներով պահանջատիրությունը ներկայացնել ամբողջ ծավալով և շոշափելի հաջողությունների հասնել հանցագործության դատապարտման և հասցված ամբողջ վնասի հատուցման գործում:

Արևմտահայերի ժառանգների լիազոր ներկայացուցչական մարմինները ներկա միջազգային իրավունքի հիման վրա հնարավորություն կունենան գիտականորեն ուսումնասիրելու արևմտահայերի ժառանգների իրական իրավունքները: Այդ կերպ նրանք կկարողանան հասնել իրենց լիազորությունների և ներկայացուցչականության ճանաչման, ինչպես Հայության, այնպես էլ՝ համաշխարհային հանրության կողմից: Նրանք կարող են պատշաճ ձևակերպված, իրատեսական պահանջներ ներկայացնել, բանակցել թուրքական իշխանությունների և միջազգային կազմակերպությունների հետ:

Կազմկոմիտեն համագումարի նախապատրաստական աշխատանքների հետ միաժամանակ աջակցում է հայկական համայնքներում «Արևմտահայերի հայրենակցություն» հասարակական կազմակերպությունների ստեղծմանը, որոնք կհամախմբեն գոյություն ունեցող, սակայն անջատ-անջատ գործող (սասունցիների, զեյթունցիների և այլն) հայրենակցական միությունները: «Արևմտահայերի հայրենակցություն» կազմակերպություններ գրանցված են Մոսկվայում, Երևանում: Նախատեսվում է նման կառույցներ հիմնել հայկական բոլոր խոշոր կենտրոններում:

Հայրենակցական միությունները կկազմեն Արևմտահայերի ներկայացուցչական մարմինների՝ Արևմտահայերի Ազգային ժողովի ու Ազգային խորհրդի և Փարիզում (Սևրում) գտնվող գլխավոր կենտրոնատեղիի հիմքը: Դրանք հայկական կենտրոններում, ի դեմս այդ հայրենակցական միությունների տեղերում, կունենան իրենց բաժանմունքներն ու ներկայացուցչությունները:

Նոր չափանիշներով համայնքը վերակազմավորելու շնորհիվ համայնքի անդամների վճարումներից (ազգային տուրք) գոյացած բյուջեով հայկական սփյուռքն ի գորու կլինի կատարելու իր պատմական առաքելությունը ոչ միայն համայնքների ազգային-մշակութային լիարժեք կյանքի զարգացման գործում, այլև զբաղվելու արդյունավետ լոբբիստական գործունեությամբ, մասնակցելու համահայկական ծրագրերի մշակմանն ու իրագործմանը: Այս բոլորը միասնաբար պետք է աջակցեն միջազգային կյանքում հզոր ինքնուրույն հայկական գործունի ձևավորմանը, որի շնորհիվ ազգն ինքը կտնօրինի իր ճակատագիրը:

\*\*\*

Վերոբերյալ, ինչպես նաև բազմաթիվ այլ հարցերի քննարկմանն էին նվիրված 2008թ. ապրիլի 18-19-ը Կիպրոսի մայրաքաղաք Նիկոսիայում «Արևմտահայերի ազգային համա-

գումարի նախապատրաստման միջազգային կազմակերպչական կոմիտեի» կողմից կազմակերպված «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները» գիտաժողովական միջազգային գիտաժողովի զեկուցումները: Գիտաժողովն ընթացավ հետևյալ խորագրերն ունեցող երեք նիստերով. «Արևմտահայության հիմնախնդիրները միջազգային իրավունքի համատեքստում», «Էթնոքաղաքական հիմնախնդիրները ժամանակակից Թուրքիայում», «Արևմտահայության հիմնախնդիրները. պատմություն և արդիականություն»:

Գիտաժողովը բնութագրական էր նաև նրանով, որ ներկաների թվում էին ինչպես ճանաչված գիտնականներ, այնպես էլ հասարակական, քաղաքական գործիչներ: Վերջիններիս թվում էին տարբեր տարիներին ՄԱԿ-ի շրջանակներում ղեկավար պաշտոններ զբաղեցրած Բենոն Սևանը (ՄԱԿ-ի «Նավթ պարենի դիմաց» ծրագրի ղեկավար 1996-2005թթ.), Սուրեն Սերայդարյանը (Խորվաթիայում, Բոսնիա-Հերցեգովինայում, Լիբերիայում ՄԱԿ-ի կողմից իրականացվող խաղաղապահ գործողություններում ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի ներկայացուցիչ/տեղակալ), Հայկ Քոթանջյանը (ՀՀ պաշտպանության նախարարության ազգային ռազմավարական ուսումնասիրությունների ինստիտուտի պետ, ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդակցական), Ռուսաստանի հայազգի գործարարներ: Կազմկոմիտեի նախագահության անդամներին՝ Անուշավան Դանիելյանին, Կարեն Միքայելյանին, Անդրանիկ Արշակյանին, Արդեն Շելեֆյանին ընդունեցին Կիպրոսի նախագահ Դիմիտրիս Խրիստոֆիասը և խորհրդարանի նախագահ Մարիոս Գարոյանը:

Գիտաժողովին ողջույնի խոսքեր էին հղել Նյու Յորքի Կարնեգի հաստատության տնօրեն Վարդան Գրիգորյանը, Հայաստանում ԱՄՆ նախկին դեսպան Ջոն Էվանսը, Հայոց ցեղասպանության պատմության ճանաչված մասնագետներ Վահագն Դադրյանը և



Ռիչարդ Յովհաննիսյանը, Եվրոպայի հայկական համայնքների դաշնության ղեկավար Յիլդա Չոբոյանը, Բեռլինի ազատ համալսարանի պրոֆեսոր Թեսա Յոֆմանը, Վենետիկի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ Պողոս-Լևոն Ջեքիյանը, Գյուլբենկյան հիմնադրամի հայկական համայնքների բաժնի տնօրեն Ջավեն Եկավյանը, Նյու Յորքի քաղաքային համալսարանի սոցիոլոգիայի պրոֆեսոր, ցեղասպանության հարցերի մասնագետ Ջոն Թորփին, Փարիզի ԴԲԸՄ Նուբարյան գրադարանի տնօրեն Զարուբյուն Գևորգյանը, Գլենդեյլի համայնքային քոլեջի պրոֆեսոր Լևոն Մարաշյանը, միջազգային քրեական իրավունքի և ցեղասպանության հարցերի մասնագետ Դավիդ Ներսիսյանը Զարվարդի համալսարանից, այլ ճանաչված մասնագետներ:

Գիտաժողովի առաջին նիստին հնչած զեկուցումներում անդրադարձ եղավ այն հարցին, թե արդյոք 1915թ. հայոց ցեղասպանության պահին միջազգային իրավական նորմերի և սկզբունքների համաձայն արդեն իսկ դատապարտելի էին հայերի նկատմամբ թուրքերի կողմից իրականացվող հանցագործությունները, որն էր Սևրի պայմանագրի «Պատիժներ» բաժնի նախատեսման նպատակը և այլն (Վլ. Յովհաննիսյան): Մեկ այլ զեկուցմամբ դիտարկվեց այն խնդիրը, որ հայերի դեմ Օսմանյան կայսրության մեջ իրագործված ցեղասպանության համատեքստում Թուրքիան միջազգային պարտավորություններ ունի ոչ միայն Հայաստանի և հայերի, այլ նաև միջազգային հանրության նկատմամբ (Ա. դե Ջայաս): Ծավալվեց այնպիսի կարևորագույն խնդրի քննարկում, ինչպիսին են հայերի դեմ իրագործված ցեղասպանության համար միջազգային իրավական պատասխանատվությանն առնչվող հիմնահարցերը ցեղասպանության համար պետությունների միջազգային իրավական պատասխանատվության ժամանակակից գործընթացների լույսի ներքո (Վլ. Վարդանյան): Մեկ այլ զեկուցման մեջ

իրավական քննարկման ենթարկվեց ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը Հայաստանի և Թուրքիայի միջպետական սահմանների վերաբերյալ և թե այս առնչությամբ ինչ պետք է արվի, որպեսզի հայոց պահանջատիրության համար նախանշվեն կայուն հիմքեր և նպաստավոր նախադրյալներ (Ա. Պապյան): Առաջին նիստի վերջին զեկուցման մեջ դիտարկվեցին Յուլիոս Յոսեփին հաջորդող հրեից պահանջատիրության փորձից բխող հայկական հնարավոր ձեռնարկումները (Յ. Մարության):

Երկրորդ նիստում հանգամանալից անդրադարձ եղավ ուշ միջնադարից մինչև 20-րդ դարի սկիզբը Արևմտյան Հայաստանի հայ բնակչության բռնի մահմեդականացման, դավանափոխության (ուղղափառություն և կաթոլիկություն), քրդացման երևույթներին (Ա. Մելքոնյան): Մեկ այլ զեկուցման մեջ մանրամասնորեն խոսվեց Արևմտյան Հայաստանի հայ էթնիկ տարրի գոյատևման առանձնահատկությունների, ինքնության խնդիրների ներկա վիճակի մասին, ներկայացվեցին հայության այդ հատվածի ներսում առկա խմբերը (Ռ. Մելքոնյան): Քաղաքագիտական խոր վերլուծությամբ արժարծվեցին Հայ դատի բաղադրյալները (Նախիջևան, Արցախ և այլն)՝ առավելագույն արդյունավետությամբ դրանք միջազգային օրակարգ մտցնելու համար (Ա. Մանասյան): Դիտարկվեց այնպիսի կարևոր խնդիր, ինչպիսին են Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականության տարրերը, նրա փորձերը՝ խնդիրը քաղաքական հարթությունից զուտ պատմագիտական քննարկումների ոլորտ տեղափոխելը, նաև այդ պետության կողմից ձեռնարկվող այլ այլընտրանքային մշակումներ (Ռ. Սաֆրաստյան): Քննարկվեց հայկական փորձառությունը եվրոպական հիշողության քաղաքականության շրջագծի մեջ (Մ. Դաբար):

Երրորդ նիստին 1917 և 1919 թվերի Արևմտահայության հա-

մագուճարների օրինակով դիտարկվեցին արևմտահայության ինքնակազմակերպման փորձերը (Վ. Մելիքյան): Մեկ այլ զեկուցմամբ հանգամանորեն քննվեցին հայության կազմակերպման տեղեկատվական խնդիրները (Գ. Հարությունյան): Հիմնավորվեց այն դրույթը, որ քաղաքական կամ տարածքային պահանջներից զատ հայությունը պարտավոր է առաջադրել նաև ֆինանսանյութական փոխհատուցումների պահանջներ, և այդ առթիվ արվեցին գործնական առաջարկներ (Խ. Դադայան): Մեկ այլ հաղորդման մեջ արծարծվեցին հայ սփյուռքի երրորդ սերնդի խնդիրները և այն քայլերը, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել հետագա անելիքների ու զարգացման ծրագրերի ճշգրտման ուղղությամբ (Գ. Պողոսյան): Վերջապես, եզրափակիչ, թերևս ընդհանրացնող բնույթ ունեցող զեկուցման մեջ դիտարկվեց հայոց պահանջատիրության իրագործման ճանապարհի առավելապես քաղաքական քայլերի բովանդակությունը, նախանշվեցին (առաջարկի ձևով) դրանց հիմնական ուղղությունները (Վ. Միքայելյան):

Գիտաժողովի ավարտին տեղի ունեցավ Արևմտահայերի ազգային համագումարի նախապատրաստման միջազգային կազմակերպչական կոմիտեի ընդլայնված նիստ, որի ժամանակ գործնական հարթության վրա քննվեցին արևմտահայերի ժառանգների ներկայացուցիչների համագումարի նախապատրաստման և անցկացման հարցերը: Մասնավորապես, քննարկվեցին ինչպես հայեցակարգային, նույնպես և աշխատանքների հետագա կազմակերպման, համագումարի հրավիրման համար պատվիրակների ընտրության ձևերի, համագումարի հրավիրման ժամկետների խնդիրները:

## ՈՂՏՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Որախ եմ, որ որպես իրավական հարցերով հանձնակատար և Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ինստիտուտի նախագահ, ինձ պատիվ է վիճակվել մասնակցելու «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները» գիտաժողովին, որը, կարծում եմ, նմանատիպ առաջին գիտաժողովն է, որ տեղի է ունենում Կիպրոսում: Վստահ եմ, որ գիտաժողովի արդյունքները մեծապես կնպաստեն արևմտահայկական մշակույթի և լեզվական ժառանգության խթանմանն ու պահպանմանը:

Առաջին հերթին կցանկանայի անկեղծ շնորհավորանքներս ուղղել Արևմտահայերի ազգային խորհրդին՝ կազմակերպության ստեղծման առիթով: Այս նորաստեղծ հասարակական կազմակերպությունը, անկասկած, հնարավորություն կտա միջազգային հանրությանը լավագույնս ներկայացնելու արևմտահայության մշակութային և լեզվական ժառանգությունը:

Կցանկանայի բարեմաղթանքներս հղել գիտաժողովը կազմակերպած հաստատությանը և նրա կազմկոմիտեին:

Ըստ պատմաբանների՝ հայերի ներկայությունը Կիպրոսում արձանագրվում է VI դարից, երբ Բյուզանդիայի կայսր Հուստինիանոս II-ը կղզի բերեց հայազգի պահակախումբ՝ կղզին թշնամու հարձակումներից և ոտնձգություններից պաշտպանելու համար: 1191թ. Կիպրոսի Կոլլոսի դոյակուն Հայոց արքա Լևոն II-ը դարձավ Ռիչարդ Առյուծասիրտ արքայի և Նավարայի արքայադուստր Բերենգարիայի հարսանիքի խաչեղբայրը: 1375թ. «Հայոց արքա» տիտ-

ղոսը փոխանցվեց Կիպրոսի իշխող արքային: Վերջին շրջանում հայերի ամենամեծ ներհոսքը Կիպրոս տեղի ունեցավ անցյալ դարի սկզբներին՝ 1915/1916թթ., երբ հազարավոր հայեր ցեղասպանության արդյունքում լքեցին Օսմանյան կայսրությունը՝ ձևավորելով այն, ինչը մենք այսօր կոչում ենք հայկական սփյուռք:

Երբ 1960թ. ստեղծվեց Կիպրոսի Հանրապետությունը, կղզում մշտապես բնակվում էր 4.000 հայ: Վերջին տվյալների համաձայն՝ ներկայումս երկրում բնակվում է 3.000 հայ, որոնցից 400-ը վերջերս են ներգաղթել:

Կիպրոսը և Հայաստանը զանազան ոլորտներում համագործակցության մի շարք երկկողմ պայմանագրեր են ստորագրել, ինչպես նաև համագործակցում են տարբեր բազմակողմ պայմանագրերի շրջանակներում: Երկու երկրներն էլ անդամակցում են համաշխարհային և տարածաշրջանային տարբեր կազմակերպությունների, ինչը ևս նպաստում է մեր երկու երկրների համագործակցությանը:

Վեսթֆալիայում 1648թ. կնքված պայմանագիրը կարող է համարվել առաջին միջազգային իրավական գործիքը, որով կարգավորվում էին փոքրամասնություններին (մասնավորապես՝ կրոնական) առնչվող խնդիրները:

1948թ. ստորագրված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, ինչպես նաև նույն թվականին ընդունված Ցեղասպանության մասին կոնվենցիան նոր դարաշրջանի սկիզբ դարձան փոքրամասնությունների աջակցման և նրանց իրավունքների պաշտպանության ոլորտում: Դրանց հետևեցին 1966թ. ստորագրված տնտեսական, սոցիալական, մշակութային, ինչպես նաև, քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային կոնվենցիաները: Համեմատաբար վերջերս ընդունված միջազգային բնույթի փաստաթուղթ է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 2005թ. ընդունված կոնվենցիան՝ մշակութային բազմազանության պաշտպանության և խթանման մասին:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից ի վեր էական փոփոխություններ են տեղի ունեցել նաև եվրոպական տարածաշրջանային մակարդակով՝ Եվրախորհրդի, ԵԱՀԿ-ի և Եվրամիության ներսում (մոտեցումներում, աշխատանքում): Մասնավորապես, փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության նպատակով ընդունվել են հետևյալ փաստաթղթերը՝


- 1950թ. ստորագրվել է Եվրոպական կոնվենցիան՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ,
- 1992թ. ստորագրվել է Եվրոպական խարտիան՝ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ,
- 1995թ. ընդունվել է Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին կոնվենցիան,
- 2007թ. ստորագրվել է Եվրամիության հիմնարար իրավունքների մասին խարտիան (կանոնադրությունը), որի դրույթները մերժում են ցանկացած խտրականություն և շեշտում են մշակութային, կրոնական և լեզվական բազմազանության իրավունքը:

Կիպրոսի Հանրապետությունը միացել է բոլոր վերոնշյալ համաձայնագրերին: Որպես իրավունքի հանձնաժողովի անդամ, Կիպրոսի Նախարարների խորհուրդն ինձ է վստահել մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված համաձայնագրերով սահմանված Կիպրոսում կատարվող աշխատանքների վերաբերյալ վերահսկող մարմիններին հաշվետվություններ ներկայացնելու պարտականությունը:

Մարդու իրավունքներին վերաբերող հաշվետվությունները ներկայացվում են ՄԱԿ-ի յոթ և Եվրախորհրդի երկու համաձայնագրերին համապատասխան:

Հաշվետու լինելու պատասխանատվությունը մի կարևոր տարր է պարունակում. դա պետության պատրաստակամությունն է՝ ուղղված Համաձայնագրով նախատեսված իրավունքները հարգելուն, պաշտպանելուն և իրականացնելուն: Այս առումով հարկավոր է նշել, որ Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներ-

4904



րի վերաբերյալ խարտիայի վավերացման պահին Կիպրոսի Հանրապետությունը հանդես եկավ հռչակագրով, որով խարտիայի պաշտպանության տակ առնվեց հայերենը, ավելի ճիշտ, արևմտահայերենը՝ որպես Կիպրոսում բնակվող փոքրամասնության լեզու: Որքան ինձ հայտնի է, սա Հայաստանի սահմաններից դուրս միակ միջազգային գործիքն է, որը պաշտպանում և խրախուսում է հայերենը:

Կիպրոսի կողմից խարտիայով նախատեսված դրույթների իրականացման գործընթացը 2005 և 2006թթ. ամբողջապես ուսումնասիրվել է խարտիայի հարցերով զբաղվող փորձագետների խորհրդի կողմից: Փորձագետների խորհուրդն ուշադրությունը բևեռել է Կիպրոսում հայոց լեզվի պաշտպանության խնդրին, կրթական հարցերին՝ ներառյալ այն խնդիրները, որոնք ծագել են Մելքոնյան վարժարանը փակելուց հետո: Ուսումնասիրության արդյունքները տեղ են գտել խարտիայի դրույթների կիրառման վերաբերյալ խորհրդի 2006թ. սեպտեմբերի հաշվետվության մեջ: Նախնական մոնիթորինգային փուլի աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրված է Եվրախորհրդի ինտերնետային կայքում:

Այժմ մենք իրականացնում ենք աշխատանքների երկրորդ փուլը: Իմ գրասենյակի նախապատրաստած հաշվետվությանը կարելի է ծանոթանալ Եվրախորհրդի ինտերնետային կայքում: Օգտվելով առիթից՝ ցանկանում եմ նշել, որ փորձագետների հաջորդ այցելությունը Կիպրոս կկայանա գալիք սեպտեմբերին: Խարտիայի դրույթների իրականացման աշխատանքները կվերահսկվեն փորձագետների կողմից, որոնց, անկասկած, հետաքրքրում է, թե Մելքոնյան վարժարանի հետ կապված խնդիրներն ինչպիսի զարգացում են ստացել: Նրանք կուսումնասիրեն նաև Կիպրոսում տարբեր մակարդակներում հայերենի դասավանդման վիճակը: Ինձ համար հաճելի է նշել, որ Տարածաշրջանային և լեզվական փոքրամասնությունների հարցերով զբաղվող Փորձագետների խորհրդի անդամներից մեկը՝ դեսպան Նիկոլաս

Մաքրիզը ևս մասնակցում է այս համաժողովին:

Եվրոպական խարտիայով նախատեսված աշխատանքներն ավելի հաջող կընթանան, եթե այն ստորագրած երկրները համագործակցեն և աջակցեն միմյանց, ինչպես դա անում են Հայաստանն ու Կիպրոսը, և եթե այդ աշխատանքների իրականացմանն օժանդակեն այդ լեզուները ներկայացնող այնպիսի հասարակական կազմակերպություններ, ինչպիսին է ձեր կազմակերպությունը:

Հարկ է նշել, որ դեռևս 1952թ. Եվրոպայի խորհուրդը ճանաչել է անկախ հասարակական կազմակերպությունների կարևորությունը՝ վերջիններիս տալով խորհրդակցական կարգավիճակ ստանալու հնարավորություն, ինչը կարգավորվում է նախարարների խորհրդի թիվ (93) 38 որոշմամբ: Ներկայումս Եվրախորհրդում ընդգրկված մոտ 400 հասարակական կազմակերպություն ունի խորհրդակցական կարգավիճակ: Նման կարգավիճակ ստանալու համար շահագրգիռ հասարակական կազմակերպությունը պետք է օժանդակի խորհրդի նպատակներին և պատրաստակամորեն կատարի այդ աշխատանքները: Թեկնածու հասարակական կազմակերպությունները պետք է կարողանան աշխատել միջազգային նորմերի համաձայն, այսինքն՝ ստեղծված և գրանցված լինեն օրենքով սահմանված կարգով, ունենան համապատասխան կառուցվածք, այդ թվում՝ գլխավոր քարտուղար և մշտապես գործող գրասենյակ:

Ես ուրախ կլինեմ համագործակցել գիտաժողովը կազմակերպած հաստատության հետ՝ մեր համատեղ նպատակները կյանքի կոչելու համար: Մեկ անգամ ևս խոսքս գիտաժողովի մասնակիցներին ուղղելով՝ ցանկանում եմ կրկին շնորհավորել Կազմկոմիտեին և մաղթել աշխատանքային հաջողություններ:

Լեղա ԿՈՐՍՈՒՄԲԱ  
Իրավական հարցերով հանձնակատար  
(Կիպրոս)



**Վլադիմիր  
ԳՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ**

**ՍԵՎՐԻ 1920Թ.  
ՕԳՈՍՏՈՍԻ 10-Ի  
ՀԱՇՏՈՒԹՅԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ  
ԵՎ ՀԱՅՈՑ  
ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ**

Եթե փորձենք համառոտ և ընդհանրացված ձևակերպել արևմտահայության պահանջատիրության գլխավոր նպատակները, ապա կարելի է ասել, որ առաջինը Հայոց ցեղասպանության փաստական հետևանքների պատմաիրավական գնահատման միջոցով հայ ժողովրդին պատճառված հոգևոր և նյութական վնասի իրական ծավալների որոշումն է, և երկրորդը՝ հետևողական պայքարի միջոցով ցեղասպանության զոհերի և նրանց իրավահաջորդների նյութական և բարոյական վնասի փոխհատուցմանը հասնելը:

Հայկական ցեղասպանությունը, որպես պատմական իրողություն, ապացուցման կարիք չունի: Մեր պատմաբանների կատարած հսկայական աշխատանքն այս բնագավառում արդեն տվել է իր արդյունքները: Նրանց շնորհիվ է, որ այսօր տասնյակ երկրներ և առանձին միջազգային կազմակերպություններ արդեն պաշտոնապես ճանաչել են Թուրքիայի կողմից հայ ժողովրդի նկատմամբ իրագործված ցեղասպանության հանցագործությունը:

Հայոց ցեղասպանության փաստն անառարկելի է, սակայն այդ

հանցագործության իրավական գնահատման և դրա հետևանքների բացահայտման հարցն անընդհատ պետք է գտնվի իրավաբանների ուշադրության կենտրոնում:

Նկատի ունենալով, որ Թուրքիան ժխտում է հայոց պահանջատիրության հիմքը՝ ցեղասպանության փաստը, կփորձեն անդրադառնալ դրան առնչվող իրավական բնույթի մի քանի հարցերի:

1. Սևրի պայմանագրի ստորագրումից առաջ, Հայոց ցեղասպանության պահին գործող միջազգային իրավական նորմերի և սկզբունքների համաձայն, արդյոք դատապարտելի՞ էին հայերի նկատմամբ թուրքերի կողմից իրականացվող կոտորածները:

2. Ո՞րն էր Սևրի պայմանագրի VII մասում «Պատիժներ» բաժնի նախատեսման նպատակը: Հնարավոր չէ՞ր, արդյոք, Սևրի պայմանագրում չանդրադառնալ պատիժների հարցին:

3. Կա՞, արդյոք, որոշակի ընդհանրություն Սևրի պայմանագրի «Պատիժներ» բաժնում օգտագործվող ձևակերպումների ու հասկացությունների և դրանից հետո ստեղծված *ad hoc* միջազգային քրեական դատարանների (Նյուրնբերգի և Տոկիոյի) կանոնադրություններում օգտագործվող հասկացությունների ապարատի միջև:

4. Կայի՞ն, արդյոք, որոշակի առնչություններ Սևրի պայմանագրի, որն ստորագրվեց 1920թ. օգոստոսի 10-ին, և Թուրքիայի նոր կառավարության կողմից դրանից մեկ տարի առաջ՝ 1919թ. հունվարին սկսված դատաքննության միջև, որի նպատակն էր պատասխանատվության ենթարկել երիտթուրքական կառավարության ղեկավարներին ու «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներին:

**1. 1915թ. Հայոց ցեղասպանության պահին գործող միջազգային իրավական նորմերի և սկզբունքների համաձայն, արդյոք դատապարտելի՞ էին հայերի նկատմամբ թուրքերի կողմից իրականացվող կոտորածները:**

Պատասխանը միանշանակ դրական է: Հայոց ցեղասպանությունից դեռ շատ առաջ աշխարհի քաղաքակիրթ պետությունները լուրջ աշխատանք էին կատարել, որպեսզի կանոնակարգեն պատերազմի վարման կանոնները և միջազգային պայմանագրերի հիման վրա պետություններին պարտավորեցնեն միջոցներ ձեռնարկելու պատերազմի ժամանակ հանցավորության բնույթ կրող գործողություններ թույլ չտալու համար: Առաջին համաշխարհային պատերազմից դեռևս շատ առաջ արդեն գործում էին տասնյակ միջազգային պայմանագրեր և կոնվենցիաներ, որոնք պետություններին պարտավորեցնում էին զինված ընդհարումների ժամանակ հնարավորինս խուսափել անիմաստ զոհերից և մարդկանց տանջանքներ և տառապանքներ պատճառելուց:

Ավելին, դեռևս 1872թ. Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ստեղծողներից մեկը՝ Գուստավ Մուանյեն, ով նաև երկար ժամանակ այդ կազմակերպության նախագահն էր, պատրաստեց մի փաստաթուղթ, որը կոչվում էր «Ժնևի կոնվենցիայի խախտումները կանխելու և դրանց համար պատժելու մասին միջազգային դատական մարմին հիմնելու մասին կոնվենցիայի նախագիծ»: Ըստ Գուստավ Մուանյեի՝ պայմանագրային հիմքով ստեղծվող այս միջազգային քրեական դատարանը պետք է պատժեր 1864թ. օգոստոսի 22-ի Ժնևի կոնվենցիայով և դրան կից լրացուցիչ արձանագրություններով նախատեսված՝ հանցավոր արարքների համար մեղավոր անձանց: Գիշտ է, այս դատարանն այն ժամանակ չստեղծվեց, սակայն լուրջ դեր խաղաց հետագայում միջազգային քրեական դատարաններ ստեղծելու, այդ թվում՝ Սևրի և Վերսալի պայմանագրերով նախատեսված միջազգային քրեական դատարաններ ստեղծելու հարցում:

Հետագայում, պատերազմի ժամանակ իրավախախտումները և հանցագործություններն արգելող և նորմատիվ դրույթներ պարունակող միջազգային պայմանագրեր ընդունելուն զուգահեռ, պետությունները կնքեցին նաև մի շարք համաձայնագրեր, որոնք

նպատակ ունեին կանխելու այս կամ այն պետության կողմից իր իշխանության ներքո գտնվող անձանց նկատմամբ իրականացվող լայնամասշտաբ բռնություններն ու կոտորածները: Դեռևս Բեռլինի 1878թ. պայմանագրի դրույթներն ազգային և կրոնական փոքրամասնությունների պաշտպանության ուղղակի պարտավորություն էին դնում ոչ միայն Օսմանյան կայսրության, այլև նրանից անկախություն կամ ինքնավարություն ստացող պետությունների՝ Բուլղարիայի, Չեռնոգորիայի, Սերբիայի, Ռումինիայի վրա: Բացի այդ, նշված պայմանագրի 61-րդ հոդվածը, ինչպես հայտնի է, հատուկ պաշտպանության տակ էր վերցնում կոնկրետ ազգային խմբի, այն է՝ հայերին, Օսմանյան կայսրությանը պարտավորեցնելով ապահովել հայերի «պաշտպանությունը չեքքեզներից և քրդերից»:

Պատերազմի ժամանակ իրականացվող հանցագործությունների համար պետությունների պատասխանատվության անհրաժեշտությունը բավականին իմպերատիվ ձևով շարադրված էր պատերազմի օրենքների և սովորույթների մասին 1899 և 1907թթ. Հաագայի կոնվենցիաներում: Գիշտ է, նշված փաստաթղթերում ուղղակի չէր նշվում, որ պատասխանատվություն պետք է կրեն ոչ միայն պետությունները, այլև՝ մեղավոր ֆիզիկական անձինք: Սակայն 1907թ. Հաագայի IV կոնվենցիայի հավելվածի III հոդվածը նախատեսում էր ընդհանուր բնույթի դրույթ, համաձայն որի՝ «պատերազմող կողմը... պատասխանատու կլինի իր զինված ուժերի կազմում գտնվող անձանց կատարած բոլոր գործողությունների համար»:<sup>1</sup>

Ինչպես ցույց տվեց պատմության հետագա ընթացքը, նշված միջազգային իրավական ակտերը բավարար էին, որպեսզի Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո ստորագրված Վերսալի և Սևրի պայմանագրերում առաջ քաշվեր գերմանացի և թուրք պատերազմական հանցագործների պատասխանատվության հարցը:

**2. Ո՞րն էր Սևրի պայմանագրի VII մասում «Պատիժներ» բաժնի նախատեսման նպատակը: Զնարավոր է՞ր, արդյոք, Սևրի պայմանագրում չանդրադառնալ Թուրքիային պատժելու հարցին:**

Մինչ Սևրի պայմանագրին անդրադառնալը, անհրաժեշտ է նշել, որ այս և Վերսալի հաշտության մասին պայմանագրերը մասնակիցներին պարտավորեցնում էին հիմնել *ad hoc* միջազգային քրեական դատարաններ՝ պատերազմական հանցագործներին պատասխանատվության ենթարկելու համար:

Մասնավորապես, 1918թ. նոյեմբերի 11-ին «պատերազմական հանցագործների» պատասխանատվությունը սահմանելու համար Գերմանիայի դեմ պատերազմած պետությունները ձևավորեցին Դաշնային հանձնաժողով: Վերսալի հաշտության պայմանագրով նրանք պարտավորվեցին պատերազմական հանցագործության կատարման մեջ մեղադրվող Վիլհելմ II-ին և Գերմանիայի մյուս քաղաքացիներին դատելու համար ստեղծել միջազգային հատուկ դատարան, ինչպես նաև ազգային դատարաններ (հոդված 227-230): Ինչպես նշվում է պայմանագրի 227-րդ հոդվածում. «Դաշնակից և միավորված պետությունները նախկին գերմանական կայսր Վիլհելմ II Զոհենցոլլերին ներկայացնում են հրապարակային մեղադրանք՝ միջազգային բարոյականությանը և պայմանագրի սրբազան ուժին բարձրագույն անարգանք հասցնելու համար: Պետք է ստեղծվի հատուկ դատարան, որպեսզի դատի մեղադրյալին՝ նրա համար ապահովելով պաշտպանության իրավունքի էական երաշխիք»: <sup>2</sup> Պայմանագիրը կանխորոշում էր դատաքննության սկզբունքները: Զամաձայն դրա՝ «Դատարանը պետք է դատի միջազգային քաղաքականության բարձրագույն սկզբունքներով տոգորված շարժառիթներով և հանդիսավոր պարտավորությունների ու միջազգային

պարտավորությունների, ինչպես նաև միջազգային բարոյականության հարգանքի ապահովման մտահոգությամբ» (հոդված 227): Դատարանը կազմված էր հինգ դատավորներից, որոնք նշանակված էին ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի կողմից:

Պայմանագիրը նախատեսում էր, որ Դաշնակից և միավորված տերությունները պետք է դիմեն Նիդեռլանդների կառավարությանը՝ Գերմանիայի նախկին կայսրին դատելու համար վերջինիս իրենց հանձնելու խնդրանքով:

Միաժամանակ, համաձայն Պայմանագրի 229-րդ հոդվածի՝ Դաշնակից և միավորված տերություններից որևէ մեկի քաղաքացիների դեմ ուղղված գործողություններ կատարած անձինք պետք է հանձնվեին այդ տերության զինվորական դատարանին: Մի քանի Դաշնակից և միավորված տերությունների քաղաքացիների դեմ ուղղված գործողություններ կատարած անձինք պետք է հանձնվեին այն զինվորական դատարաններին, որոնք կազմված էին լինելու շահագրգիռ տերությունների զինվորական դատարանների անդամներից: Այստեղ, ըստ էության, խոսքը վերաբերում է բազմազգ կառուցվածք ունեցող դատարաններ ստեղծելու անհրաժեշտությանը:

Այս պայմանագրի առանձնահատկություններից կարելի է համարել այն, որ անդամ պետությունները Գերմանիայի կառավարությանը պարտավորեցնում էին նրան մեղսագրվող փաստերի լիարժեք բացահայտման համար ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր և ցանկացած բնույթի այլ տեղեկություններ (հոդված 230):

Սակայն նշված որոշումը կյանքի չկոչվեց: Վիլհելմ II-ը, որը պատասխանատվությունից խուսափելու համար փախել էր Զոլանդիա, չհանձնվեց Դաշինքի տերություններին, իսկ դատական հետապնդման ենթարկված փոքրաթիվ զինվորներն ու սպաները, որոնք մեղադրվում էին պատերազմական հանցագործությունների կատարման մեջ, կարելի է ասել, կրեցին զուտ խորհրդանշա-

կան պատասխանատվություն: Առաջին դաշնակցային ցուցակով մեղադրվող գերմանացիների թիվը կազմում էր 896, Գերմանիայի կողմից ճանաչված ցուցակով դատապարտյալներին՝ 45 մարդ, Լայպցիգում Գերագույն տրիբունալի առջև կանգնեց ընդամենը 12 մարդ, որոնցից դատապարտվեց 6-ը:

Չնայած դրան, այս հարցում Վերսալի հաշտության պայմանագրի պատմական նշանակությունը կարևորվեց նրանով, որ այնտեղ իբրև միջազգային իրավական սկզբունք ամրագրվեց պատերազմական հանցագործությունների և խաղաղության դեմ ուղղված հանցագործությունների համար մեղավոր անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտությունը:

Վերսալի պայմանագրում նախատեսված «Պատիժներ» բաժնի ճիշտ նմանակը կար նաև Սևրի պայմանագրում:

Սևրի պայմանագրի նպատակը, նախ և առաջ, Օսմանյան կայսրության փլուզման միջազգային պայմանագրային ձևակերպումն էր: Սակայն հարց է առաջանում. իսկ հնարավոր չէ՞ր բավարարվել միայն Թուրքական կայսրության փլուզմամբ և չանդրադառնալ պատերազմի հանցագործներին պատժելու հարցին: Կարծում եմ, որ հնարավոր չէր: Հնարավոր չէր ճիշտ այնպես, ինչպես հնարավոր չէր ավարտել Երկրորդ համաշխարհային պատերազմը, ամփոփել դրա արդյունքները և չստեղծել Տոկիոյի և Նյուրնբերգի դատարանները:

Չնայած Թուրքիայի դեմ պատերազմող պետությունները ղեկավարվում էին զուտ իրենց ռազմավարական շահերով, սակայն այլևս միջնադար չէր, երբ պատերազմի ժամանակ թալանը, կողոպուտը և մարդկանց կոտորածը շատ բնական վարքագիծ էին համարվում:

XX դ. սկզբներին պատերազմի ժամանակ մարդասիրության գաղափարը ասպետականության և բարոյականության բնույթի զրույցներից վերածվել էր միջազգային պայմանագրային պարտավորությունների: Գիշտ է, դրանք, ինչպես ներկայումս, ավելի հաճախ խախտ-

վում էին, քան պահպանվում, սակայն ունեին իմպերատիվ բնույթ և անհրաժեշտության դեպքում, թեկուզ *post factum*, կիրառվում էին:

Պատերազմական գործողությունների միջազգային պայմանագրային կարգավորմանը զուգահեռ, արդեն իրավական դոկտրին էր դարձել մարդասիրական ինտերվենցիայի գաղափարը, երբ մեծ տերությունները (նաև ռազմական միջոցներով) միջամտում էին այս կամ այն պետության ներքին գործերին՝ ազգային փոքրամասնությունների իրավունքները պաշտպանելու նպատակով: Սա էր պատճառը, որ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո Թուրքիայի կատարած միջազգային քրեական հանցագործությունների համար նրան պատասխանատվության կանչելու հարցը Դաշնակից պետությունների համար արդեն կանխորոշված էր:

Չնայած մեծ տերությունները չկանխեցին Հայոց ցեղասպանությունը, սակայն Սևրի հաշտության պայմանագրի նախապատրաստումով միջազգայնացրեցին հայերի ցեղասպանության համար թուրքերին պատասխանատվության կանչելու անհրաժեշտության հարցը: Ավելին, հայերի և այլ ազգերի ու ժողովուրդների դեմ գործած վայրագությունների համար թուրքական բարձրաստիճան զինվորական և քաղաքացիական պաշտոնյաների քրեական պատասխանատվության հարցը միջազգային պայմանագրային պարտավորության վերածելու անհրաժեշտությունը դարձավ օրակարգային:

Թուրքերի կողմից միջազգային իրավունքով արգելվող խաղաղ բնակչության կոտորածի փաստը հիմք հանդիսացավ, որպեսզի դեռևս 1915թ. մայիսի 28-ին Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի կառավարությունները համատեղ հռչակագիր ընդունեն, որում Հայոց ցեղասպանությունը դիտարկվեց որպես «*հանցագործություն մարդկության և քաղաքակրթության դեմ*» և սահմանվեց, որ Անտանտի պետությունները «*այդ հանցագոր-*



*ծուրթունքների համար անձնական պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև նրա այն տեղական ներկայացուցիչների վրա, որոնք առնչվել են տվյալ կոտորածին»:*

Մեծ տերություններն ընդունելով, որ Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը պաշտպանելով՝ իրենք հայ ժողովրդին և թուրքերի կողմից ստրկացված մյուս ժողովուրդներին, ըստ էության, դատապարտեցին ֆիզիկական ոչնչացման, թուրքական արյունոտ բռնապետությունից նրանց ազատագրումը պաշտոնապես հռչակեցին որպես համաշխարհային պատերազմի նպատակներից և աշխարհի հետպատերազմյան կարգի պայմաններից մեկը:

1919թ. հունվարին չորս մեծ տերությունների՝ Մեծ Բրիտանիայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի և Իտալիայի կողմից նախապատրաստված ընդհանուր բանաձևում մասնավորապես նշվում էր, որ «Թուրքերի կողմից իրենց ենթակա ժողովուրդների հանդեպ ցուցաբերված պատմական վատ կառավարման, ինչպես նաև վերջին տարիներին հայերի և այլոց ջարդերի պատճառով՝ դաշնակիցներն ու գործակից պետությունները համաձայն են, որ Հայաստանը, Սիրիան, Միջագետքը և Արաբիան անջատվեն թուրքական կայսրությունից»:<sup>3</sup> Այս հարցադրումը լիովին կարող է որակվել որպես Թուրքիային միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելու փաստ:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո Թուրքիայի կատարած միջազգային քրեական հանցագործությունների համար նրա պատասխանատվության հարցը Դաշնակից պետությունների համար արդեն կանխորոշված էր: 1918թ. հոկտեմբերի 30-ին, Թուրքիայի կողմից զինադադարի պայմանագրի ստորագրումից հետո, Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարը շատ պատկերավոր հայտարարեց, թե «Թուրքիան իր դատավճռին սպասող հանցագործ է»:<sup>4</sup>

1919թ. հունվարին Փարիզի խաղաղության նախնական կոնգրեսում հիմնադրված «Պատասխանատվության և պատժի հանձնաժողովը», Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կատարված հանցագործությունների հարցը քննության առնելով, 1919թ. մարտի 5-ի իր գեկույցում արձանագրեց, որ Թուրքիան քաղաքացիական բնակչության դեմ պարբերաբար կազմակերպել է ահաբեկչություն, սպանություններ և կոտորածներ, նրանց մասնավոր սեփականության բռնագրավում: Ձեկույցում նշվում էր, որ թշնամի պետությունների բոլոր քաղաքացիները, ովքեր մեղավոր են եղել պատերազմի օրենքների և սովորույթների դեմ ուղղված հանցագործությունների համար, ենթակա են քրեական հետապնդման:<sup>5</sup>

**3. Սևրի պայմանագրի «Պատիժներ» բաժնում օգտագործվող ձևակերպումները և հասկացություններն արդյոք համահունչ էին միջազգային քրեական հանցագործությունների վերաբերյալ այդ ժամանակ միջազգային փաստաթղթերում օգտագործվող ձևակերպումներին և հասկացություններին, թե՞ ոչ:**

**Կա՞, արդյոք, որոշակի ընդհանրություն Սևրի պայմանագրում ու դրանից հետո ստեղծված միջազգային քրեական դատարանների (Նյուրնբերգի և Տոկիոյի) կանոնադրություններում օգտագործվող հասկացությունների ապարատի միջև:**

Մեծ տերությունների ընկերակցությունն արդեն որոշել էր, որ թուրքական կառավարության անդամները, որոնք իրականացրել էին Հայոց ցեղասպանությունը, պետք է ենթարկվեն քրեական պատասխանատվության, այդ թվում՝ նաև միջազգային դատարանի կողմից: Հայերի ցեղասպանությունն իրականացրած կազմակերպիչների մի մասը ձերբակալվել էր և Մալթա կղզում սպասում էր դատավարությանը:

Պատերազմական հանցագործությունների և իր քաղաքացիների դեմ գործած ցեղասպանության համար թուրքիային ներկայացվող մեղադրանքը միջազգային իրավական ձևակերպում ստացավ 1920թ. օգոստոսի 10-ի Սևրի հաշտության պայմանագրում:

Սևրի հաշտության պայմանագրի 226-րդ հոդվածում նշվում է, որ «Օսմանյան պետությունը ճանաչում է Դաշնակից տերությունների իրավունքն իրենց զինվորական դատարաններում պատասխանատվության ենթարկելու այն անձանց, ովքեր մեղադրվում են պատերազմի օրենքներին և սովորույթներին հակասող գործողությունների կատարման մեջ: Օրենքներով նախատեսված պատիժները կկիրառվեն այն անձանց նկատմամբ, ովքեր մեղավոր կճանաչվեն»:<sup>6</sup>

Ելնելով թուրքիայի և նրա դաշնակիցների նկատմամբ ունեցած անվստահությունից՝ 226-րդ հոդվածում հատուկ նշվում է. «Այս որոշումը կկիրառվի՝ անկախ թուրքիայի կամ նրա դաշնակիցների դատարաններում տեղի ունեցած դատավարություններից կամ հետապնդումից»:

Պայմանագրի 226-րդ հոդվածը թուրքիային պարտավորեցնում էր պահանջի դեպքում Դաշնակից տերություններին հանձնել պատերազմի օրենքներին և սովորույթներին հակասող արարքների համար մեղադրվող անձանց, անկախ նրանից, թե նրանք կիշատակվեն անվանական կամ օսմանյան կառավարության կողմից շնորհված աստիճանով, պարտավորությամբ կամ պաշտոնով:

Պայմանագրի 228-րդ հոդվածը թուրքիային պարտավորեցնում էր համագործակցել մյուս պետությունների հետ՝ հանցագործ քաղաքացիներին պատասխանատվության ենթարկելու հարցում, այն է՝ «տրամադրել ցանկացած բնույթի փաստաթուղթ և տեղեկություն, որոնք անհրաժեշտ կլինեն ամբողջությամբ պարզելու մեղսագրվող փաստերի, մեղավորների հետախուզման և պատասխանատվության ճշգրիտ գնահատման համար»:

Սևրի հաշտության պայմանագրի 230-րդ հոդվածում տրված էր

թուրքական հանցագործների այն գործողությունների իրավական որակումը, որոնց համար նրանք պետք է պատասխանատվության ենթարկվեին այլ պետությունների դատական իշխանությունների կողմից: Դրանում ուղղակի ասվում է. «Օսմանյան կառավարությունը պարտավորվում է Դաշնակից տերություններին հանձնել այն անձանց, ովքեր պահանջվում են որպես այն վայրագությունների համար պատասխանատվություն կրողներ, որոնք պատերազմական դրության ընթացքում կատարվել են 1914թ. օգոստոսի 1-ի դրությամբ, Օսմանյան կայսրության մաս կազմող ցանկացած տարածքի վրա»:

Եական կարևորություն ունի այն փաստը, որ Վերսալի պայմանագրի 229-րդ հոդվածը և Սևրի պայմանագրի 227-րդ հոդվածն ունեն բացարձակապես նույն բովանդակությունը: Դրանցում ասվում է. «Դաշնային տերություններից մեկի քաղաքացիների դեմ գործողություն կատարածները կհանձնվեն այդ տերության զինվորական դատարանին»:

Մի քանի Դաշնային տերությունների քաղաքացիների դեմ ուղղված գործողություն կատարածները կհանձնվեն շահագրգիռ տերությունների զինվորական դատարաններին պատկանող անդամներից կազմված զինվորական դատարաններին:

Բոլոր դեպքերում մեղադրյալն իրավունք կունենա ինքն ընտրել իր պաշտպանին»:

Նշված նույնականությունը ոչ թե պատահական զուգահիշաբանության արդյունք է, այլ ընդգծում է Գերմանիայի և Օսմանյան կայսրության կողմից Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Դաշնային տերությունների քաղաքացիների նկատմամբ գործված հանցագործություններն անպատիժ չթողնելու հարցում Դաշնային տերությունների միասնական դիրքորոշումը:

Վերսալի և Սևրի պայմանագրերով նախատեսվում էր պատասխանատվության ենթարկել ինչպես Գերմանիայի և թուրքիայի

այն պաշտոնատար անձանց, ովքեր կատարել էին պատերազմական հանցագործություններ՝ ընդհանրապես (Վերսալ, հոդված 227, Սևր, հոդված 226), այնպես էլ Գերմանիայի և Թուրքիայի այն պաշտոնատար անձանց, ովքեր պատերազմական հանցագործություններ էին կատարել Դաշնային տերությունների քաղաքացիների նկատմամբ (Վերսալ, հոդված 229, Սևր, հոդված 227):

Սևրի հաշտության պայմանագիրը չվավերացվեց, և դրա դրույթներով նախատեսված՝ պատերազմի հանցագործների պատասխանատվության մասին պարտավորությունը միջազգային իրավական ուժ չստացավ: Վահագն Տատրյանը գտնում է, որ այս դրույթները երբեք կյանքի չկոչվեցին, որովհետև սրա համար գոյություն ունեին ինչպես քաղաքական, այնպես էլ իրավական բնույթի մի շարք պատճառներ: Որպես Հայոց ցեղասպանության համար մեղավոր անձանց պատասխանատվության իրականացման միջազգային իրավական խոչընդոտ՝ նա հիշատակում է այն պարագան, որ պահանջվում էր համապատասխան իրավագործության, քրեական օրենսգրքերի և համապատասխան օրենքների կիրառման մեխանիզմի առկայություն, որոնք, փաստորեն, գոյություն չունեին: Վահագն Տատրյանը նշում է, որ 1920թ. կեսերին Ստամբուլում Բրիտանական Բարձր հանձնաժողովի քաղաքական-իրավական հարցերով պատասխանատու Լեմբը կազմեց մանրամասն հուշագիր, որտեղ շարադրվեցին Հայոց ցեղասպանության հեղինակներին հետապնդելու հետ կապված դժվարությունները: Դրանք, մասնավորապես, հետևյալն էին. 1) կենտրոնական կամ տեղական իշխանությունների կողմից ընդունված հրամանների, կարգադրությունների վերաբերյալ թուրքական փաստաթղթերի ձեռքբերման անհնարինությունը, 2) վկաների անվտանգության ապահովման խնդիրը, 3) հայկական բնակչության արական սեռի ներկայացուցիչների և, մասնավորապես, ամբողջ մտավորականության

զանգվածային բնաջնջումը, 4) ընդհանրապես ապացույցներ ձեռք բերելու խոչընդոտները:<sup>7</sup>

Անհրաժեշտ է նշել, որ Սևրի պայմանագրում ամրագրված էին միջազգային քրեական արդարադատության դատավարական մի շարք սկզբունքներ, որոնք կիրառվեցին նաև հետագայում ստեղծված միջազգային *ad hoc* դատարանների ստեղծման ժամանակ: Ավելին, դրանք ամրագրված են նաև 1989թ. ստեղծված մշտապես գործող Հռոմի միջազգային քրեական դատարանի կանոնադրության մեջ:

Այդ սկզբունքներից են, մասնավորապես.

- Պատասխանատվության պետք է ենթարկվեն ինչպես այն անձինք, ովքեր մեղադրվում են պատերազմի օրենքներին և սովորույթներին հակասող գործողությունների կատարման մեջ, այնպես էլ այն անձինք, ովքեր հանցագործություններ են կատարել խաղաղ բնակչության նկատմամբ:

- Միջազգային հանցագործության մեջ մեղադրվող անձինք պետք է հետապնդվեն, ձերբակալվեն և կանգնեն դատարանի առաջ՝ անկախ նրանց գտնվելու վայրից:

- Թուրքական կառավարությունը, որպես միջազգային հանցագործության կատարման մեջ մեղադրվող պետություն, պարտավոր է իրենից պահանջվող ցանկացած անձի հանձնել միջազգային դատարանին, որպեսզի նրա նկատմամբ իրականացվի արդարադատություն:

- Միևնույն անձին կարելի է կրկին դատել, եթե չկա վստահություն, որ նրա նկատմամբ իրականացվել է օրյեկտիվ արդարադատություն (226-րդ հոդված):

Ինչպես արդեն նշվեց, Սևրի հաշտության պայմանագիրը չվավերացվեց, և դրա դրույթներով նախատեսված՝ պատերազմի հանցագործների պատասխանատվության մասին պարտավորությունը միջազգային իրավական ուժ չստացավ: Դրա համար գոյություն ունեին քաղաքական բնույթի մի շարք պատճառներ,

որոնց անդրադառնալն այս պահին իմ խնդիրը չէ: Սակայն ակնհայտ է, որ Սևրի պայմանագրի ուժի մեջ չմտնելը, նույնիսկ տվյալ պատմական ժամանակաշրջանում, որևէ կերպ չի նսեմացրել թուրքական ոճրագործությունների հանցավոր հեղինակներին պատասխանատվության ենթարկելու կարևորությունը: Չնայած թուրք հանցագործներին պատժելու վերաբերյալ Սևրի պայմանագիրը չվավերացվեց, սակայն այն միջազգային պայմանագրային մակարդակով արձանագրեց Օսմանյան թուրքիայի իշխանությունների գործած հանցագործությունների փաստը:

Կարծում եմ, որ եթե չլիներ Սևրի պայմանագրում թուրքական հանցագործներին պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտության գաղափարը, չէին լինի նաև հենց իրենց՝ թուրքերի կողմից կազմակերպված թուրք պաշտոնյաների դատավարությունները:

**4. Կայի՞ն, արդյոք, որոշակի առնչություններ Սևրի պայմանագրի, որն ստորագրվեց 1920թ. օգոստոսի 10-ին, և Թուրքիայի նոր կառավարության կողմից դրանից մեկ տարի առաջ՝ 1919թ. հունվարի 8-ին, սկսված դատաքննության միջև, որի նպատակն էր պատասխանատվության ենթարկել երիտթուրքական կառավարության ղեկավարներին ու «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներին:**

Թուրքերը հիանալի գիտեին, որ միջազգային արդարադատության պրակտիկայում գոյություն ունի սկզբունք, որի համաձայն հանցագործին պետք է դատել կամ հանձնել (*aut dedere aut judicare*):

Անժխտելի ապացույցների և համաշխարհային կարծիքի ճնշման ներքո, ինչպես նաև ձգտելով ձերբազատվել իր հանցավոր գործունեությամբ վարկաբեկված երիտթուրքական վարչակարգից, Թուրքիայի նոր կառավարությունը որոշում է կայացնում քրեական

պատասխանատվության ենթարկել երիտթուրքական կառավարության ղեկավարներին ու «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներին՝ նրանց մեղադրելով Օսմանյան կայսրությանն Առաջին համաշխարհային պատերազմի մեջ ներքաշելու, ինչպես նաև հայերի զանգվածային տեղահանությունն ու կոտորածը կազմակերպելու համար:

Դատաքննությունը նախապատրաստելու նպատակով 1918թ. դեկտեմբերի 16-ի որոշումով կազմավորվում են հարցաքննիչ խմբեր, որոնք սկսում են հավաքել արևմտահայության կոտորածների վերաբերյալ մեղադրական ապացույցներ՝ ծածկագիր հեռագրեր, պաշտոնական գրություններ, հրահանգներ ու հրամաններ, ինչպես նաև ականատեսների վկայություններ: Օսմանյան կայսրության նահանգները բաժանվում են 10 դատաքննչական շրջանների, յուրաքանչյուր շրջանի համար նշանակվում են դատախազներ, հարցաքննիչ դատավորներ և քարտուղարներ: Ձերբակալվում են երիտթուրքական կառավարության անդամներ ու կուսակցության ղեկավարներ, շրջանային պատասխանատու քարտուղարներ, լիազորներ, կուսակալներ, զինվորականներ և այլ պաշտոնատար անձինք: Սակայն այդ ժամանակ հայկական ցեղասպանությունը մտահղացողներն ու անմիջական կազմակերպիչները՝ Թալեթ փաշան, Էնվեր փաշան, Ջեմալ փաշան, Բեհադդին Շաքիր բեյը, Նազըմ բեյը և այլք, արդեն դիմել էին փախուստի:

1919թ. հունվարի 8-ին Կ.Պոլսում ստեղծվեցին Առաջին, երկրորդ և երրորդ զինվորական արտակարգ դատական ատյանները: Թեև, ըստ թուրքական օրենսդրության, դատաքննությունը պետք է իրականացվեր հանցագործության կատարման վայրում, սակայն 1919թ. փետրվարի 5-ին Կ.Պոլսի զինվորական արտակարգ դատարանը որոշում է կայացնում մեղադրյալներին Կ.Պոլսում դատելու մասին:

Երիտթուրքական կուսակցության և թուրքական կառավարության ղեկավարների նկատմամբ դատավարությունն սկսվեց

1919թ. ապրիլի 27-ին և ընդհատումներով տևեց մինչև հունիսի 26-ը: Դատավարությունն իրականացում էր հինգ անդամից կազմված զինվորական դատարանը:

Դատավճիռը կայացվեց 1919թ. հուլիսի 5-ին:

Նկատի ունենալով, որ Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչների մի մասը պատասխանատվությունից խուսափելու համար մինչև դատաքննության սկսվելը փախել էր արտասահման, իսկ մյուս մասը դատաքննության ընթացքում այս կամ այն կերպ կարողացավ խուսափել պատասխանատվությունից, հանցագործների մի մասը մեղադրվեց հեռակա կարգով, իսկ մյուս մասի դատավարությունը տեղի ունեցավ իրենց ներկայությամբ:<sup>8</sup> Հեռակա կարգով դատապարտվեցին 11, իսկ դատավարությանը ներկաներից՝ կուսակցական և պետական 20 բարձրաստիճան գործիչներ:

Մեղադրական եզրակացություններում հիշատակվող ծածկագիր հեռագրերը, նամակները և մյուս փաստաթղթերը վկայում էին, որ *արևմտահայության տեղահանություններն ու կոտորածները ռազմական կամ կարգապահական միջոցառում չեն եղել, սահմանափակ կամ տեղական բնույթ չեն կրել, այլ եղել են կանխատեսված և իրականացվել են բացարձակապես կուսակցության կենտրոնական կոմիտեի նախաձեռնությամբ, հատուկ կենտրոնի հրահանգով ու գաղտնի հրամաններով:*

Դատարանում խաչաձև հարցաքննության ընթացքում որպես մեղադրական ապացույց բերված հեռագրերի, նամակների և վկայությունների հիման վրա լիովին բացահայտվում է ճշմարտությունը, այսինքն՝ այն, որ տեղահանությունն ու կոտորածը հավանության են արժանացել «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի գաղտնի նիստերից մեկում՝ ձայների մեծամասնությամբ:

Դատաքննության ժամանակ դատարանի քարտուղար Շեֆիք

բեյի կողմից հրապարակված մեղադրական եզրակացությունում մասնավորապես նշվում էր.

- Դատական փաստաթղթերը վկայում են, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեն միաժամանակ ունեցել է երկու հատուկ կազմակերպություն, որոնցից մեկը գործել է հրապարակայնորեն՝ կուսակցության ներքին կառուցողության և ծրագրի համաձայն, իսկ մյուսը գործել է ընդհատակյա և գաղտնի հրահանգներով: Նշված կուսակցության կենտրոնական կոմիտեի ազդեցիկ ղեկավարները մեղադրվում են օրինազանցության, չարաշահումների և մի շարք կոտորածներ կատարելու հանցանքով:

- Ներկա հետաքննության գլխավոր հարցն այն է, որ հայերի տեղահանության ընթացքում տարբեր ժամանակներում և զանազան վայրերում տեղի ունեցած հանցագործությունները և հատկապես յուրաքանչյուր հանցագործության նկատմամբ օրենքի հիման վրա կատարված քննությունները ցույց են տալիս, որ դրանք ոչ թե սահմանափակ կամ տեղական բնույթ են ունեցել, այլ կանխատեսված իրականացվել են վերոհիշյալ անձանցից բաղկացած և միասնական ուժ հանդիսացող «հատուկ կենտրոնի» բանավոր հրահանգով և գաղտնի հրամաններով:

- Ներքին գործերի նախարարության հատուկ գրասենյակի պետ Իհսան բեյը հաստատում է, որ այն ժամանակ, երբ ինքը գտնվելիս է եղել Քիլիսի կայմականի պաշտոնում, Ստամբուլից Հալեպ գործուղված Աբդուլլահադ Նուրի բեյը հայտարարել է, որ «տեղահանման հիմնական նպատակը (հայերի) ոչնչացումն է», և ավելացրել է նաև, որ ինքն այդ հարցով կապի մեջ մտնելով Թալեաթ բեյի հետ, նրանից ուղղակի կոտորածի հրաման է ստացել, որ նա (Թալեաթը) ձգտել է համոզել իրեն, որ դա՛ է երկրի փրկությունը (տե՛ս հարցաքննության փաստաթղթերը, էջ 15):

- Չանկըրի բնակավայրի մահմեդականները շրջակա վայրերում

տեղի ունեցող դեպքերին վերաբերվել են ատելությամբ: Նույնիսկ մի օր մի խումբ մեծամեծեր և ավագանիներ իրենց մյուսֆթիի հետ դիմել են քաղաքագուլիս Ռեշիդ փաշային՝ հետևյալ խոսքերով. «Շրջակա վիլայեթներից հայերին իրենց երեխաներով միասին, մորթվող անասունների նման քշում են դեպի լեռները և այնտեղ կոտորում: Մենք չենք ուզում, որ մեր վիլայեթում այդպիսի բան կատարվի: Մենք վախենում ենք աստծո ցասումից: Պետությունը ոչ թե դաժանությամբ է կառավարվում, այլ՝ բանականությամբ: Խնդրում ենք, որպեսզի մեր վիլայեթում այսպիսի կոտորած տեղի չունենա»:

- Վեհիբ փաշայի վկայության մեջ (տե՛ս գործ N 7, էջ 3) նշվում է, որ հայերի նկատմամբ կատարված վայրագություններն ու կոտորածները, նրանց ունեցվածքի թալանն ու կողոպուտը որոշված է եղել «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից: Եվ այդ կոտորածների, ինչպես նաև բոլոր զազանությունների իրագործման համար Բեհաեդդին Շաքիր բեյը երրորդ բանակի շրջանում պատրաստել է հատուկ մարդասպաններ և անձամբ ղեկավարել նրանց: Նույնիսկ պետության ղեկավարները ենթարկվել են Բեհաեդդին Շաքիրի հրամաններին և հրահանգներին:<sup>9</sup>

Ինչպես այս, այնպես էլ մյուս մեղադրական եզրակացություններում տեղ է գտել բազմաթիվ այլ փաստերի և ապացույցների շարադրանք, որը թուրք բարբարոսների իրական հանցանքը վկայող ապացույցների չնչին մասն է կազմում: Իրականում դրանց թիվը վիթխարի էր:

Դատարանի 1919թ. հուլիսի 5-ի դատավճռով հանցագործներին, այլ իրավախախտումների հետ մեկտեղ, մեղսագրվում էին արևմտահայության կոտորածները և ունեցվածքի կողոպուտը:<sup>10</sup>

Դատարանը, որպես սկզբունքային մեղավորներ, քրեական օրենսգրքի 45 հոդվածի առաջին կետով մեղավոր ճանաչեց և մահվան դատապարտեց Թալեաթին, Էնվերին, Ջեմալին և դուկտոր Նազըմին, իսկ 45 հոդվածի երկրորդ կետի և 55 հոդվածի

վերջին կետի համաձայն՝ Ջավիդը, Մուստաֆա Շերեֆը և Մուսա Զյազինը դատապարտվեցին 15-ական տարի ժամկետով աքսորի: Դատարանը, գտնելով, որ բավարար հանցանշաններ չկան, ազատ արձակեց սենատի նախկին նախագահ Ռիֆաթ բեյին, փոստի և հեռագրատան նախարար Չաշիմ բեյին:<sup>11</sup>

1919թ. հունիսի 21-ին, 23-ին և 28-ին տեղի են ունենում շրջանային մակարդակի կուսակցական գործիչների և պաշտոնատար անձանց դատավարությունները, որոնց վերաբերյալ դատավճիռը կայացվում է 1920թ. հունվարի 8-ին: Մեղադրական եզրակացության և դատավճռի տվյալներով՝ ամբաստանվող 36 անձանց մեջ կային կուսակցության քարտուղարներ, պատգամավորներ, կայմականներ, ոստիկանության պետեր և այլ պաշտոնյաներ:

Կարծում ենք, թուրքական իշխանությունների կողմից 1919թ. կազմակերպված դատաքննությունները և կայացված դատավճիռները բոլորովին էլ կատարվածի համար ափսոսանքի, անկեղծ զայրույթի և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու բարի կամքի արդյունք չէին: Թուրքիան, տեսնելով, որ նախապատրաստվում է Սևրի պայմանագիրը, որի «Պատիժներ» վերնագիրը կրող VII բաժնի գոյությունն իսկ նրա համար լուրջ վտանգ էր ներկայացնում, այդ դատավարություններով փորձ արեց լուծել երկու խնդիր. առաջին՝ ինչպես արդեն նշվեց, սահմանազատվել, ավելի ճիշտ՝ ձերբազատվել միջազգային հանրության և իր այլազգի քաղաքացիների աչքում վարկաբեկված նախորդ իշխանությունից և դրանով վերականգնել թուրքական հանրային իշխանության հեղինակությունը, և երկրորդ՝ հարկադրված էր ինքը դատել հայերի տեղահանության և կոտորածի համար մեղավոր անձանց, որպեսզի դրանով իսկ թուլացնի Սևրի դաշնագրի 226-230-րդ հոդվածներով նախատեսված պարտավորությունների իրավաբանական ուժն ու նշանակությունը: Այլապես, այդ անձանց նա պարտավոր էր հանձնել Դաշնակից տե-

րություններին, ինչը, բնականաբար, թուրքիայի համար ցանկալի չէր: Ասվածի իրավացիությունը հիմնավորող հանգամանք պետք է համարել այն, որ 1919թ., երբ թուրքիայում սկսվեցին դատավարությունները, թուրքական իշխանությունները չէին կարող ենթադրել, որ նախապատրաստվող Սևրի հաշտության պայմանագիրը, 1920թ. օգոստոսի 10-ին ստորագրվելուց հետո անդամ պետությունների կողմից չի վավերացվելու:

Թուրքական դատարանները չլուծեցին նաև հայերի կողոպտված սեփականության վերադարձի հարցը: Թուրքական դատարանները, ապացուցված համարելով հայերի զանգվածային բնույթ կրող կողոպուտի, արտաքսման և կոտորածի փաստերը, միաժամանակ չճանաչեցին նրանց՝ նյութական հատուցում ստանալու իրավունքը, մինչդեռ Սևրի հաշտության պայմանագիրը, այլ հարցերի հետ մեկտեղ, լուծում էր նաև հայերի ցեղասպանության ընթացքում նրանց կողմից «լքված» սեփականության իրավունքի պաշտպանության հարցը:

Լիովին հիմնավոր և բացատրելի են այն պետությունների, կազմակերպությունների և առանձին անձանց գործողությունները, որոնք ուղղված են թուրքիային հարկադրելու ճանաչել հայերի ցեղասպանությունը: Սակայն թուրքիայի համառությունն այս հարցում նույնպես ունի իր բացատրությունը. ցավոք, գործնական կյանքում շատ հազվադեպ է պատահում, որ իրավախախտը՝ լինի անհատ, թե պետություն, կամավոր ընդունի իր մեղքը: Բայց դա ոչինչ չի նշանակում, քանի որ Հայոց ցեղասպանության փաստը ճիշտ այնպիսի պատմական իրողություն է, ինչպիսին հրեաների ողջակիզումն է: Եթե այսօր որևէ մեկը փորձի հերքել հրեաների ողջակիզման պատմական փաստը, հազիվ թե մյուսները հակառակն ապացուցելու համար դիմեն միջազգային դատարանին:

**Ալֆրեդ  
դը ԶԱՅԱՍ**

**ՀԱՅՈՑ  
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ  
ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ  
ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ**



**2005** թ. ապրիլին Հայոց ցեղասպանության 90-ամյակի առիթով Երևանում խոշոր միջազգային գիտաժողով

էր հրավիրվել, որին մասնակցելու պատիվ ունեցա: Այդ կապակցությամբ Իրավունքի և դեմոկրատիայի եվրոպական հայկական միությունը գրքի տեսքով հրատարակեց իմ հետազոտությունը՝ Հայոց ցեղասպանության իրավական կողմերի (խնդիրների) վերաբերյալ: Նշյալ ուսումնասիրությունը բաժանվեց համաժողովի բոլոր մասնակիցներին, ինչպես նաև Եվրոպառլամենտի ներկայացուցիչներին: Աշխատության վերաբերյալ իր կարծիքն է ներկայացրել ժնկի իրավաբանների միջազգային հանձնաժողովը, որն էլ որպես նախաբան ներկայացված է գրքում:

Այս ամառ նշյալ աշխատության վերանայված տարբերակը լույս տեսավ Միացյալ Նահանգներում հրատարակվող Armenian Review-ի հատուկ թողարկման մեջ: Դուք դրան կարող եք ծանոթանալ իմ ինտերնետային կայքում: Կան նաև տվյալ աշխատության ֆրանսերեն

և իսպաներեն տարբերակները, որոնք ձեռք բերելու համար կարող եք դիմել Հիլդա Չորոյանին՝ Արդարության և Ժողովրդավարության եվրոպայի հայերի դաշնության Բրյուսելի գրասենյակ:

Այսօր կցանկանայի անդրադառնալ այդ աշխատության մի շարք դրույթների, առանց ներկայացնելու վերոհիշյալ իրավաբանական կարծիքը, քանի որ վերջինս բավականին երկար է և տեխնիկական բնույթ ունի:

Նշյալ իրավաբանական կարծիքն օգտագործվել է գերմանական *Zentrum gegen Vertreibungen* հիմնադրամի կողմից *Erzwungene Wege* («բռնի տարհանում») ցուցահանդեսը կազմակերպելու համար, որում ներկայացվել էին տարհանմանը, բռնի տեղափոխություններին (տեղահանություններին), էթնիկ մաքրմանը և XX դարի ցեղասպանություններին, այդ թվում՝ նաև Հայոց ցեղասպանությանը վերաբերող նյութեր:

Ձեզ մոտ՝ որպես հայ ժողովրդի ներկայացուցիչների, թերևս, հարց ծագի, թե ինչու են այսօր այդքան կարևորվում Հայոց ցեղասպանության և Ցեղասպանության վերաբերյալ կոնվենցիայի խնդիրները: Ի վերջո, Հայոց ցեղասպանության վերաբերյալ փաստերն առկա են և խնդրով հետաքրքրվող ցանկացած ոք կարող է փաստեր գտնել: Որտե՞ղ են Փոքր Ասիայի հայկական գյուղերը: Որտե՞ղ են եկեղեցիները, վանքերը և գերեզմանները: Ի՞նչ պատահեց դրանց: Դրանք անցյալ հազարամյակում ոչնչացվեցին Օսմանյան Թուրքիայի կողմից: Սա ակնհայտ և անհերքելի փաստ է: Չնկատել, անտեսել այս փաստը և համարել, թե տեղի ունեցածը ցեղասպանություն չէ, ոչ միայն մոլորություն է, այլև անազնվություն, անբարոյականություն և էժանագին քաղաքականության արդյունք:

Այնուամենայնիվ, այս փաստն այսօր փորձում են հերքել: Այժմ եկեք անդրադառնանք մի շարք միջազգային իրավական նորմերի, որոնք տարածվում են բոլոր ժողովուրդների և ազգերի վրա: Եթե ընդունենք, որ Հոլոքոսթը (հրեաների ողջակիզումը) ցեղաս-

պանություն է, ապա կասկածից վեր է, որ հայերի բնաջնջումը ևս նույն տրամաբանությամբ պետք է ցեղասպանություն համարվի: Անընդունելի է այն պնդումը, թե Հոլոքոսթը վերապրածները պետք է բարոյական և նյութական փոխհատուցում ստանան, մինչդեռ հայերը՝ ոչ:

Միջազգային իրավունքը չպետք է ընդունվի *a la carte*: Այն, ինչ ընդունելի է Հոլոքոսթի պարագայում, պետք է կիրառելի լինի նաև Հայոց ցեղասպանության դեպքում: Ցեղասպանության վերաբերյալ դաշնագիրն ընդունվել է 1948թ.՝ Հոլոքոսթից երեք տարի անց: Ոչ ոք կասկածի տակ չի առնում այն փաստը, որ հրեաների ողջակիզումը ցեղասպանություն է, անգամ այն պարագայում, երբ այդ սահմանումը տրվել է *ex post facto* (փաստացի իրողությունից հետո): Հայոց ցեղասպանությունը տեղի է ունեցել Հոլոքոսթից 25 տարի առաջ: Միջազգային իրավունքը չի պարունակում մի այնպիսի հիմնավոր կետ, որով անհնար լինի նշյալ Կոնվենցիայի դրույթները կիրառել Հայոց ցեղասպանության դեպքում:

Շատ կարևոր է ընդգծել այն փաստը, որ հայերի պահանջատիրությունը ցեղասպանության վերաբերյալ 1948թ. դաշնագրի արդյունքը չէ: Պարզապես, այս դաշնագրով ևս մեկ անգամ շեշտվեց միջազգային իրավունքի առկայությունը, ինչը կրկին հիմնավորեց հայերի պահանջատեր լինելու իրավունքը: Իսկապես, Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին Հայոց ցեղասպանության համար պատասխանատուները պետք է կանգնեին միջազգային դատարանի առաջ՝ Նյուրնբերգից դեռևս 25 տարի առաջ: Դուրսը Վլադիմիր Հովհաննիսյանն արդեն անդրադարձել է Սևրի պայմանագրին, մասնավորապես, հոդված 230-ին և հոդված 144-ին: Առաջին հոդվածով նախատեսվում է, որ այն թուրք պաշտոնյաները, որոնց հրամանով և մասնակցությամբ է իրականացվել ցեղասպանությունը, պետք է կանգնեն միջազգային դատարանի առջև: Երկրորդ հոդվածը նախատեսում է հայերի թալանված գույ-



քի փոխհատուցումը: Եթե նույնիսկ նման միջազգային դատարան երբևէ չծնավորվեր էլ, թուրքական դատարաններն արդեն 1919թ. հաստատել էին Օսմանյան պետության և որոշ կազմակերպիչների անձնական պատասխանատվության փաստը:

Դատապարտվեց միայն երեք պաշտոնյա, մինչդեռ ամենամեծ հանցագործները՝ էնվեր և Թալեաթ փաշաները, կարողացան փախչել, և նրանց նկատմամբ դատավճիռը հեռակա կարգով կայացվեց: Ինչևէ, դատարանը հավաքել էր վկայություններ և ճանաչել էր օսմանյան ղեկավարների ցեղասպանություն իրականացնելու մտադրությունը:

Այսօր ոմանք հարց են բարձրացնում, թե Ցեղասպանության վերաբերյալ կոնվենցիան արդյոք կարելի՞ է տարածել նաև հայերի ցեղասպանության վրա: Ո՞րն է նման դիրքորոշման պատճառը: Ամերիկայում այն կոչվում է political “red herring” (բառացի՝ քաղաքական կարմիր ապխտած հարինգ), մի քաղաքականություն, որը տարվում է միտումնավոր՝ մարդկանց շփոթության մեջ պահելու, ուշադրությունը հիմնական խնդրից շեղելու համար: Այս պարագայում դա արվում է հայերի պահանջատիրության իրավական և արդարացի լինելու խնդրից ուշադրությունը շեղելու նպատակով: Ուշադրությունը շեղող այս խորամանկ քայլի նպատակն է համոզել, թե հայերի իրավունքի խնդիրը պետք է բխի և պայմանավորված լինի այն հանգամանքով, թե նշյալ դեպքում այն արդյո՞ք համապատասխանում է միջազգային կոնվենցիայի դրույթներին: Հարցին հետևում է մերժումը՝ պատճառաբանությամբ, թե վերոնշյալ Կոնվենցիան հետադարձ ազդեցություն չունի:

Այս դիրքորոշումը որդեգրել են արևմտյան մի շարք թուրքամետ գիտնականներ, ինչպես նաև ԱՄՆ-ի պետդեպարտամենտի կողմից ֆինանսավորվող որոշ կազմակերպություններ, որոնք շահագրգռված են հաճոյանալ ՆԱՏՕ-ի իրենց կարևոր դաշնակցին: Արևմտյան որոշ լրագրողներ և գիտնականներ ևս ընկել են այս թակարդը:

Թուրքական կազմակերպությունների և անգամ որոշ թվացյալ չեզոք կազմակերպությունների, ինչպիսին է Անցումային իրավունքի կենտրոնը, ապատեղեկացնող քարոզարշավի պատճառով անհրաժեշտություն է ծագում որոշ դրույթներ մեջբերել Սևրի պայմանագրից, ինչպես նաև որպես նախադեպ հիշատակել Նյուրնբերգյան դատավարությունը: Երկու դեպքում էլ հիմք են ընդունված այն սկզբունքները, որ մարդկության նկատմամբ իրականացվող սպանող և ցեղասպանությունը միշտ էլ պատժելի են և դրանք իրականացվել են մինչև վերջին կոնվենցիաների և օրենսդրական ակտերի ընդունումը:

Նշյալ քաղաքականությունը հետապնդում է մեկ այլ թաքնված նպատակ ևս, այն է՝ համոզել, թե հայոց պահանջատիրությունը պետք է բխի իրավական որոշումից առ այն, որ տեղի ունեցածն իսկապես ցեղասպանություն է և ոչ թե պատահական սպանությունների շարք կամ այլ բան: Նման որոշման բացակայության պարագայում չի կարող բարձրացվել հայոց պահանջատիրության խնդիրը, ուստի և հայերը կմնան ձեռնունայն: Այս մոտեցումը թերի է, քանզի անտեսում է պատերազմի հանցագործությունների հետևանքները, իսկ մարդկության դեմ ոճրագործության և պատերազմի հետևանքները նույնն են, ուստի պետությունը պետք է պատժի ոճրագործներին և ռեաբիլիտացնի (վերականգնի) տուժածների իրավունքներն ու փոխհատուցում տրամադրի:

Սակայն այս ֆարսն ունեցավ իր ազդեցությունը. որոշ ոչ իրավաբանների կարծիքով՝ քանի որ 1915-1916թթ. հայերի ցեղասպանության զոհերի թիվը չի գերազանցում ցեղասպանության համար նախատեսված «շեմը», այսինքն՝ վիճակն այնքան էլ վատ չէ, ուստի այս էջը ևս կարելի է շրջել:

ԱՄԿ-ում տեղի ունեցող վերջին զարգացումները՝ կապված մեծ բռնությունների զոհերի փոխհատուցման իրավունքի ճանաչման հետ, տարածվում են նաև հայոց պահանջատիրության խնդրի վրա:

Փոխհատուցման իրավունքի խնդիրը հաստատագրված է ՄԱԿ-ի Առաջխաղացման և մարդու իրավունքների ենթահանձնաժողովի վերջնական հաշվետվության մեջ, որը կազմված է Աուն Շաուկաթ Ալ Խասսանեի կողմից: Այնտեղ մարդկանց տարհանումը (տեղափոխությունը) սահմանվում է որպես վերջիններիս իրավունքների սահմանափակում: Հռչակագիրը մեկ անգամ ևս վերահաստատում է այն փաստը, որ մարդկանց տարհանումն անօրինական քայլ է և որ տուժածներն իրավունք ունեն վերադառնալու իրենց բնակավայրերը և փոխհատուցում ստանալու: Այս դրույթն ամրագրված է նաև ենթահանձնաժողովի 2002/30 և 2005/21 որոշումներում, ինչպես նաև Փինհեյրոյի՝ 2005թ. ընդունած հայտնի սկզբունքներում: Վերոնշյալ սկզբունքները հիմնված են այն փաստի վրա, որ պետությունը չի կարող թաքցնել իր ոճրագործության պտուղները: Եթե նիկ մաքրում կամ ցեղասպանություն իրականացրած պետությանը չպետք է թույլ տրվի անարդարացիորեն հարստանալ իր զոհերի գույքի (սեփականության) հաշվին: *Ex injuria non oritur just.*

Պատկերացրեք, թե օրենքի ինչպիսի խախտում կհամարվեր, եթե Գերմանիային թույլ տրվեր պահելու նացիստների կողմից սպանված հրեաներից հափշտակած ամբողջ գույքը (սեփականությունը) սինագոգները, նկարները, զարդերը և այլն: Մինչդեռ նույնն է տեղի ունենում Փոքր Ասիայում, որտեղ թուրքերը զավթել և պահում են եկեղեցիներն ու վանքերը, սպանված հայերի ժառանգներին պատկանելիք տներն ու հողերը: Նույն բանն է տեղի ունենում Հյուսիսային Կիպրոսում, որտեղ թուրքերը զավթել են կիպրոսցի հույների եկեղեցիներն ու սեփականությունը (գույքը): Հատկապես վերջին իրողությունը (օրինախախտման փաստը) հաճախ է դատապարտվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից: Մասնավորապես՝ 1996 և 1998թթ. որոշումները կապված Լոյզիդոյի հայցի հետ՝ ընդդեմ Թուրքիայի և 2001թ. մայիսի 10-ի Կիպրոսի հայցի հետ՝ ընդդեմ Թուրքիայի: Միջազգային հանրության խնդիրն է պահանջել,

որպեսզի կիրառվեն նշյալ որոշումների բոլոր դրույթները:

Թույլ տվեք մի առաջարկություն անել, որը հնարավորություն կտա հստակեցնելու հարցի իրավական կողմը և մեխանիզմներ մշակելու հասանելիք սեփականությունը Հայոց ցեղասպանության զոհերի ժառանգներին վերադարձնելու համար:

Եկեք փորձենք ներգրավել ՄԱԿ-ի գործող կառույցները: Ավելի կոնկրետ. կարելի է դիմել Հաագայի միջազգային դատարան՝ նշյալ խնդրի վերաբերյալ նրանց «խորհրդակցական կարծիքը» ստանալու համար: Անշուշտ, ՄԱԿ-ի կանոնադրության 90-րդ հոդվածի համաձայն՝ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը կարող է դիմել Հաագայի իրավական դատարան՝ օրենքի (իրավունքի) կոնկրետ դրույթների մեկնաբանության հետ կապված որոշակի հարցերի շուրջ խորհրդակցական կարծիք ստանալու համար, օրինակ՝ Ցեղասպանության մասին կոնվենցիայի հետադարձ կիրառման և Հայոց ցեղասպանության համատեքստում՝ վերջինիս կոնկրետ հետևանքների վերաբերյալ:

Ավելին, Ցեղասպանության մասին կոնվենցիան ստորագրած ցանկացած երկիր, օրինակ՝ Հայաստանը, Ֆրանսիան, Հունաստանը, Կիպրոսը, Ռուսաստանը և Միացյալ Նահանգները, Կոնվենցիայի VIII հոդվածով սահմանված կարգով կարող են դիմել գլխավոր քարտուղարություն՝ «ձեռնարկելու Կանոնադրությամբ սահմանված այնպիսի միջոցառումներ, որոնք իրենք նպատակահարմար են գտնում»:

Բացի այդ, կա մեկ այլ տարբերակ ևս. Ցեղասպանության մասին կոնվենցիան ստորագրած ցանկացած երկիր, հիմք ընդունելով վերջինիս IX հոդվածը, «վիճահարույց խնդրի շուրջ» կարող է հայց ներկայացնել Իրավունքի եվրոպական դատարան՝ խնդրելով վճիռ կայացնել (որոշում ընդունել) և հիմք ընդունելով Կոնվենցիայի սահմանումը, հայերի դեմ ոճրագործությունները ճանաչել որպես «ցեղասպանություն», ինչպես նաև ընդունել ցեղասպանության մինչ օրս շարունակվող հետևանքները՝ կապ-

ված զոհերի ժառանգների հետ. մասնավորապես, ճանաչել նրանց՝ հայրենիք վերադառնալու և իրենց մշակութային ժառանգությանը տեր կանգնելու իրավունքները:

Ավելին, Օսմանյան կայսրությունը հետք է թողել նաև իր իրավահաջորդի՝ Թուրքիայի, ինչպես նաև, ընդհանուր առմամբ, միջազգային հանրության վրա: Իրավունքի եվրոպական դատարան ներկայացվող այս հայցին պետք է միանան ոչ միայն Հայաստանը, այլև Հունաստանը, Ֆրանսիան, Կիպրոսը, Ռուսաստանը, Միացյալ Նահանգները և Կոնվենցիան ստորագրած մյուս երկրները:

Թուրքիան նույնպես այդ Կոնվենցիայի տակ ստորագրած երկրներից է, ուստի IX հոդվածը տարածվում է նաև վերջինիս վրա: Նշյալ հոդվածում սահմանվում է. «Կոնվենցիան ստորագրած կողմերի միջև վեճերը՝ կապված կոնվենցիայի դրույթների մեկնաբանման, կիրառման, կատարման հետ, ներառյալ այն դրույթները, որոնք կապված են ցեղասպանության, ինչպես նաև III հոդվածում թվարկված այլ գործողությունների հետ, վիճող կողմերից մեկի նախաձեռնությամբ պետք է ներկայացվեն Իրավունքի միջազգային դատարան»:

Բանավեճի առարկան այն է, թե *prima facie*-ն որքանով է արդարացված (ընդունելի): Դատարանի իրավասության հետ կապված վիճարկելի խնդիրները Միջազգային իրավունքի դատարանի կողմից ենթակա են դիտարկման: Համաձայն Միջազգային իրավունքի դատարանի կանոնադրության 36-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «այն դեպքերում, երբ դատարանի իրավասության խնդիրներ են ծագում, դատարանը տվյալ վիճահարույց խնդրի վերաբերյալ որոշում է կայացնում»:

Ինչ վերաբերում է *Ratione temporis*-ի հետ կապված դատարանի իրավասության շրջանակներին՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ցեղասպանությունը տեղի է ունեցել 90 տարի առաջ, ՄԻԴ-ը կարող է հիմք ընդունել Կոնվենցիայի ղեկավարտիվ բնույ-

թը, ինչպես նաև Մարդու իրավունքների հարցերով եվրոպական դատարանի և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի մոտեցումները՝ կապված «շարունակական իրավիճակների» հետ, նկատի առնելով այն իրողությունը, որ հայերի պահանջատիրությունն ուղեկցվում է ցեղասպանության պատմական փաստի և դարերի պատմություն ունեցող ժառանգության փոխհատուցման մերժմամբ՝ վիրավորելով հայ ժողովրդի արժանապատվությունը: Այսպիսով, տվյալ վիճահարույց խնդիրը կարող է դառնալ Միջազգային իրավունքի դատարանի քննության առարկա, քանի որ պատմական փաստի մերժումը և փոխհատուցում տրամադրելուց հրաժարվելը տեղի են ունեցել Ցեղասպանության մասին կոնվենցիայի ընդունումից հետո: Ավելին, մարդու՝ ճշմարտությունն իմանալու իրավունքը, որն անընդմեջ շեշտում են ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքի հանձնաժողովի անդամները, այդ իրավունքի վերահաստատումը Մարդու իրավունքների խորհրդի կողմից, ինչպես նաև մարդու՝ իր պատմությանը և ինքնությանը ծանոթանալու իրավունքը պահանջում են, որպեսզի Իրավունքի միջազգային դատարանն ընդունի տեղի ունեցած փաստերը:

Հայոց ցեղասպանության նկատմամբ Ցեղասպանության մասին կոնվենցիայի կիրառման տրամաբանական արդյունքը պետք է լինի հայկական եկեղեցիների, վանքերի, պատմական ու մշակութային այլ արժեքների վերադարձը հայ ժողովրդին, ինչպես նաև համապատասխան փոխհատուցման տրամադրումը տուժածների և ցեղասպանության զոհերի ժառանգներին: Վերջինիս համար որպես նախադեպ կարող են ծառայել Հոլոքոսթի զոհերին փոխհատուցում տրամադրելու նպատակով մշակված մեխանիզմները: Հարկավոր է հիմնել Եղեռնի զոհերի միջազգային հիմնադրամ, որի կառավարումը պետք է իրականացնի ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի բարձրաստիճան անդամներից որևէ մեկը:

Հայոց ցեղասպանության զոհերի և նրանց ժառանգների նկատմամբ արդարության վերականգնման հարցում միջազգային հանրությունը ոչ միայն իրավական, այլև բարոյական պատասխանատվություն է կրում: Առաջին քայլը պետք է լինի թուրքիայի՝ որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդի կողմից ցեղասպանության փաստի և այդ իրողության համար պատասխանատվության ընդունումը: Քանի դեռ թուրքիան շարունակում է մերժողական քաղաքականություն վարել, շարունակում է նաև ոտնահարել ինչպես հայերի, այնպես էլ մարդկության՝ ճշմարտությունն իմանալու իրավունքները:

### Եզրափակիչ դրույթներ (մեկնաբանություն)

Ելույթիս սկզբում խոսեցի Գերմանիայում (Բեռլինում, Դյուսելդորֆում, Շտուտգարտում և Մյունխենում) կազմակերպված «*Erzwungene Wege*» ցուցահանդեսի մասին: Հետագայում այն կտեղափոխվի նաև գերմանական այլ քաղաքներ: Ելնելով այն հանգամանքից, որ ցուցահանդեսում տեղ են գտել Հայոց ցեղասպանությանը վերաբերող նյութեր, առաջարկում եմ մտածել այդ ցուցադրությունը նաև Նիկոսիայում, Մոսկվայում կամ Երևանում կազմակերպելու ուղղությամբ:

Կցանկանալի նաև, որ դուք միանաք այլ ցեղասպանությունների զոհերի դատին, մասնավորապես, Պոնտոսի և Ջմյուռնիայի հույների, Օսմանյան կայսրության ասորի քրիստոնյաների և 200.000 տեղահանված կիպրոսցի հույների հետ, որոնք 1974թ. դարձան թուրքիայի հարձակողականության և բռնազավթման զոհ: Ձավեշտալի է, որ միջազգային հանրությունը համակերպվում է այն փաստի հետ, որ թուրքիան մեկ միլիոնից ավելի հայ է կոտորել և մինչ օրս չի ընդունել իր մեղքը ու փոխհատուցում չի տրամադրել: Աղաղակող փաստ է, որ 34 տարի առաջ թուրքիան գրավել է Կիպրոս կղզին և

մինչ օրս բռնի տնօրինում է Կիպրոսի տարածքի 37%-ը: Խայտառակություն է, որ Եվրամիությունը թուրքիայի հետ բանակցում է նրան իր կազմում ընդունելու շուրջ: Սա առնվազն սյուրռեալիզմ է:

Կոչ կանեի միանալ Հարավային Պրուսիայի, Պոմերանիայի, Սիլեզիայի, Բոհեմիայի, Սորավիայի, Հունգարիայի և Հարավսլավիայի 15 մլն վտարանդիներին և Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին մարդկության դեմ իրականացված սարսափելի հանցագործության երկու միլիոն կործանված գերմանացիների արդարացի դատին: Այս թեմային նվիրված երկու գիրք եմ գրել՝ «Նեմեսիսը Պոտսդամում» (Routledge) և «Սարսափելի վրեժ» (New York: Palgrave, Macmillan):

Ուզում եմ մեկ անգամ ևս կրկնել. միջազգային օրենքում ամրագրված է հայրենիք վերադառնալու իրավունքը: Ամրագրված է նաև իրավունքի վերականգնման (ռեաբիլիտացիայի) և փոխհատուցում ստանալու իրավունքը, որի մասին բազմաթիվ հղումներ կան ՄԱԿ-ի տարբեր որոշումներում ու հռչակագրերում: Հիշենք նաև 1995թ. Դայթոնում ձեռք բերված համաձայնությունները, որոնք վերջ դրեցին Բոսնիայի և Հերցեգովինայի միջև պատերազմին: Այս համաձայնության արդյունքում ստեղծվեց Մարդու իրավունքների պալատը, որը քննության առավ տեղահանության և փոխհատուցման մոտ 15.000 դեպք:

Գոյություն ունեն միջազգային օրենքի նորմեր, որոնք կիրառվում են: Եկեք պահանջենք, որպեսզի դրանք կիրառվեն բոլոր դեպքերի նկատմամբ, որպեսզի ճանաչվեն ցեղասպանության զոհերը, վերականգնվեն նրանց իրավունքները և փոխհատուցվեն նրանց կրած վնասները:

Այս նպատակների իրականացման ճանապարհին դեռևս որոշ խոչընդոտներ կան, և դրանցից առաջինը տեղեկատվության պակասն է: 2000թ. նոյեմբերին Փիթսբուրգի Դյուքուեզնի (Փենսիլվանիայի նահանգ) համալսարանը «Էթնիկ մաքրումը XX դարի Եվրո-

պայում» խորագրով մի մեծ գիտաժողով էր կազմակերպել, որին ես մասնակցեցի Հայոց ցեղասպանության մասին ելույթով: Վերջինս 2003թ. գրքի տեսքով հրատարակեց Կոլումբիայի համալսարանի հրատարակչությունը: Գրքի վերնագիրն է «Էթնիկ մաքրումը XX դարի Եվրոպայում»: Գիրքը խմբագրել են Սթիվեն Վարդը և Հանթ Թուլին: Ես արդեն խոսել եմ Գերմանիայում կազմակերպված «*Erzwungene Wege*» ցուցահանդեսի մասին, որում ներկայացված էին տեղահանմանը և ցեղասպանությանը, այդ թվում՝ նաև Հայոց ցեղասպանությանը վերաբերող նյութեր: Այն բավականին մեծ արձագանք գտավ, իսկ ցուցահանդեսի կատալոգը նոր քննարկումների առիթ դարձավ: Այս կապակցությամբ թույլ տվեք անդրադառնալ Գերմանիայի իշխանությունների վերջին որոշմանը՝ Բեռլինում բացել փաստաթղթերի կենտրոն, որի նպատակը կլինի բռնի տեղահանությունների ձևով դրսևորվող ժողովրդագրական մեքենայությունների խնդրի ուսումնասիրությունը:

Կանխամտածված սխալ տեղեկատվություն տարածելու հետևանքով ծագել է մեկ խոչընդոտ ևս: Այսպես, Թուրքիան փորձում է ձախողել լուրջ հետազոտությունները և Հայոց ցեղասպանության խնդրին քրեական ուղղվածություն տալ (քրեականացնել). տես քրեական օրենսգրքի 101 և 305 հոդվածները: Վատ դիրքորոշում են որդեգրել որոշ գիտնականներ, որոնք քաղաքական նկատառումներով Հայոց ցեղասպանությունը դիտարկում են ընդամենը որպես «վերաբնակեցում, տեղափոխություն»: Գյունտեր Լյուխսի 2005թ. լույս տեսած «Հայոց կոտորածները (ջարդերը) Օսմանյան Թուրքիայում. վիճարկելի ցեղասպանություն» աշխատությունն ակադեմիական տեսակետից քողարկված ապաշնորհության նմուշ է: 2007թ. ամռանը «Ցեղասպանության ուսումնասիրություններ և կանխարգելում» ամսագրում վերջինիս մասին բավականին բացասական կարծիք է արտահայտել ժոզեֆ Քեշիշյանը: Լյուխսի գիրքը նույնքան սկանդալային է և ա-

կադեմիական առումով՝ ցածրորակ, որքան և մի շարք գիտնականների ջանքերը՝ Հոլոքոսթն արդարացնելու ուղղությամբ:

Հանրության կողմից Հայոց ցեղասպանության ոճրագործության մասշտաբների գիտակցումը այն *sine qua non* պայմանն է, որը կարտահայտի այդ ուղղությամբ քայլեր ձեռնարկելու քաղաքական կամքը: Սակայն քաղաքական կամքի դրսևորման հարցում ամենամեծ խոչընդոտը, թերևս, պայմանավորվում է ՆԱՏՕ-ի քաղաքական նկատառումներով: Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչումը ձգձգվում է Թուրքիայի՝ որպես կարևոր գործընկերոջ մասին ՆԱՏՕ-ի թյուր պատկերացման, ինչպես նաև ԱՄՆ, Իսրայել, Թուրքիա դաշնագրի արդյունքում:

Թույլ տվեք վերջին կոնկրետ առաջարկությունն անել: Ինչպես գիտեք, Թուրքիան միացել է Քաղաքացիական և քաղաքական իրավունքի մասին համաձայնագրին: Շուտով այն իր նախնական հաշվետվությունը կներկայացնի 18 փորձագետներից բաղկացած Մարդու իրավունքների հանձնաժողովին: Սա հենց այն պահն է, երբ Հայաստանի քաղաքացիական հասարակությունը և մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված բոլոր հասարակական կազմակերպությունները պետք է հավաստիանան, որ Հայկական հարցը նշյալ հաշվետվության շրջանակներից դուրս չի մնացել: Հայերը պետք է «ստվերային հաշվետվություններ» նախապատրաստեն Մարդու իրավունքների հանձնաժողովի մանրակրկիտ քննարկմանը ներկայացնելու համար և պահանջեն կիրառել իրավունքների վերականգնման և փոխհատուցման խելամիտ մեխանիզմներ: Եկեք այնպես անենք, որ չասեն, թե Հայոց ցեղասպանության զոհերը կրկին մոռացության են մատնվել՝ այս անգամ մեր սերնդի կողմից, որը, թվում է՝ այնքան էլ հետաքրքրված չէ պատմությամբ, արդարության հաղթանակով, և մարդու իրավունքների խնդիրը նրա համար պարզապես ձևական բնույթ է կրում:



**Վլադիմիր  
ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՍԱՐ  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ԻՐԱՎԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱԿՏՎՈՒԹՅԱՆ  
ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ  
ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ**

**(դրանց հավանական  
ազդեցությունը հայերի դեմ  
իրագործված  
ցեղասպանության համար  
միջազգային իրավական  
պատասխանատվության վրա)**

**XX** դ. վերջին տասնամյակը բեկումնային էր հայերի դեմ իրագործված ցեղասպանության հիմնախնդրին առնչվող հարցերի վերիմաստավորման և նորովի ընկալման տեսանկյունից: Եթե 1980-ականների երկրորդ կեսին կարելի էր խոսել հայերի դեմ իրագործված ցեղասպանության հիմնախնդիրն իրավական դաշտ տեղափոխելու որոշ միտումների մասին, 1990-ականները նշանավորվեցին դրա իրավական հարթությանն առնչվող հիմնախնդիրների ակտիվ լուսաբանմամբ, երրորդ հազարամյակի սկզբին հայերի դեմ իրագործված ցեղասպանության հիմնական

քաղկացուցիչը դարձան հենց իրավական հարթության հիմնահարցերը: Հայերի դեմ իրագործված ցեղասպանության հիմնախնդրի իրավական դաշտ տեղափոխումը փաստորեն վերակենդանացրեց այդ հանցագործության համար միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելու՝ դեռևս XX դ. 20-ական թթ. վերջից «սառեցված» գործընթացը: Ինքնին հասկանալի է, որ ավելի քան 70 տարի սառեցված լինելուց հետո, մեր օրերում, տվյալ հարցի արժարժումը չէր կարող նույն բովանդակությունն ու ծավալն ունենալ, ինչ 1920-ականներին: Այդուհանդերձ և բարեբախտաբար, դեռ պահպանվում է հայերի դեմ իրագործված ցեղասպանության համար պատասխանատվության առավել գործուն և արդյունավետ ձևի՝ պետության պատասխանատվության իրագործման հնարավորությունը: Ահա հենց այս համատեքստում էլ նպատակահարմար ենք գտել ուսումնասիրել հայերի դեմ իրագործված ցեղասպանության համար պատասխանատվության ենթարկելու հարցը:

Հայերի դեմ իրագործված ցեղասպանության համար պետություններին միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելու հիմնախնդիրն անհնարին է քննել առանց տվյալ հանցագործության դեմ պայքարի հիմնական միջազգային իրավական գործիքի՝ Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մասին կոնվենցիայի դրույթների և հայերի դեմ իրագործված ցեղասպանության նկատմամբ դրանց հավանական կիրառելիության վերլուծության:

Թեև Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մասին կոնվենցիան կարելի է դիտել որպես մարդու իրավունքների ոլորտում ընդունված առաջին ժամանակակից միջազգային ունիվերսալ փաստաթուղթ (այն ընդունվել է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից մեկ օր առաջ), այդուհանդերձ, մոտ կես դար այն գործնականում գրեթե չի կիրառվել: Այս կապակցությամբ անհնարին է չհիշատակել հայտնի իրավաբան, միջազգայնագետ Գ. Շվարցենբերգերի այն միտքը, թե «*կոնվեն-*

*ցիան անհրաժեշտ չէ, երբ այն կիրառելի է, կիրառելի չէ, երբ անհրաժեշտ է»:<sup>1</sup>*

Ահա այսպիսին էր Ցեղասպանության մասին կոնվենցիային տրված ընդհանուր միջազգային իրավական գնահատականն ընդհուպ մինչև սառը պատերազմի ավարտը, երբ նախկին Հարավսլավիայում և Ռուանդայում ծավալված իրադարձությունները ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին ստիպեցին 827 և 955 բանաձևերն ընդունելու միջոցով նախաձեռնել երկու միջազգային քրեական ad hoc տրիբունալների ստեղծումը, որոնց առարկայական իրավագործությունը տարածվում էր նաև ցեղասպանության հանցագործության վրա: Գրեթե նույն ժամանակահատվածից սկսվեցին նաև ցեղասպանության համար պետություններին միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելու փորձերը: Այսպես, 1990-ական թթ. մի քանի դատավարություն նախաձեռնվեց ՄԱԿ-ի Միջազգային դատարանում (Բոսնիան և Հերցեգովինան ընդդեմ Հարավսլավիայի (1993թ.),<sup>2</sup> Հարավսլավիան ընդդեմ ՆԱՏՕ-ի (1999թ.),<sup>3</sup> Խորվաթիան ընդդեմ Հարավսլավիայի (1999թ.):<sup>4</sup> Ահա, կարելի է ասել, հենց 1990-ական թթ. սկզբնավորվեց Ցեղասպանության մասին կոնվենցիայի գործնական կիրառումը, և նոր մակարդակի բարձրացվեց ցեղասպանության համար պետությունների միջազգային իրավական պատասխանատվության հիմնախնդիրը:

### **1. Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մասին կոնվենցիայի դրույթների ընդհանուր վերլուծությունը**

Ցեղասպանության մասին կոնվենցիան ընդունվել է 1948թ. դեկտեմբերի 9-ին և ուժի մեջ մտել 1951թ. հունվարի 12-ին: Ժամանակակից չափանիշներով Ցեղասպանության մասին կոնվենցիան փոքրածավալ փաստաթուղթ է: Այն բաղկացած է ընդամենը 19 հոդվածից: Ընդ որում, դրանցից «բովանդակային» կարելի է համարել միայն I-

IX հոդվածները, քանի որ մնացած տասն առավելապես տեխնիկական բնույթ են կրում և կարգավորում են Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու, այն վերանայելու, ուժի մեջ մնալու ժամկետի, տարածքային կիրառելիության և այլ հարցեր: Տվյալ կոնվենցիայի հիմնական նպատակներից էր հաստատել այն փաստը, որ ցեղասպանությունը դիտվում է որպես հանցագործություն համաձայն միջազգային իրավունքի, և մեկընդմիջտ ճանաչել ցեղասպանությունն արգելող ընդհանուր միջազգային իրավունքի նորմի գոյության փաստն ու սահմանել Կոնվենցիայի բուն էությունը՝ հստակեցնել և մանրամասնել ընդհանուր միջազգային իրավունքի նորմերով արդեն երկար ժամանակ արգելված արարքը:

Սա էր պատճառը, որ 1948թ. Ցեղասպանության հանցագործության մասին կոնվենցիան ընդունելիս ՄԱԿ-ի անդամ երկրներն առաջին հոդվածում ամրագրեցին հետևյալը. «Պայմանավորվող կողմերը հաստատում են, որ ցեղասպանությունը, անկախ նրանից՝ կատարվում է խաղաղ, թե պատերազմական պայմաններում, ըստ միջազգային իրավունքի հանցագործություն է, որը նրանք պարտավորվում են կանխարգելել և պատժել այն կատարելու համար»:<sup>5</sup>

Փաստորեն, տվյալ եզրահանգումը Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուն պես հաստատվեց նաև 1951թ. ՄԱԿ-ի Միջազգային դատարանի խորհրդատվական եզրակացության մեջ: Դրանում նշվում էր, որ «Կոնվենցիայի հիմքում ընկած սկզբունքները բոլոր քաղաքակիրթ պետությունների կողմից ճանաչվում են որպես պարտադիր՝ նույնիսկ առանց որևէ կոնվենցիոնալ ամրագրման»:<sup>6</sup>

Կոնվենցիայի II հոդվածն առանցքային նշանակություն ունի. այն սահմանում է ցեղասպանության հանցագործության հասկացությունը: Այդ հոդվածի տրամաբանական շարունակություն կարելի է համարել նաև հոդված III-ը, որում ցեղասպանության հանցագործության հետ մեկտեղ սահմանված են պատժելի արարքները (ցեղասպանություն կատարելու նպատակով դավադրությունը, ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը, ցեղասպանու-

յուն կատարելու փորձը և ցեղասպանության կատարման մեջ հանցակցությունը):

Կոնվենցիայի IV-VII հոդվածները նվիրված են ցեղասպանություն կամ III հոդվածում թվարկված որևէ արարք կատարած անձանց պատասխանատվության սկզբունքներին, ցեղասպանության դեմ արդյունավետ պայքարի համար համապատասխան օրենսդրության ընդունմանը և այդ հանցանքի համար արդյունավետ պատժամիջոցների սահմանմանը, ցեղասպանություն կամ Կոնվենցիայի III հոդվածում թվարկված որևէ արարք կատարած անձանց դատելու համար իրավազորությանը և նրանց հանձնմանը:

Կոնվենցիայի VIII հոդվածը նվիրված է ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժելու ոլորտում Կոնվենցիայի մասնակից պետությունների լիազորություններին: Այսպես, Կոնվենցիայի VIII հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր պայմանավորվող կողմ կարող է դիմել Միավորված Ազգերի Կազմակերպության իրավասու մարմիններին՝ Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան՝ ձեռնարկելու այնպիսի գործողություններ, որոնք նրանք անհրաժեշտ են համարում ցեղասպանությունը և III հոդվածում թվարկված որևէ այլ արարք կանխարգելելու ու կանխելու համար»:

Եվ, վերջապես, Կոնվենցիայի IX հոդվածի հիմնական առաքելությունը մասնակիցների միջև առկա վեճերը լուծելու համար անհրաժեշտ կառուցակարգի ապահովումն է: Նշված հոդվածում, մասնավորապես, սահմանվում է, որ «Պայմանավորվող կողմերի միջև վեճերը՝ կապված սույն Կոնվենցիայի մեկնաբանման, կիրառման և կատարման հետ, ներառյալ նաև ցեղասպանություն կամ III հոդվածում թվարկված որևէ արարք կատարելու համար այս կամ այն պետության պատասխանատվության վերաբերյալ վեճերը, հանձնվում են Միջազգային դատարանի քննարկմանը՝ վեճի կողմերից յուրաքանչյուրի պահանջով»:

Ահա այսպիսին է Կոնվենցիայի դրույթների բովանդակության

համառոտ նկարագրությունը, որի վերլուծությունն ավելի շատ հարցեր է առաջացնում, քան պատասխաններ տալիս: Եվ առավել խրթին հարցերից է մնում Կոնվենցիայի շրջանակներում պետությունների պատասխանատվության խնդիրը, որը Կոնվենցիայում բավարար մակարդակով մանրամասնված չէ: Ահա հենց այս հարցերի պատասխանները կփորձենք ներկայացնել սույն զեկուցման շրջանակներում:

## 2. Ցեղասպանության համար պետությունների միջազգային իրավական պատասխանատվության հիմնախնդիրը

Միջազգային իրավունքի յուրահատկությունների խորության մեջ չթափանցած անձանց գուցեև զարմանալի թվա այն դրույթը, որ ցայսօր միջազգային իրավունքում գոյություն չունի պետությունների միջազգային իրավական պատասխանատվության սկզբունքներն ու կանոնները սահմանող որևէ պարտադիր իրավաբանական բնույթ ունեցող գրավոր փաստաթուղթ: Այդուհանդերձ, դա ճշմարտություն է, քանզի գոյություն չունի որևէ միջազգային պայմանագիր, որը պարտավորություն կդնի պետությունների վրա՝ միջազգային հակիրավական արարքներ թույլ տված պետությունների նկատմամբ կիրառելու որոշակի ընդհանուր նորմեր և սկզբունքներ: Այլ կերպ ասած՝ պետությունների պատասխանատվության, այսպես կոչված, «երկրորդային» նորմերն ու սկզբունքները պայմանագրային ամրագրում գրեթե չունեն, բացառությամբ առանձին փաստաթղթերում որոշ կցկտուր հիշատակումների: Նման պայմանագրային փաստաթղթի ընդունումը, անշուշտ, ձեռնտու չէ և ոչ մի պետության, քանի որ մշտապես գերադասելի է միջազգային իրավական պատասխանատվության հարցերը կարգավորել ոչ թե կոշտ պայմանագրային ամրագրում ստացած նորմերի, այլ ճկուն սովորութային միջազգային իրավական նորմերի միջոցով:



Ինչևհետեւ, այս հարցում որոշակի պարզություն մտցրեց ՄԱԿ-ի Գլխավոր ասանբլեան՝ 2001թ. դեկտեմբերի 12-ին ընդունելով Միջազգային հակաիրավական արարքների համար պետությունների պատասխանատվության վերաբերյալ 56/83 բանաձևը:<sup>7</sup> Դրան հավելվածի տեսքով կցված էր նույն վերտառությամբ մի փաստաթուղթ, որը ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի հանձնաժողովի ավելի քան 50 տարվա աշխատանքի արդյունքն էր և, ըստ էության, պետությունների միջազգային իրավական պատասխանատվության ոլորտում սովորության նորմերի գոյությունը հավաստող եզակի փաստաթուղթ:

Այդ փաստաթղթում, *inter alia*, որոշակի լուծում ստացավ նաև ցեղասպանության և միջազգային հանցագործություն համարվող այլ հակաիրավական արարքների համար պատասխանատվության հարցը: Այսպես, տվյալ փաստաթղթում նախատեսվեց III բաժինը՝ «Ընդհանուր միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերից բխող պարտավորությունների լուրջ խախտումներ» վերտառությամբ (40, 41 հոդվածներ), որում ամրագրվեցին հենց միջազգային հանցագործությունների համար պետությունների պատասխանատվության վերաբերյալ դրույթները: Տվյալ փաստաթուղթը նախապատրաստողները հրաժարվեցին «միջազգային հանցագործություններ» եզրույթից, այն փոխարինելով *ընդհանուր միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերից բխող պարտավորությունների լուրջ խախտումներ* արտահայտությամբ, որը թեև ավելի խրթին է թվում, սակայն առավել հստակ է արտահայտում նշված երևույթի էությունը՝ այն տարբերելով ֆիզիկական անձանց կողմից կատարվող հանցավոր արարքներից: Թեև փաստաթղթում ուղղակի չի խոսվում այն մասին, որ ցեղասպանությունը դիտվում է որպես ընդհանուր միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերից բխող պարտավորությունների լուրջ խախտում, հոդված 40-ի մաս 2-ում ընդամենը սահմանելով, որ «*Նման պարտավորության խախտումը լուրջ է, եթե այն զուգորդված է պատասխանատու պետության պարտավորության կոպիտ կամ սխտենատիկ չկատարման հետ*», այդուհանդերձ, ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի

հանձնաժողովի կողմից այդ փաստաթղթի վերաբերյալ արված մեկնաբանություններում նշվում է, որ ցեղասպանությունը պետք է դիտվի որպես ընդհանուր միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերից բխող պարտավորությունների լուրջ խախտում:<sup>8</sup>

Ընդհանրացնելով ասվածը՝ կարող ենք եզրակացնել, որ տվյալ փաստաթուղթը վերջ դրեց միջազգային իրավունքում հաճախակի արտահայտվող այն կարծիքներին, թե պետությունը չի կարող պատասխանատվության ենթարկվել «միջազգային հանցագործություններ» կատարելու համար, իսկ պետության պատասխանատվությունն առավելապես կրում է քաղաքական և ոչ թե իրավական բնույթ: Այսպիսով, վերջ դրվեց նաև ցեղասպանության համար պետությունների միջազգային իրավական պատասխանատվության անհնարինության վերաբերյալ ասեկոսեներին:

Այնուամենայնիվ, մեր խորին համոզմամբ, նշված զարգացումներն անպատասխան թողեցին այն հարցը, թե ցեղասպանության համար պետությունների պատասխանատվության խնդիրը կարող է իրագործվել Ցեղասպանության մասին կոնվենցիայի IX հոդվածի հիման վրա: Այլ կերպ ասած՝ նախագծված է, արդյոք, Ցեղասպանության մասին կոնվենցիան պետություններին պատասխանատվության կանչելու համար, թե՞ միայն ֆիզիկական անձանց քրեաիրավական պատասխանատվության ենթարկելու առաքելություն է իրականացնում:

### 3. Ցեղասպանության մասին կոնվենցիայի հիման վրա պետություններին միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը

Ահա հենց այս հարցը հիմնական դարձավ ՄԱԿ-ի Միջազգային դատարանի համար՝ Բոսնիան և Հերցեգովինան ընդդեմ Հարավսլավիայի գործի քննության ժամանակ: Դատարանի իրավագործական առնչվող հիմնական խնդիրը վերաբերում էր այն հանգամանքին, թե Ցեղասպանության մասին կոնվենցիան ինչ պարտավորություններ

կարող է դնել կողմերի վրա: Դատարանը մասնավորապես արձանագրեց, որ կողմերի միջև «առկա է» Կոնվենցիայի IX հոդվածի իմաստի և իրավական շրջանակների կապակցությամբ վեճ առ այն, թե վերջինս սահմանափակում է Պայմանավորվող կողմերի պարտավորություններն իրավաստեղծմամբ և քրեորեն հետապնդելով կամ հանձնելով, թե մասնակից պետությունների պարտավորությունները ներառում են ցեղասպանություն և Կոնվենցիայի III հոդվածում թվարկված արարքներ չկատարելու պարտավորությունը:<sup>9</sup>

Դատարանը նշեց, որ Կոնվենցիայով կողմերի վրա դրվող պարտավորությունները պետք է դիտարկել դրանում ամրագրված հասկացությունների սովորական իմաստով՝ դրա օբյեկտի և նպատակի համատեքստում և դրանց լույսի ներքո:<sup>10</sup> Այն վերիմաստավորեց Կոնվենցիայի հոդված 1-ի ձևակերպումները, որում *inter alia* նախատեսվում էր հետևյալը. «Պայմանավորվող կողմերը հաստատում են, որ ցեղասպանությունը, անկախ նրանից՝ կատարվում է խաղաղ, թե պատերազմական պայմաններում, ըստ միջազգային իրավունքի հանցագործություն է, որը նրանք պարտավորվում են կանխարգելել և պատժել այն կատարելու համար»:

Դատարանը գտավ, որ «Կոնվենցիայի I հոդվածը, մասնավորապես, կոչված լինելով կանխարգելմանը, ստեղծում է պարտավորություններ, որոնք տարբերվում են նրանցից, որոնք բխում են հաջորդ հոդվածներից: Այս եզրակացությունը հաստատվում է նաև Կոնվենցիայի զուտ մարդասիրական և քաղաքակրթական նպատակով»:<sup>11</sup>

Դատարանն այնուհետև քննության առավ այն հարցը, թե կրո՞ւմ են, արդյոք, Պայմանավորվող կողմերը ցեղասպանություն չկատարելու պարտավորություն, քանզի նման պարտականությունը հստակ սահմանված չէ Կոնվենցիայի դրույթներում: Դատարանը հանգեց այն դիրքորոշմանը, որ I հոդվածի իրավական բովանդակությունն արգելում է պետություններին ցեղասպանություն կատարել: Նման արգելքը բխում է նախ՝ այն փաստից, որ վերջինս ցեղասպանությունը բնորոշում է որպես «հանցագործություն ըստ միջազգային իրա-

վունքի»: Համաձայնելով նշված սահմանման հետ՝ մասնակից պետությունները պետք է տրամաբանորեն ձեռնամուխ լինեն չկատարելու դրանում նկարագրված արարքները: Երկրորդ՝ դա բխում է ցեղասպանության ակտերը կանխարգելելու՝ հստակորեն սահմանված պարտավորությունից: Անհեթեթ կլիներ, եթե պետությունները պարտավորություն ստանձնեին կանխարգելելու ցեղասպանությունը, սակայն նրանց չարգելվեր կատարել նման արարքներ իրենց սեփական մարմինների միջոցով կամ այն անձանց կողմից, որոնց նկատմամբ նրանք ունեն այնպիսի հստակ վերահսկողություն, որ նրանց արարքները, ըստ միջազգային իրավունքի, վերագրելի են համապատասխան պետությանը:<sup>12</sup> Այլ կերպ ասած՝ ցեղասպանությունը կանխարգելելու պարտավորությունն անպայմանորեն ենթադրում է ցեղասպանության կատարման արգելքը: Դատարանը նշել է նաև, որ իր եզրակացությունն ամրապնդվում է նաև IX հոդվածի ձևակերպման մի հատուկ առանձնահատկությամբ, մասնավորապես, «ներառյալ նաև ցեղասպանություն կամ III հոդվածում թվարկված որևէ արարք կատարելու համար այս կամ այն պետության պատասխանատվության վերաբերյալ վեճերը» արտահայտությամբ: Կոնվենցիայի անգլերեն և ռուսերեն բնօրինակների տեքստերի ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ քննարկվող պատասխանատվությունը պատասխանատվություն է ցեղասպանության համար և ոչ թե պատասխանատվություն՝ ցեղասպանությունը չկանխարգելելու կամ չպատժելու համար: Դատարանն արդյունքում հանգեց այն եզրակացության, որ նշված արտահայտության առանձին եզրույթները՝ որպես այդպիսին, հաստատում են, որ Պայմանավորվող կողմերը կարող են պատասխանատվության ենթարկվել ցեղասպանություն կամ III հոդվածում թվարկված որևէ արարք կատարելու համար:<sup>13</sup>

Վերջնականապես հաստատելով այն կանխադրույթը, որ պետությունը կարող է պատասխանատվության ենթարկվել ցեղասպանության համար՝ ՄԱԿ-ի Միջազգային դատարանը վերջակետ դրեց այն հարցին, որ Ցեղասպանության մասին կոնվենցիան նախագծված չէ

պետությանը պատասխանատվության կանչելու համար: Սա, մեր կարծիքով, մարտավարական հաղթանակ կարելի է համարել հայերի դեմ իրագործված ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետությանը միջազգային իրավական պատասխանատվության կանչելու համար, քանի որ Դատարանը, մեր կարծիքով, միանգամից երկու խնդիր լուծեց. նախ՝ ճանաչեց Կոնվենցիայի հիման վրա պետությանը պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը, և հաստատեց տվյալ հարցի առնչությամբ առկա իրավագործությունը:

#### 4. Ցեղասպանության համար պետություններին միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ պայմանները

##### 4.1. Պատասխանատվություն պետական մարմինների և պաշտոնատար անձանց արարքների համար

Բավարար չէ արձանագրել այն փաստը, որ պետությունը կարող է Ցեղասպանության մասին կոնվենցիայի հիման վրա պատասխանատվության ենթարկվել ցեղասպանություն կատարելու համար: Անհրաժեշտ է վեր հանել այն պայմանները, որոնց առկայության պարագայում այն կարող է հնարավոր լինել:

Ընդհանրապես խոսելով պետության պատասխանատվության մասին պետք է պարզենք, թե որ արարքների համար այն կարող է պատասխանատվության ենթարկվել: Պետությունը, ըստ էության, կարող է գործել միայն պետական ապարատի և իր վերահսկողության ներքո գտնվող կառույցների ու անձանց միջոցով: Այդ իսկ պատճառով պետությունների պատասխանատվության անկյունաքարային դրույթներից մեկն այն է, որ պետության յուրաքանչյուր մարմնի արարք պետք է դիտել որպես այդ պետության արարք՝ ըստ միջազգային իրավունքի և, հետևաբար, եթե այն պետության միջազգային պարտավորության խախտում է, ապա պետության պատասխանատվության հարց է առաջացնում:

Այս խնդիրն առաջին հայացքից միզուցե կթվա երկրորդական և ոչ անհրաժեշտ, սակայն կարևորագույն նշանակություն ունի հայերի դեմ իրագործված ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետությանը պատասխանատվության ենթարկելու համար, քանի որ դրա համար բավարար չէ սուկ ցեղասպանության եղելության փաստի ապացուցումը: Պետք է նաև ապացուցել, որ այն իրագործվել է Օսմանյան կայսրության պետական մարմինների կողմից, դրանց մասնակցությամբ կամ թողտվությամբ: Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է որոշել (ընդ որում՝ ցեղասպանության յուրաքանչյուր դրվագի համար առանձին), թե 1915-1923թթ. տեղի ունեցած ցեղասպանության մաս կազմող արարքներն արդյոք այդ ժամանակ Օսմանյան կայսրության գործող մարմինների կարգավիճակ ունեցող անձանց կամ կազմավորումների կողմից են կատարվել, թե ոչ: Սույն զեկուցման հեղինակի համար ըմբռնելի է այն զգացումը, որը կարող է արթնանալ ցանկացած ընթերցողի մոտ՝ այս բառերն ընթերցելուց հետո: Իհարկե, կասկածի տակ չենք առնում ո՛չ հայերի դեմ իրագործված ցեղասպանության եղելության, ո՛չ էլ այն կազմակերպելու համար Օսմանյան կայսրության պատասխանատվության փաստը, այդուհանդերձ, տվյալ հարցը ՄԱԿ-ի Միջազգային դատարան տեղափոխելու պարագայում *inter alia* անպայմանորեն պետք է ներկայացվի նաև ցեղասպանության փաստական կողմը կամ, այլ կերպ ասած՝ վեր հանվեն այն արարքները, որոնց միջոցով իրագործվել է ցեղասպանությունը (*actus reus*), և այն իրագործելու հատուկ մտադրությունը (*dolus specialis*), ինչից հետո միայն հնարավոր կլինի անդրադառնալ այդ արարքների համար Օսմանյան կայսրության պատասխանատվության հիմնախնդրին:

Ինչպես արդեն նշեցինք, պետությունը պատասխանատվություն է կրում իր բոլոր մարմինների, ներառյալ՝ բանակի, արարքների համար, սակայն հայտնի է, որ հայերի դեմ իրագործված ցեղասպանությանը մասնակցել են նաև բազում այլ, այսպես կոչված, կիսապետական կամ իբր-պետական կազմավորումներ, որոնցից կարելի է

մատնանշել, մասնավորապես, քրդական ռազմականացված խմբավորումները: Կարո՞ղ են, արդյոք, դրանց արարքները վերագրվել Օսմանյան պետությանը, և եթե այո, ապա ի՞նչ պայմանների ապահովման պարագայում: Նման խնդրի առաջ, մասնավորապես, կանգնեց ՄԱԿ-ի Միջազգային դատարանը Բոսնիան և Հերցեգովինան ընդդեմ Հարավսլավիայի գործով որոշում կայացնելիս, քանի որ անհրաժեշտ էր պարզել, թե կարող է, արդյոք, Սերբիան պատասխանատվություն կրել Սրբերենիցայի տարածքում «Սկորպիոններ» անունով հայտնի ռազմականացված միլիցիայի արարքների համար:

Այս հարցում դատարանը հավատարիմ մնաց իր՝ դեռևս 1986թ. Նիկարագուայում և դրա շուրջ ռազմական և կիսառազմական գործողությունների վերաբերյալ գործով (Նիկարագուան ընդդեմ Ամերիկայի Միացյալ Նահանգների) որոշման մեջ ամրագրված դիրքորոշմանը, համաձայն որի՝ անձինք, անձանց խմբերը կամ կազմավորումները կարող են միջազգային պատասխանատվության իմաստով հավասարեցվել պետության մարմիններին, եթե նույնիսկ նման կարգավիճակը չի բխում ներպետական իրավունքից, պայմանով, որ այդ անձինք, անձանց խմբերը կամ կազմավորումները փաստացի գործել են պետությունից «լիակատար կախվածությամբ»:<sup>14</sup>

Ներկայացված փաստերը գնահատելիս, հիմք ընդունելով այս մոտեցումը, Դատարանը հանգեց այն եզրակացության, որ «Սկորպիոնները» չեն հանդիսացել «Սերբիայի ներքին գործերի նախարարության ստորաբաժանում» և 1995թ. կեսերին չեն դիտվել որպես պատասխանողի de jure մարմիններ: Ուստի, Դատարանը գտավ, որ Սրբերենիցայում տեղի ունեցած ցեղասպանության ակտերը չեն կարող վերագրվել պատասխանողին՝ իր մարմինների կամ նրանից անբողջովին կախված անհատների և կազմավորումների կողմից կատարված լինելու հիմքով և, հետևաբար, չեն կարող հանգեցնել պատասխանողի միջազգային պատասխանատվությանը:

Գտնում ենք, որ տվյալ առումով հայերի դեմ իրագործված ցեղասպանության և Սրբերենիցայում տեղի ունեցած ցեղասպանության

փաստական հանգամանքները, անշուշտ, զգալիորեն տարբերվում են, և Օսմանյան կայսրության մարմինների ներգրավվածության աստիճանը շատ ավելի բարձր է եղել: Սակայն եթե նույնիսկ հիպոթետիկ ենթադրենք, որ միջազգային իրավունքի տեսանկյունից հնարավոր չի լինի ապացուցել Օսմանյան կայսրության մարմինների մասնակցությունը հայերի դեմ իրագործված ցեղասպանության մաս կազմող արարքներին (ինչն ինքնին անհեթեթ է), դա որևէ կերպ չի կարող ազդել Օսմանյան կայսրության իրավահաջորդի պատասխանատվության վրա, քանի որ պետական մարմինների արարքների համար պատասխանատվությունը թեև պետությունների միջազգային իրավական պատասխանատվության առանցքային, բայց ոչ միակ հիմքն է:

#### 4.2. Պատասխանատվություն պետության ցուցումներով, ուղղորդմամբ կամ նրա վերահսկողությամբ կատարված միջազգային հակաիրավական արարքների համար

Միջազգային հակաիրավական արարքների, այդ թվում՝ ցեղասպանության համար պետությունների պատասխանատվության ժամանակակից սկզբունքները նախատեսում են պատասխանատվության ևս մեկ կարևոր հիմք: Պետությունը պատասխանատվության է ենթարկվում նաև այն պարագայում, երբ ուղղորդում է այլ կազմավորումների կամ անձանց միջազգային հակաիրավական արարքները կամ վերահսկողություն է իրականացնում դրանց նկատմամբ: Այս հարցը, մեր կարծիքով, կարող է սկզբունքային նշանակություն ունենալ հայերի դեմ իրագործված ցեղասպանության համար թուրքիայի Հանրապետությանը պատասխանատվության ենթարկելու առումով, քանզի, ինչպես արդեն նշել ենք, հայերի դեմ իրագործված ցեղասպանության մաս կազմող արարքների մի ստվար խումբ կատարվել է այնպիսի կառույցների կողմից, որոնք կամ իբր-պետական կամ կիսապետական բնույթ են կրել, կամ անմիջականորեն ուղղորդվել կամ վերահսկվել են պետական մարմինների կողմից: Այս

տեսանկյունից դատարանի քննության առնվող որոշումը որոշակի լույս կարող է սփռել, քանի որ Դատարանը քննության է առել այն հարցը, թե արդյոք Սրեբրենիցայի կոտորածները կատարվել են անձանց կողմից, որոնք, թեև պատասխանողի մարմինների կարգավիճակ չեն ունեցել, սակայն գործել են դրանց ցուցումներով, ուղղորդմամբ կամ վերահսկողության ներքո:

Դատարանը, վկայակոչելով ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի հանձնաժողովի «Պատասխանատվության վերաբերյալ հողվածների» հողված 8-ում ամրագրված դրույթը, արձանագրեց, որ միջազգային պատասխանատվության սովորուբային իրավունքի կիրառելի նորմն այն է, որ անձանց կամ անձանց խմբերի արարքը պետք է դիտվի որպես պետության արարք՝ ըստ միջազգային իրավունքի, եթե անձինք կամ անձանց խումբն արարքն իրագործելիս փաստացի գործում են տվյալ պետության ցուցումներով կամ ուղղորդմամբ, կամ նրա վերահսկողության ներքո: Ըստ Դատարանի՝ այս դրույթը պետք է ընկալվի տվյալ խնդրի վերաբերյալ Դատարանի պրակտիկայի, մասնավորապես, Նիկարագուայում և դրա շուրջ ռազմական և կիսառազմական գործողությունների վերաբերյալ գործով 1986թ. որոշման (Նիկարագուան ընդդեմ Ամերիկայի Միացյալ Նահանգների)<sup>15</sup> լույսի ներքո:<sup>16</sup>

Անշուշտ, հավատարիմ մնալով այս հարցում իր դիրքորոշմանը, Դատարանը, մեր կարծիքով, բավականին դժվարացրեց այդ հիմքով հայերի դեմ իրագործված ցեղասպանության համար թուրքիայի Հանրապետությանը պատասխանատվության ենթարկելու խնդիրը, քանի որ այսօր՝ դեպքերից ավելի քան 90 տարի անց, բավական դժվար կլինի բացահայտել յուրաքանչյուր առանձին դրվագում ցեղասպանություն իրագործող կազմավորումների կամ անձանց արարքների նկատմամբ Օսմանյան կայսրության պետական մարմինների անմիջական վերահսկողությունը, ցուցումները կամ ուղղորդումը: Բավական դժվար, սակայն իրականաճալի, քանի որ այդ թվականների հարուստ պաշտոնական նամակագրությունը և առկա այլ պաշտոնական փաստաթղթերը, մեր կարծիքով, թույլ են տալիս այս

հարցին էլ դրական պատասխան տալ: Այդուհանդերձ, եթե տեսակաճորեն ենթադրենք, որ այստեղ ևս կարելի է ձախողվել, ապա նույնիսկ դա թուրքիայի Հանրապետությանը թույլ չի տա խուսափելու պատասխանատվությունից, քանի որ, ինչպես հայտնի է, պետությունը պատասխանատվության է ենթարկվում ոչ միայն գործողությունների, այլ նաև անգործության համար:

### 5. Հայերի դեմ իրագործված ցեղասպանության հարցը ՄԱԿ-ի միջազգային դատարանի քննությանը՝ ցեղասպանության մասին կոնվենցիայի IX հողվածի հիման վրա, հանձնելու հնարավորությունը

Ինչպես արդեն նշել ենք, Ցեղասպանության մասին կոնվենցիան IX հողվածում նախատեսում է, որ «Պայմանավորվող կողմերի միջև վեճերը՝ կապված սույն Կոնվենցիայի մեկնաբանման, կիրառման կամ կատարման հետ, ներառյալ նաև ցեղասպանության կամ սույն Կոնվենցիայի III հողվածում թվարկված որևէ արարք կատարելու համար այս կամ այն պետության պատասխանատվության վերաբերյալ վեճերը, հանձնվում են Արդարադատության միջազգային դատարանի քննությանը՝ վեճի կողմերից յուրաքանչյուրի պահանջով»:

Ինչպես հայտնի է, և՛ Հայաստանի Հանրապետությունը, և՛ թուրքիայի Հանրապետությունը համապատասխանաբար՝ 1993թ. հունիսի 23-ից և 1950թ. հուլիսի 31-ից միացել են Ցեղասպանության մասին կոնվենցիային:<sup>17</sup> Ավելին, ինչպես Հայաստանը, այնպես էլ թուրքիան որևէ վերապահում չեն արել հիշատակված Կոնվենցիայի IX կամ այլ հողվածների կապակցությամբ: Հետևաբար, հայերի դեմ իրագործված ցեղասպանության հարցը ՄԱԿ-ի Միջազգային դատարանի քննության առարկա հիպոթետիկ կերպով կարող էր դառնալ արդեն 1951թ. հունվարի 12-ից (Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու ամսաթվից): Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԽՍՀՄ-ի կազմում Հայկական ԽՍՀ-ի միջազգային իրավասուբյեկտությունը,

ինչպես նշել ենք, սոսկ ձևական բնույթ էր կրում, նման գործի հարուցումը գործնականում անհնարին էր:

Հայերի դեմ իրագործված ցեղասպանության հարցի քննությունը Միջազգային դատարանում ԽՍՀ Միության գոյության ժամանակաշրջանում անհնարին էր նաև Կոնվենցիայի IX հոդվածի վերաբերյալ ԽՍՀՄ վերապահման առկայության պատճառով, որը խոչընդոտում էր այդպիսի հնարավորությունը:

Սակայն Հայաստանի միջազգային հանրության լիիրավ անդամ և Ցեղասպանության մասին կոնվենցիայի մասնակից դառնալուց հետո այդպիսի հնարավորությունն իրականություն դարձավ: Հետևաբար, Հայաստանի Հանրապետությունն արդեն ավելի քան 15 տարի օժտված է հայերի դեմ իրագործված ցեղասպանության համար թուրքիայի Հանրապետության պատասխանատվության հարցը ՄԱԿ-ի Միջազգային դատարանի քննությանը միակողմանիորեն՝ Կոնվենցիայի IX հոդվածի հիման վրա փոխանցելու իրավունքով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ թուրքիայի Հանրապետությունը Ցեղասպանության մասին կոնվենցիայի վավերացմամբ ճանաչել է Դատարանի իրավագործությունն այդ հարցի կապակցությամբ: Պետք է նշել, որ ցեղասպանությունը՝ որպես *erga omnes* իմպերատիվ միջազգային պարտավորության խախտում, հնարավորություն է ընձեռում ոչ միայն ցեղասպանությունից անմիջականորեն տուժած, այլ նաև ցանկացած այլ պետության Ցեղասպանության մասին կոնվենցիայի IX հոդվածի հիման վրա դատավարություն նախաձեռնել ՄԱԿ-ի Միջազգային դատարանում: Անշուշտ, ոչ տուժող պետության կողմից նման դատավարության նախաձեռնումը փոքր-ինչ սահմանափակում է դիմողի իրավունքների շրջանակը, քանի որ վերջինս կարող է պահանջներ ներկայացնել, որոնք բացառապես ուղղված են այդ հանցագործության արդյունքում տուժած անձանց իրավունքների վերականգնմանը և նրանց պատճառված վնասի հատուցմանը:

Սակայն հանուն ճշմարտության պետք է ասել, որ նշված հիմքով ՄԱԿ-ի Միջազգային դատարանում դատավարություն նախաձեռնե-

լու դեպքում կարող ենք բախվել բազմաթիվ «ստորջրյա խութերի», որոնցից կարելի է հիշատակել Կոնվենցիայի հետադարձության, թուրքիայի Հանրապետության իրավահաջորդության, Կոնվենցիայի տարածքային կիրառելիության հետ կապված հարցերը և այլն:

Հայերի դեմ իրագործված ցեղասպանության վերաբերյալ գործը Միջազգային դատարան փոխանցելու համար առաջին հերթին անհրաժեշտ է որոշել տվյալ հարցում ՄԱԿ-ի Միջազգային դատարանի իրավագործության հիմքը: Գտնում ենք, որ տվյալ դեպքում Դատարանի իրավագործության հիմքը նույն Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մասին կոնվենցիայի IX հոդվածն է, որը ենթադրում է Կոնվենցիայի մասնակից պետությունների միջև Կոնվենցիայի մեկնաբանման, կիրառման կամ կատարման հետ, ներառյալ նաև ցեղասպանություն կատարելու կապակցությամբ վեճ առաջանալու դեպքում Դատարան դիմելու հնարավորությունը:

Հետևաբար, *«պարզելու համար, թե արդյոք Դատարանն օժտված է Ցեղասպանության մասին կոնվենցիայի IX հոդվածի հիման վրա գործը քննելու իրավագործությամբ, Դատարանին անհրաժեշտ է հաստատել, թե գոյություն ունի, արդյոք, կողմերի միջև տվյալ դրույթի գործողության տակ ընկնող վեճ»*:<sup>18</sup>

Ցեղասպանության մասին կոնվենցիայի կիրառելիության մասին գործով (Բոսնիան և Հերցեգովինան ընդդեմ Հարավսլավիայի) որոշման մեջ Դատարանը, վեճի առկայության հաստատման համար դիտարկելով կողմերի բևեռային ու իրարամերժ դիրքորոշումները և հղում կատարելով նախկինում իր իսկ արտահայտած իրավական դիրքորոշումներին, եզրակացրեց, որ «ձևավորված պրակտիկային համապատասխան... շարունակում է գոյություն ունենալ մի իրավիճակ, որում երկու կողմերն զբաղեցնում են ծայրահեղ հակադիր տեսակետներ՝ որոշակի պայմանագրային պարտավորությունների կատարման կամ չկատարման հարցի վերաբերյալ» (Interpretation of Peace Treaties with Bulgaria, Hungary and Romania, First Phase, Advisory Opinion, I.C.J. Reports 1950, p. 74), և որ Հարավսլավիայի կողմից Բոս-

նիայի և Դերքեգովինայի ներկայացրած պահանջների ժխտման պատճառով նրանց միջև «առկա է իրավական վեճ (East Timor (Portugal v. Australia), I.C.J. Reports 1995, p. 100, para. 22)»:<sup>19</sup>

Հիմք ընդունելով դատարանի նշված իրավական դիրքորոշումը կարելի է վստահ հայտարարել, որ հայերի դեմ իրագործված ցեղասպանության հարցում Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիայի Հանրապետությունը որոշակի միջազգային իրավական պարտավորությունների կատարման կամ չկատարման վերաբերյալ ունեն հստակ արտահայտված ծայրահեղ հակադիր դիրքորոշումներ, որոնք մասնավորապես շարադրված են 1948թ. դեկտեմբերի 9-ի Ցեղասպանության մասին կոնվենցիայում: Հետևաբար, հղում կատարելով ՄԱԿ-ի Միջազգային դատարանի պրակտիկային՝ կարելի է ենթադրել, որ հայերի դեմ իրագործված ցեղասպանության հիմնախնդիրը միջազգային իրավունքի տեսանկյունից, իրավաբանական բնույթի միջազգային վեճ է:

Ելնելով վերոհիշյալից՝ կարելի է հայտարարել, որ տվյալ հարցում Միջազգային դատարանի *ratione materiae* իրավագործությունը որևիցե եական առարկություն առաջացնել չի կարող:

Ավելի բարդ է Դատարանի *ratione temporis* իրավագործության հարցը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ վեճի առարկա կազմող արարքները տեղի են ունեցել Ցեղասպանության մասին կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց շատ ավելի վաղ: Այլ կերպ ասած՝ դատարանում նշված հիմքով դատավարություն նախաձեռնելու պարագայում մենք անխուսափելիորեն բախվում ենք Կոնվենցիայի հետադարձ կիրառելիության՝ բավականին վիճահարույց հիմնախնդրի հետ:

Այդ հարցի վրա որոշակի լույս սփռելու համար ստիպված ենք կրկին վկայակոչել Ցեղասպանության մասին կոնվենցիայի նույն IX հոդվածը: Այն նշում է, որ Կոնվենցիայի մեկնաբանության հետ կապված վեճերը փոխանցվում են Միջազգային դատարանի քննությանը: Կոնվենցիայի դրույթներին հետադարձ ուժ տալու կամ չտալու հարցն ուղղակիորեն արժարժված չէ Կոնվենցիայի տեքստում: Սա

տարակարծությունների տեղիք է տալիս: Այսպես, 2002թ. Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի համար պատրաստված իրավաբանական վերլուծության հեղինակները, վերլուծելով հայերի դեմ իրագործված ցեղասպանության նկատմամբ Ցեղասպանության մասին կոնվենցիայի կիրառելիության հարցը, հանգել էին բացասական եզրակացության նշելով, որ միջազգային իրավունքը, որպես կանոն, արգելում է պայմանագրերին հետադարձ ուժ տրամադրելը, «եթե պայմանագրից այլ մտադրություն չի հետևում կամ այլ կերպ չի հաստատված»:<sup>20</sup>

Ըստ վերլուծության հեղինակների՝ Կոնվենցիայի նախապատրաստման ամբողջ գործընթացը և դրա դրույթների ճնշող մեծամասնությունն ուղղակի վկայում են, որ Կոնվենցիան ստեղծողներն ապագային ուղղված (ակտիվ), այլ ոչ թե հետադարձ ուժ ունեցող (ռետրոսպեկտիվ) պարտավորություններ են դնում այն պետությունների վրա, որոնց նրանք ներկայացնում են՝ ներառելով «հանցագործությունների հետագա կանխարգելումը»:<sup>21</sup> Վկայակոչելով Ցեղասպանության մասին կոնվենցիայի XIII հոդվածը՝ Հուլազգրի հեղինակները հանգել էին այն եզրակացությանը, որ այն ուժի մեջ է մտել 1951թ. հունվարի 12-ին, ուստի և չի կարող առաջացնել ֆիզիկական անձանց քրեական կամ պետությունների միջազգային իրավական պատասխանատվություն այն իրադարձությունների համար, որոնք տեղի են ունեցել XXդ. սկզբին կամ ցանկացած այլ ժամանակ՝ մինչև 1951թ. հունվարի 12-ը:<sup>22</sup>

Մյուս կողմից, հեղինակների մեկ այլ խումբ, մասնավորապես, Ալֆրեդ դը Ջայասը,<sup>23</sup> գտնում են, որ Ցեղասպանության մասին կոնվենցիան կարող է կիրառվել հետադարձ ուժով, քանի որ այն նախապես գոյություն ունեցած միջազգային իրավունքի ամրագրումն է: Այսպես, օրինակ, Ա. դը Ջայասը նշում է, որ «Ցեղասպանության մասին կոնվենցիայի ձևակերպումները ո՛չ բացառում, ո՛չ էլ նախատեսում են դրա հետադարձ կիրառությունը: Այլ կերպ ասած՝ Կոնվենցիայի շարադրանքի մեջ չկա ոչինչ, ինչը կարգելեր դրա հետա-

դարձ կիրառությունը: Ի տարբերություն դրա՝ գոյություն ունեն բազմաթիվ միջազգային պայմանագրեր, որոնք ուղղակիորեն ամրագրում են, որ դրանք չեն կիրառվում հետադարձորեն: Օրինակ, 1998թ. Միջազգային քրեական դատարանի կանոնադրության հոդված 11-ը սահմանում է, որ «Դատարանին ընդդատյա են միայն սույն Կանոնադրության ուժի մեջ մտնելուց հետո կատարված հանցագործությունները»:<sup>24</sup> Ըստ Ա. դը Ջայասի՝ «Հատկանշական է, որ Ցեղասպանության մասին կոնվենցիան մշակողները չեն սահմանել, որ այն կիրառվելու է միայն ապագայի համար, թեև նրանք հեշտորեն կարող էին դա անել, եթե մտադրություն ունենային սահմանափակել դրա կիրառման շրջանակը»:<sup>25</sup>

Քննադատության չենթարկելով նշված երկու դիրքորոշումներից ոչ մեկը՝ հարկադրված ենք ընդգծել, որ դրանք ոչ այլ ինչ են, քան Ցեղասպանության մասին կոնվենցիայի հետադարձ կիրառելիության վերաբերյալ դոկտրինալ մոտեցումներ, և որևէ իրավական ուժ ունենալ չեն կարող: Քանի որ Ցեղասպանության մասին կոնվենցիայի հետադարձ կիրառելիության հիմնահարցը Կոնվենցիայի դրույթների մեկնաբանման խնդիր է, ինչը դրա IX հոդվածի համաձայն՝ ՄԱԿ-ի Միջազգային դատարանի բացառիկ իրավասության ոլորտի մեջ մտնող հարց է: Հետևաբար, Կոնվենցիայի հետադարձ կիրառելիության վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու բացառիկ իրավունքը պատկանում է միայն ՄԱԿ-ի Միջազգային դատարանին, և քանի դեռ տվյալ հարցի առնչությամբ չկա վերջինիս իրավական դիրքորոշումը, ցանկացած դատողություն՝ Կոնվենցիայի հետադարձ կիրառելիության կամ դրա անհնարինության վերաբերյալ, կշարունակի մնալ տեսական դատողությունների մակարդակում:



Արա  
ՊԱՊՅԱՆ

ՀԱՅՈՑ  
ՊԱՎԱՆՁԱՏԻՐՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱՆԵՂԻՐՆԵՐՆ  
ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Սերկայունս Հայաստանի Հանրապետությունը կանգնած է բախտորոշ ճամփաբաժանի առջև: Մեր հետագա քայլերից է կախված, թե մեզ համար ինչպիսին կլինեն առաջիկա տարիները՝ կորուստների<sup>o</sup>, թե՞ ձեռքբերումների: Մեր առջև ծառայել է առկա մարտահրավերները չեզոքացնելու և դրանք դրականորեն հեղաշրջելու հրամայականը:

Քանզի Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև հայ ժողովրդի հավաքական ներուժը քաղաքական, տնտեսական կամ ռազմական ոլորտներում զիջում է և մշտապես զիջելու է թուրքիայի ու Ադրբեջանի ընդհանուր ներուժին, անհրաժեշտ է պայքարի ու դիմակայության ամբողջ գործընթացը տեղափոխել այլ ոլորտ, ուր Հայաստանը ոչ միայն չի զիջում նրանց, այլև ունի շոշափելի առավելություն:



Այսինքն՝ անհրաժեշտ է հայ-թուրքական հարաբերությունները տեղափոխել իրավական դաշտ և դրանցում առկա բոլոր խնդիրներին տալ իրավական լուծումներ ու ձևակերպումներ:

Ըստ այդմ, իմ ելույթը վերաբերելու է երկու հիմնահարցի և դրանց քննությանը՝ ըստ միջազգային իրավունքի.

1. հայ-թուրքական իրավապայմանագրային հարաբերություններին,

2. հայ-թուրքական իրավական (de jure) սահմանին:

Նախ՝ ի՞նչ բան է միջազգային պայմանագիրը:

Պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի երկրորդ հոդվածը «պայմանագիր» հասկացությունը բնորոշում է հետևյալ կերպ. «Պայմանագիր» նշանակում է պետությունների միջև գրավոր կնքված և միջազգային իրավունքով կառավարվող միջազգային համաձայնություն»: Իսկ ըստ ՄԱԿ-ի միջազգային հանրային իրավունքի ձեռնարկի՝ «միջազգային պայմանագրերը համաձայնություններ են միջազգային իրավունքի սուբյեկտների միջև, որոնց միջոցով նրանք ստեղծում, փոփոխության են ենթարկում կամ դադարեցնում են փոխադարձ իրավունքներն ու պարտավորությունները»: <sup>1</sup> Այսինքն՝ պայմանագրի օրինականության համար անհրաժեշտ է, որ այն կնքող կողմերից յուրաքանչյուրը լինի միջազգային իրավունքի սուբյեկտ, այսինքն՝ մեր դեպքում լինի միջազգայնորեն ճանաչված պետության օրինական կառավարության լիազոր ներկայացուցիչ և նրա գործունեությունն առնվազն չհակասի միջազգային իրավունքին:

Այս տեսանկյունից էլ, ժամանակագրական կարգով, անդրադառնանք բոլոր այն հինգ պայմանագրերին, որոնք վերաբերում են հայ-թուրքական սահմանին, հստակեցնենք իրավապայմանագրային վիճակը և, ըստ միջազգային իրավունքի, որոշենք այդ պայմանագրերից յուրաքանչյուրի կարգավիճակը:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո, մինչև Միջին Արևելքում խաղաղության վերջնական հաստատումը, այսինքն՝

1918-1923թթ., հայ-թուրքական սահմանի վերաբերյալ կնքվել են Սևրի (10 օգոստոսի, 1920թ.), Ալեքսանդրապոլի (3 դեկտեմբերի, 1920թ.), Մոսկվայի (16 մարտի, 1921թ.), Կարսի (13 հոկտեմբերի, 1921թ.) և Լոզանի (24 հուլիսի, 1923թ.) պայմանագրերը: Մոսկվայի և Լոզանի պայմանագրերը կնքելիս Հայաստանը կողմ չի հանդիսացել: Հետևաբար, Հայաստանի համար դրանք սկզբունքորեն չեն կարող իրավական հետևանքներ առաջացնել: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ պայմանագրերը վերաբերում են նաև հայ-թուրքական սահմանին, ինչպես կարծում են շատերը, ապա կանդիդատառնանք նաև դրանց:

### 1. Ժամանակագրական առումով առաջինը Սևրի պայմանագիրն է՝ կնքված 1920թ. օգոստոսի 10-ին:

Սույն պայմանագիրն առայժմ ներկայացնենք մի քանի խոսքով, քանզի գեկույցի վերջում ավելի հանգամանալից ենք անդրադառնալու դրան: Սևրի պայմանագիրն *օրինական է*, քանի որ կնքող բոլոր կողմերն իրենց երկրների օրինական և ճանաչված իշխանություններն էին: Պայմանագրի շուրջ ընթացել են երկարատև բանակցություններ, և Օսմանյան կայսրության անունից այն ստորագրել է լիազոր պատվիրակությունը: Սևրի պայմանագիրը չի արժանացել լիակատար վավերացման (հետևաբար, մնում է *ոչ կատարյալ* (unperfected), սակայն նաև երբևէ չեղյալ չի հայտարարվել (ուստի, օրինական փաստաթուղթ է, որն ուժի մեջ չի մտել (legal document not in force)):

### 2. Երկրորդը Ալեքսանդրապոլի պայմանագիրն է՝ կնքված 1920թ. դեկտեմբերի 3-ին, շեշտում եմ՝ դեկտեմբերի 3-ին:

Այս պայմանագիրը խորհրդահայ պատմագիտության սիրելի քեմաներից մեկն էր, քանի որ հնարավորություն էր տալիս դաշ-

նակցությանը մեղադրելու դավաճանության մեջ, իսկ բուլճարիկներին ներկայացնելու որպես ազգի փրկիչներ: Մեր խնդիրը չէ պատմական քննարկումներ կատարել կամ տալ քաղաքական գնահատականներ: Մեր նպատակն է Ալեքսանդրապոլի պայմանագիրը քննել միջազգային իրավունքի տեսանկյունից:

Այս տեսակետից, Ալեքսանդրապոլի պայմանագիրն *անօրինական է ու անվավեր*, նախ այն պատճառով, որ կնքող կողմերից և ոչ մեկը չի ունեցել դրա իրավասությունը: Պայմանագիրը հայկական կողմից կնքողներն *արդեն* իշխանություն չէին, իսկ թուրքիայի կողմից կնքողները *դեռևս* իշխանություն չէին: Երկու կողմերն էլ գործել են *ultra vires*,<sup>2</sup> այսինքն՝ ակնհայտորեն գերազանցել են իրենց իրավասությունները:

Ալեքսանդրապոլի պայմանագիրն անօրինական է նաև այն պատճառով, որ ստորագրվել է միջազգային իրավունքի սկզբունքները ոտնահարող՝ *ուժի կիրառման բացահայտ սպառնալիքով*<sup>3</sup> և երբևէ չի վավերացվել:

### 3. Ժամանակագրական առումով հաջորդը Մոսկվայի պայմանագիրն է՝ կնքված 1921թ. մարտի 16-ին:

Ինչպես նշված է Մոսկվայի պայմանագրի նախաբանում, այն կնքվել է «Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության կառավարության և Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության» միջև: Առաջին հերթին, անհրաժեշտ է հստակեցնել դրանցից յուրաքանչյուրի կարգավիճակը 1921թ. մարտի 16-ի դրությամբ, քանի որ ցանկացած պայմանագրի կարգավիճակ ածանցվում է այն ստորագրողների իրավական կարգավիճակից:

ա) Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության կարգավիճակը 1921թ.

Պայմանագիրը կնքելու պահին *չկար* «Ռուսաստանի Խորհրդա-

յին Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետություն» ճանաչված պետություն, ուստի նաև՝ միջազգային իրավունքի սուբյեկտ: Բնականաբար, նրա կառավարությունը չուներ որևէ միջազգային պայմանագիր կնքելու իրավասություն: ՌԽՖՍՀ-ն, արդեն ԽՍՀՄ տարազով, միջազգային օրինական ճանաչում է սկսել ստանալ միայն 1924թ. փետրվարի 1-ից՝ Մեծ Բրիտանիայի կողմից ճանաչվելուց հետո:<sup>4</sup> Մինչև 1924թ. տեղի ունեցած այսպես կոչված ճանաչումները չեն առաջացրել որևէ իրավական հետևանք, քանի որ իրենց հերթին բխել են չճանաչված երկրներից կամ վարչախմբերից: ճանաչումն օրինական համարվելու համար այն պետք է կատարվի իր հերթին օրինականորեն ճանաչված միջազգային իրավունքի սուբյեկտի կողմից:<sup>5</sup>

բ) Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կարգավիճակը 1921թ.

Ըստ էության, Խորհրդային իշխանության և կառավարության մասին վերը նշվածն ամբողջովին վերաբերում է նաև այսպես կոչված Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությանը, որի անունից թուրքական կողմը ստորագրել է Մոսկվայի պայմանագիրը: Հիշարժան է, որ օրինական իշխանությունների առկայության դեպքում նույնիսկ քեմալականները որևէ հավակնություն չունեին իրենց համարելու Թուրքիայի լիազոր ներկայացուցիչներ: Նրանք պայմանագրերը կնքում էին ոչ թե Թուրքիայի կամ թուրքական կառավարության անունից, այլ «Թուրքիայի Ազգային մեծ ժողով» կոչվող կառույցի նախագահության այսպես կոչված, «*կառավարության*» անունից: Թուրքիայի Ազգային մեծ ժողովը 1921թ. ուներ հասարակական կազմակերպության (NGO) կարգավիճակ: Դրա կազմում ընդգրկված էին նախկին պատգամավորներ, պաշտոնանկ զինվորականներ ու պաշտոնյաներ: Նախկին պաշտոնյաների միավորող նման կազմակերպություններ եղել են ու կան աշխարհի զանազան երկրներում, այդ թվում՝ Հայաստանում: Սակայն դրանցից և ոչ մեկը չի հանդիսացել և չի հանդիսանում միջազգային իրավունքի սուբյեկտ՝ հետևաբար, իրավունք չունի միջպետա-

կան պայմանագրեր կնքելու երկրի անունից: Մուստաֆա Քեմալի վարչախումբը որևէ իրավական հիմք չունեի միջազգային հարաբերություններում ներկայացնելու թուրքական պետությունը: Աներկբայորեն, առնվազն մինչև 1922թ. նոյեմբեր ամիսը, այսինքն՝ մինչև Թուրքիայից սուլթան Մուհամմեդ VI-ի հեռանալը, Օսմանյան կայսրության գործող սահմանադրության համաձայն, միջազգային հարաբերությունների մեջ մտնելու լիազորությունները վերապահված էին վերջինիս կառավարությանը. միայն սուլթանը կարող էր լիազորել որևէ անձի՝ գործելու երկրի անունից:<sup>6</sup>

Ընդհանրապես, քեմալականների շարժումը սկզբնավորվել ու ընթացել է օսմանյան սահմանադրության ոտնահարումով և միջազգային իրավունքի խախտումով, որոնք են սուլթան-խալիֆի՝ երկրի օրինական իշխանության դեմ ապստամբությունը և Մուհարոսի զինադադարը (30 հոկտեմբերի, 1918թ.): Մուստաֆա Քեմալը 1921թ. պարզապես փախուստի մեջ գտնվող հանցագործ էր: Այդ իսկ պատճառով դեռևս 1920թ. ապրիլի 11-ին կայսրության բարձրագույն կրոնավորի՝ շեյխ-ուլ-իսլամի ֆեթվայով (կոնդակով) Մուստաֆա Քեմալը մահվան էր դատապարտվել: Նրա նկատմամբ նույն տարվա մայիսի 11-ին մահապատժի վճիռ էր կայացրել նաև թուրքական ռազմական դատարանը: Այս դատավճիռը 1920թ. մայիսի 24-ին հաստատվել էր սուլթանի կողմից և մտել ուժի մեջ:

Ի լրումն սրա՝ Մոսկվայի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող մասը միջազգային իրավունքի ևս մի խախտում է, քանի որ պայմանագրերը կարող են վերաբերել միայն պայմանագիրը ստորագրող կողմերին և որևէ պարտավորություն կամ իրավունք չեն ստեղծում պայմանագրի մաս չկազմող երրորդ կողմի համար:<sup>7</sup>

**4. Հայ-թուրքական սահմանին վերաբերող հաջորդ պայմանագիրը Կարսի պայմանագիրն է՝ կնքված 1921թ. հոկտեմբերի 13-ին:**

Միանշանակ է, որ Կարսի պայմանագիրն *անօրինական է և անվավեր*, քանի որ այն կնքած կողմերից և ոչ մեկը չի եղել միջազգային իրավունքի սուբյեկտ: Քեմալականների մասին Ալեքսանդրապոլի և Մոսկվայի պայմանագրերին վերաբերող հատվածում արդեն խոսվեց:

Այժմ քննենք քեմալականների հետ պայմանագիրը կնքած կողմերից մեկի՝ Հայաստանի խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կարգավիճակը: Անվիճելի է, որ խորհրդային Հայաստանը երբեք չի եղել միջազգային իրավունքի սուբյեկտ: Այն երբեք ճանաչված չի եղել միջազգային իրավունքի որևէ այլ սուբյեկտի կողմից, երբեք չի ունեցել այլ երկրների հետ հարաբերությունների մեջ մտնելու կարողություն: Այլ կերպ, այն երբեք չի ունեցել դեսպանություններ և Հայաստանի խորհրդային Սոցիալիստական Հանրապետության անունից երբեք որևէ դեսպան չի հավատարմագրվել: Իսկ «այլ պետությունների հետ հարաբերությունների մեջ մտնելու կարողությունը» (capacity to enter into relations with the other states) պետականության չորս չափորոշիչներից մեկն է, որն ամրագրված է Պետությունների իրավունքների և պարտականությունների մասին 1933թ. Մոնտեվիդեոյի կոնվենցիայի (Convention on Rights and Duties of States, Montevideo, 1933) առաջին հոդվածի 4-րդ կետում: Պարզապես, խորհրդային Միության կազմում եղել է «Հայաստանի խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն» վարչատարածքային միավորը: 1921թ. իրավական տեսանկյունից Հայաստանի տարածքը բռնազավթված էր: Միջազգային իրավունքով այդպես է բնութագրվում միջազգայնորեն ճանաչված այն երկիրը, որում օտարերկրյա բանակը տապալում է օրինական իշխանությունը և հաստատում իր դրածո իշխանությունը՝ անկախ նորահաստատ իշխանության տարազից:

**5. Ժամանակագրական առումով վերջին պայմանագիրը, որին հարկ ենք համարում անդրադառնալ, Լոզանի պայմանագիրն է՝ կնքված 1923թ. հուլիսի 24-ին:**

Նախ մի շատ տարածված մոլորության մասին՝ *Լոզանի պայմանագրի կնքումով Սևրի պայմանագիրը չեղյալ չի հայտարարվել*: Լոր պայմանագիր կնքելու պարագայում որևէ պայմանագիր կամ միջազգային պարտավորություն ինքնըստինքյան չեղյալ չի համարվում: Պայմանագիրը չեղյալ է դառնում ոչ այլ կերպ, քան չեղյալ հայտարարվելով: Ընդ որում, պայմանագիրը կարող է չեղյալ հայտարարվել միմիայն նախորդ պայմանագրի մաս հանդիսացող բոլոր, կրկնում են, բոլոր, կողմերի համաձայնությամբ՝ այդ մասին հստակ հայտարարելով և այդ իրողությունն ամրագրելով հաջորդ պայմանագրի մեջ: Լոզանի պայմանագրում ընդհանրապես որևէ հիշատակում չկա Սևրի պայմանագրի մասին:

Ավելին, Լոզանը ոչ միայն չեղյալ չի հայտարարել *հայոց իրավունքները*, այլև 16-րդ հոդվածով վերահաստատել է դրանք: Այսպես, Լոզանի պայմանագիրն անդրադառնում է թուրք-բուլղարական, թուրք-հունական և թուրք-սիրիական սահմաններին, ըստ այդմ՝ հստակեցնելով թուրքիային պատկանող տարածքները երկրի միայն այդ հատվածներում: Իսկ քանի որ ըստ Լոզանի պայմանագրի 16-րդ հոդվածի՝ «Թուրքիան հրաժարվում է բոլոր այն տարածքների ու կղզիների տիտղոսից և դրանց նկատմամբ իր բոլոր իրավունքներից, որոնք գտնվում են սույն պայմանագրով գծած սահմաններից դուրս, ի բացառյալ նրանց, որոնց նկատմամբ սույն պայմանագրով ճանաչվել է նրա ինքնիշխանությունը, այս տարածքների և կղզիների ապագան լուծել են կամ կլուծեն շահագրգիռ կողմերը», հետևաբար թուրքիան մեկ անգամ ևս հաստատել է վիլսոնյան Հայաստանից իր հրաժարումը:

Հիմա ամփոփենք մեր քննության արդյունքները: Սակայն մինչ այդ մի հստակեցում: Չնայած Պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիան ընդունվել է 1969թ. և հետադարձ ուժ չունի, ինչպես հայտարարված է կոնվենցիայի 4-րդ հոդվածում, այնուամենայնիվ, հստակ է, որ բոլոր այն չափորոշիչային հիմնադրույթները, որոնցով քննության առանք վերոնշյալ պայմա-

նագրերը, միջազգային իրավունքում առկա են եղել և գործել են դարեր ի վեր, այսինքն, լատիներեն ասած, եղել են *jus cogens*, այն է՝ բոլորի համար պարտադիր ու անբեկանելի: Դրանք, պարզապես, ամրագրվել են Վիեննայի կոնվենցիայի մեջ: Եվ, ինչպես հաստատում է նույն Վիեննայի կոնվենցիայի 53-րդ հոդվածը, պայմանագիրն անվավեր է, եթե կնքելու պահին հակասել է միջազգային ընդհանուր իրավունքի որևէ անբեկանելի հիմնադրույթի, այսինքն՝ որևէ *jus cogens*-ի: Հետևաբար, վերը քննված 5 պայմանագրերից 3-ն անվավեր են, քանի որ դրանցից յուրաքանչյուրը կնքվել է միանգամից մի քանի *jus cogens*-ների ոտնահարմամբ:

*Ըստ այդմ, անվավեր են Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերը: Սևրի պայմանագիրն օրինական է և վավեր, սակայն ուժի մեջ չի մտել, քանի որ լիովին չի վավերացվել: Իսկ Լոզանի վավերական ու օրինական պայմանագիրը, ինչպես ասվեց, Հայաստանին վերաբերում է անուղղակիորեն:*

Հիմա անդրադառնանք հայ-թուրքական սահմանին վերաբերող փաստաթղթերից ամենակարևորին՝ Սևրի պայմանագրից ածանցվող իրավարար վճռին, որը կայացվել է 1920թ. նոյեմբերի 22-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո թոմաս Վիլսոնի կողմից և պաշտոնապես վերնագրված է. «Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի որոշումը թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի, Հայաստանի դեպի ծով ելքի և հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերյալ»:

Նախ՝ մի համառոտ ակնարկ իրավարար վճռի նախընթացի վերաբերյալ:

Հայոց անկախության հռչակումից մեկուկես տարի հետո՝ 1920թ. հունվարի 19-ին, Դաշնակից ուժերի Գերագույն խորհուրդն ի վերջո ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը՝ պայմանով, որ նորաստեղծ երկրի սահմանները կհստակեցվեն հետագայում: Միացյալ Նահանգները Հայաստանի անկախությունը ճանաչեց 1920թ. ապրիլի 23-ին: Արդեն 1920թ. ապրիլի 26-ին Դաշնակից ու-

ժերի Գերագույն խորհուրդը Սան Ռեմոյի հավաքի ժամանակ որոշեց ԱՄՆ-ի նախագահին դիմել երկու խնդրանքով. 1) ստանձնել Հայաստանի մանդատը, 2) իրավարար վճռով որոշել Հայաստանի և Թուրքիայի սահմանը:<sup>8</sup>

Ինչպես գիտեք, Հայաստանի մանդատը 1920թ. հունիսի 1-ին մերժվեց ԱՄՆ-ի Սենատի կողմից: Սակայն երկրորդ խնդրանքի վերաբերյալ ամերիկյան պատասխանը դրական էր, և 1920թ. մայիսի 17-ին ԱՄՆ-ի պետքարտուղարը Ֆրանսիայում ամերիկյան դեսպանի միջոցով դաշնակիցներին տեղեկացրեց, որ նախագահը համաձայնել է գործել որպես իրավարար: Խնդիրն իրականացնելու համար արդեն հուլիսի կեսերին պետքարտուղարությունը, պրոֆեսոր Վիլյամ Վեստերմանի գլխավորությամբ, ստեղծեց փորձագետների խումբ, որը կոչվում էր «Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի իրավարարության հանձնախումբ»: Երբ 1920թ. օգոստոսի 10-ին Սևրում ստորագրվեց Խաղաղության պայմանագիրը, նշյալ հանձնախումբը պաշտոնապես սկսեց իր աշխատանքները: Սևրի պայմանագիրը կարևորվում է նրանով, որ այդ պայմանագրի մեջ որպես 89-րդ հոդված ներառված է *կոմպրոմիս* (compromis), այսինքն՝ իրավարարության հայտը: Հարկ է նշել, որ կոմպրոմիսի կարգավիճակը բնավ կապ չունի բուն պայմանագրի կարգավիճակի հետ, այսինքն՝ վերջինիս վավերացված կամ չվավերացված լինելու հետ: Ուստի, երբ 1920թ. հոկտեմբերի 18-ին ԱՄՆ-ի պետքարտուղարությունն ստացավ Սևրի պայմանագրի ստորագրված տարբերակը, դա ԱՄՆ-ի նախագահի համար պաշտոնապես իրավարար վճիռ կայացնելու բավարար հիմք էր: Նախագահ Վ. Վիլսոնը 1920թ. նոյեմբերի 22-ին ստորագրեց այն և առդիր փաստաթղթերը: Այդ փաստաթղթերի փաթեթը, որը մի ամբողջություն է, բաղկացած է 241 էջից, որից 89-ը բուն իրավարար վճիռն է, իսկ 152-ը՝ տասը հավելվածները: Իրավարար վճիռը 1920թ. դեկտեմբերի 6-ին Փարիզում ԱՄՆ-ի դեսպանատան կողմից պաշտոնապես փոխանցվեց Դաշնակից ուժերին: Տարօրինակ է, սակայն փաստ, որ հայոց նորագույն պատմության

այս կարևորագույն փաստաթուղթը, որով ամրագրված են Հայաստանի Հանրապետության իրավունքներն ու Թուրքիայի հետ սահմանը, բացառությամբ յոթերորդ գլխի, երբեք չի տպագրվել:

Մի քանի խոսք իրավարար վճռի բովանդակության մասին:

Ըստ իրավարար վճռի, Հայաստանի Հանրապետության տիտղոսն ու իրավունքները ճանաչվում էին նախկին Օսմանյան կայսրության Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի նահանգների վրա՝ ընդհանուր առմամբ 103.599 քառ. կմ: Քանի որ վճիռն ուժի մեջ էր մտնում անմիջապես, ապա ԱՄՆ-ի պաշտպանության նախարարությունը սահմանանշող հանձնաժողովի համար տպագրեց նաև աշխատանքային մանրամասն քարտեզներ (19 թերթ):

Իրավարար վճռի ուժի մեջ մտնելու ժամանակի և նախապայմանների մասին:

Միանշանակ է, որ Սան Ռեմոյի կոմիտեանսում Դաշնակից ուժերի եռյակը՝ Բրիտանական կայսրությունը, Ֆրանսիան և Իտալիան, 1920թ. ապրիլի 27-ի պաշտոնական նոտայով, և Սևրի պայմանագիրը ստորագրած բոլոր երկրները (այդ ժամանակ 18) 89-րդ հոդվածով իրավարարության հայցով դիմելով ԱՄՆ-ի նախագահին, իրավարար վճռի ընդունումը չեն պայմանավորել որևէ հանգամանքով, այլ պարտավորվել են «վճիռն ընդունել անմիջապես»: Նույն Սևրի պայմանագրի 90-րդ հոդվածով Թուրքիան լրացուցիչ վերահաստատել է այս դիրքորոշումը՝ ամրագրելով հետևյալը. «սկսած իրավարար որոշման օրից՝ Թուրքիան հրաժարվում է [Հայաստանին] փոխանցվելիք տարածքի նկատմամբ իր բոլոր իրավունքներից և տիտղոսից»:

Այսպիսով, 1920թ. նոյեմբերի 22-ին ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճռով Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանային հարցն ստացավ վերջնական լուծում: Ըստ այդմ էլ, հայ-թուրքական միջպետական սահմանն ամրագրվեց մեկընդմիջտ, քանի որ ինչպես հստակորեն ամրագրված է Հաագայի կոնվենցիայում (1899թ. խմբագրման 54-րդ հոդվածում և 1907թ. խմբագրման 81-րդ հոդվա-

ծում)։ «Եթե իրավարար վճիռը կայացվել է ըստ կարգի և դրա մասին իրազեկ են պահվել կողմերի գործակալները, ապա խնդրո առարկա վեճը լուծվում է մեկընդմիջտ և ենթակա չէ բեկանման»։

Այժմ ամենակարևոր հարցի՝ իրավարար վճռի *ներկա* կարգավիճակի մասին։

Արդեն հիշատակված ՄԱԿ-ի պաշտոնական «Միջազգային հանրային իրավունքի և միջազգային կազմակերպությունների տերմինաբանության ձեռնարկը» իրավարար վճռի վավերականության համար առանձնանշում է չորս չափորոշիչ։ Դրանք են. 1. Իրավարարները պետք է գերօ լինեն արտաքին խոտոր ազդեցությունից, ինչպիսիք են հարկադրանքը, կաշառքը կամ նյութական շահագրգռությունը։ 2. Ապացույցների հավաքումը պետք է գերօ լինի կեղծիքից և չպարունակի որևէ եական սխալ։ 3. Իրավարարության հայցը պետք է վավերական լինի։ 4. Իրավարարները չպետք է գերազանցեն իրենց լիազորությունները։<sup>9</sup>

Ցավոք սրտի, տեղի սղության պատճառով ես հնարավորություն չունեմ չափորոշիչ առ չափորոշիչ քննելու Վիլսոնի իրավարար վճիռը՝ ներկա կարգավիճակը վեր հանելու համար։ Սակայն հետաքրքրվողները նշյալ վճռի, ինչպես նաև պայմանագրերի, իրավական հանգամանալից փորձաքննությանը կարող են ծանոթանալ իմ «Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները» գրքում, որը տեղակայված է [www.wilsonforarmenia.am](http://www.wilsonforarmenia.am) կայքէջում կամ կարող են դիտել իմ հեռուստատեսությունների համանուն DVD-ն։

Առայժմ բավարարվենք ամփոփիչ եզրակացությամբ.

1. քանի որ ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճիռը միանշանակորեն համապատասխանում է իրավարար վճիռների միջազգայնորեն ճանաչված չորս չափորոշիչներին,

2. քանի որ իրավարար վճիռները չունեն վավերականության ժամանակային սահմանափակում,<sup>10</sup>

3. քանի որ իրավարար վճռի վավերականությունը կախում չունի վճռի հետագա ճակատագրից,

4. քանի որ միջազգային իրավունքը, մասնավորապես, Հաագայի կոնվենցիան, որով ամփոփվել և ամրագրվել է իրավարար վճիռների կարգավիճակը, ընդհանրապես չի նախատեսում վճռի չեղյալ հայտարարում,<sup>11</sup>

5. քանի որ կողմերից մեկի մերժումը՝ ի կատար ածելու իրավարարությունը, չի ազդում վճռի վավերականության վրա,

6. քանի որ իրավարար վճիռները վերջնական, անբեկանելի և կատարման համար պարտադիր փաստաթղթեր են,

7. քանի որ կողմերը, համաձայնելով վեճը հանձնել իրավարարությանը, դրանով իսկ կանխավ համաձայնում են կատարման համար պարտադիր ճանաչելու իրավարարի ցանկացած վճիռ,<sup>12</sup>

8. քանի որ Բրիտանական կայսրությունը, Ֆրանսիան և Իտալիան, հանդես գալով Դաշնակից ուժերի անունից, 1920թ. ապրիլի 27-ին իրավարար վճռի հայցադիմումով դիմել են ԱՄՆ-ի նախագահին, դրանով իսկ պարտավորվել են այն ընդունել առանց այլևայլության,

9. քանի որ հայցադիմումի մաս կազմողները պարտավորվել են իրավարար վճիռն ընդունել անմիջապես և առանց նախապայմանների,

10. քանի որ Թուրքիան 1920թ. օգոստոսի 10-ին պարտավորվել է հրաժարվել փոխանցվելիք տարածքի տիտղոսից և իրավունքներից՝ վճռի կայացման օրը և առանց նախապայմանների,

11. քանի որ Թուրքիան 1923թ. հուլիսի 24-ին վերահաստատել է իրեն չփոխանցված տարածքների նկատմամբ բոլոր իրավունքներից և տիտղոսից հրաժարվելու դիրքորոշումը,

ուստի. Վուդրո Վիլսոնի Իրավարար վճիռն այսօր էլ վավերական և կատարման համար պարտադիր փաստաթուղթ է՝ Իրավարար վճռի մաս կազմող բոլոր երկր-

**Ների և նրանց իրավահաջորդների համար: Իրավարար վճիռը պարտադիր է նաև ԱՄՆ-ի համար ոչ միայն այն պատճառով, որ կայացվել է ԱՄՆ-ի նախագահի կողմից, այլև այն պատճառով, որ վճռի տակ դրված է Միացյալ Նահանգների Մեծ կնիքը:**

Այսպիսով, չնայած թուրքիայի կողմից «Վիլսոնյան Հայաստանի» տարածքի տևական բռնազավթմանը, տվյալ տարածքի իրավական տիտղոսը նրան չի պատկանում: 1920թ. նոյեմբերի 22-ից առ այսօր այդ տարածքի վրա նրա *de facto* իշխանությունն ավելին չէ, քան զուտ վարչական վերահսկողությունը, այսինքն՝ այնպիսին, ինչպիսին թուրքիան ներկայումս ունի Հյուսիսային Կիպրոսում:

Հետևաբար, «Վիլսոնյան Հայաստանի» տարածքում թուրքիայի Հանրապետության ներկայությունը և գործողությունները անօրինական են ու անվավեր, որովհետև ռազմական բռնազավթումը չի կարող հանգեցնել տարածքի օրինական իրավատիրության:

Հիմա մեկ այլ կարևոր հարց. *որո՞նք պետք է լինեն մեր հետագա քայլերը:*

Առաջին հերթին, մենք ոչ միայն պիտի հայտարարենք, թե *պետություն ունեցող ազգ ենք, այլև պիտի գործենք որպես այդպիսին:* Այսինքն՝ պիտի օգտվենք միջազգային սուբյեկտի մեր կարգավիճակից:

Քանի որ միջազգային իրավունքը և միջպետական բազմաթիվ փաստաթղթեր, ինչպես, օրինակ, Եվրոպայում անվտանգության և համագործակցության Հելսինկիի 1975թ. եզրափակիչ փաստաթուղթը (մաս 10-րդ, պարբերություն 1-ին), որի տակ կա նաև թուրքիայի ստորագրությունը, հանձնառու երկրներից պահանջում է միջազգայնորեն ստանձնած պարտավորությունների «բարեխիղճ կատարումը, լինեն դրանք ածանցված միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում գտած սկզբունքներից և կանոններից, թե ածանցված լինեն պայմանագրերից կամ այլ համաձայնագրերից, ո-

րոնց այդ երկրները մաս են կազմում՝ համաձայն միջազգային օրենքի», Հայաստանի Հանրապետությունը կարող է և պարտավոր է միջազգային իրավունքի հիման վրա պաշտպանելու իր շահերը, այսինքն՝ Անվտանգության խորհրդի ուշադրությունը հրավիրելու այն հանգամանքի վրա, որ թուրքիան չի կատարում Վիլսոնի իրավարար վճռով ստանձնած պարտավորությունները, որի հետևանքով առաջացել է միջազգային, այսինքն՝ հայ-թուրքական դիմակայություն և վեճ: Հայաստանի Հանրապետությունը, որպես ՄԱԿ-ի անդամ երկիր, ՄԱԿ-ի կանոնադրության 35-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա, լիովին իրավասու է «Անվտանգության խորհրդի կամ Գլխավոր համաժողովի ուշադրությանը ներկայացնել ցանկացած վեճ կամ իրավիճակ, որն իր բնույթով համապատասխանում է [սույն կանոնակարգի] 34-րդ հոդվածում վկայակոչվածին»: Իսկ ՄԱԿ-ի կանոնադրության 34-րդ հոդվածն արձանագրում է. «Անվտանգության խորհուրդը կարող է քննության առնել ցանկացած վեճ կամ իրավիճակ, որը կարող է հանգեցնել միջազգային դիմակայության կամ առաջ բերել վեճ որոշելու համար, թե արդյոք տվյալ վեճի կամ իրավիճակի շարունակումը կարո՞ղ է վտանգել միջազգային խաղաղության և անվտանգության պահպանումը»: Ակնհայտ է, որ ներկա իրավիճակն արդեն իսկ հանգեցրել է հայ-թուրքական դիմակայության և խնդրահարույց վիճակի, և այս ամբողջը թուրքիայի կողմից Հայաստանի Հանրապետության նկատմամբ պատերազմական միջոցառման (war measure), այսինքն՝ շրջափակման իրականացման հետևանք է: Իսկ շրջափակումը հնարավոր է դարձել միմիայն թուրքիայի կողմից իր միջազգայնորեն ստանձնած պարտավորությունների չկատարման հետևանքով:

Միևնույն ժամանակ, Հայաստանը միջնորդի վճիռը կայացրած երկրի՝ օրինակ, ԱՄՆ-ի միջոցով, կարող է դիմել թուրքիային, որպեսզի միասնաբար դիմեն ՄԱԿ-ի միջազգային դատարան՝ դրա Կանոնակարգի 36-րդ հոդվածի առաջին և երկրորդ կետերի հիման վրա հստակեցնելու Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի ներկա կար-

գավիճակը: Ձուգահեռաբար, Հայաստանը կարող է հայց ներկայացնել ՄԱԿ-ի Գլխավոր համաժողովին, որպեսզի վերջինս, Միջազգային դատարանի կանոնակարգի 65-րդ հոդվածի համաձայն, Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի մասին խորհրդատվական (պարզաբանական) կարծիքի համար (advisory opinion) դիմի միջազգային դատարան:

Ուզում եմ ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային կառույցների ներգրավմամբ հայ-թուրքական դիմակայությունը լուծելու ձգտումը չի կարող դիտարկվել հարաբերությունների սրման միտում, այլ, ընդհակառակը, կարող է գնահատվել որպես առկա խնդիրները միջազգային իրավունքի հիման վրա լուծելու ուղղությամբ հաստատական ու դրական քայլ և արձագանք՝ վերջին շրջանում հաճախացող հայ-թուրքական հաշտության կոչերի: Մասնավորապես, միջպետական առկա հակասություններն իրավարարությամբ լուծելու նախընտրելիությունն ընդգրկված է ՄԱԿ-ի կանոնադրության մեջ և ամրագրված է 33-րդ հոդվածում:

Անվիճելի է, որ հայ-թուրքական դիմակայությունը լուծելու համար միջազգային իրավունքը բավարար չէ: Այսուհանդերձ, անկասկած, միայն միջազգային իրավունքն է այն ճանապարհը, որով կարելի է հասնել հիմնահարցի արդար ու խաղաղ լուծմանը և, ի վերջո, տարածաշրջանում հաստատել անսասան ու մշտական խաղաղություն:

Աշխարհում գործընթացներն առաջ են գնում հարաճուն արագությամբ, և միշտ չէ, որ դրանք մեր օգտին են: Եկել է լուրջ որոշումներ ընդունելու և առավել լուրջ քայլեր ձեռնարկելու ժամանակը: Մենք հապաղելու ժամանակ չունենք:

**Հարություն  
ՄԱՐՈՒԹՅԱՆ**

**ԳԵՐՄԱՆԻԱՅԻ  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ՓՈԽՎՏՈՒՅՈՒՄՆԵՐԸ  
ՀՐԵՈՒԹՅԱՆԸ**

**(ձևավորումը, գործընթացը,  
ներկա վիճակը)**



**I**

**Ե**րկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին նացիոնալ-սոցիալիզմի գաղափարախոսությամբ առաջնորդվող ֆաշիստական Գերմանիան իրականացրեց շուրջ 6 մլն եվրոպական հրեաների ցեղասպանությունը, որը պատմության մեջ մտավ Հոլոքոսթ (ողջակիզում, եբրայերեն՝ Հա-Շոա) անվամբ: Պատերազմից հետո կայացան մի շարք կոնֆերանսներ, ուր ի թիվս հետպատերազմյան եվրոպային առնչվող բազմաթիվ վճիռների, որոշումներ կայացվեցին Գերմանիայի կողմից վճարվելիք ռազմատուգանքների ձևերի ու չափերի շուրջ:

Մինչև Իսրայել պետության ձևավորումը գերմանական կողմից փոխհատուցումների վճարման հարցը բարձրացվել է 1945թ. սեպտեմբերին չորս օկուպացիոն տերություններին Հրեական գործակալության (Jewish Agency)<sup>1</sup> կողմից նրա նախագահ Խաիմ Վեյցմանի (Chaim Weizmann) (որը 1935-1946թթ. նաև Համաշխարհային սիոնիստական կազմակերպության՝ World Zionist Organization<sup>2</sup> նախա-



գահն էր) հղած հուշագրում, որտեղ պահանջվում էր այդ հարցն ընդգրկել ռազմատուգանքի շուրջ Գերմանիայի հետ բանակցությունների օրակարգում: Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդող առաջին տարիներին, երբ դեռ խիստ թարմ էր Զոլոքոսթի հիշողությունը, և հրեաները չէին ցանկանում որևէ շփում ունենալ գերմանացիների հետ, Իսրայելի արտաքին գործերի նախարար Մ. Շարեթի 1951թ. սկզբին Գերմանիային ուղղված պահանջը՝ փոխհատուցելու (շուրջ 1,5 մլրդ դոլարի չափով) նացիստական հետապնդումներից փրկված կես միլիոն հրեաների Իսրայելում վերաբնակեցման հետ կապված ծախսերը, կրկին հղված էր ԱՄՆ-ին, ԽՍՀՄ-ին, Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային: Նշված գումարի չափը ձևավորվել էր այն հաշվարկից, որ մեկ ներգաղթողի լիարժեք ինտեգրմանն (աբսորբցիա) ուղղված գործունեությունն արժե 3000 դոլար: Գաշվվել էր նաև, որ նացիստների կողմից թալանվել է 6 մլրդ դոլար արժողությամբ հրեական սեփականություն, սակայն շեշտվում էր նաև, որ գերմանացիները երբեք չեն կարողանա փոխհատուցել իրենց այն արարքները, որոնց զոհ գնացին միլիոնավոր հրեաներ:<sup>3</sup>

ԽՍՀՄ-ն ընդհանրապես անպատասխան թողեց Մ. Շարեթի պահանջը, իսկ արևմտյան տերություններն այն վերահասցեագրեցին Գերմանիայի դաշնային հանրապետության կառավարությանը: Վերջինիս ֆեդերալ կանցլեր Կոնրադ Ադենաուերի 1951թ. սեպտեմբերին արած պաշտոնական հայտարարության մեջ, որը պատգամավորները լսում էին հոտոնկայս և որն արժանացավ խորհրդարանի պատգամավորական բոլոր խմբերի հավանությանը, ասվում էր, որ Գերմանիան պատրաստ է փոխհատուցումներ վճարել նացիստական հանցագործությունների համար:<sup>4</sup> Սակայն հրեական ժողովրդի ներկայացուցիչներին ուղղված Ադենաուերի կոչին՝ այս հարցի շուրջ ԳՖՅ կառավարության հետ բանակցություններ սկսելու մասին, Իսրայելի կառավարությունը սկզբում նույնիսկ չարձագանքեց: Գիշտ է, ի պատասխան այդ կոչի, ընդամենը մեկ ամիս անց, 1951թ. հոկտեմբերին, Նաում Գոլդմանը, որը Զրեական գործակալության համանախագահն

էր և Զրեական համաշխարհային կոնգրեսի (World Jewish Congress) նախագահը, Նյու Յորքում կազմակերպեց Արևմուտքի երկրներում գործող 23 հրեական ազգային և միջազգային կազմակերպությունների հավաք: Վերջինիս մասնակիցները պարզորոշ հասկանալ տվեցին, որ խոսակցությունը կարող է լինել միայն նյութական փոխհատուցումների շուրջ, ու այդպիսով, հանդիպման արդյունքում ստեղծված կազմակերպությունը կոչվեց Գերմանիային ուղղված հրեական նյութական պահանջների կոնֆերանս կամ կրճատ՝ «Պահանջների կոնֆերանս» (The Conference on Jewish Material Claims Against Germany – the Claims Conference): Այս նոր կոնֆերանսի Տնօրենների խորհուրդը բաղկացած էր հիմնադիր կազմակերպություններից յուրաքանչյուրի գործուղած երկուական անդամներից: Նրանց հայտարարության մեջ նշված է, որ «Պահանջների կոնֆերանսը» խնդիր ունի բանակցել գերմանական կառավարության հետ ու ստեղծել Գերմանիայի կողմից Զոլոքոսթի միջոցով անհատ հրեա մարդկանց և հրեա ժողովրդին պատճառած նյութական վնասների փոխհատուցումների ծրագիր»:

1951թ. դեկտեմբերին Կ. Ադենաուերի հետ Լոնդոնում հանդիպման ժամանակ Ն. Գոլդմանը պայմանավորվածություն ձեռք բերեց, որ Մ. Շարեթի ներկայացրած գումարը դառնալու է բանակցությունների առարկա: Սակայն բանակցությունների նկատմամբ կողմերի վերաբերմունքը տարբեր էր:

Արևմտյան Գերմանիան, որպես Երրորդ ռեյխի փաստացի իրավահաջորդ, հրեաներին վճարվելիք փոխհատուցումների շուրջ տարվող բանակցությունները կարևորագույն քայլ էր համարում նացիստական անցյալի հաղթահարման ուղղությամբ և մտադիր էր այդպես գոնե մասամբ քավել գերմանական ժողովրդի մեղքը: Ըստ կողմերի միջև կնքված համաձայնագրի՝ գումարները Իսրայելին պետք է վճարվեին որպես փոխհատուցում Զոլոքոսթի տարիներին հրեաների ստրկական աշխատանքի և նրանց նկատմամբ կիրառված հալածանքի, հետապնդումների համար, ինչպես նաև նացիստների գողացած, թալանած հրեական սեփականության դիմաց: Միևնույն ժամանակ, գեր-

մանացիների հետ բանակցություններ վարելու գաղափարն անգամ բողոքի մեծ ալիք առաջացրեց Իսրայելում և աշխարհի այլ երկրներում բնակվող հրեաների շրջանում: Դա նրանք ընկալում էին որպես նացիստական ցեղասպանության զոհերի հիշատակի անարգանք և աջակցություն մարդասպանների ռեաբիլիտացմանը:<sup>5</sup> Ավելի պրագմատիկ էր Իսրայելի վարչապետ Դ. Բեն-Գուրիոնի (Ben-Gurion) դիրքորոշումը, որը 1952թ. հունվարին, մի քանի ամիս վարանելուց հետո, գերմանական փոխհատուցումների հարցը դրեց Իսրայելի Կնեսետի օրակարգում: Իր որոշումը նա հիմնավորում էր նրանով, թե չի կարելի ոճրագործներին թույլ տալ, որ ոճրագործները դառնան իրենց իսկ զոհերի ժառանգության տեր, և որ հրեական պետությունն իրավասու է երրորդ ռեյխի իրավահաջորդներից պահանջելու միջոցներ, որոնք անհրաժեշտ էին թեթևացնելու նացիստական ցեղասպանությունից փրկված հրեաների աբսորբցիայի գործընթացը: Ընդամենի, իսրայելական ղեկավարը նշում էր, որ խոսքը բացառապես հրեական թալանված գույքի արժեքի փոխհատուցման, այլ ոչ թե «արյան դիմաց վճարվող փողերի» մասին է, և որ նյութական պահանջները չեն վերաբերում պատմաբարոյական խնդիրներին, որոնք հավերժ կմնան չվճարված: Եռօրյա բումն քննարկումների արդյունքում, որոնք արտացոլում էին հրեական հասարակության մեջ այս հարցի շուրջ առկա սուր տարածայնությունները, Բեն-Գուրիոնի առաջարկը՝ Արևմտյան Գերմանիայի հետ ուղղակի բանակցություններ վարելու մասին (չնայած բացեիբաց այդ մասին չասվեց և ոչ մի խոսք), Կնեսետի կողմից ընդունվեց 61 ձայն կողմ, 50՝ դեմ հարաբերակցությամբ:

Գերմանական փոխհատուցումների մասին բանակցությունները կայացան 1952թ. մարտ-սեպտեմբերին: Դրանց արդյունքում 1952թ. սեպտեմբերի 10-ին Լյուքսեմբուրգում Կ. Ադենաուերի, Մ. Շոմետի և Ն. Գոլդմանի միջև կնքվեց համաձայնություն (պատմության մեջ հայտնի է որպես «Լյուքսեմբուրգյան համաձայնություն»),<sup>6</sup> ըստ որի Արևմտյան Գերմանիան պարտավորվեց 12-14 տարիների ընթացքում վճարել 845 միլիոն դոլար կամ 3 մլրդ մարկ (հրեական կողմը

պահանջեց, որպեսզի 500 մլն դոլարը վճարվի Արևելյան Գերմանիայի կողմից, սակայն մինչև Գերմանիայի վերամիավորումը այդ պահանջը մնաց անպատասխան), որից 110 մլն դոլարը նախատեսվում էր Գերմանիային ուղղված հրեական նյութական պահանջների մշտապես գործող կոնֆերանսին, ինչպես նաև ուղղակի փոխհատուցումների որոշակի չափանիշներով ընտրված անհատներին: Գերմանիան պետք է մեկանգամյա փոխհատուցում վճարեր 275 հազար վերապորոզների: Այսօր նրանց թիվը կազմում է 120 հազար մարդ:

Արաբական երկրները սպառնում էին այդ համաձայնությունը Բունդեսբազի կողմից վավերացվելու դեպքում բոլորտ հայտարարել Արևմտյան Գերմանիային: Սակայն այդ սպառնալիքը համապատասխան որոշման ընդունումը հետաձգեց ընդամենը կես տարով, և վերջինս ուժի մեջ մտավ 1953թ. մարտի 27-ին: 1953թ. սեպտեմբերին Գերմանիայի խորհրդարանը հատուկ օրենք ընդունեց գերմանական փոխհատուցումների մասին, որը հետագայում մի քանի անգամ ճշտվեց ու լրացվեց: Իսրայելի կառավարությունն ստացված գումարները ներդրեց երկրի ենթակառուցվածքների զարգացման գործում, և դրանք մեծ նշանակություն ունեցան նոր պետության տնտեսության հիմնադրման և զարգացման համար: Գումարներն օգտագործվում էին տնտեսության հիմնարար ճյուղերի՝ գյուղատնտեսության, արդյունաբերության, տրանսպորտի և էլեկտրական ցանցերի զարգացման համար: Ծրագրի իրականացումը հանձնարարվեց հատուկ ստեղծված Գերմանական փոխհատուցումների պետական ընկերությանը: Ծրագրի շրջանակներում ԳՖՀ-ից Իսրայել էին փոխանցվում նաև անհրաժեշտ ապրանքներ ու ծառայություններ, որոնք գլխավորապես անհրաժեշտ էին գյուղատնտեսության մեխանիզացման, արդյունաբերության գիտատար ճյուղերի զարգացման և առևտրական նավատորմի ստեղծման համար: Լյուքսեմբուրգյան համաձայնության (1953-1965) գործողության ժամանակահատվածում, որի իրականացումը ԳՖՀ-ն կատարեց կես առ կես, գերմանական փոխհատուցումների հաշվին իրականացված մատակարարում-

ները կազմեցին Իսրայելի ամենամյա ներմուծումների 12-20%-ը:

Գերմանիային ուղղված հրեական նյութական պահանջների մշտապես գործող կոնֆերանսը Լյուքսեմբուրգյան համաձայնությանը իրեն տրամադրված միջոցները (ԳՖՅ կառավարությունը 110 մլն դոլարին ավելացրեց 16 մլն դոլար) գլխավորապես օգտագործեց նացիստական ցեղասպանությունից փրկված և Իսրայելից դուրս՝ եվրոպական բազմաթիվ երկրներում բնակվող Յուդեոսթր վերապրողներին օգնելու նպատակով: Ծրագրի իրագործման ընթացքում բացարձակապես ոչինչ չհասավ Խորհրդային Միությունում և նրա արևելաեվրոպական դաշնակից երկրներում բնակվող հրեաներին, որոնք ոչ պակաս էին տուժել նացիստական հետապնդումներից: Այդ միջոցներից Կոնֆերանսը վճարեց շուրջ 50 հազար հրեաների հայրենադարձության, համակենտրոնացման ճամբարների բազմահազար նախկին բանտարկյալներին տրամադրվող բուժօգնության, շուրջ 200 հազար մարդկանց անհատական փոխհատուցման պահանջների բավարարմանն ուղղված իրավաբանական օգնության կազմակերպման, նացիստական օկուպացիայի ենթարկված եվրոպական երկրներում հրեական համայնքային կյանքի վերակենդանացման համար և այլն: Սրան զուգահեռ իրականացվում էին կրթական և մշակութային խոշոր ծրագրեր. օրինակ, նացիզմի զոհերի բազմահազար ընտանիքների երեխաներ ապահովվեցին կրթաթոշակներով, 18 երկրներում հիմնվեցին հրեական 150 ուսումնական հաստատություններ, 13 լեզուներով հրատարակվեցին Յուդեոսթր վերապրած հեղինակների շուրջ 400 ստեղծագործություններ և այլն: Այդ նույն աղբյուրից զգալի չափով ֆինանսավորվեցին նաև Յադ Վաշեմում և այլուր կատարվող Յուդեոսթրին նվիրված գիտական ուսումնասիրությունները: 1965թ. սկզբնական կապիտալ հատկացվեց Նյու Յորքում հրեական մշակույթի հուշային ֆոնդ հիմնելուն և այլն:

1952թ. մարտին ԳՖՅ-ն ստանձնեց նաև պատերազմի ընթացքում հրեա անհատներից թալանված, բռնագրավված գույքի վերադարձման պարտավորությունը, որն օրենսդրական ձևակեր-

պումներ ստացավ 1953թ., ապա 1956-1963թթ. պարբերաբար լրացվեց և վերջնականապես ձևակերպվեց 1965թ. (Արևմտագերմանական փոխհատուցման օրենքներ West German Indemnification Laws (BEG):<sup>7</sup> Համաձայն այդ օրենքների, անհատական փոխհատուցումներ վճարվեցին Իսրայելում և աշխարհի տարբեր երկրներում բնակվող հարյուր հազարավոր հրեաների, իսկ ԳՖՅ-ի՝ այդ նպատակով կատարվող ծախսերը կազմում էին միլիարդավոր գերմանական մարկ: Անհատական փոխհատուցումները (չնայած հրեական պաշտոնական մոտեցումների մեջ ոչինչ չի փոխվել) առ այսօր վճարվում են ոչ միայն ունեցվածքի, այլև կյանքի կորստյան (զոհերի ժառանգներին), առողջությանը պատճառած վնասի, ազատության կորստի և նույնիսկ մասնագիտական ու տնտեսական առաջընթացին խոչընդոտելու համար:

Իսրայելի կառավարությունը 1952թ. սեպտեմբերին պաշտոնապես հայտարարեց, որ գերմանական փոխհատուցումների համաձայնության ներքո իր ներկայացուցիչների ստորագրությունը բնավ չի նշանակում, թե իրենք հաշտվում են գերմանական ժողովրդի հետ կամ ճանաչում են գերմանական որևէ պետության գոյությունը: Սակայն այն բանից հետո, երբ Իսրայելը փոխհատուցումների հարցում շփումների գնաց ԳՖՅ-ի հետ, միջպետական հարաբերությունների մակարդակում նման դիրքորոշման պահպանումը բավական դժվար էր: Տնտեսական կապերի առկայությունը, դրանց խորացումը, ինչպես նաև միջազգային իրադրությունը հանգեցրին այն բանին, որ 1965թ. երկու պետությունների միջև հաստատվեցին դիվանագիտական կապեր:

## II

1990-ական թթ. հրեաները սկսեցին պահանջներ ներկայացնել Արևելյան Եվրոպայում իրենցից խլված-թալանված սեփականության համար: Բազմաթիվ խմբեր սկսեցին հետազոտել, թե ինչ է պա-

տահել այն գումարներին, որոնք շվեյցարական բանկերին ի պահ էին տրվել Շվեյցարիայից դուրս բնակվող, սակայն Հոլոքոսթի տարիներին զոհված հրեաների կողմից: Բացի այդ, առանձին ընկերություններ, որոնցից շատերը գործում էին Գերմանիայում, սկսեցին վերապրածների խմբերի կողմից ճնշման ենթարկվել՝ իրենց կողմից բռնի կատարված աշխատանքի դիմաց դրամական փոխհատուցման պահանջով: Դրանց թվում էին Deutsche Bank AG, Siemens AG, Bayerische Motoren Werke AG (BMW), Volkswagen AG, Adam Opel GmbH-ն: Ի պատասխան՝ 1999թ. սկզբին գերմանական կառավարությունը հայտարարեց Հոլոքոսթը վերապրածներին օգնելու համար այդ ընկերություններից վերցրած գումարներով դրամական ֆոնդի ստեղծման մասին: Նման մի ֆոնդ ստեղծվեց նաև Շվեյցարիայում, ապա և Հունգարիայում՝ նպատակ ունենալով փոխհատուցել Հոլոքոսթի զոհերին և նրանց ժառանգներին:

1990-ական թթ. վերջերին քննարկումներ կայացան ապահովագրական այն ընկերություններում, որոնք պատերազմից առաջ ապահովագրել էին հետագայում նացիստների կողմից սպանված հրեաներին: Այդ ընկերությունների թվում էին Alliance, AXA, Assicurazioni Generali, Zürich Financial Services Group, Winterthur, Baloise Insurance Group: Յադ Վաշենի հետազոտությունների շնորհիվ ճշտվում էին Հոլոքոսթի զոհերի մասին տեղեկությունները, իսկ ԱՄՆ-ի նախկին պետքարտուղար Լոուրենս Իգլբերգերի (Lawrence Eagleburger) նախագահությամբ ստեղծված միջազգային հանձնաժողովը փորձում էր ճշտել ապահովագրված, ապաև Հոլոքոսթի տարիներին զոհված մարդկանց անունները: Ստեղծվեց Համաշխարհային հրեական փոխհատուցման կազմակերպություն, որը պետք է համակարգեր այս ջանքերը: 1998 և 1999թթ. ԱՄՆ-ի Արտաքին փոխհատուցումների պահանջի լուծման հանձնաժողովի (US Foreign Claims Settlement Commission)<sup>8</sup> (որպես հրեական ծագմամբ ԱՄՆ քաղաքացիների շահերի ներկայացուցիչ) և գերմանական կառավարության միջև համաձայնություն ձեռք բեր-

վեց պատերազմից հետո ԱՄՆ ներգաղթած Հոլոքոսթի զոհերին համապատասխան վճարումներով փոխհատուցելու վերաբերյալ:

### III

Ինչպես նշվեց, դեռևս 1952թ. բանակցությունների ժամանակ Արևմտյան Գերմանիան սկզբունքորեն ճանաչեց Հոլոքոսթը վերապրածներին փոխհատուցումներ վճարելու իր պարտավորությունները: Մինչդեռ Արևելյան Գերմանիան, չնայած Պահանջների կոնֆերանսի բազմաթիվ ջանքերին, վճարականոն հրաժարվում էր նման որևէ պարտավորություն ստանձնել: Երբ 1990թ. Արևմտյան և Արևելյան Գերմանիաները բանակցում էին իրենց միավորման համաձայնության շուրջ, Պահանջների կոնֆերանսը հարց բարձրացրեց, որպեսզի միավորված Գերմանիան կատարի իր պարտավորությունները և փոխհատուցումներ վճարի Հոլոքոսթի այն վերապրողներին, որոնք մինչ այդ փոխհատուցում ստացել էին կամ աննշան չափով, կամ էլ ոչինչ չէին ստացել:

ԱՄՆ-ի կառավարության օժանդակության շնորհիվ, Պահանջների կոնֆերանսը եռանդուն բանակցություններ սկսեց Գերմանիայի կառավարության հետ: Դրա շնորհիվ 1990թ. հոկտեմբերի 3-ի Գերմանիայի վերամիավորման պայմանագրի իրագործման համաձայնագրի 2-րդ հոդվածում (Article 2 of the Implementation Agreement to the German Unification Treaty of October 3, 1990)<sup>9</sup> ձևակերպվեց հետագայում վճարվելիք փոխհատուցումների հետևյալ խոստումը. «Դաշնային կառավարությունը պատրաստ է, ի շարունակություն ԳՖՀ-ի քաղաքականության, համաձայնության գալ Պահանջների կոնֆերանսի հետ՝ լրացուցիչ ֆոնդեր հատկացնելու վճարումներ կատարելու համար այն զրկանքների դիմաց, որ կրել են հետապնդումների ենթարկվածներից նրանք, ովքեր մինչև այժմ՝ համաձայն ԳՖՀ-ի օրենսդրությամբ ընդունված որոշումների, կամ բնավ չեն ստացել, կամ ստացել են նվազագույն փոխհատուցումներ»:

Այս համաձայնությունը, որը հայտնի է Ֆոնդի հոդված 2 (Article 2 Fund) անվամբ, հետևանք էր, ընդհանուր առմամբ, ավելի քան 16 ամիս ընթացող դժվարին բանակցությունների: Այս հոդվածի հիման վրա, փոխհատուցումները վճարվում են ամեն ամիս 270 եվրո գումարի չափով, որն աճել է 2003թ. բանակցություններից հետո: Ֆոնդը Պահանջների կոնֆերանսի կողմից կառավարվում է գերմանական կառավարության սահմանած կարգի համաձայն:

Արդ, որո՞նք են Ֆոնդի հոդված 2-ի հիմնական արդյունքները: Արդեն 1990-ական թթ. կեսերին, այդ հոդվածի կիրառման շնորհիվ, թեթևացան համապատասխան ցուցակներում ընդգրկվելուն հավակնողներին ներկայացվող չափանիշները (eligibility criteria), ինչի շնորհիվ ևս 25 հազար մարդ սկսեցին թռչակներ ստանալ: Մինչ այդ բանակցությունները հոդված 2-ը տարածվում էր միայն այն վերապրողների վրա, ովքեր համապատասխանում էին Ֆոնդի կողմից առաջ քաշվող բոլոր չափանիշներին, այդ թվում և այն կետի դրույթներին, որոնք լրացուցիչ գումարներ ստանալու իրավունք էին վերապահում այն անձանց, որոնց անհատական եկամուտները չէին գերազանցում տարեկան 16.000 դոլարը կամ այն ամուսնական զույգերին, ում եկամուտները չեն գերազանցում տարեկան 21.000 դոլարը: Այս սահմանափակումները բավականին ազատականացվեցին, երբ Պահանջների կոնֆերանսը պահանջեց եկամուտների գումարները հաշվարկելու ժամանակ Ֆոնդի մյուս չափանիշներին համապատասխանող 70 և ավելի տարեկանների համար բացառել սոցիալական ապահովության համար կատարվող վճարումները:

Սկսած 2000-2004թթ., Պահանջների կոնֆերանսի շնորհիվ ամենամսյա լրավճարներ ստանալու իրավունք ունեցող անձանց (eligible applicants) ցուցակներն ընդլայնվեցին ի հաշիվ այն հրեաների, ովքեր բանտարկված են եղել ավստրիական հատուկ, ինչպես նաև նախկինում որպես այդպիսին չճանաչված ռումինական, հունգարական, բուլղարական ճամբարներում, կամ աշխատել են Հարավսլավիայում գտնվող պղնձահանքերում, կամ հունգարացիների համար

ուկրաինական ռազմաճակատում, ինչպես նաև Ռումինիայում գործող աշխատանքային գումարտակներում և այլն: 2004թ. ձեռք բերվեց համաձայնություն, ըստ որի փոխհատուցումներ պետք է վճարվեին պատերազմի տարիներին Բուլղարիայում բնակվող 18 տարին լրացրած այն հրեաներին, ովքեր այնտեղ բնակվում էին ոչ լեզալ և ստիպված էին ունենալ կեղծ ինքնություն կամ այլ կեղծ փաստաթղթեր, ինչպես նաև համապատասխանում էին մի շարք այլ ցուցանիշների: Գերմանական կառավարությունը 2005թ. համաձայնեց Հոլոքոսթը վերապրածների ցուցակում ընդգրկել նաև այն անձանց, ովքեր առնվազն վեց ամիս գտնվել են Հունգարիայում, Թունիսում, Մարոկոյում ու Ալժիրում գործող աշխատանքային ճամբարներում և համապատասխանում էին ցուցակում ընդգրկվելու համար անհրաժեշտ համարվող մի շարք այլ ցուցանիշների: Պահանջների կոնֆերանսը 2006թ. բանակցում էր, որպեսզի ցուցակում ընդգրկվեն նաև թունիսյան երեք ճամբարներում ներկայված անձինք, որոնք ևս համապատասխանում էին անհրաժեշտ դիտվող այլ ցուցանիշների:

#### IV

Պահանջների կոնֆերանսը 1998թ. գերմանական կառավարության հետ բանակցությունների արդյունքում ձեռք բերեց համաձայնություն, ըստ որի ստեղծվեց Կենտրոնական և Արևելաեվրոպական հիմնադրամը (Central and Eastern European Fund – CEEF),<sup>10</sup> որը պետք է փոխհատուցումներ վճարեր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ այն հրեա բնակիչներին, որոնք նացիստների կողմից հալածվել էին: Նախատեսվում էր փոխհատուցումներ ստանալու իրավունք ունեցողներին վճարել ամսական 250 գերմանական մարկ: Գերմանական կառավարությունը որոշեց 1999թ. հունվարի 1-ից չորս տարի անընդմեջ նշված հիմնադրամին հատկացնել 50-ական մլն գերմանական մարկ: Պահանջների կոնֆերանսը հաշվարկեց, որ շուրջ

18 հազար վերապրողներ կօգտվեն այդ հիմնադրամից, սակայն մինչ օրս շարունակում է բանակցությունները՝ իրավունքների տրամադրման ցուցանիշներն ազատականացնելու ուղղությամբ: Ներկայումս Եվրամիության ոչ անդամ երկրների բնակիչների համար վճարումները կազմում են ամսական 135 եվրո, իսկ 2006-ից ի վեր (կրկին Պահանջների կոնֆերանսի բանակցությունների արդյունքում) ամսական 175 եվրո չափով փոխհատուցում են ստանում Եվրամիության նորանդամ երկրների (Չեխիա, Էստոնիա, Լատվիա, Լիտվա, Հունգարիա, Լեհաստան, Սլովակիա, Սլովենիա) համապատասխան կատեգորիայի քաղաքացիները: Պահանջների կոնֆերանսը շարունակում է բանակցությունները՝ փոխհատուցման վճարների գումարների չափն ավելացնելու ուղղությամբ:

## V

Արևմտագերմանական փոխհատուցման վերոհիշյալ օրենքների (BEG) պայմանները նախատեսում էին ուղղակի փոխհատուցումների վճարումների սահմանափակում նախկին գերմանական քաղաքացիների, փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց համար: Նշվեց նաև, որ սոցիալիստական ճամբարի երկրների Հոլոքոսթը վերապրած բնակիչները ոչ մի փոխհատուցում չէին ստացել: ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև լարվածության մեղմացման ժամանակաշրջանում բազմաթիվ վերապրողներ՝ փախստականի կարգավիճակով, արտագաղթեցին Արևմուտք: Սակայն նրանք շարունակում էին դուրս մնալ գերմանական փոխհատուցման ծրագրերից, քանի որ Արևմտագերմանական փոխհատուցման օրենքների համաձայն, փոխհատուցումներ ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակների կազմման վերջնաժամկետ էր սահմանված 1965 թվականը:

Պահանջների կոնֆերանսը 1975թ. սկսած՝ նախաձեռնեց բանակցությունների մի նոր փուլ, որոնք ուղղված էին սոցիալիստական ճամբարի երկրներից փախստականների փոխհատուցումներ ստա-

նալու իրավունքի հաստատմանը՝ այդպիսով երկարացնելով վերոնշյալ ցուցակների կազմման վերջնաժամկետը: Վերջապես, 1980թ. ԳՖՀ-ն ստեղծեց «Ջրկանքների [ենթարկվածների] հիմնադրամը»,<sup>11</sup> 400 մլն գերմանական մարկ գումարով: Նախատեսվում էր այդ գումարից մեկանգամյա վճարումներ հատկացնել Հոլոքոսթը վերապրողներին՝ յուրաքանչյուրին տրամադրելով 5000 գերմանական մարկ (ներկայում՝ 2556 եվրո), որից 5%-ի չափով գումար պետք է առանձնացվեր դրամաշնորհների համար: Այս հիմնադրամը Գերմանիայի կառավարությունը ստեղծեց այն պայմանով, որ հիմնադրամի տնօրինումը և վճարների տրամադրումն իրականացվի Պահանջների կոնֆերանսի (այլ ոչ թե գերմանական կառավարության) կողմից: Հաշվարկված է, որ Հոլոքոսթի շուրջ 80 հազար վերապրողներ կօգտվեն այս հիմնադրամի վճարումներից: Հոլոքոսթն ավելի մեծ թվով վերապրածներ ԽՍՀՄ փլուզումից հետո արտագաղթեցին Արևմուտք: Համապատասխան բանակցություններից հետո Պահանջների կոնֆերանսը հասավ այն բանին, որ մինչև 1992թ. վերջը գերմանական կառավարությունը «Ջրկանքների ենթարկվածների հիմնադրամին» հավելյալ տրամադրեց ևս 135 մլն գերմանական մարկ, ինչպես նաև 10 մլն գերմանական մարկ Իսրայել պետությանը՝ կառուցվածքային բնույթ ունեցող դրամաշնորհների համար:

«Ջրկանքների ենթարկվածների հիմնադրամն» այսօր ևս շարունակում է ֆինանսական օժանդակություն տրամադրել նացիստական հալածանքների բազմաթիվ զոհերի: Նացիզմի այն զոհերը, որոնք հալածանքների տարիներին, ինչպես նաև այն ժամանակներում, երբ ձեռք էին բերվում համաձայնություններ արևմտյան որոշակի երկրների և Գերմանիայի միջև, հանդիսանում էին նշյալ երկրների քաղաքացիներ, ներկայումս «Ջրկանքների ենթարկվածների հիմնադրամից» որևէ վճարում չեն ստանում: Գերմանական կառավարությունն այսօր չի նախատեսում վճարումներ իրականացնել նման մարդկանց համար, ինչը, թերևս, Պահանջների կոնֆերանսի համար գործունեության նոր դաշտ է բացում:

## VI

Պահանջների կոնֆերանսը, որպես հրեաների՝ Գերմանիային ուղղված նյութական պահանջները ներկայացնող մշտական կազմակերպություն, գործում է ավելի քան կես դար: Առ այսօր էլ նրա գործունեության նպատակները նույնն են. Հոլոքոսթը վերապրածների և Հոլոքոսթի զոհերի ժառանգների համար դրամական փոխհատուցումների ձևով իրականացվող վճարումների ապահովումը և խլվածի վերականգնումը: 1951թ. ի վեր Պահանջների կոնֆերանսը, համագործակցելով Իսրայել պետության հետ, բանակցել և կազմակերպել է վճարումների իրականացում Գերմանիայի, Ավստրիայի և այլ երկրների ինչպես կառավարությունների, այնպես էլ ընկերությունների կողմից, հետ է բերել և ֆոնդավորել չպահանջված գերմանական-հրեական սեփականությունը՝ նացիզմի կարիքավոր հրեա զոհերի համար օժանդակության ծրագրեր իրականացնելու նպատակով:

Այս ընթացքում, Պահանջների կոնֆերանսի աշխատանքի շնորհիվ, փոխհատուցման վճարներ են ստացել 75 երկրներում բնակվող ավելի քան 500 հազար Հոլոքոսթը վերապրածներ: Այդ վճարումների գումարը կազմել է ավելի քան 60 մլրդ դոլար: Պահանջների կոնֆերանսը շուրջ 1 մլրդ դոլար է տրամադրել այն կազմակերպություններին, որոնք զբաղվում են Հոլոքոսթը վերապրածների սոցիալական պահանջների բավարարման հարցերով և ներգրավված են Հա-Շոնային նվիրված հետազոտություններում, դասավանդման և փաստաթղթերի ուսումնասիրության մեջ: Կոնֆերանսը նաև գումարներ է տրամադրել վերականգնելու գերմանացիների ոչնչացրած հրեական համայնքները և կազմակերպությունները:

Առ այսօր Պահանջների կոնֆերանսը շարունակում է գործել:<sup>12</sup> Մասնավորապես, շարունակում է բանակցությունները Գերմանիայի և Ավստրիայի կառավարությունների, ինչպես նաև առանձին արդյունաբերական ընկերությունների ու բանկերի ներկայացու-

ցիչների հետ: Պահանջների կոնֆերանսը շարունակում է կառավարել փոխհատուցման ծրագրերը և բաշխել վճարումները, ինչպես նաև օժանդակում է նացիստական հետապնդումների ենթարկված հրեաների ժառանգների երիտասարդ սերնդին կազմակերպություններին տրվող դրամաշնորհների միջոցով, որոնք ձևավորվում են նախկին Արևելյան Գերմանիայում գտնվող հրեական չպահանջված սեփականության վաճառքի գումարներից:

## VII

*Որոշ հետևություններ, որոնք կարող են օգտակար լինել նաև հայոց պահանջատիրության տեսանկյունից.*

ա) Ցեղասպանության պատճառած նյութական կորուստների դիմաց փոխհատուցումների պահանջի ներկայացման և ստացման հարցը մի գործընթաց է, որը կարող է տևել տասնյակ տարիներ: Հրեաների պարագայում այն շարունակվում է ավելի քան 55 տարի:

բ) Ցեղասպանության պատճառած նյութական կորուստների փոխհատուցումը ոչ մի կապ չունի «արյան գնի» հետ, որը ենթակա չէ վճարման: Փոխհատուցման փաստը չի ենթադրում ցեղասպանության իրականացման գաղափարախոսությունը կրող ժողովրդի ներկայացուցիչների ներում ցեղասպանությունը վերապրածների կամ ցեղասպանության ենթարկված ժողովրդի կողմից: Երկու կողմերը կարող են ունենալ նորմալ միջպետական հարաբերություններ, միևնույն ժամանակ նման հարաբերությունների առկայությունը կամ բացակայությունը չի կարող փոխհատուցման գործընթացի ձևավորման խոչընդոտ դիտվել:

Ցեղասպանության հարցերին նվիրված վերլուծական, քարոզչական աշխատանքներում առավելապես շեշտվում է ցեղասպանությունն իրականացրած կողմին առաջնորդող գաղափարախոսության պահը և ոչ թե ցեղասպանությունն իրականացրած կողմի էթնիկ պատկանելության գործոնը:

գ) Ցեղասպանության պատճառած կորուստների նյութական փոխհատուցումների դրսևորումները տարաբնույթ են: Դրանք կարող են լինել ինչպես դրամական ուղղակի և անուղղակի փոխհատուցումներ վերապրածներին ու զոհերի ժառանգներին (թե՛ միանվագ, թե՛ տարիներ ու տասնամյակներ շարունակվող), այնպես էլ նյութական փոխհատուցումներ (դրամի, ենթակառուցվածքների, դրամաշնորհների տրամադրման և այլ ձևերով) ցեղասպանության ենթարկված ժողովրդի իրավահաջորդ պետական միավորմանը:

դ) Ցեղասպանության պատճառած նյութական կորուստների համար փոխհատուցումների պահանջների ներկայացման, ստացման ու բաշխման գործի իրականացման համար լավագույն ձևը միջազգային ոչ կառավարական կազմակերպության ստեղծումն է, որը կաշկանդված չէ շահառու հանդիսացող պետության օրենքներով: Այդ մարմինը նաև հետազոտական-իրավական գործունեություն իրականացնող կառույց է: Այն պետությունից ստանում է որոշակի իրավասություններ և գործում է դրանց շրջանակներում՝ միաժամանակ ներկայացնելով ցեղասպանության ենթարկված ժողովրդի աշխարհով մեկ սփռված ժառանգների շահերը:

ե) Ցեղասպանության զոհեր են համարվում ոչ միայն ցեղասպանության իրականացման տարիներին զոհվածները, այլև նրանք, ովքեր (1) իրենց բնակության վայրերից ենթարկվել են բռնի տեղահանման, (2) տարհանվել են համակենտրոնացման ճամբարներ, (3) բռնի աշխատել են հանքերում, աշխատանքային գումարտակներում և այլուր, (4) ենթարկվել են որոշակի բարոյական կամ այլ բնույթի զրկանքների, հալածանքների, (5) հնարավորություն չեն ունեցել ստանալու համապատասխան կրթություն, զրկվել են մասնագիտական աճի հնարավորություններից և այլն:

զ) Հրեաների՝ Գերմանիային ուղղված նյութական պահանջների մշտապես գործող մարմնի՝ «Պահանջների կոմֆերանսի» գործունեության փորձը կարող է շարունակական ուսումնասիրության:

**Աշոտ  
ՄԵԼՔՈՆՅԱՆ**

**ԱՐԵՎՍՏՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ՕՍՄԱՆՅԱՆ  
ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՄԻՏՈՒՄՆԵՐԸ  
(XVI դար – XX դարի սկիզբ)**



Հայոց ցեղասպանության հիմնահարցի վերաբերյալ թուրքական պաշտոնական պատմագրության կողմից ներկայացվող հայեցակարգում առանձնակի տեղ է հատկացված հայերի՝ որպես Օսմանյան կայսրության ժողովուրդների մեջ առավել բարեկեցիկ կյանքով ապրող, բայց տերության նկատմամբ երախտամոռ կեցվածք դրսևորած ազգի «հանգամանքներին»: Այլ կերպ ասած, վկայակոչելով Կ.Պոլսի հայ մեծահարուստ ամիրայական դասի, այդ թվում՝ իշխանական շրջանակներին մոտ կանգնած հայազգի գործիչների կյանքի անհամեմատ բարվոք պայմանները, թուրքական պաշտոնական շրջանակներն ու պատմաբանները «զարգացնում» են վաղուց հայտնի այն կեղծ վարկածը, թե ինչպես Առաջին համաշխարհային պատերազմի, այնպես էլ դրան նախորդած օսմանյան ամբողջ ժամանակաշրջանում հայերը, ապրելով բարեկեցիկ պայմաններում, չունենալով լուրջ դժգոհության պատճառներ, արտա-



քին ուժերի, հատկապես Ռուսաստանի դրոմանք, քանիցս դիմել են ապստամբական գործողությունների, իրականացրել պառակտչական գործողություններ՝ հավաստելով իրենց անհավատարմությունը «հայրենի» պետության հանդեպ: Ի պատասխան, պատերազմի տարիներին կառավարությունը հարկադրված իրագործել է «դավաճան» հայերի տեղահանություն և տարագրություն՝ դեպի ռազմաճակատի զծից հեռու, «ապահով» վայրեր: Բայց, ցավալիորեն, ճանապարհին համաճարակների, քրդերի հարձակումների հետևանքով տարագիրներն ունեցել են զոհեր, ընդ որում՝ պատերազմական վիճակով թելադրված, ոչ պակաս կորուստներ են ունեցել նաև իրենք՝ թուրքերը: Այսինքն՝ փորձ է արվում կենդանություն տալ երկուստեք զոհ լինելու հնացած վարկածին, դրանով իսկ ժխտելով ցեղասպանության իրողությունը: Հատկանշական է, որ այս վտանգավոր թեզը նկատելի է ոչ միայն Հայոց եղեռնի փաստը ժխտող պատմաբանների ու քաղաքական գործիչների մոտ, այլև՝ այն ընդունող հեղինակների աշխատություններում: Նույնիսկ, իր հայացքներով թուրքական պաշտոնական պատմագրության մոտեցումներից էապես տարբերվող թուրք ճանաչված հեղինակ Թաներ Աքչամի հայեցակարգում առկա է այն միտքը, որ կայսրությունը պահպանելու մտահոգությամբ հայերին տեղահանելու՝ կառավարության գործողություններն այլընտրանք չունեին:

Թուրքական կողմի վերոնշյալ «փաստարկները» հերքելու նպատակով փորձենք համառոտակի անդրադառնալ օսմանյան տիրապետության հաստատման շրջանից մինչև Առաջին աշխարհամարտն ընկած ժամանակահատվածում Արևմտյան Հայաստանի հայ բնակչության տեղաբաշխման, նրա նկատմամբ իշխանությունների որդեգրած ժողովրդագրական քաղաքականության ընդհանուր միտումներին՝ հենվելով արևմտահայ մի քանի նահանգների վերաբերյալ մեր կատարած ուսումնասիրությունների վրա:

Օսմանյան Թուրքիան XV դարի երկրորդ կեսին հաղթանակներ տանելով թուրքմենական ցեղերի նկատմամբ՝ մինչև XVI դարի կե-

սերը բռնազավթեց Արևմտյան Հայաստանը: Նվաճված երկրամասում թուրքական սուլթանների վարչաժողովրդագրական քաղաքականությունը պայմանավորվեց մահմեդական վերնախավի ազգային-քաղաքական ու տնտեսական շահերով, աչքի ընկավ անկայունությամբ ու մշտատև փոփոխություններով:

Մինչև 1530-ական թվականներն Արևմտյան Հայաստանի տարածքում ձևավորվեցին Երզրումի (Կարնո), Սեբաստիայի, Կարսի, Վանի, Դիարբեքի, Ախալցխայի էյալեթները:<sup>1</sup> Ինչպիսի՞ն էր ժողովրդագրական իրավիճակը Արևմտյան Հայաստանում XV դարի վերջից մինչև XVII դարի առաջին կեսն ընկած ժամանակահատվածում:

Տարբեր աղբյուրների համադրությունից պարզորոշ երևում է, որ չնայած նախորդ ժամանակաշրջանում երկրամասում տեղի ունեցած ոչ հայանպաստ էթնոգործընթացին, երկիրը հիմնականում բնակեցված էր տեղաբնիկ հայ տարրով, որի կողքին առանձին գավառներում հետզհետե հայտնվում էին եկվոր էթնիկական այլ խմբեր: Այսպես, օրինակ, XVI դարի վերջին ըստ թուրքական մի հարկացուցակի՝ «Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարի», Չլդրի (Ախալցխայի) նահանգի 1250 բնակավայրերում ապրող բնակիչների գերակշիռ մասը կրում էր հայկական ու վրացական կամ հայերի ու վրացիների շրջանում մեծ տարածում ունեցող անուններ, այսինքն՝ երկրամասը քրիստոնեաբնակ էր: Մահմեդական անունների կարելի էր հանդիպել հատուկեմտ դեպքերում:<sup>2</sup>

XVII դարի առաջին կեսին Երզրումի էյալեթի 23 գավառների մեծ մասը՝ ըստ Հակոբ Կարնեցու, բնակեցված էր բացառապես հայերով:<sup>3</sup> Այն, որ Երզրումի հյուսիսային գավառները, որոնք առավել շատ էին կրել մահմեդական տարրերով բնակեցվելու օսմանյան կառավարության ձեռնարկումների ազդեցությունը, ունենալով հայ-թուրքական խառը բնակչություն, այնուհանդերձ, գերազանցապես հայաբնակ էին, և «տաճիկները» չնչին թիվ էին կազմում, թերևս երևում է նաև թուրք հետազոտող Միթոլլուի հրատարակած գրքից,<sup>4</sup> որում բերված տվյալներով, օրինակ, Բաբերդի գավառում

քրիստոնյաները 16-րդ դարում բնակչության անվիճելի մեծամասնությունն էին: Սակայն այս վիճակը երկար չտևեց:

Հպատակ ժողովուրդների նկատմամբ լիակատար գերիշխանություն հաստատելու նպատակով սուլթանական կառավարությունը նվաճված երկրամասերն սկսեց բնակեցնել թուրքալեզու և իրանալեզու (գերազանցապես՝ քրդեր) ցեղերով: Արևմտյան Հայաստանում օսմանյան վարչամեքենան մտցնելու և տեղի բնակչությանը հարկման ենթարկելու խնդրով արդեն 1478թ. Պոնտական լեռների հարավային ստորոտներով ձգվող Բաբերդի, Սպերի, Թորթումի և այլ գավառներ ուղարկվեց օսմանյան բանակի ամենաարյունռուչտ հրամանատարներից մեկը՝ Լալա փաշան: Նա կարճ ժամանակում ավերակների վերածեց պատմական Բարձր Հայքի և Տայքի հարյուրավոր հայկական բնակավայրեր, սրի քաշեց տասնյակ հազարավոր մարդկանց: Ավելի քան 50 հազար հայեր, փրկվելով ֆիզիկական ոչնչացումից, նախընտրեցին մահմեդականացումը:<sup>5</sup> Ձանգվածային կոտորածներն ու մահմեդականացման դեպքերն ավելի հաճախակի դարձան, երբ 1512թ. սկսվեց թուրք-պարսկական երկարատև պատերազմը: «...Ասպատակեալ քանդէին եւ աւերէին առհասարակ...,- գրում է ականատես հեղինակը,- մինչ ի դաշտն Մշու, Խնուսու եւ Ալաշկերտու, Դիատնու եւ Խամուրայ, Բաթնոցայ եւ Պայագիտու, երկիրս ամեն երէին ու աւերէին, զկին եւ զտղայս գէրի ածէին... զի այնպէս անապատ արարին այս սահրաթ երկրներս, որ Արզրումայ հետ մինչեւ Էրեվան միայն բերթորայքն ի շեն մնացին»:<sup>6</sup>

Պարսկա-թուրքական հաշտության կնքումից անմիջապես հետո, 1643թ. թուրքական կառավարության հանձնարարությամբ, Արևմտյան Հայաստան ուղարկվեց Ջաֆար փաշան՝ «յոյժ անիրաւ եւ չարասէր... ժանտաբարոյ...», որն աշխարհագիր անցկացրեց Էրզրումի նահանգում: Հարկապահանջությունն ու բռնություններն այնքան անտանելի էին, որ նահանգի հյուսիսային մի քանի գավառների քրիստոնյաներ «ի յահէն դարձան յօրէնսն Մահմէտի»,<sup>7</sup> այսինքն՝ մահմեդականացան: Ձանգվածային մեկ այլ մահմեդականացման մասին

վկայում է XVIII դարի վերջի և XIX դարի սկզբի պատմաբան-աշխարհագետ Ղուկաս Ինժիճյանը. «Ձանձրացեալք ի բռնութենէ եւ ի զրկանաց, դարձան (հայերը - Ա. Մ.) առհասարակ ի կրօնս տաճկաց»: Կրօնափոխությունն ընդգրկեց դարձյալ Էրզրումի նահանգի հյուսիսային շրջանները: Բերդագրակի «բնակիչք առհասարակ էին յազգիս հայոց,- շարունակում է Ղ.Ինժիճյանը,- այլ ապա ըստ մեծի մասին դարձան ի տաճկութիւն եւ սակաւ մնացին ի քրիստոնէից»:<sup>8</sup>

Քրիստոնյա բնակչության բռնի մահմեդականացումն ուղեկցվում էր եկեղեցիների ոչնչացումով, ավերումով կամ դրանք մզկիթների վերածելով: 1662թ. Վանի անունով մեծ մոլլայի և կայսրության գլխավոր վեզիրի նախածեռնությամբ բազմաթիվ «եկեղեցի Հռոմոնոց (հույների - Ա. Մ.) եւ Հայոց քանդեալ աւերեցին,- կարդում ենք աղբյուրներում,- եւ զլուխս ամենայն քրիստոնէից սեաւ գտակ անցուցին: Եւ առին այն եկեղեցին (խոսքը Էրզրումի միջնաբերդի եկեղեցու մասին է) արարին իւրեանց մզկիթ եւ եղեւ սուգ մեծ ազգիս Հայոց»:<sup>9</sup>

1723թ. կազմակերպված հերթական ավերիչ արշավանքներից մեկի զոհը դարձավ Էրզրումի նահանգի հյուսիսային մեկ այլ գավառ՝ Սպերը, որտեղ մոխրակույտերի վերածվեց ավելի քան հարյուր հայկական գյուղ:<sup>10</sup> Ամեն մի այսօրինակ գործողություն ուղեկցվում էր հայ բնակչության գերեվարությամբ. «Ձօրքն տաճկաց գէրէին ազգն հայոց եւ բերեալ վաճառէին, կամ բռնադատէին՝ թե ուրացիր զքրիստոս, ոմանք հաւատն ուրացան եւ ոմանք, որք ոչ ուրացան, սրոյ ճարակ տային կամ վաճառէին...: Արզրումայ այնչափ գերեցին, որ մեք գրով ոչ կարացաք ճառել»:<sup>11</sup>

Այս ամենին գումարվեցին շարունակվող թուրք-պարսկական պատերազմի նոր արհավիրքները: 1730-ական թթ. Կարսի և Ախալցխայի նահանգներ ներխուժած Նադիր խանի զորքերը 6 հազար հայերի բռնազաղթեցրին Պարսկաստան: «...եւ գերեցին զՆարիմանու նահանգն, զՋաւախէթու, զՉլտրու եւ զՂայի Ղուլու, որք էին բովանդակ ի մեր ազգէ,- գրում է Աբրահամ Կրետացին,- եւ քշեցին զայր ու զկին, զծեր եւ զտղայ եւ տարան ի Խորասան»:

թուով ՋՌ (6000), որպես եւ լսեմք»:<sup>12</sup>

Պատահական չէ, որ վերոհիշյալ երևույթների ազդեցությամբ արդեն XVIII դարի առաջին երեսնամյակին Ախալցխայի էյալեթի նոսրացած բնակավայրերում հայերի ու վրացիների զանգվածային մահմեդականացման հետևանքով ձևավորվել էր էթնոկրոնական մի համայնք՝ «մեսխեթցիներ» հավաքական անունով, որոնք իրենց շատ հատկանիշներով շարունակում էին հիշեցնել քրիստոնյաների: Ղ. Ինճիճյանը, նկատելով այդ հանգամանքը և ներկայացնելով Ախալցխայի նահանգի էթնիկ դիմախեղման պատկերը, գրում է. «Գիւղօրէք այսր նահանգի սակաւ ըստ մեծութեան նորա, յորս ընդ մեծի մասին երեւին մինչեւ ցայժմ մեսստանք եւ եկեղեցիք մեծաշէնք, այլ կամ լքեալք եւ կամ քայքայեալք: Բնակիչք նոցա ըստ մեծի մասին տաճիկք, դարձեալ գրեթէ առհասարակ կամ ի հայոց եւ կամ ի վրաց» (ընդգծումն իմն է - Ա.Մ.):<sup>13</sup>

Նույն նահանգում մոտավորապես մեկ դարի ընթացքում տեղի ունեցած աղետալի ժողովրդագրական շարժը պատկերացնելու համար եթե համեմատենք XVI դարի վերջի վիճակն արտացոլող «Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթար»-ը և XVII դարի վերջի և XVIII դարի առաջին երեսնամյակին վերաբերող «Չլդրի էյալեթի ջաբա դավթար» կոչվող հարկացուցակները,<sup>14</sup> անմիջապես աչքի կգարնի այն փաստը, որ այդ ընթացքում շեշտակի նվազել է էյալեթի բնակավայրերի թիվը: Մեկ հարյուրամյակ, կամ մի փոքր ավելի անց, Ջավախքում հիշատակվող բնակավայրերի թիվը 358-ից կրճատվել է 142-ի, այսինքն՝ նվազել է 2,5 անգամ: Եթե նախկինում հանդիպում ենք միևնույն անունը կրող մի քանի գյուղերի՝ Վերին և Ներքին, Մեծ, Միջին և Փոքր, ապա այժմ՝ նրանց մի մասն առհասարակ չի հիշատակվում, մյուսներն էլ նշվում են իբրև մեկական գյուղեր:

Այդ քաղաքականության «պտուղներն» ի հայտ եկան նաև պատմական Դարանաղյաց գավառում՝ Կամախում: Այստեղ տեղի ունեցող երևույթները կարելի է նկատել Ղ. Ինճիճյանի հետևյալ տողերից. «Շոխացեալ է այս գաւառ բնակութեամբ, բնակեալ ի հայոց մանաւանդ ի տաճկաց, որք ըստ մեծի մասին դարձեալ են ի հայոց»,<sup>15</sup> այ-

սինքն՝ թրջացած հայեր են: Մահմեդական հեղեղն այնքան ուժեղ է եղել, որ տեղի հայերի մի մասը, նույն հեղինակի վկայությամբ, ստիպված է եղել հեռանալ և հաստատվել Թեքիր Դաղի լեռներում:<sup>16</sup>

Արևմտահայ գավառներից, թերևս, Թորթումի գավառն էր, որ մյուսներից առավել կրում էր միջնադարում բռնի մահմեդականացման կնիքը: Միջնադարում զանգվածային կոտորածների, արտագաղթի և գավառի ամայացման վկայություն էին 120 եկեղեցիների ու 10 վանքերի ավերակները:<sup>17</sup> Սակայն «կեսկես» անվամբ, այսինքն՝ կես հայ կես մահմեդական, այս բնակչության զգալի մասը գրեթե ոչնչով չէր տարբերվում մնացած հայ բնակչությունից: Նրանցից շատերն անգամ վարժ չէին խոսում թուրքերեն, իսկ ոմանք էլ՝ ընդհանրապես չգիտեին այդ լեզուն: Մի մասն էլ խոսում էր թուրքերենի հետ խառն հայերենով:<sup>18</sup>

Յուրահատուկ էթնոկրոնական իրավիճակ ստեղծվեց Պոնտական լեռներից մինչև Սև ծովի ափերը տարածվող լեռնային Համշեն գավառակում: Թուրքական տիրապետությունն աղետալի եղավ նաև այստեղի համար: Բնակչությունը ենթարկվեց քաղաքական ու կրոնական անդուլ հալածանքների, քրիստոնյաների համար սահմանվեցին անտանելի ծանր հարկեր: Այս ամենի ազդեցությամբ տեղի ունեցան էթնոկրոնական լուրջ վերակերպումներ: Այդ մասին գրում է Ղ. Ինճիճյանը. «Բնակիչք երկրին յառաջագոյն հայ էին, այլ ի յելս ժէ դարուն եւ ի սկիզբն ժժ երրորդին առ հասարակ հանդերձ ամենայն շրջակայ գիւղօրէիւք դարձան ի տաճկութիւն սակս բռնութեան հարկապահանջութեան...»:<sup>19</sup> Ոմանք էլ, հատկապես 1708-1710թթ., խուսափելով բռնություններից, հաստատվեցին Տրապիզոնում, Բաբերդում և այլուր:<sup>20</sup>

Սակայն նման մահմեդականացումը կամ տաճկացումը, նույն հեղինակի վկայությամբ, որքան էլ համապարփակ բնույթ կրեր, ի գորու չեղավ փոխելու գավառակի հայեցի նկարագիրը. «բայց գտանին տակաւին ի նոսա եւ քրիստոնէայք, յորոց գիւղօրէս կանգուն կան տակաւին եկեղեցի իւրեանց ի վաղուց մնացեալ, այլ չու-

նին երեց ի հովուեալ...»: Իբրև հոգևոր հովիվ՝ ժամանակ առ ժամանակ հարևան գյուղերից քահանա է եկել և կատարել ծիսական արարողություններ: Ինչ վերաբերում է մահմեդականացած հայերին՝ արդեն «տաճիկներին», նրանք «... խօսին մինչեւ ցայժմ հայերէն, ի գործ ածեն ի գիւղօրէս ինչ անուանս կնքահայր եւ կնքամայր, պահեն պահս, եւ զայլ ծէսս եւ օրէնս քրիստոնէական հաւատոց, յաճախեն յեկեղեցիս եւ այլն. ոմանք կէսկէս են հաւատովք, արտաքուստ միայն ցուցանելով զտաճկութիւն...»: <sup>21</sup>

Ուշագրաւ է, որ, եթե արևմտահայ գավառների մեծ մասում Կիսկիմում, Թորթունում, Սպերում, Երզնկայում և այլուր այդ կեսկեսների զգալի մասը հետզհետե կորցրեց իր ազգային նկարագրի գրեթե բոլոր տարրերը, ապա Համշենի հայությունն առերես մնալով «մահմեդական»՝ շարունակեց դարերով հավատարիմ մնալ իր ազգային արմատներին:

Իրականում համշենցի կեսկեսների զգալի մասը գրեթե ոչնչով չէր տարբերվում մնացած հայ բնակչությունից: Նրանցից շատերը ոչ միայն վարժ չէին խոսում թուրքերեն, այլև ընդհանրապես չգիտեին այդ լեզուն: Մի մասն էլ խոսում էր թուրքերենի հետ խառն հայերենով: <sup>22</sup> Կարելի էր հանդիպել բազմաթիվ կեսկեսների, որոնք ունեին հայկական անուններ և ազգանուններ՝ միայն թուրքական «օղլի» վերջավորությունով. օրինակ՝ Կիրակոսօղլի, Պետրոսօղլի, Գրիգորօղլի և այլն: Գանապարհորդների այն հարցին, թե ինչ ազգության են պատկանում, հետևում էր «խլամ են»՝ նրանց ազգության մասին ոչինչ չասող պատասխանը, տերմին, որի տակ XIX դարի 40-ական թվականների գերմանացի ուղեգիր Կարլ Քոխի արտահայտությամբ՝ Թուրքիայում ընկալվում էր միմիայն օսմանլին: <sup>23</sup>

Համշենահայերի ազգային ինքնության հիմնական գծերի հարատևման գաղտնիքներից մեկը պայմանավորված էր նրանց աշխարհագրական միջավայրով: Ապրելով լեռնոտ ու խիտ անտառներով պատված տարածքում՝ համշենցիները զբաղվում էին փակ բնատնտեսությամբ՝ անասնապահությամբ, այգեգործությամբ, մեղ-

վապահությամբ, մասամբ՝ հողագործությամբ: Հատկապես նշանավոր էր Համշենի մեղրամոնը, որի դիմաց սուլթանական կառավարությունը գանձում էր գավառից ստացվող հարկերի զգալի մասը՝ տարեկան 2000 օխա: Փաստորեն, որոշակի տուրքեր վճարելու պայմանով, ինչպես լեռնային այլ համայնքներ՝ Սասունը, Ջեթունը, Մոկսը, այնպես էլ Համշեն գավառակը, ձեռք էր բերել կիսանկախ կարգավիճակ: «Տերութիւն երկրին է ի ձեռս երկուց աղայից, կարդում ենք աղբյուրներում,- յորոց մին դարծեալ է ի հայոց»: <sup>24</sup>

Հատկանշական է, որ նման պայմաններում համշենահայերը քիչ էին հարաբերվում ոչ միայն հարևան թուրքերի, լազերի, հույների, այլև լիարյուն քրիստոնյա հայերի հետ: Այդ ձևով նրանց մեջ հետզհետե ձևավորվում էր արտաքին աշխարհից զատորոշվելու և սեփական «համշենցի» կամ «համշինլի», այսինքն՝ հպարտ լեռնցու ինքնությամբ հարատևելու ֆենոմենը: Փաստորեն, տվյալ դեպքում կեսկես լինելու հանգամանքը ոչ միայն ճանապարհ չէր հարթում դեպի թուրքացում, այլև հզոր պաշտպանական վահան էր իշխանությունների կողմից նրանց ինքնության դեմ ձեռնարկվող ոտնձգությունների հանդեպ:

Այսպես Պոնտոս-Լազիստանի հայերն ընդհանրապես, համշենահայերը՝ մասնավորապես, իրենց յուրահատուկ ինքնությունը պահպանեցին ոչ միայն 1915թ. Հայոց մեծ եղեռնի օրերին, այլև դրանից հետո՝ ընդհուպ մինչև մեր օրերը՝ հաճախ թաքուն, ժամանակ առ ժամանակ էլ՝ բացահայտորեն թուրքական իշխանություններին հակադրվելով իրենց իրական հայեցի նկարագրով:

Բռնի մահմեդականացման, թուրքացման և բռնագաղթի հետ մեկտեղ օսմանցիները ձեռնարկեցին Արևմտյան Հայաստանի էթնոնկարագիրը խաթարող մեկ այլ «միջոցառում»: XVI դարի սկզբներից ախտյան երկիր Սեֆյան Իրանի դեմ ռազմաքաղաքական բուֆեր՝ պատնեշ, ստեղծելու նպատակով թուրքական սուլթանները սկսեցին կայսրության հարավային և հարավարևելյան շրջաններից խրախուսել քրդերի ներհոսքը Հայկական լեռնաշ-

խարհ: Արդեն պարսկա-թուրքական պատերազմի սկզբում՝ 1515թ., քուրդ ցեղապետերից մեկի՝ Էդրիսի օժանդակությամբ սուլթան Սելիմ Ահեղն իրեն ենթարկեց Դիարբեքիրի և նրանից հարավ տարածված քրդերին: Ի փոխհատուցումն իր ծառայության՝ Էդրիսն ստացավ այդ շրջանների կառավարման իրավունքը և քոչվորական կյանքով ապրող իր հայրենակիցներին հարկադրեց տեղափոխվել Էրզրումի նահանգի տարածք:<sup>25</sup>

Քրդական մեկ այլ վերաբնակեցում կազմակերպեց սուլթան Մուրադը 1635թ.: Ընդառաջելով գաղթել ցանկացող քրդական ցեղերի ցանկությանը՝ նա կազմակերպեց զանգվածային մի մեծ ներհոսք դեպի Երզնկայի ու Դերջանի գավառներ: Խոսելով Դերջանում քրդերի հայտնվելու մասին, որն ամենայն հավանականությամբ տեղի է ունեցել XVIII դարի ընթացքում, հայ հեղինակները վկայում են, որ «Քուրդք բնակեալք ի սմա (Դերջան - Ա. Մ.), եկեալ ասին ի սէկմանապատայ»:<sup>26</sup> Նույն ժամանակ ներհոսք տեղի ունեցավ Բասենի և Ալաշկերտի գավառներ, որտեղ գերազանցապես հաստատվեցին փեսյան ցեղի բազմաթիվ քրդեր:

Վերոհիշյալ էթնիկական գործընթացներն ուժեղացան 18-րդ դարի կեսերին: Եթե սկզբնական շրջանում քրդերը հյուսիս էին տեղափոխվում միայն ամառվա ամիսներին ալպիական մարգագետիններում իրենց բազմաքանակ ոչխարներն արածեցնելու նպատակով, ապա այժմ՝ իշխանությունների թուլտվությամբ, անցան մշտական բնակության՝ տեղավորվելով հայկական գյուղերում: Հայ բնակչությունը պարտավոր էր ամբողջ ծմեռ պահել ոչ միայն քրդերին, այլև նրանց բազմաքանակ անասուններին: Սուլթանների կողմից քրդերին արտոնած այս արատավոր համակարգը հայտնի էր «ղշլաղություն» անունով: Այս քաղաքականության հետևանքով քրդերի թիվն ավելի ստվարացավ, հատկապես, Բյուրակնյան (Բինգյուլի) լեռներին հարող գավառներում:

Քրդերի զանգվածային ներհոսքն իր հետ բերեց նաև իրենց հայրենի օջախներից հայ բնակչության արտագաղթ, ինչպես և քր-

դացման գործընթացներ: Օրինակ՝ Դերսիմի (Մնծուրի) լեռների հյուսիսային փեշերին, որտեղ քրդական տարրն ավելի ուժեղ էր, և հայկական կյանքը կտրված էր Երզնկայից, Քղիից, Դերջանից ու հարևան հայկական համայնքներից, XVIII դարից նկատելի էր հայ բնակչության մի մասի կիսաքրդացման հանգամանքը: Այստեղի գյուղերի բնակիչները «...բոլորն ալ մայրենի լեզուն կպահեն քիչ մը աղավաղված (քրդախառն - Ա. Մ.) վիճակի մեջ»<sup>27</sup>, - գրում էր տարածաշրջանին քաջատեղյակ հեղինակ Անդրանիկը:

1878թ. 4.Պոլսի հայոց պատրիարք Ն. Վարժապետյանի կողմից հայկական գավառների բնակչությանը վիճակագրելու համար Արևմտյան Հայաստան ուղարկված Պողոս Նաթանյանը հատուկ ուշադրություն է հատկացրել Էրզրումի նահանգի արևմտյան գավառներից Գուզուջանի հայության քրդացման հարցին: Նա նկատել է, որ այնտեղի գյուղերում կան «...խիստ սակաւաթիվ հայ բնակիչներ քրդախառն, ստոնք ի վաղուց կեսէն աւելի հայ ըլլալով ժամանակի բռնութենէն՝ ստիպուած են քրդաց յարիլ, որ այժմ հայերէն անգամ չեն գիտեր. բայց հայ ցեղէ ըլլալնին գիտեն»:<sup>28</sup> Նույն հեղինակի վկայությամբ ոչ վաղ անցյալում այստեղ եղել են «բազմահայ գիւղեր», որոնց բնակիչները, չցանկանալով ընտրել քրդացման ուղին, գաղթել են հարևան հայաստվար գավառները:<sup>29</sup> Հայ մեկ այլ հեղինակի՝ Սելյանի համոզմամբ, «Դուզուջանի ղզլպաշները... որ առ այսօր (1895թ. - Ա. Մ.) ջարդուն են օսմանյան բանակներին, թուրք չեն, այլ մոտ հայերին»:<sup>30</sup>

Կարևոր է նշել, որ տեղի հայ բնակչության մի մասը լազերի բռնություններից ազատվելու համար հաճախ իրեն ներկայացնում էր ոչ միայն մահմեդական, այլև՝ լազ: Պատահական չէ, որ նրանց հաճախ անվանում էին ոչ թե կեսկեսներ, այլ հայ-լազեր: Այսպիսի հայ-լազեր կային նաև Սպերի, Բաբերդի, Կելկիթի և Արևմտյան Հայաստանի այն գավառներում, որոնք սահմանակից էին Պոնտական լեռներում և նրանց փեշերին բնակվող լազերի բնակավայրերին:<sup>31</sup>

Ինչևէ, XV-XVIIIդդ. բռնի մահմեդականացման, հարկադիր ար-

տագաղթերի, թուրքերի ու քրդերի միտումնավոր բնակեցման հետևանքով Արևմտյան Հայաստանում որոշակիորեն աճեց մահմեդական բնակչության թիվը: Սակայն նույնիսկ այդ պայմաններում Արևմտյան Հայաստանը դեռ XIX դարի սկզբին շարունակում էր մնալ գերազանցապես հայաբնակ: Բավական է նշել, որ այդ ժամանակ միայն Երզրումի նահանգի տարածքում հաշվվում էր 978 հայկական գյուղ և 14 քաղաք, որոնցում ապրում էին ավելի քան 400 հազար հայեր, որից գյուղական բնակչությունը կազմում էր 308 հազար, քաղաքայինը՝ 93 հազար մարդ:<sup>32</sup>

1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, չկամենալով մնալ օսմանյան տիրապետության տակ, 75 հազար արևմտահայեր, որոնք գլխավորապես Երզրումի նահանգի բնակիչներ էին, նախընտրեցին արտագաղթը և հաստատվեցին Անդրկովկասից Ռուսաստանին անցած շրջաններում: Թեև Երզրումի նահանգից գաղթած հայերի թիվը կազմում էր մոտավորապես 9,6 հազար ընտանիք, և նահանգի էթնիկական կազմն այդ գաղթից հետո զգալիորեն փոխվեց, սակայն այդ վարչամիավորը կրկին մնաց հայահոծ երկրամասերից մեկը: Արևմտահայ այլ գավառներից գաղթականները տեղափոխվեցին դեպի արևելք ու հարավ-արևելք և բնակություն հաստատեցին Ռուսաստանին սահմանակից, գաղթի հետևանքով հայաթափված գյուղերում:<sup>33</sup>

Արևմտյան Հայաստանում հայակուլ էթնիկական գործընթացները խորացան XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին: 1853-1856թթ. Ղրիմի պատերազմից հետո ռուսների կողմից գրավված Երզրումի նահանգի արևելյան գավառները և Կարսը թուրքերին վերադարձնելու լուրն արևմտահայության մոր արտագաղթի պատճառ դարձավ: Բազմահազար էրզրումցիներ, կարսեցիներ, ալաշկերտցիներ ու բայազետցիներ արտագաղթեցին Անդրկովկասից Ռուսաստանին անցած շրջաններ:<sup>34</sup> Նրանց մի մասը հաստատվեց Թալիմի գյուղերում, Սև ծովի առափնյա շրջաններում, Հյուսիսային Կովկասում և այլուր: Միայն 4 հազար ընտանիք տե-

ղավորվեց այժմյան Ստավրոպոլի երկրամասի տարածքում:<sup>35</sup> Նույն ժամանակ Կովկասից մեծ թվով լեռնականներ, հատկապես նրանց առաջնորդ Շամիլի հպատակեցումից հետո, անցնում են Արևմտյան Հայաստան՝ զբաղեցնելով լքված հայկական բնակավայրերը: Թուրքական կառավարության գործուն ջանքերով լեռնականների (նրանք հայտնի էին լեզգիներ կամ չերքեզներ հավաքական անունով) մեծ մասը ռազմաքաղաքական նկատառումներով բնակեցվեց Ռուսաստանին սահմանակից Արևմտյան Հայաստանի արևելյան գավառներում, մասնավորապես Բասենում:<sup>36</sup>

Օսմանյան կառավարության հայակուլ ձեռնարկումներն ուժեղացան XIX դարի վերջին և XX դարի սկզբին: Այդ քաղաքականության հետևանքով, օրինակ, Երզրումի նահանգի բնակչության թիվը, XIX դարի սկզբի համեմատությամբ, մինչև Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակը, մոտ 380 հազարից կրճատվեց 150 հազարի, իսկ բնակավայրերի թիվը՝ 931-ից՝ 391-ի,<sup>37</sup> այսինքն՝ 60 տոկոսով: Հատկանշական է, որ առավելապես տուժել էին նահանգի Ռուսաստանին սահմանակից գավառները՝ Բայազետը, Ալաշկերտը, Բասենը, Սպերը, Երզրումը, որտեղ համիդեական կոտորածներն ավելի զանգվածային բնույթ էին կրել և տեղի էին ունեցել խոշոր արտագաղթեր դեպի Արևելյան Հայաստան և Անդրկովկասի այլ շրջաններ:<sup>38</sup>

Այսպիսով, մինչև 1915թ. Հայոց մեծ եղեռնը, մի քանի հարյուր տարի անընդհատ, մերթ դանդաղ, մերթ բուռն տեմպերով էթնիկական ցեղասպանության գործընթացն Արևմտյան Հայաստանում արդեն տեղի էր ունեցել, հանգամանք, որն օբյեկտիվորեն պայմանավորում էր թուրքական տիրապետության դեմ հայ ազգային-ազատագրական պայքարի անհաջողությունները: Կարծում ենք, որ XVI-XIXդդ. ընթացքում Արևմտահայաստանում տեղի ունեցած հայաթափման երևույթները, որոնք անուշադրության են մատնվել հայոց զենոցիդի հարցերով զբաղվող շատ մասնագետների կողմից, նվազ կարևոր չեն իբրև ցեղասպանության դրսևորումներ Օս-

մանյան կայսրությունում, առավել ևս, որ Միավորված Ազգերի Կազմակերպության 1948թ. ընդունած բանաձևում ցեղասպանություն է համարվում ոչ միայն մեկ ազգի, կրոնական համայնքի կամ ռասայի դեմ ուղղված ֆիզիկական բնաջնջման գործողությունը, այլև հայրենիքից վտարելու, բռնությամբ ազգափոխելու, կրոնափոխելու, իր հայրենի հողում կյանքի անտանելի պայմաններ պարտադրելու ճանապարհով հեռացնելու երևույթները, այսինքն՝ այն, ինչ տեղի էր ունեցել Թուրքիայում դարեր շարունակ:

Ինչ վերաբերում է Հայոց ցեղասպանությունից հետո հայաթափված Արևմտահայաստանում մահմեդականացած հայության խնդրին, ապա վերջին շրջանում կատարված հետազոտությունները փաստում են, որ այդօրինակ հայությունը դեռ շարունակում է պահպանել իր ազգային ինքնության շատ գծեր և թուրքական հասարակության որոշ ազատականացման պայմաններում օրեցօր ավելի ու ավելի է հիշեցնում իր ազգային արմատներն ու սեփական հայրենիքում ապրելու իրողությունը. հանգամանք, որն այսօր Հայ դատի խնդիրների հետապնդման հարցում առաջնային նշանակություն ունի:

**Ալեքսանդր  
ՄԱՆԱՍՅԱՆ**



**ԱՐԵՎՍՏԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ԱՂԻԲԵՃԱՆԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ.  
ՉՈՒԳԱԿԵՌՆԵՐ ՈՒ  
ԱՌԱՆՁՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**(հիմնախնդրի քաղաքական  
իմաստավորման փորձ)**

**1** Հայության ինքնակազմակերպման առանցքային հարցերից մեկը միասնական ազգային ռազմավարական ծրագրերի շրջանակում նրատարբեր հատվածների դերակատարությունների հստակեցումն է: Ակնհայտ է, որ Թուրքիայում, ԱՄՆ-ում, Ռուսաստանում, Արցախում և Հայաստանի Հանրապետությունում ապրող մեր ազգի հատվածները պատմական օբյեկտիվ հանգամանքների բերումով հայտնվել են միմյանցից խիստ տարբեր սոցիալ-քաղաքական, տնտեսական ու քաղաքակրթական միջավայրերում: Միասնական ազգային ծրագրերում նրանց ընդգրկումը, բնական է, ենթադրում է այդ առանձնահատկությունների գնահատում և հաշվառում, այն մարտահրավերների սթափ ու իրատեսական գիտակցում, որոնք նետված են հայոց տարբեր հատվածներին և այդ հիմքի վրա նրանց դերակատարությունների հստակեցում:

2. Հայ ժողովրդի երեք հատվածները՝ Արևմտյան Հայաստանի հայությունը, Նախիջևանի հայությունը և Արևելյան Անդրկովկասի հայությունը (Ջավախքի հայության հետ կապված հիմնախնդիրները պահանջում են ուրույն մոտեցում), առանձնանում են այն ընդհան-

րությամբ, որ XIX-XX դարերում իրենց պատմական հայրենիքում դարձել են թուրքական նույն ցեղասպանածին քաղաքակրթության զոհը: Խնդրի պատմական ու փաստական հիմքերի տեսակետից ակնհայտ այդ իրողությանը հակառակ՝ անհասկանալի կարծրատիպով հայոց քաղաքական գիտակցության մեջ ամրագրվել է մի պատկերացում, որով ցեղասպանությունն առավելապես, իսկ որոշ դեպքերում նաև բացառապես, կապվում է Արևմտյան Հայաստանում մարդկության դեմ կատարված հանցագործության հետ:

3. Փաստը կարող է ստանալ երկու հնարավոր բացատրություն: Հայ դատի տեսաբանները և պահանջատիրության գործը միջազգային հողի վրա առաջ տանող մեր գործիչները քաղաքական իրատեսության տեսակետից արդարացված են դիտում «խնդրի համառոտումը», նախիջևանահայության ու աղբբեջանահայության հարցերի դուրսբերումը «գործի ընդհանուր փաթեթից» և ժամանակավորապես դրանց լուծության մատնումը: Դա այն է, ինչ գործնականում արվում է մեր օրերում: Այս դիրքորոշումը, ինչքան ինձ է հայտնի, իր մանրամասների մեջ քննված և հիմնավորված չէ: Եվ եթե նման քննությունը բացահայտի, որ դա գործելու, մեղմ ասած, ամենաարդյունավետ ուղին չէ, ապա մենք կստանանք փաստի մեկ այլ բացատրություն: Եվ դա կլինի այն, որ մեր ազգային քաղաքական միտքն այսօր դեռևս չունի Հայ դատի համարժեք իմաստավորման համար պահանջվող տեսական պատրաստակաություն: Դա կլինի մեր քաղաքական գիտակցության՝ հատվածակա-նությամբ խիստահարված լինելու փաստի դրսևորումներից մեկը:

4. Այն, որ Թուրքիայի սահմաններից դուրս գտնվող Արևելյան Հայաստանում և Արևելյան Անդրկովկասում թուրքերի իրագործած հայկական ջարդերը դուրս են թողնված «քրեական միասնական գործի փաթեթից», անկասկած, իր բացատրություններն ունի: Հայտնի է, որ Խորհրդային Միությունը տասնամյակներ շարունակ քաղաքական արգելանք էր դրել ընդհանրապես ցեղասպանության թեմայի վրա: Միայն 1960-ական թվականներին խորհրդային

գիտնականներին թույլ տրվեց խոսել Օսմանյան կայսրությունում մարդկության դեմ կատարված ոճրի մասին: Բայց Արևելյան Հայաստանում, Ադր. ԽՍՀ հովանավորությանը հանձնված հայկական Նախիջևանում և ամբողջ Արևելյան Անդրկովկասում 1918-1920թթ. կովկասյան թաթարների մասնակցությամբ նույն թուրքերի իրագործած հայերի զանգվածային ջարդերի ու էթնիկական զտումների ուսումնասիրությունն արգելված մնաց: Ընդհանրապես ընդունված չէր դրանց մասին խոսել: Արգելանքն ուներ թե՛ քաղաքական, թե՛ գաղափարախոսական բնույթ: Հատկանշական է, որ Մեծ եղեռնի 50-ամյակի կապակցությամբ Ծիծեռնակաբերդում բացված հուշակոթողն իր հիմնման օրից մինչ օրս կրում է Օսմանյան կայսրությունում կատարված ոճիրը «ընդհանուր գործից» անջատելու (կամ ոճիրը միայն դրան հանգեցնելու) գաղափարը: Խորհրդային պայմաններում հասկանալի պատճառներով այլ կերպ չէր էլ կարող լինել: Կա դրան նպաստած մի հանգամանք ևս: Օսմանյան թուրքերի հետ մեկտեղ նախկին Ռուսական կայսրության տարածքներում հայկական ջարդերին մասնակցած կովկասյան թաթարները հետագայում անվանափոխվել, դարձել են *աղբբեջանցիներ*, ինչը հետագայում հանցագործության մասշտաբների աղավաղման և իրական պատկերի քողարկման հնարք է դարձել (այսօր մենք ինքներս նպաստում ենք Արևելյան Անդրկովկասի քամելեռնաբար գունափոխվող թուրքի այդ քաղաքականությանը, երբ նրա համար լայն շրջանառության մեջ ենք դնում *ազերի* նոր էթնոհիմնը): Իրականում երեկվա կովկասյան թաթար-աղբբեջանցին կրկնակի-եռակի անվանափոխված նույն թուրքն է, որն Ադր. ԽՍՀ սահմաններում հայտնված հայկական տարածքներում նույն այդ քաղաքականությունն իրագործել է ավելի հաշվեճկատ, ավելի քողարկված ու նրբին ձևերով՝ հընթացս հակափաստարկներ նախապատրաստելով մերժելու ապագա հնարավոր մեղադրանքները: Հայերի դեմ հալածանքները քողարկվում էին նրանց դեմ առաջադրվող ազգայնականության կանխապես կեղծ, բայց պաշ-



տոնապես հնչեցվող մեղադրանքներով ու պիտակավորումներով: Հայկական բնակչությանը շրջանների նկատմամբ տնտեսական խտրականության քաղաքականությունը քողարկվում էր հանրապետության զարգացման նպատակահարմարության մասին դատողություններով ու կեղծ վիճակագրությամբ: 1988-ի փետրվարին, երբ Արցախում ծածանվեց ազատագրական շարժման դրոշը, Բաքուն գործի դրեց սադրանքների մի ամբողջ զինանոց: Ահա դրանցից մի քանիսը: Ասկերանի տակ Բաքվի հատուկ ծառայությունների կողմից երկու երիտասարդ ադրբեջանցիներ սպանվեցին՝ գործը հայերի վրա բարդելու համար: Նույն օրերին խաղաղ Ղափանից Սուևգայիթ մեկնեց սադրիչ ադրբեջանցիների մի խումբ՝ Ղափանում հայերի վայրագությունների մասին ստահող լուրերով ամբոխի կրքերը բորբոքելու համար: 1992-ի փետրվարին անվտանգ ելքի համար թողնված միջանցքի վերջում, արդեն իսկ Ադրբեջանի ազգային ճակատի կողմից վերահսկվող տարածքում գնդակահարվեցին Խոջալուի բնակիչներ, իսկ հաջորդ օրը դիակները պղծվեցին՝ ոճիրը հայերին վերագրելու համար: Այդ սադրանքները և Բաքվի տեղեկատվական ու քաղաքական հետազոտ քայլերը գալիս են հաստատելու, որ ադրբեջանցի թուրքերը «ցեղասպանության կեղտաջրից» մաքուր դուրս գալու և պատասխանատվությունից խուսափելու համար նախապես ծրագրել ու ձեռնարկել էին «ապահովագրության» անհրաժեշտ միջոցառումներ: Այսօր իսկ կարելի է արձանագրել, որ նրանց հաջողվել է հասնել ադրբեջանահայության ցեղասպանության փաստը Խոջալուով հավասարակշռելու և չեզոքացնելու առաջադրված նպատակին:

5. Մենք տանուլ ենք տալիս ԽՍՀՄ լուծարման ընթացքում էթնօքաղաքական գործընթացների շուրջ Բաքվի մեզ պարտադրած քաղաքական ու քարոզչական պատերազմը՝ ունենալով փաստերի, փաստարկների, վկայությունների ու փաստաթղթերի այնպիսի մի պաշար, որը մեզ այդ պատերազմը շահելու ակնհայտ հնարավորություն է տալիս: Ղարաբաղյան հակամարտության հարցում հա-

մազգայնորեն որդեգրված հայեցակարգի չգոյությունը և դրանով պայմանավորված քարոզչական ու դիվանագիտական ճակատներում մեր անճարակությունը և անհետևողականությունը կարող է բացատրվել մեր համապատասխան ծառայությունների ոչ արհեստավարժ գործունեությամբ և այն իրողությամբ, որ դրանք չեն գիտակցում լուրջ վերլուծական կենտրոնների ստեղծման ու բարձրակարգ փորձագետների պատրաստման կարևորությունը: Մեզ այդպես էլ չհաջողվեց մշակել ու շրջանառության մեջ դնել հայերիս համար նպաստավոր այնպիսի մոտեցումներ ու բանաձևեր, որոնք ընդունելի կլինեին ԵԱՀԿ-ի համար, ուն հովանու տակ այսօր ընթանում է Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը: Ավելին, մեզ համար խիստ շահեկան և միջազգային ճանաչում ստացած բազմաթիվ փաստեր ու փաստաթղթեր լռության են մատնված մեր իսկ կողմից:

6. Անկախ այն բանից՝ մենք «Հայոց ցեղասպանության գործը» միջազգային հանրությանը «միասնական փաթեթով» կներկայացնենք, թե ոչ, ինքն իր մեջ այդ գործը միասնական է, քանի որ հանցագործը նույն թուրքն է, իսկ զոհը՝ նույն հայը, քանի որ և՛ Արևմտյան Հայաստանում, և՛ Արևելյան Հայաստանում, և՛ Արևելյան Անդրկովկասում թուրքը Հայոց ցեղասպանությունն իրագործել է պանթուրքիզմի նույն աշխարհաքաղաքական ծրագրի հունում: Եվ չնայած դրան, «գործի» առանձին մասեր ենթախորքում ունեն քաղաքական ու իրավական առանձնահատկություններ, որոնց հաշվառումը սկզբունքորեն կարևոր է մեր պահանջատիրության մեջ ճիշտ մարտավարության մշակման համար: Ահա այդ առանձնահատկություններից մի քանիսը:

Առաջին: Հայերն Օսմանյան Թուրքիայում եղել են կայսրության հպատակ ժողովուրդներից մեկը, այն դեպքում, երբ Ադր. ԽՍՀ հայերը եղել են խորհրդային այդ հանրապետության պետականակիր ազգերից մեկն արդեն իսկ այն հանգամանքի բերումով, որ Ադր. ԽՍՀ կազմում ունեցել են խորհրդային տիպի պետականություն՝ լայն իրավունքներով օժտված ինքնավար մարզ, ԽՍՀՄ ազգային պետական կառուցվածքի սուբյեկտ: Ավելին, խորհրդային Ադրբեջանը ժա-

մանակին չի հիմնվել որպես տեղի թուրքերի՝ կովկասյան թաթարների հանրապետություն: 1920-ական թվականների քաղաքական ու իրավական բոլոր կարևոր փաստաթղթերում այդ հանրապետության ստեղծումը հիմնավորվում է ոչ թե հայերի ու կովկասյան թաթարների, այլ հայերի ու մուսուլմանների ինտերնացիոնալ, ոչ ազգային պետական միասնական միություն ստեղծելու անհրաժեշտությամբ:

Երկրորդ: Ի տարբերություն արևմտահայության, Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը ճանաչվել է մի քանի անգամ, այդ թվում՝ և Բաքվի կողմից (նկատի ունենք 1920թ. դեկտեմբերի 1-ի Ադրիեդկոմի Յոչակագիրը՝ Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման կապակցությամբ): Ժամանակագրորեն վերջին անգամ այդ իրավունքը ճանաչվել է 1990թ. ապրիլի 3-ին ընդունված «Միութենական հանրապետության ԽՍՀՄ-ից դուրս գալու հետ կապված հարցերի լուծման մասին» ԽՍՀՄ օրենքով: ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու պարագայում այդ օրենքն ինքնավար կազմավորումներին ու հավաքապարոզ ազգություններին արտոնում էր ինքնուրույն որոշել իրենց ազգային պետական կարգավիճակը՝ ընդհուպ մինչև անկախ պետականության հաստատումը: Այս հանգամանքը դուրս է մնացել մեր քարոզչության և դիվանագիտության տեսադաշտից: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը 1991-ին կայացել է մերօրյա Ադրբեջանի Հանրապետությանն իրավաբանորեն չպատկանող տարածքներում և այսօր էլ վերահսկում է նման տարածքներ: Դա հիմնավորվում է ոչ միայն 1991-ին ԼՂ ժողովրդի ինքնորոշման՝ մինչ այդ մի քանի անգամ ճանաչված իրավունքի օրինական իրագործմամբ, այլև իրավական այն փաստով, որ 1991-ին Բաքուն հրաժարվել է Ադր. ԽՍՀ իրավահաջորդությունից և վերականգնել առանց ճանաչված կամ փաստացի սահմաններ ձեռք բերելու պատմության թատերաբեմը լքած Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության պետականությունը: Խնդրի իրավական հիմքերն այսպիսով իրական են դարձնում Ադրբեջանի Հանրապե-

տության նկատմամբ տարածքային պահանջատիրության հարցադրումները, պայմանով, որ դրանք պատշաճորեն ապահովված լինեն քաղաքական և քարոզչական տեսակետներից:

Երրորդ: Արևելյան Անդրկովկասից զանգվածային բռնություններով դուրս մղված ադրբեջանահայությունը չի ստացել ոչ միայն քաղաքական կամ նյութական, այլև նույնիսկ բարոյական փոխհատուցում: Ադրբեջանահայությունը նախիջևանահայությունը չէ և ոչ էլ արցախահայությունը, և սա պետք է հատուկ ընդգծվի: Ադրբեջանահայությունն Արևելյան Անդրկովկասի՝ առավելապես Կուրի ձախսափնյակի ու Ապշերոնի հայությունն է, որը հսկայական ներդրում ունենալով Ադր. ԽՍՀ տնտեսության և հատկապես նավթարդյունաբերական համալիրի ստեղծման գործում, հայտնվել է փախստականության կարգավիճակում և ոչ մի փոխհատուցում մինչ օրս չի ստացել: Ի տարբերություն արևմտահայության վերապրածների՝ ադրբեջանահայությունը դեռևս ինքնակազմակերպված չէ, չունի ներկայացուցչական կառույցներ: Հատկանշական է, որ *ադրբեջանահայություն* հասկացությունը մեր քաղաքական գիտակցության մեջ միայն վերջերս հաստատված հասկացություն է: Խորհրդային տասնամյակներին և դրան հաջորդած Ղարաբաղյան շարժման տարիներին դրան փոխարինում էին լուրկալ տեղանունների հետ կապված անվանումներ՝ *բաքվեցիներ*, *շամախեցիներ* և այլն: Ազգային քաղաքական գիտակցության մեջ մեր ժողովրդի այդ ստվար հատվածի հավաքական անվան բացակայությունը լավ կողմից չէ, որ բնութագրում էր այդ գիտակցությունը: Մենք ունեինք *արցախահայություն* հավաքական հասկացությունը և համապատասխան անվանումը, բայց չունեինք արցախահայությանը թվով գրեթե երկու անգամ գերազանցող, Շամախու բարբառ, Բաքվի խոսվածք ունեցող հայոց մի հատվածի անունն անգամ: 1930-ականներին, ինչպես ասում են, մի գիշերվա մեջ կովկասյան թաթարը անվանափոխվել է, «դարձել» ադրբեջանցի և մեխանիկական այդ ակտով դարձել Ադր. ԽՍՀ տիրուղոսա-

կիր ազգ: Իսկ մենք շարունակել ենք ադրբեջանահայությանը ներկայացնել որպես բաքվեցիներ, նուխեցիներ, շամախեցիներ... Ղարաբաղյան շարժումից նույնիսկ երկու տասնամյակ հետո մենք այս հարցում չենք ցուցաբերում քաղաքական մտածելակերպի անհրաժեշտ ճկունություն և հետևողականություն:

Ադրբեջանահայության ինքնակազմակերպման գործն առավելապես պետական գործ է: Մեր ժողովրդի այդ հատվածը ԽՍՀՄ լուծարման տարիներին իր համար անակնկալ ու միանգամայն անպատրաստ հայտնվել է Ադր. ԽՍՀ իշխանությունների (և ոչ միայն իշխանությունների) մասնակցությամբ կազմակերպված ջարդերի փաստի առաջ: Նա թերևս եղել է մեր ժողովրդի այն հատվածը, որի գիտակցությունն ավելի շատ է ախտահարված եղել «ժողովուրդների լենինյան բարեկամության» և «պրոլետարական ինտերնացիոնալիզմի» մասին կեղծ ու ապագային գաղափարախոսությամբ: Եվ եթե գործը թողնվի ինքն իրեն, ապա տասնամյակներ են պետք, որպեսզի ադրբեջանահայությունը ինքն իրեն գտնի ու ինքնակազմակերպվի: Մեր ժողովրդի այդ հատվածն ինքնակազմակերպման իր ջանքերում օգնության կարիք ունի, որը չի կարելի հետաձգել: Քաղաքական նպատակահարմարության տեսակետից դրանով առաջին հերթին պետք է զբաղվի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, նախ՝ այն պատճառով, որ ժամանակին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը ստեղծվել է որպես Ադր. ԽՍՀ ամբողջ հայության պետական պաշտպանվածության երաշխավոր, և հետո՝ դա մի առաքելություն է, որը կարող է նպաստել նրա միջազգային կայացմանը:

Չորրորդ: Իր կոնկրետության մեջ առանձնահատուկ է նախիջևնահայության խնդիրը: Ի տարբերություն Արևմտյան Հայաստանի և նույնիսկ Արցախի՝ Նախիջևանի հարցը կապված է 1921թ. հոկտեմբերի 13-ին կնքված Կարսի գործող բազմակողմ միջազգային պայմանագրի հետ, որի կողմերից են Խորհրդային Հայաստանը և Թուրքիան: Ռուսաստանի մասնակցությունը ենթակա է տարաբնույթ մեկնաբանությունների և կարոտ է քաղաքական

նուրբ մոտեցման ու մեկնաբանության: Խորհրդային Ադրբեջանը, որը պայմանագիրը ստորագրած կողմերից մեկն է, այլևս գոյություն չունի: Առանց իրավահաջորդի այն անհետացել է 1991թ., երբ Բաքվում հրաժարվել են Ադր. ԽՍՀ իրավահաջորդությունից և վերականգնել թուրքական ռազմական ինտերվենցիայի արդյունքում հիմնված և առանց ճանաչված կամ փաստացի հաստատված սահմաններ ձեռք բերելու պատմության թատերաբեմը լքած Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության պետականությունը: Կարսի պայմանագրից բխում է Նախիջևանի երկրամասի՝ Բաքվի կողմից օկուպացված լինելու իրավաբանորեն միանգամայն հստակ ձևակերպվող փաստը: Նախիջևանյան խնդրի հետ կապված երկրորդ կարևոր հանգամանքն այն է, որ դա XX դարի քաղաքական պատմության մեջ եզակի մի դեպք է, երբ պետությունն իր հովանավորությանը հանձնված տարածքում իրագործում է բնիկ ժողովրդի ցեղասպանություն (այս փաստը ևս դուրս է մնում մեր քարոզչության ու դիվանագիտության տեսադաշտից):

7. ԽՍՀՄ լուծարման ընթացքում Ղարաբաղյան հիմնախնդրի քաղաքականացումը (այդ թվում և մեր մասնակցությամբ) հետին պլան է մղել Նախիջևանին և Արցախին վերաբերող միջազգայնորեն ճանաչված փաստաթղթերը: Բավական է նկատել, որ մինչ օրս ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու տակ ընթացող բանակցային գործընթացներում չի ներկայացված հիմնախնդրի իրավական փաթեթը: Ակնհայտ է, որ դա ձեռնտու է միայն Բաքվին, որն ամեն կերպ ջանում է, որպեսզի խնդրի իրավական հիմքերն անտեսվեն, և անընդհատ տարփողում է Ադր. ԽՍՀ սահմաններում իր ճանաչված լինելու փաստը: 2008-ի մարտի 14-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային Բաքվի ներկայացրած բանաձևի նախագծում, որն ընդունվեց ծայրերի՝ 39 կողմ, 7 դեմ և 100 ձեռնպահ (ՄԱԿ-ի մնացած անդամները չմասնակցեցին քվեարկությանը) հարաբերակցությամբ, Բաքուն ոչ մի հղում չկատարեց խնդրի իրավական հիմքերին: Հիշատակվեց միայն, որ ՄԱԿ-ը «հարգում և աջակցում է Ադրբեջանի Հանրապետության ինքնիշխանությունը և տա-

րածքային ամբողջականությունը՝ նրա միջազգայնորեն ճանաչված սահմաններում»։ Քաղաքական այդ փաստարկը, սակայն, հակասում է միջազգային իրավունքի բոլոր այն սկզբունքներին, որոնք վերաբերում են տարածքային ամբողջականությանն ու սահմանների անձեռնմխելիությանը։ Այս սկզբունքները վերաբերում են լեգիտիմ սահմաններին ու օրինական (սեփական) տարածքներին։ Ակնհայտ է, որ թե՛ Լեռնային Ղարաբաղը, որը խնդրի անմիջական իրավական հիմքերի տեսակետից չի պատկանում Ադրբեջանի Հանրապետությանը և որի մի մասի վրա այսօր ինքնիշխանության պետական գործառույթներ է իրականացնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, թե՛ Նախիջևանի երկրամասը, որը Կարսի գործող, բազմակողմ միջազգային պայմանագրի համաձայն Ադրբեջանի Հանրապետության զավթած տարածք է, չեն կարող դիտվել որպես Բաքվին օրինաբար պատկանող տարածքներ։ Տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության սկզբունքները չեն կարող վերաբերել զավթված տարածքներով ստեղծված սահմաններին։ Այնինչ, հենց նման սահմաններով և տարածքներով է 1992-ին Ադրբեջանի Հանրապետությունը ընդունվել ՄԱԿ։ 1992-ին ԽՍՀՄ շուտափույթ լուծարմամբ շահագրգռված խոշոր տերությունները Բաքվից չեն պահանջել նրա կողմից հավակնվող տարածքներում իր ինքնիշխանությանը վերաբերող իրավական հիմքեր, չնայած բոլորի համար ակնհայտ էր, որ Բաքուն փաստացի վերահսկողություն չունի Լեռնային Ղարաբաղի այն տարածքներում, որոնք վերահսկվում էին Արցախի պաշտպանական բանակի կողմից, ինչպես ակնհայտ էր, որ չկա միջազգային իրավունքի որևէ սկզբունք կամ ԽՍՀՄ որևէ օրենք, որը կասկածի տակ դներ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լեգիտիմությունը։ Ռա 1992-ին էր։ Բայց այսօր արդեն իսկ ակնհայտ է, որ ուրիշի հողերի զավթումը տարածքային ամբողջականության սկզբունքով քողարկելու «ադրբեջանական նախադեպը» միջազգային համընդհանուր վտանգ է պարունակում, քանի որ միջազգային անվտանգության ու կայունության ապահովմանը կոչված այդ սկզբունքն այլասերվում,

դառնում է տարածքների զավթման սկզբունք։ Այն, որ միջազգային քաղաքական շրջանակներում այս հանգամանքը մնում է ստվերում, պետք է բացատրել միայն դիվանագիտական մեր ծառայությունների ու քարոզչական քաղաքականության թերացումով։

8. Շարադրվածից պարզ է, որ Նախիջևանի ու Լեռնային Ղարաբաղի հարցում հայկական կողմի իրավական փաթեթը պարունակում է միջազգային իրավունքի տեսակետից անվիճելի փաստարկներ և կարող է իրավական դաշտում բացահայտ առավելություններ ստանալու հուսալի հիմք լինել։ Ըստ ժամանակագրության՝ Ղարաբաղյան հիմնախնդրի իրավական փաթեթի գլխավոր փաստաթղթերն են.

- 1920թ. նոյեմբերի 30-ին Խորհրդային Ադրբեջանի Հեղկոմի հեռագիրը, որով նա Նախիջևանը, Ջանգեզուրը և Լեռնային Ղարաբաղը ճանաչում է որպես Խորհրդային Հայաստանի անկապտելի մաս։

- 1920թ. դեկտեմբերի 1-ի Խորհրդային Ադրբեջանի Հեղկոմի Հռչակագիրն այն մասին, որ նա Նախիջևանն ու Ջանգեզուրը ճանաչում է որպես Խորհրդային Հայաստանի անկապտելի մաս և միաժամանակ ճանաչում Լեռնային Ղարաբաղի ժողովրդի լիիրավ ինքնորոշման իրավունքը։

- Խորհրդային Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարինանովի, ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի անդամ Բ. Մդիվանու, Խորհրդային Ադրբեջանի կոմունիստական կուսակցության կենտկոմի անդամներ Ա. Միկոյանի, Նենեյշվիլու և XI Կարմիր բանակի հեղափոխական ռազմական խորհրդի անդամներ Վեստնիկի, Լևանդովսկու ու Միխայլովի 1920թ. հուլիսի 10-ի ՌԿ(Բ)Կ կենտկոմին ուղղված հաղորդումը՝ Խորհրդային Ադրբեջանում նոր տիպի արտազգային (ոչ ազգային) հանրապետություն հիմնելու անհրաժեշտության մասին, գաղափար, որն արտացոլվել է 1920-ական թվականներին Խորհրդային Ադրբեջանին վերաբերող քաղաքական գրեթե բոլոր փաստաթղթերում՝ փաստելով Խորհրդային Ադրբեջանի ոչ ազգային, ինտերնացիոնալ բնույթը։

- Ազգերի լիգայի հինգերորդ կոմիտեի 1921թ. դեկտեմբերի 6-ի որոշումը՝ Լիգային անդամակցելու Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության դիմումը մերժելու մասին:

- Հայկական ԽՍՀ ժողկոմխորհի 1921թ. հունիսի 12-ի Հռչակագիրը՝ Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի անկապտելի մաս հայտարարելու մասին:

- 1921թ. Ռուս-թուրքական մոսկովյան պայմանագիրը, որով երկու երկրներ իրենց իսկ կողմից արդեն Խորհրդային Հայաստանի մաս ճանաչված Նախիջևանը որոշեցին տալ Ադր. ԽՍՀ խնամակալությանը, առանց Խորհրդային Հայաստանի կամ Ադր. ԽՍՀ կարծիքն անգամ հարցնելու: Այդ պայմանագիրը, քանի դեռ չի դեմոնստացված, մնում է միջազգային իրավական կամայականության կենդանի օրինակ: Միաժամանակ կարևոր է ընդգծել, որ անգամ ապօրինի այդ պայմանագրից բխում է, որ Նախիջևանը չի կարող դիտվել Ադրբեջանի Հանրապետության տարածք, քանի որ այն արգելում էր Նախիջևանի խնամակալության իրավունքը զիջել երրորդ պետության, որի կարգավիճակում այսօր հայտնվել է Ադր. ԽՍՀ իրավահաջորդությունից հրաժարված Ադրբեջանի Հանրապետությունը:

- 1921թ. հոկտեմբերի 13-ին Թուրքիայի, Ռուսաստանի, Խորհրդային Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի մասնակցությամբ կնքված ու մինչ օրս գործող Կարսի պայմանագիրը, որով Նախիջևանը հանձնվեց Խորհրդային Ադրբեջանի հովանավորությանը:

- Երրորդ երկրի՝ Խորհրդային Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության Կովկասյան բյուրոյի 1921թ. հուլիսի 4-ի ընդունած որոշումը, որով Լեռնային Ղարաբաղը (ամբողջ Լեռնային Ղարաբաղը, այլ ոչ թե 1923թ. նրա մի մասի վրա ստեղծված ինքնավար մարզի տարածքը) դիտվեց Խորհրդային Հայաստանի մաս:

- Նույն Կովբյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի որոշումը Լեռնային Ղարաբաղը (ամբողջ Լեռնային Ղարաբաղը, այլ ոչ թե 1923թ. նրա մի մասի վրա ստեղծված ինքնավար մարզի տարածքը) Խորհրդային Ադրբեջանի սահմաններում թողնելու և նրան լայն իրավունքներով

ինքնավարություն տալու մասին: Որոշումն ըստ էության չընդունվեց, քանի որ ո՛չ քննարկվեց, ո՛չ էլ դրվեց քվեարկության: Բայց հակառակ Հայաստանի բողոքների՝ իրականացվեց:

- 1923թ. հուլիսի 7-ի Խորհրդային Ադրբեջանի կենտրոնական գործադիր կոմիտեի դեկրետը Խորհրդային Հայաստանից իր սահմանները մտցված Լեռնային Ղարաբաղի մի մասում հայկական ինքնավար մարզ հիմնելու մասին: Այդ դեկրետը Բաքում ընդունեց՝ խախտելով նույնիսկ Կովբյուրոյի որոշումը, քանի որ ըստ այդ չընդունված որոշման՝ լայն իրավունքներով մարզային ինքնավարություն պետք է տրվեր ամբողջ Լեռնային Ղարաբաղին, այլ ոչ թե նրա մի մասին:

- 1986թ. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մասին ընդունված Ադր. ԽՍՀ օրենքը, որով հաստատվում էր, որ մարզի սահմանները կարող են փոխվել միայն նրա բարձրագույն մարմինների համաձայնությամբ:

- 1988թ. փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի նստաշրջանի որոշումը, որով մարզի բարձրագույն մարմինը դիմում էր ՀԽՍՀ, Ադր. ԽՍՀ և ԽՍՀՄ Գերագույն խորհուրդներին քննարկել և դրականորեն լուծել ինքնավար մարզը Ադր. ԽՍՀ-ից ՀԽՍՀ կազմ մտցնելու հարցը:

- 1989թ. հունվարին ԼՂԻՄ-ում հատուկ կառավարում մտցնելու մասին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության որոշումը: Հատուկ կառավարման կարգավիճակը ժամանակագրորեն ինքնավար մարզի վերջին պետական-իրավական կարգավիճակն էր ԽՍՀՄ գոյության տարիներին, երբ տնտեսական բոլոր կառույցները, պետական ու հասարակական բոլոր կազմակերպությունները դուրս բերվեցին Բաքվի ենթակայությունից և դրվեցին Երևանի կամ Մոսկվայի ենթակայության տակ:

- 1990թ. ապրիլի 3-ի ԽՍՀՄ օրենքը, որով ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու դեպքում ինքնավար կազմավորումներին և հավաք (կոմպակտ) ապրող ազգություններին

րին թույլ էր տրվում ինքնուրույն որոշել իրենց պետական-իրավական կարգավիճակը:

- 1991թ. օգոստոսի 30-ին Բաքվում ընդունված Հռչակագիրը 1918-1920թթ. Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության պետականության վերականգնման մասին, որով հռչակվեց Բաքվի հրաժարումը Ադր. ԽՍՀ իրավահաջորդությունից:

- 1991թ. հոկտեմբերի 18-ին Բաքվում ընդունված Պետական անկախության մասին սահմանադրական ակտը, որով սահմանադրորեն ամրագրվում էր Ադրբեջանի Հանրապետության հրաժարումը Ադր. ԽՍՀ իրավահաջորդությունից:

- 1991թ. սեպտեմբերի 2-ի Անկախության մասին ԼՂՀ հռչակագիրը:

- 1991թ. դեկտեմբերի 10-ի Անկախության մասին հանրաքվեի արդյունքների մասին անկախ դիտորդների Ակտը:

*Իրավական այդ փաստաթղթերը խնդրի կարգավորմանն առնչվող իրավաբանական բնույթի անվիճելի եզրակացությունների միանգամայն բավարար հիմք են:*

**Առաջին:** 1991թ. օգոստոս-հոկտեմբերին Պետականության վերականգնման հռչակագրով և Պետական անկախության սահմանադրական ակտով հրաժարվելով նախկին Ադր. ԽՍՀ իրավահաջորդությունից, մերօրյա Ադրբեջանի Հանրապետությունը զրկվել է բոլոր այն իրավունքներից, որոնք նախկին Ադր. ԽՍՀ-ն ուներ Նախիջևանի ու Լեռնային Ղարաբաղի նկատմամբ, քանի որ ո՛չ Լեռնային Ղարաբաղը և ո՛չ էլ Նախիջևանը 1918-1920թթ. մաս չեն կազմել Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության (այն պետության, որի իրավահաջորդ իրեն հռչակեց մերօրյա Ադրբեջանի Հանրապետությունը):

**Երկրորդ:** 1991թ. սեպտեմբեր-դեկտեմբերին, մինչև Ադրբեջանի Հանրապետության միջազգային ճանաչումը ԼՂՀ-ն միանգամայն լեգիտիմ կայացել է նրան իրավաբանորեն չպատկանող տարածքներում:

**Երրորդ:** ԼՂՀ-ն այսօր վերահսկում է միայն մի մասն այն տարածքների (ամբողջ Լեռնային Ղարաբաղի), որոնք Կովբյուրոյի որոշմամբ 1921թ. օտարվել են Խորհրդային Հայաստանից՝ այդ տարածքների վրա հայկական ինքնավար մարզ ստեղծելու պայմանով: (1923թ. Բաքուն, ի խախտումն այդ որոշման, ԼՂԽՄ-ը դեկրետով կազմավորել է այդ տարածքների մի մասի վրա՝ մարզից դուրս թողնելով Քարվաճառն ու Լաչինը, Կովսականն ու Շահումյանը, Քարիհատն ու Ջանգելանը...):

**Չորրորդ:** Մերօրյա Ադրբեջանի Հանրապետությունը չէր կարող Կարսի պայմանագրի ու Կովբյուրոյի որոշման շրջանցումով կամ անտեսումով կայանալ նախկին Ադր. ԽՍՀ սահմաններում, քանի որ վերջինս միակ նախկին միութենական հանրապետությունն է, որի սահմաններում գտնվող տարածքների վերաբերյալ կային Բաքվի ինքնիշխանությունը դրանցում սահմանափակող միջազգային պայմանագրեր:

**Հինգերորդ:** Այսօր թե՛ Նախիջևանը, թե՛ Կենտրոնական ու Հյուսիսային Արցախը հիմնախնդրի իրավական հիմքերի տեսակետից Ադրբեջանի Հանրապետության կողմից օկուպացված տարածքներ են:

9. Ինչպես պարզ երևում է վերը շարադրվածից, Հայ դատի խնդիրն իր ելքային մեջ միասնական լինելով հանդերձ, բաժանվում է ենթահարցերի, որոնց արժարժումը ենթադրում է դրանց մանրամասների ուսումնասիրությունը՝ քաղաքական նպատակահարմարության առումով առավելագույն արդյունավետությամբ դրանք ազգային ու միջազգային օրակարգ մտցնելու համար: Թե՛ հայոց պահանջատիրության միասնական հայեցակարգի և թե՛ դրա ենթահարցերի մշակման գործը հեռու է ավարտված լինելուց: Գործի առաջին պատասխանատուները հայոց գիտական, փորձագիտական շրջանակներն են:

Ահա այն իրավական փաստաթղթերի ցանկը, որոնց մենք անդրադարձել ենք վերը և որոնք հիմնավորում են զեկուցման մեր կա-

տարած եզրակացություններն ու առաջադրած գաղափարները: Դրանց մեծ մասն այնպիսի փաստաթղթեր են, որոնք ընդունվել կամ ճանաչվել են ԽՍՀՄ իշխանությունների և Ադր. ԽՍՀ-ի կողմից: Դրանք ակնհայտ են դարձնում, որ Նախիջևանի, Արցախի և Արևելյան Անդրկովկասի հայության (ադրբեջանահայության) խնդիրները, որպես Հայ դատի ենթահարցեր, ունեն ինքնուրույն իմաստավորման հիմքեր ու փաստարկման առանձնահատկություններ: Փաստաթղթերը, անկասկած, ունեն ավելի հանգամանալի վերլուծության կարիք՝ իրավական և քաղաքական տեսակետներից արդյունավետ կիրառության համար:

1. Խորհրդային Ադրբեջանի Հեղկոմի 1920թ. նոյեմբերի 30-ի հռչակագիրը «Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը Հայկական ԽՍՀ քաղկացուցիչ մաս ճանաչելու մասին», Կոմունիստ, 1920, թիվ 7:

2. Декларация Азревкома в связи с установлением в Армении Советской власти от 1 декабря 1920г. – Газ. “Коммунист” (Баку), 2 декабря 1920г.

3. Сообщение в Центральный комитет РКП(б) от 10 июля 1920г. – К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР, 1918-1925: Документы и материалы. Баку, Азернешер, 1989, с. 54-56.

4. Документ пятого комитета Ассамблеи Лиги Наций, откланившего просьбу Азербайджана о приеме в эту организацию из-за неурегулированности его территориальных споров с Арменией и с Грузией. – Лига Наций. Принятие новых членов в Лигу Наций. Отчет, представленный Пятым комитетом Ассамблеи по вопросу о принятии Азербайджана в Лигу Наций. 9 декабря 1920 года. Документ Ассамблеи 175. В кн.: Нагорный Карабах в международном праве и мировой политике: Документы и комментарии. Т. 1. М., 2008.

5. Декларация Совнаркома ССР Армении об объявлении Нагорного Карабаха составной частью Армянской ССР. – Нагорный Карабах в 1918-1923гг. Сборник документов и материалов. Ереван, 1992, с. 662.

6. Договор между Россией и Турцией от 16 марта 1921г. – Документы внешней политики СССР. М., 1959, с. 597-604.

7. Карсский договор от 13 октября 1921г. – Документы внешней политики СССР. Т. 4. М., 1960, с. 420-429.

8. Из протокола вечернего заседания Пленума Ковбюро РКП(б) от 4 июля 1921г. – Нагорный Карабах в 1918-1923гг. Сборник документов и материалов. Ереван, 1992, с. 649-650.

9. Из протокола заседания Пленума Кавбюро РКП(б) от 5 июля 1921г. – Вестник архивов Армении, 1989, N 2, док. 14, с. 77-78.

10. Декрет АзЦИК-а Советов “Об образовании Автономной области Нагорного Карабаха” от 7 июля 1923 г. – Собрание узаконений и распоряжений Рабоче-Крестьянского Правительства АССР за 1923 г. Баку, 1923, с. 384-385.

11. Закон Азербайджанской Советской Социалистической Республики “О Нагорно-Карабахской автономной области” от 16 июня 1981г. с изменениями, внесенными Указами от 22 июля 1982г., 27 июня 1985г. и 14 апреля 1986г. Баку, Азернешер, 1987.

12. Решение Внеочередной сессии Совета народных депутатов НКАО от 22 февраля 1988г. – Газ. “Советский Карабах”, 21 февраля 1988г.

13. Указ Президиума Верховного Совета СССР “О введении особой формы управления в Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР от 12 января 1989г. – Ведомости Верховного Совета СССР. М., N 3, 1989, с. 14.

14. Закон СССР “О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР” от 3 апреля 1990 г. – Ведомости Съезда народных депутатов СССР, 1990, N 15, с. 252.

15. Декларация Верховного Совета Азербайджанской Республики “О восстановлении государственной независимости Азербайджанской Республики от 30 августа 1991г. – Газ. “Бакинский рабочий”, 3 сентября 1991г.

16. Конституционный акт “О государственной независимости Азербайджанской Республики от 18 октября 1991г. – Газ. “Бакинский рабочий”, 7 ноября 1991г.

17. Декларация “О провозглашении Нагорно-Карабахской Республики” от 2 сентября 1991г. – Статус Нагорного Карабаха в политико-правовых документах. Ереван, 1995, с. 69-70.

18. Акт группы независимых наблюдателей “О результатах референдума о независимости Нагорно-Карабахской Республики” от 10 декабря 1991г. – Статус Нагорного Карабаха в политико-правовых документах. Ереван, 1995, с. 85-87.



**Ռուբեն  
ՄԵԼՆՆՅԱՆ**

**ՀԱՅԿԱԿԱՆ  
ԷԹՆԻԿ ՏԱՐՐԻ  
ՆԵՐԿԱՅԻՍ ՎԻՃԱԿԸ  
ԱՐԵՎՍՏՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

**Տ**արբեր դարերում հայ ժողովուրդը ենթարկվել է նվաճողների տարատեսակ ճնշումների ու հալածանքների, այդ թվում և բռնի կրոնափոխության: Վերջինիս համար կիրառվել են բազմապիսի մեթոդներ (մահվան սպառնալիք, հարկային, իրավական կոշտ հալածանքի քաղաքականություն և այլն): Հատկապես թյուրքական տարրի՝ տարածաշրջան ներթափանցելուց հետո հայերը պարբերաբար բռնի իսլամացվել են, ինչը տարբեր ժամանակներում իրականացվել է տարբեր ծավալներով: Սակայն հայտնի է, որ հայերի իսլամացման վերջին լայնածավալ ակցիան տեղի է ունեցել 1915-1923թթ. Հայոց ցեղասպանության տարիներին:

Այժմ Թուրքիայում բնակվող XXդ. սկզբում իսլամացված հայության սերունդներն առավելապես ձևավորվել են հետևյալ խմբերից.<sup>1</sup>

**ա. Հայոց ցեղասպանության ժամանակ երբեմն միայն արտաքուստ իսլամ ընդունած հայեր,**

**բ. ցեղասպանության ժամանակ առևանգված և այնուհետև թուրքերի կամ քրդերի հետ ամուսնացած հայ կանայք և աղջիկներ,**

**գ. ցեղասպանության ժամանակ մուսուլմանների կողմից վերցված (հաճախ՝ բռնի) հայ երեխաներ և որբեր, դ. մուսուլմանների (առավելապես ալևիների) մոտ ապաստանած որոշ թվով հայեր:**

Թուրքական մի շարք աղբյուրներ, խոսելով ցեղասպանության տարիներին հայերի իսլամացման մասին, շեշտում են, թե շատ հայեր կամովին են իսլամ ընդունել: Սակայն այդ «կամովինը» պարզապես մահի և կյանքի միջև ընտրությունն էր, և որոշ թվով հայեր նախընտրել են իսլամ ընդունել: Դա համատարած չի եղել և չէր էլ կարող լինել, քանի որ թուրքական պետական մեքենան 1915-1923-ին իրականում ցանկացել է հայերին բնաջնջել, այլ ոչ թե ծուլել: Այս փաստի օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ ցեղասպանության տարիներին հայերի «կամովին» իսլամ ընդունելու «պատրաստականությունը» ոչ միշտ է միանշանակ հավանության արժանացել իշխանությունների կողմից և, օրինակ, Թուրքիայի կառավարության օսմանյան արխիվում պահպանվել են ժամանակի բարձրաստիճան շատ թուրք պաշտոնյաների, առավելապես ներքին գործերի նախարար Թալեթ փաշայի՝ հայերի կրոնափոխությանը վերաբերող հրամաններ և զրագություն,<sup>2</sup> որոնցում կան նաև իսլամ ընդունած հայերին վերաբերող հրամաններ:<sup>3</sup>

Խոսելով Թուրքիայի ուծացած կամ այդ ճանապարհը բռնած հայերի մասին՝ հաճախ բախվում ենք նրանց կարգավիճակի սահմանման վիճահարույց և, միևնույն ժամանակ, բազմաշերտ խնդրին: Կարծում ենք՝ հարցի ճշգրտման համար արժե հաշվի առնել հետևյալ փաստարկները: Թուրքիայի իսլամացված հայերը ծուլման և ինքնության կորստի տարբեր աստիճաններում գտնվող մարդիկ են, որոնցից ոչ բոլորն ունեն մաքուր հայկական էթնիկ նկարագիր, և նրանց պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի.

**ա. Հայեր, որոնք պահպանել են ազգային-կրոնական (քրիստոնեական) սովորույթների, տոների, ծեսերի առանձին տարրեր, մո-**



ռացել են լեզուն, բայց նրանց մոտ դեռևս կա, թեկուզև քողարկված, հայկական ինքնագիտակցության որոշակի տոկոս: Նրանք գաղտնի փորձում են պահպանել այդ ամենը և ձգտում փոխանցել իրենց սերունդներին: Հատկապես կարևոր և ուշագրավ է այն, որ նրանց շրջանում մեծապես տարածված է ներքին ամուսնությունների սովորույթը, որն էթնիկ նկարագիրը պահելու կարևորագույն երաշխիքներից է:<sup>4</sup> Այս խմբին պատկանողները մասնագիտական գրականության մեջ կոչվում են *ժպտյալ կամ կրիպտո հայեր*:

բ. Հայերի սերունդներ, որոնց նախնիները ստիպված իսլամացել են: Նրանց գերակշիռ մասը գիտե և նույնիսկ ընդունում է դա, սակայն հայկական միջավայրից կտրված լինելով՝ նրանք անհամեմատ ավելի քիչ են պահպանել ազգային-կրոնական սովորույթների տարրերը և ոչ միայն քրդախոս են, արաբախոս կամ թրքախոս, այլև մշակութային առումով ևս քրդացել, թուրքացել են: Այս խմբի մեջ, օրինակ, ի տարբերություն ժպտյալ հայերի, չեն պահպանվել ներքին ամուսնությունները, ինչը հանգեցրել է նաև նրանց էթնիկական ուժացմանը: Այս նույն խմբում կարելի է ընդգրկել նաև մարդկանց, ովքեր ունեն հայկական ծագման որոշակի տոկոս, ում տատը կամ պապը հայ է եղել, և այդ հիշողությունը պահպանվել է նրանց մեջ: Սրանք էլ հենց կազմում են խառնածինների այն մեծ բանակը, որի գոյության փաստը քննարկման ավելի լայն ոլորտներ է ընդգրկում ինչպես Թուրքիայում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Այս խառնածինների մի մասը հպարտությամբ է խոստովանում, որ ունի նաև հայկական ծագում: Սա կարելի է կապել այն իրողության հետ, որ այժմ հայկական տարածքներում բնակվող քոչվոր ժողովուրդները և նրանց սերունդներն ընդունում ու գիտակցում են հայերի մշակութային անհամեմատ ավելի բարձր մակարդակը: Եվ փաստորեն, կարելի է կարծել նաև, որ հայկական ծագում ունենալն ինչ-որ առումով հարգի է այդ տարածքներում:<sup>5</sup> Սակայն, միևնույն ժամանակ, խառնածինների այս խմբում հանդիպում են մարդիկ, ովքեր տարբեր դրդապատ-

ծառներով կտրականապես ժխտում են իրենց հայկական ծագումը և նույնիսկ ավելին՝ ըստ տարբեր աղբյուրների, նրանց շարքում կան անգամ ծայրահեղ ազգայնական կազմակերպության անդամներ: Մեր կարծիքով, այս երևույթն ունի նաև հստակ հոգեբանական կողմ: Կրոնափոխ հայերի այս խմբերն ունեն խեղված հոգեկան և հոգեբանական վիճակ, ապրում են երկյուղի և ենթագիտակցական վախի պայմաններում: Նրանցից շատերն ունեն երկու ինքնություն՝ արտաքին և ներքին աշխարհների համար: Համապատասխան մասնագետներն ուսումնասիրում են ցեղասպանությունը վերապրածների մոտ տարբեր խնդիրների ի հայտ գալու փաստը, սակայն կարծում ենք, որ հոգեբանական առանձին ուսումնասիրության նյութ է նաև դիմախեղված հայերի հարցը:

Թուրքիայի իսլամացված հայերի խնդրի ամենակարևոր ասպեկտներից մեկն ազգային ինքնագիտակցության մակարդակի կամ շերտերի պահպանումն է: Կրոնափոխ հայերի թեմայի անգամ մակերեսային դիտարկման արդյունքում ի հայտ եկած շատ փաստեր ինչ-որ տեղ թույլ են տալիս խոսելու նրանց շրջանում պահպանված որոշակի ազգային ինքնագիտակցության կամ գոնե հիշողության մասին, ինչը համապատասխան նպաստավոր պայմանների դեպքում տեսականորեն կարող է նրանց հնարավոր ինքնակազմակերպման բավարար հիմք դառնալ: Ակնհայտ է, որ Թուրքիայում բնակվող բազմաթիվ ժպտյալ և իսլամացված հայերի շրջանում կա ազգային ակունքները պահելու ձգտում կամ գոնե դրանց հանդեպ հետաքրքրություն: Ընդ որում՝ այս ամենն արտահայտվում է տարբեր ձևերով՝ հավատարմության փորձեր ինչպես զուտ էթնիկ առանձնահատկությունների, այնպես էլ իրենց նախնիկն կրոնի՝ քրիստոնեության սկզբունքների հանդեպ: Սակայն Թուրքիայում գոյատևած, ուժացման և ինքնության կորստի տարբեր մակարդակներում գտնվող հայերի մեջ էթնիկ ու կրոնական ինքնագիտակցության տարրերի գնահատման պարտադիր ու կարևորագույն պայման է հստակ պատկերացնել և հաշվի առնել

այն միջավայրը, որտեղ ապրում են բռնի և երբեմն միայն արտաքուստ իսլամացված մեր ազգակիցները: Թուրքիայում, ուր հայ կամ ընդհանրապես ոչ մուսուլման լինելն այսօր էլ ծայրահեղ վտանգավոր է, դասական հայկականություն պահպանելը՝ դժվար, եթե չասենք՝ անհնարին է, առավել ևս՝ ոչ միայն Ստամբուլում, այլև անհամեմատ ավելի հետամնաց, հետադեմ արևելյան շրջաններում: Հայկական ինքնագիտակցության տարբեր շերտերի պահպանման ամենախոսուն ապացույցներից մեկը կարող է լինել այն փաստը, որ պատեհ առիթի դեպքում բռնությամբ և հարկադրանքով իրենց արմատներից կտրված հայերը վերադառնում կամ գոնե փորձում են վերադառնալ իրենց արմատներին: Դրա վառ օրինակն է տարբեր տարիներին իսլամացված հայերի շրջանում պաշտոնապես արձանագրված կրոնադարձությունը:<sup>6</sup> Ընդ որում՝ կրոնադարձվել են տարբեր սերունդների պատկանող հայեր, ինչը փաստում է նրանց մեջ իրենց արմատների մասին առկա կուլեկտիվ և պատմական հիշողության պահպանումը: Հայտնի է նաև, որ հայ լինելու կարևոր ցուցիչ է մայրենի լեզվի տիրապետումը: Միաժամանակ ակնհայտ է, թե ներկայումս հայոց լեզվի հիմնախնդիրն ինչ մեծ ծավալներ է ընդգրկել աշխարհասփյուռ հայության շրջանում: Խոսելով Թուրքիայի այլակրոն հայերի մեջ հայերենի պահպանման մակարդակի մասին՝ կարելի է նշել, որ մինչև հիմա էլ նրանք գործածում են առանձին հայերեն բառեր: Կարևոր մի փաստ ևս, որին անձամբ ենք ականատես եղել. Արևմտյան Հայաստանի մի շարք վայրերում, ծպտյալ և իսլամացված հայերի շրջանում, անցյալ տարի տարածվել էր թուրքերենով հայերենի ինքնուսույց-դասագիրք: Վանում, Մուշում և այլուր բազմաթիվ իսլամացված, ծպտյալ հայեր մեծ ոգևորությամբ, միևնույն ժամանակ՝ փոքր-ինչ գաղտնի, մեզ ցույց էին տալիս այդ գիրքը, որը նրանց հնարավորություն էր տալու սովորել իրենց մայրենին: Ի դեպ, վերոհիշյալ գիրքը Արևմտյան Հայաստանի շատ վայրերում տարածել է ճարտարապետության պատմության մասնագետ Սամվել Կարապետ-

յանը, ով պատմելով Բաղշեն գյուղի իսլամացած հայ գյուղապետի հետ հանդիպման մասին՝ նշում է. «Բաղշեի Բաղշեն գյուղի գյուղապետի՝ Ջիգայիր Եմիշթեքիսի հետ հանդիպման ընթացքում նրան հայ-թուրքերեն փոքրիկ զրուցարան տվեցինք. թուրքերեն գիտե, թող հայերենն էլ ինքնուրույն սովորի: Երբ տվեցինք, ասաց՝ մի տասը հատ էլ տվեք, բաժանեն հարևաններիս, նրանք էլ կուզեն սովորել: Մենք խոստացանք հաջորդ այցելության ժամանակ տանել մեզ հետ. այդ դեպքում, ասաց, մի հիսուն հատ բերեք, հարևան գյուղերում էլ կուզենան»:<sup>7</sup>

Սա վկայում է, որ հայրենաբնակ շատ հայերի մեջ վառ է նաև մայրենի լեզվին տիրապետելու ցանկությունը: Սակայն առնվազն իրատեսական չէ ծպտյալ կամ իսլամացված հայերից, որպես հայ լինելու գրավական, պահանջել հայերենի լավ իմացություն այն դեպքում, երբ Ստամբուլի հայկական համայնքի մեծ մասը հայերենին չի տիրապետում այն աստիճան, որ եկեղեցում քարոզը կարդացվում է թուրքերեն, երբ այնտեղի հայկական դպրոցների թիվը կտրուկ նվազել է, և դրանք կանգնած են լինել-չլինելու լուրջ խնդրի առջև:

Իսլամը պարտադրելուց բացի, թուրքական պետությունն ուղղակի և անուղղակի ստիպել է մոռացության տալ նաև ազգային պատկանելության գիտակցությունը: Եվ ըստ այդմ, կրոնափոխ հայերը բաժանվում են մի քանի, կրկին պայմանական, խմբերի. թուրքացած կամ թուրքախոս հայեր, քրդացած կամ քրդախոս հայեր, արաբացած կամ արաբախոս հայեր:

Այս խմբերում երբեմն նկատվում է առավելապես լեզվական պատկանելություն, ասենք՝ քրդախոսություն, սակայն որոշ դեպքերում նաև կենսակերպի մեջ է գերիշխում թուրքական, քրդական տարրը: Այնուամենայնիվ, ավելորդ չէ նշել, որ անգամ քրդացած հայի, թեկուզ, ամենօրյա կենցաղում նկատելի են երևույթներ, որոնցով նրանք հստակ տարբերվում են քրդերից: Ավելացնենք նաև, որ Թուրքիայում ապրող բռնի իսլամացված հայերի և նրանց սերունդների մեջ արդեն տևական ժամանակ է, ինչ ընթանում են

տարբեր հետաքրքիր գործընթացներ, որոնք ուղղակի և անուղղակի վկայում են տասնամյակներ անց էլ նրանց մոտ ազգային ինքնագիտակցության և հիշողության որոշակի շերտերի պահպանման մասին: Մասնավորապես, «ինքնության ճգնաժամի» քննարկումների ծավալմանը զուգընթաց, ի հայտ են գալիս և արդեն մամուլում տարածվում իսլամացված հայերի պատմություններ, տպագրվում են հայտարարություններ, որոնցով մարդիկ փնտրում են իրենց արմատները, կորցրած ազգականներին:

Ծպտյալ և իսլամացված հայության աշխարհագրական սփռվածության մասին խոսելիս պետք է նշել, որ նրանք առավելապես ապրում են հայկական տարածքներում: Սակայն ուրբանիզացման արդյունքում նրանց բնակության աշխարհագրությունը լայնացել է հասնելով Թուրքիայի խոշոր քաղաքներից մինչև Եվրոպա:

Կարևոր է նշել, որ բռնի թուրքացման քաղաքականությունը շարունակվել է նաև հանրապետական Թուրքիայում և ուղեկցվել տարատեսակ ճնշումներով, որոնց հետևանքով հատկապես գավառներում մնացած սակավաթիվ «բացահայտ հայերը» ստիպված են եղել հեռանալ երկրից կամ ընդունել իսլամ, կամ էլ թաքցնել իրենց իսկական ինքնությունը: Այն, որ ոչ մուսուլմանների բռնի թուրքացումը եղել է ծրագրված պետական քաղաքականություն, ապացուցում են հենց թուրքական փաստաթղթերը:<sup>8</sup>

Հանրապետական Թուրքիայում շարունակաբար տեղի է ունեցել հայերի արտագաղթ: Գավառահայությունը գաղթել է Ստամբուլ, այնտեղից էլ՝ արտասահման, և այսօր գավառներում բացահայտ հայեր գրեթե չեն մնացել, կան միայն առանձին ընտանիքներ կամ մարդիկ: Թուրքական մամուլում կարելի է երբեմն հանդիպել, ասենք, «Դիարբեքիրի վերջին հայը» վերնագրով տեղեկատվության: Այս ամենում, իհարկե, մեծ են թուրքացման քաղաքականության հետևանքները,<sup>9</sup> շարունակական հալածանքները, սակայն պետք է ավելացնել հասարակական հալածանքը ևս, կամ, այսպես կոչված, «թաղամասային ճնշում» հասկացությունը: «Թաղամասային ճնշում»



Կազմկոմիտեի անդամներ  
(ձախից աջ) Ա. Արշակյանը, Ա. Դանիելյանը,  
Թ. Ավագյանը, Կ. Միքայելյանը Կիպրոսի Հանրապետության  
Նախագահ Մակարիոսի արձանի մոտ:  
Ձախից երկրորդը Շրի Լանկայի պատվո հյուպատոս Պ. Կալայջյանն է



*Ա. Մելքոնյանը Կիպրոսի Մելգոնեան կրթական հաստատության շրջանավարտների միության մի խումբ անդամների հետ*



*Այցելություն Մելգոնեան կրթօջախ.  
Կ. Միքայելյանը և Ա. Դանիելյանը Մելգոնեան եղբայրների շիրիմի մոտ*



Դրվագներ գիտաժողովից

մը» ենթադրում է, որ «բացահայտ հայերին» շրջապատող միջավայրը և ծայրաստիճան բացասաբար է վերաբերվում նրանց և ուղղակի կամ անուղղակի ստիպում հեռանալ կամ թաքցնել ինքնությունը:

Թուրքիայից արտագաղթի արդյունքում ներկայումս Եվրոպայում ձևավորվել են նաև իսլամացված հայության համայնքատիպ կառույցներ, որոնց շրջանում տեղի են ունենում հետաքրքիր գործընթացներ. մասնավորապես էթնիկ պատկանելության հանդեպ հետաքրքրության աճ երիտասարդների շրջանում, կրոնադարձություն՝ տարիքային տարբեր խմբերում: Այս ամենը կարոտ է լուրջ ուսումնասիրության:

Հարկ է նշել, որ ծպտյալ և իսլամացված հայության խնդիրը հետաքրքրում ու որոշակի անհանգստություն է պատճառում նաև թուրքական գիտական ու «մերձգիտական» շրջանակներին, ինչի մասին վկայում են թեմային վերաբերող օրեցօր ավելացող հոդվածները, գրքերը, ուսումնասիրությունները: Սակայն կարևոր է նշել, որ այս ամենը կարելի է տեղավորել ավելի լայն՝ «ինքնության ճգնաժամ», հասկացության սահմաններում, որը մեր օրերում բավական արդիական և օրակարգային խնդիր է Թուրքիայում: Վերջին ժամանակներս Թուրքիայում ավելի շատ է քննարկվում և տարածվում ինքնության թեման, որը, խորքային առումով, գտնվում է թուրքական հասարակության ուշադրության կենտրոնում: Կարծում ենք՝ բավական հետաքրքիր և ուշագրավ է Թուրքիայում ինքնության ճգնաժամի վերաբերյալ հանգուցյալ Հրանտ Դինքի արտահայտած հետևյալ միտքը. «Եթե մի օր Թուրքիան քանդվի, ապա դա կլինի ոչ թե զենքի միջոցով, այլ ինքնության խնդրի»:<sup>10</sup> Ամենևին պատահական չպետք է համարել, որ ծպտյալ և իսլամացված հայերի խնդրի առնչությամբ արդեն հրապարակավ արտահայտվել են Թուրքիայի մի շարք հայտնի պատմաբաններ: Նրանցից մեկը՝ Ինենյու համալսարանի պատմության ամբիոնի վարիչ պրոֆեսոր Սալիմ Ջյոհջեն, Հրանտ Դինքի թաղման բազմահազարանոց արարողությունն ուղղակիորեն կապեց ծպտյալ հայերի հետ՝ դա համա-

րելով վերագարթոնքի նշան: Որոշ թուրք գիտնականներ ծպտյալ ու իսլամացած հայերին թուրքիայի անվտանգության լուրջ սպառնալիք են համարում և պետական կառույցներին կոչ անում այս ուղղությամբ միջոցներ ձեռնարկել: Նույն Սալիմ Ջոհջեն նույնիսկ կարծիք է հայտնում, թե մինչև 2015թ. ծպտյալ հայերն ահաբեկչական պայքար են սկսելու. «Ուշագրավ է այն հանգամանքը, որ XX դարի սկզբին այս կամ այն պատճառով իսլամ ընդունած հայկական ծագմամբ մեր քաղաքացիների ուղղությամբ տարվող աշխատանքները վերջին ութ-տասը տարիներին ապշեցնող թափ են ստացել: Այսպիսի զարգացումը չէր կարող ի հայտ գալ հենց այնպես, և պարզ է, որ սրա հիմքում ապագային միտված մի շարք հաշվարկներ կան: Թուրքերի հետ հաշիվներ պարզելու, նրանցից վրեժ լուծելու և, ի վերջո, «դրախտային Հայաստանը» վերակերտելու նպատակները, 2015թ., այսինքն՝ քսոթի և տեղահանության որոշման ընդունման 100-ամյակի մոտենալն էլ, կրիպտո հայերի խնդրում առկա սպառնալիքները բավական մեծացրել են: Ուստի ես կարծում եմ, որ ապագայում՝ հավանաբար սկսած 2013-2014 թվականներից, հատկապես կրիպտո հայերի կողմից թուրքիան ենթարկվելու է բացահայտ կամ էլ թաքուն հարձակման, որն անցյալ դարի սկզբներին տեղի ունեցածներից շատ ավելի տարբեր է լինելու... Ես կարծում եմ, որ հայերի զինված շարժումը սկիզբ է առնելու քաղաքներից: Հատկապես արևելյան և հարավարևելյան անատոլիական որևէ քաղաքում որոշակի գործողություններ իրականացնելու համար 10-12.000-անոց գաղութը բավարար է: Ըստ էության, տարածաշրջանի քաղաքներում մոտավորապես այս քանակությամբ ծպտյալ հայեր կան»:<sup>11</sup>

Բնական է նաև, որ թուրքական պետական տարբեր կառույցներ ևս հետաքրքրվում են ծպտյալ և իսլամացած հայերի խնդիրներով: Այս են վկայում մամուլում ու վերլուծական տեղեկագրերում ժամանակ առ ժամանակ հայտնվող մանրամասն տվյալները կրոնափոխ հայերի ներկայիս բնակության վայրերի, թվաքանակի, նրանց

շրջանում ընթացող գործընթացների մասին: Թուրքական մամուլում և զանազան վերլուծություններում կարծիքներ են հնչում, որ ծպտյալ հայերը մեծ թիվ են կազմում նաև պետական համակարգում, բուհերում,<sup>12</sup> ինչպես նաև մասնավոր սեկտորում: Սակայն իսլամացած և ծպտյալ հայերին հասցեագրված առավել տարածված մեղադրանքն այն է, որ նրանք, իբրև թե ակտիվորեն համագործակցում են ծայրահեղական կազմակերպությունների հետ:<sup>13</sup>

Ինչպես և սպասելի էր, թուրքական պետական քարոզչամեքենան ամեն կերպ փորձում է հարցը հօգուտ իրեն ներկայացնել, և ավելորդ չէ նշել, որ բռնի կրոնափոխված հայերի խնդիրը շահարկվում է նաև Հայոց ցեղասպանության մերժման համատեքստում:<sup>14</sup>

Պետք է նշել, որ կրոնափոխ հայերի խնդիրը թուրքիայի համար նաև նուրբ հարց է, քանի որ էթնիկ ինքնության ճգնաժամը կարող է բավական լուրջ սպառնալիք դառնալ թուրքական պետության համար:<sup>15</sup> Օրինակ՝ հայտնի է, թե ինչ մեծ աղմուկ բարձրացրեց 2004թ. փետրվարի 6-ին Ստամբուլի «Ակոս» թերթում հանգուցյալ Հրանտ Դինքի տպագրած հոդվածը, որտեղ ասվում էր, թե թուրքիայի Հանրապետության գլխավոր խորհրդանիշներից մեկը՝ առաջին կին օդաչու և Աթաթուրքի հոգեգավակ Սաբիհա Գյոքչենը, իրականում հայուհի է:<sup>16</sup> Նա մեկն է Հայոց ցեղասպանության ժամանակ որբացած հայ երեխաներից, և նրա իսկական անունն է Խաթուն Սերիլջյան: Այս հոդվածն արտասովոր լայն արձագանք գտավ թուրքիայում. տարբեր մարդիկ, կազմակերպություններ, կառույցներ հանդես եկան հայտարարություններով: Հատկապես, կարևոր է առանձնացնել գլխավոր սպայակույտի խիստ կոշտ հայտարարությունը: Բայց, եթե փորձենք դիտարկել Սաբիհա Գյոքչենի հայ լինելու մասին հոդվածի տպագրվելուց հետո բարձրացված աղմուկի իրական ենթաշերտերը, ապա կտեսնենք, որ թուրքական խորհրդանիշներից մեկի՝ հայտնի օդաչուի իրական էթնիկ պատկանելության քողազերծումն ուղղակիորեն կապված է ժամանակակից թուրքական պետության անվտանգության հետ: Եվ ե-

թե պարզվում է, որ թուրքական գլխավոր խորհրդանիշներից մեկը՝ հերոս օդաչուն, իրենց պատկերացմամբ, թշնամի, «գյավուր» հայ է, ապա նրանց ինքնագիտակցության մեջ ինչ-որ բան, այնուամենայնիվ, կոտորվում է: Միլիոնավոր թուրքեր, ովքեր մեծացել են հայերի հանդեպ ատելության մթնոլորտում և որպես խորհրդանիշ ընդունել Սաքիհա Գյոքչենին, հիմա, վստահաբար, ապրում են հոգեբանական ճգնաժամ, քանզի պարզվում է, որ իրականում իրենց ազգային վեհության խորհրդանիշ անձը ծագումով հայ է:

Խոսելով իսլամացված և ծպտյալ հայերի թվաքանակի մասին՝ պետք է նշել, որ կան բազմաթիվ վարկածներ, որոնց համաձայն՝ այդ թիվը տատանվում է 80.000-ից 2 միլիոնի միջև: Ի դեպ, այս մասին արտահայտվել է նաև Հրանտ Դինքը: Նա իր վերջին հարցազրույցներից մեկում անդրադարձել է Թուրքիայում բնակվող իսլամացված հայերի հարցին և խոսել նաև նրանց թվաքանակի մասին. «Թուրքիոյ մէջ այսօր հազարաւորներ կան, որ քաջութիւն ունին հրապարակաւ արտայայտուելու, գիրքեր ու յօդուածներ գրելու, թէ իրենց պապերը հայ էին: Թուրքիոյ մէջ հիմա այս ուղղութեամբ շարժում կայ եւ ես ըսեմ, որ ապագայ հայ կեանքի ամենամեծ եւ ամենայուսալի աշխատանքներէն մէկը կրնայ դառնալ անիկա: Եթե Թուրքիան Եւրոմիութեան անդամ դառնայ օր մը, չեմ սխալիր, *եթէ հայութիւն առնուազն երկու միլիոն եւս շատնայ, Թուրքիոյ մէջ գոյութիւն ունեցող իսլամ հայերու թիւով* (ընդգծումը իմն է - Ռ.Մ.): Ինձի համար շատ կարեւոր հարց է այս հարցով աշխատիլ եւ գտնիլ այդ կորսուածները, ողջնցնել այդ մեռածները: Շատ կարեւոր է գտնել այդպիսի հայ մը եւ իրեն տալ իր հայութիւնը»:<sup>17</sup>

Ամփոփելով՝ նշենք, որ Թուրքիայի իսլամացված հայերի հարցը բազմաշերտ է, ինչն էլ իր հերթին պահանջում է համապատասխան մոտեցում. հակառակ պարագայում կարող են արվել ոչ ճշգրիտ եզրահանգումներ: Կրոնափոխ հայերի տարբեր շերտերի համահավասարեցումը, չարդարացված լավատեսական կամ, հակառակը, մերժողական մոտեցման որդեգրումը ոչ միայն սխալ է ու ոչ գի-

տական, այլև՝ անարդար: Չի կարելի վանել, օտարացնել նրանց, ովքեր ծանրագույն պայմաններում, թեև ոչ բացահայտ, բայց գոնե գաղտնի, ջանում են պահպանել հայկականության որոշ տարրեր: Կործանարար այս մոտեցման արդյունքը մենք արդեն տեսել ենք. իրոք, օտարացած բազմաթիվ նախկին հայեր, ցավոք, այսօր կորսված են մեզ համար:

Ավելորդ չէ նշել, որ տասնամյակներ շարունակ հայրենական գիտական շրջանակներում խոսվում է Թուրքիայում բնակվող ու-ծացման տարբեր մակարդակներում գտնվող հայերի խնդրի լուրջ ուսումնասիրության անհրաժեշտության մասին: Հարցի հետազոտման անհետաձգելիության կոչ է արվել տարբեր մասնագետների կողմից, բերվել են դրա հիմնավորումները: Իսլամացված հայերի հարցը, իրոք, կարելի է դասել հայագիտության ներկայիս ամենակարևոր խնդիրների շարքում, որը պահանջում է համապատասխան վերաբերմունք: Մյուս կողմից, տարածաշրջանում և, մասնավորապես, Թուրքիայում տեղի ունեցող տարբեր գործընթացների համատեքստում իսլամացված հայերի հարցը կարող է ձեռք բերել որոշակի քաղաքական նշանակություն: Պատահական չէ, որ այս խնդրով արդեն բավական երկար ժամանակ զբաղվում են եվրոպական հզոր տերությունները, և ըստ տարբեր աղբյուրների, օրինակ, Գերմանիան կրոնական (միսիոներական) և այլ կարգի կառույցների միջոցով հավաքած տեղեկությունների շնորհիվ արդեն ձեռքի տակ ունի Թուրքիայի արևելյան շրջանների էթնոժողովրդագրական ամփոփ պատկերը:

Միևնույն ժամանակ, իսլամացված հայերի խնդիրը շատ նուրբ թեմա է, որը պահանջում է խոր և համակողմանի ուսումնասիրություն, ինչն էլ իր հերթին թույլ կտա անելու համոզիչ և փաստարկված եզրահանգումներ:



**ՌՈՒՔԵՆ  
ՍԱՖՐԱՍՏՅԱՆ**

**ԹՈՒՐՔԻԱՅԻ  
ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅՈՑ  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ՃԱՆԱԶՍԱՆ ՈՒ  
ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ԴԵՍ  
ՆԵՐԿԱ ՓՈՒԼՈՒՄ  
ՆՈՐ ՄԻՏՈՒՄ**

Հայոց պահանջատիրության դեմ պայքարը տասնամյակներ շարունակ եղել և մնում է Թուրքիայի Հանրապետության կառավարող շրջանների կարևոր խնդիրներից մեկը՝ Հայկական հարցում պետական քաղաքականության մաս կազմելով: Այն ունեցել է մի շարք փուլեր ու նպատակներ, տարվել է տարբեր ուղղություններով և ձևերով, օգտագործվել են բազմաթիվ միջոցներ ու հնարքներ:

Ցավոք, հայրենական պատմաքաղաքագիտական միտքը դժկամորեն է անդրադարձել այդ խնդիրների համակողմանի ուսումնասիրմանը՝ հիմնականում սահմանափակվելով պատմագիտության ոլորտում թուրք հեղինակների կողմից տասնամյակների ընթացքում Հայոց ցեղասպանության փաստը մերժելու ապարդյուն ջանքերին հակադարձելով: Հայոց պահանջատիրության դեմ թուրքական քաղաքականության այլ միտումների, ինչպես նաև դրա բուն նպատակների և հիմնական տեսադրույթների համակող-

մանի ուսումնասիրությունն սպասում է իր հետազոտողներին: Անհրաժեշտ է նաև ընդգծել, որ նման ուսումնասիրությունների իրականացմանը խոչընդոտում է համապատասխան փաստավազրագրական և աղբյուրագիտական նյութի հասկանալի պատճառներով սակավաթիվ ու դժվարհասանելի լինելը:

Հայոց պահանջատիրության նկատմամբ Թուրքիայի քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման դեմ պայքարն է: Անդրադառնանք վերջին տարիներին այդ քաղաքականության մեջ ի հայտ եկած մի նոր միտումի քննությանը, որը պայմանականորեն անվանել ենք «միջազգային-իրավական»: Թուրքական քաղաքականության շրջանակներում այն սկզբունքորեն նոր երևույթ է Հայոց պահանջատիրության դեմ: Նրա էությունը հետևյալն է. միջազգային իրավունքի հնարավորություններն օգտագործելով՝ փորձել «ապացուցել», որ Հայոց ցեղասպանությունը չի համապատասխանում Ցեղասպանության մասին ՄԱԿ-ի 1948թ. կոնվենցիայի ընդունած ցեղասպանության չափորոշիչներին և այդպիսով կասեցնել նրա միջազգային ճանաչման գործընթացը: Այս մոտեցման նորությունն այն է, որ մի կողմից փորձ է արվում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման դեմ գործունեությունը պատմագիտական քննարկումների ու քաղաքական պայքարի հարթությունից տեղափոխել միջազգային իրավունքի ոլորտ, իսկ մյուս կողմից՝ հրաժարվել պասիվ-սպասողական դիրքորոշումից, որը ենթադրում է հայկական կողմի նախաձեռնություններին հակազդեցություն, և անցում «հարձակողական» գործողությունների: Հաշվի առնելով այն, որ հայկական կողմը նույնպես որոշակի նախապատրաստական քայլեր է ձեռնարկում հարցը միջազգային իրավական ատյաններ տեղափոխելու ուղղությամբ, վերը նշված թուրքական նոր մոտեցման առանձնահատկությունների բացահայտումը, բացի զուտ ճանաչողական հետաքրքրությունից, ունի կարևոր գործնական նշանակություն: Ընդգծենք նաև,



որ նպատակ չենք հետապնդում քննական վերլուծության ենթարկելու թուրքական առկա մոտեցումները, քանզի դա մեր միջազգային իրավագետների խնդիրն է: Մեր նպատակն է նրանց ուշադրությունը հրավիրել խնդրի գոյության և նրա որոշ առանձնահատկությունների վրա:

2000թ. աշնանը և 2001թ. ծնունդը թուրքիայի ռազմաքաղաքական վերնախավը, թերևս, առաջին անգամ քննարկեց պայքարի միջազգային-իրավական մեթոդներին դիմելու հնարավորությունները: Այդ շրջանում ԱՄՆ-ում ու Ֆրանսիայում աննախադեպ թափ էր ստացել Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը, ինչի արդյունքում այդ կարևոր դաշնակից երկրների հետ թուրքիայի միջպետական հարաբերությունները վտանգվել էին: Այս պայմաններում էր, որ Բյուլենթ Էջևիթի ղեկավարած կոալիցիոն կառավարությունը «հայերի պնդումների» դեմ պայքարի միջոցների քննարկում նախաձեռնեց երկրի կառավարման համակարգի կարևորագույն օղակի՝ Ազգային անվտանգության խորհրդի (ԱԱԽ) մի շարք նիստերում: Առաջին քննարկումը տեղի ունեցավ 2000թ. սեպտեմբերի 29-ին: Համաձայն պաշտոնական հաղորդագրության՝ ԱԱԽ-ի այդ նիստի ժամանակ «ցավով են ընդունվել, այսպես կոչված, Հայոց ցեղասպանության մասին պնդումների հետ առնչվող զարգացումները», և որոշվել է դրանց դեմ «փուլ առ փուլ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել»: <sup>1</sup> Որոշ լրագրեր ճշտեցին, որ կախված դեպքերի զարգացումից, այդ միջոցները կարող են լինել ավելի «ներգործուն»: <sup>2</sup> Նմանատիպ խնդիրներ քննարկվեցին նաև ԱԱԽ-ի 2000թ. հոկտեմբերի 27-ի և 2001թ. հունվարի 22-ի նիստերում: Մասնավորապես, հոկտեմբերի 27-ի նիստի ընթացքում արտաքին գործերի նախարար Իսմայիլ Ջենը ներկայացրել էր գործողությունների ծրագիր, որը ենթադրում էր դիվանագիտական, քաղաքական ու գիտական բնույթի գործողությունների իրականացում: <sup>3</sup> Հետաքրքրական է, որ պաշտոնաթող դիվանագետ Գյունդուզ Աքթանը, որը թուրքիայում համարվում է

Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ պայքարի «միջազգային-իրավական» ուղղության «հոգևոր հայրը», ԱԱԽ-ի հոկտեմբերի 27-ի նիստի հաջորդ օրը հանդես եկավ հողվածով, որտեղ առաջին անգամ կոչ արեց Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ պայքարում հենվել միջազգային իրավական փաստաթղթերի, մասնավորապես, Ցեղասպանության մասին ՄԱԿ-ի 1948թ. կոնվենցիայի վրա: <sup>4</sup> Արդեն հաջորդ տարի՝ 2001թ., նրա հեղինակությամբ լույս տեսավ «Հայկական հարցը և միջազգային իրավունքը» հոդվածը: Հողվածում փորձ էր արվում «հիմնավորել», որ 1915թ. իրադարձությունները միջազգային իրավունքի տեսակետից ցեղասպանություն չեն, քանի որ դրանց նկատմամբ չի կարելի կիրառել Ցեղասպանության մասին ՄԱԿ-ի 1948թ. կոնվենցիայի՝ ցեղասպանությունը որպես հանցագործություն որակող դրույթները: <sup>5</sup> 2002թ. Գ. Աքթանն սկսեց համապատասխան հայտարարություններով հանդես գալ մամուլում: <sup>6</sup>

Ի կատարումն ԱԱԽ-ի այդ որոշումների, 2001թ. մայիսին երկրի վարչապետի կարգադրությամբ ստեղծվեց հատուկ մարմին, որի վրա դրվեց Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի դեմ մղվող պայքարը ղեկավարելու ու համակարգելու խնդիրը: <sup>7</sup> Այն անվանվեց «Ցեղասպանության վերաբերյալ անհիմն պնդումների դեմ պայքարը համակարգող խորհուրդ» (ՑՎԱՊԴՊՀԽ): Դրա նախագահ նշանակվեց փոխվարչապետը, <sup>8</sup> իսկ կազմի մեջ ներգրավվեցին տարբեր պետական գերատեսչությունների բարձրաստիճան ներկայացուցիչներ: Նրանց թվում էր նաև արդարադատության առաջին փոխնախարարը: ՑՎԱՊԴՊՀԽ-ի առաջին նիստը, ի թիվս աշխատանքային այլ խմբերի, որոշեց ստեղծել իրավական հարցերի ուսումնասիրման աշխատանքային խումբ, որի վրա դրվեց ցեղասպանության հետ առնչվող իրավական, այդ թվում՝ միջազգային-իրավական խնդիրների մանրակրկիտ հետազոտման պարտականությունը: <sup>9</sup> Այդ խմբի գործունեությունը ղեկավարում էր արդարադատության նախարարության ներկայացուցիչը:

Տարիներ շարունակ ՑՎԱՊԴՊՅԻՒ-ի և նրա ստեղծած աշխատանքային խմբերի գործունեությունը հիմնականում ընթանում էր փակ դռների հետևում, որի պատճառով հնարավոր չէ պարզաբանել, թե իրավական բնույթի ինչ խնդիրներ էին գտնվում նրա քննարկումների կենտրոնում:<sup>10</sup> 2006թ. նոյեմբերին այն ժամանակվա արտաքին գործերի նախարար և փոխվարչապետ Ա. Գյուլը, որն ի պաշտոնե գլխավորում էր ՑՎԱՊԴՊՅԻՒ-ը, հանդես եկավ հայտարարություններով: Դրանք փաստեցին, որ «մանրակրկիտ» աշխատանք է կատարվել «Հայոց ցեղասպանության վերաբերյալ անհիմն պնդումների հարցը» միջազգային ատյաններ տեղափոխելու հնարավորությունների ուսումնասիրման ուղղությամբ:<sup>11</sup> Ելույթ ունենալով խորհրդարանում՝ նա նշեց, որ այդ աշխատանքների մեջ ներգրավված են պաշտոնաթող դիվանագետներ, ինչպես նաև թուրք և օտարազգի վստահելի իրավագետներ:<sup>12</sup> Նշվեց նաև, որ Թուրքիայի՝ այդ նոր մոտեցման որդեգրումը դրական են գնահատում նաև մի շարք այլ պետություններ:<sup>13</sup>

Ա. Գյուլի հայտարարությունը գոհունակությամբ ընդունեցին մի շարք քաղաքական ուժեր և առանձին գործիչներ: Երկրի հիմնական ընդդիմադիր ուժը՝ Ժողովրդահանրապետական կուսակցությունը, նույնիսկ պնդեց, թե այդ գաղափարի իրական հեղինակն ինքն է:<sup>14</sup> Իսկ Գյունդյուզ Աթթանը Գյուլի հայտարարությունը որակեց որպես «չափազանց քաջ»:<sup>15</sup>

Հարցը քննվեց ՑՎԱՊԴՊՅԻՒ-ի հերթական նիստում, որը տեղի ունեցավ 2006թ. դեկտեմբերի 26-ին Ա. Գյուլի նախագահությամբ: Քննարկվեց երեք տարբերակ. դիմել կամ եվրոպայի մարդու իրավունքների դատարան՝ Հայոց ցեղասպանության մասին Ֆրանսիայի խորհրդարանի հայտնի որոշումը բողոքարկելու նպատակով, կամ Հաագայի արդարադատության ատյանին, կամ էլ՝ Հաագայի միջազգային իրավարար մշտական ատյանին: Նախապատվությունը տրվեց վերջին տարբերակին, սակայն նախքան այդ մասին վերջնական որոշում ընդունելը, նախընտրելի համարվեց դի-

մել թուրք և օտարազգի իրավագետների խորհրդատվությանը:<sup>16</sup> Այն մասին, թե այդ խնդրի վերաբերյալ կայացվել է վերջնական որոշում, թե ոչ՝ հայտնի չէ:

Թուրքական մամուլի կցկտուր հաղորդումները հնարավորություն չեն տալիս ավելի հստակ պարզելու ՑՎԱՊԴՊՅԻՒ-ի ընդունած որոշումների մանրամասները: Ամեն դեպքում, հայտնի դարձած փաստերի հիման վրա, կարելի է եզրակացնել, որ Թուրքիայում կատարվել ու ընթանում է լուրջ նախապատրաստական աշխատանք՝ ուղղված Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հզոր գործընթացի կասեցմանը՝ այդ նպատակով դիմելով միջազգային-իրավական բնույթի քայլերի: Այս հանգամանքը մեզ պարտադրում է ոչ միայն համակողմանիորեն ուսումնասիրել Թուրքիայի պաշտոնական քաղաքականության այս նոր միտումը, այլև ձեռնարկել գործնական քայլեր՝ անհրաժեշտության դեպքում դրան համարժեք հակահարված տալու և մեր արդարացի իրավունքները միջազգային ատյաններում հաջողությամբ պաշտպանելու նպատակով:



**Վահան  
ՄԵԼԻՔՅԱՆ**

**ՀԱՅԿԱԿԱՆ  
ՀԱՐՅԸ ԵՎ ՀԱՅ  
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ  
ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ  
ԽՆԴՐԻ ՓՈՒԼԵՐԸ**

Համաշխարհային պատմության ընթացքում տարբեր ժողովուրդներ դրսևորել են ինքնակազմակերպման յուրահատուկ ձևեր ու եղանակներ: Ինքնիշխան հասարակության, անկախ պետականության ձևավորման կամ վերականգնման ճանապարհին միշտ չէ, որ ազատագրական պայքարը հանդես է եկել որպես առաջնային գործոն: Հնում գերիշխել են տնտեսական-առևտրային, երբեմն նաև հունքային-ռեսուրսային արժեքային համակարգերը: Հաճախ վճռորոշ դեր են կատարել հասարակության համեմատաբար արդար՝ համայնքային, հետո՝ էլ՝ պոլիսային կառուցվածքները, քաղաքակրթական, հոգևոր-կրոնական արժեքները և այլն: Իսրայել պետության վերաստեղծումը, օրինակ, հնարավոր դարձավ նաև հրեական Հոլոքոսթի ճանաչման արդյունքում:

Հայկական քաղաքակրթության և հայ ժողովրդի պատմության եական առանձնահատկությունն այն է, որ հազարամյակների ընթացքում, կապված լինելով ազգի և քաղաքակրթության աշխարհագրական միջավայրի հետ և այդ տարածքում ձևավորելով հզոր պետական կառույցներ, հասարակության ժառանգական պատմա-

կան հիշողությունը բարենպաստ իրավիճակում փորձում է վերագտնել կորստի միջուկը: Դարերի ընթացքում առավելագույնին հասնելու ձգտումը վերածվել է նվազագույնով բավարարվելու գործընթացի, հիմնականում, ազգային-ազատագրական պայքարի ճանապարհով կամ երրորդ ուժի աջակցության միջոցով:

1. 1555 և 1639թթ. տեղի ունեցած երկու բաժանումներից հետո Հայաստանը, վարչական առումով, դարձավ Օսմանյան կայսրությանը և Սեֆյան Պարսկաստանին պատկանող տարածք. այդ ժամանակից սկսած՝ արմատավորվեցին Արևմտյան և Արևելյան Հայաստան հասկացությունները: Հայ իրականության համար այս դարաշրջանը բեկումնային է այն առումով, որ սկսած XIV դարից՝ երեք-հարյուրամյա անկումային փուլը հասավ իր եզրակետին՝ կյանքի բոլոր բնագավառների և մարդկային ռեսուրսների քայքայման ու դիմազրկման տեսանկյունից: Հազարամյակների ուղին հայ ժողովրդի համար այդ պահին, թերևս, կարող էր ընդհատվել: Պատմական այս ժամանակաշրջանից է սկսվում այն անօգնական վիճակի խորացումը, ինչն օգտագործվեց հատկապես Օսմանյան կայսրության կողմից. իրականացվեց նախացեղասպանություն: Նախ՝ դեպի Արևմտյան Հայաստան կազմակերպվեց քրդական զանգվածային ներգաղթ՝ կայսրության ժողովրդագրական պատկերը հօգուտ մահմեդականների արմատապես փոխելու նպատակով, ապա և դեհիմեի (մանկահավաք) ու բազմաբնույթ հակահայ գործողությունների միջոցով Արևմտյան Հայաստանն սկսեց հայաթափվել: Որպես ազգային կառույց, հայկական էին մնացել միայն չորս կաթողիկոսությունները, որոնք նույնպես օգտագործվում էին հայությանը պառակտելու և եկեղեցի-ժողովուրդ միասնությունը թուլացնելու համար:

Ինչ վերաբերում է Շահ Աբասի կազմակերպած արտագաղթին, ապա հարկ է նշել, որ նրա իսկ հովանավորությամբ ստեղծված Նոր Ջուղայի հայկական համայնքը տնտեսական հզորության հենքի վրա դարձավ հայության նոր վերելքի և ինքնակազմակերպման խորհրդանիշ:

2. XVI-XVII դարերում սկիզբ առած հայ ազատագրական գա-

ղափարախոսությունը, անցնելով եվրոպական ու ռուսական տևական քաղաքական կողմնորոշումների փուլերը, Ռուսաստանի առաջավորասիական արտաքին քաղաքականության արդյունքում ի վերջո հանգեցրեց Արևելյան Հայաստանի միացմանը Ռուսաստանին: Պարսկաստանի տիրապետությունից արևելահայ հատվածի ազատագրումը, ի տարբերություն արևմտահայության, հայ ժողովրդի այս հատվածի համար ձևավորեց հարաբերական զարգացման պայմաններ և կայուն կարգավիճակ:

3. XIX դ. 50-60-ական թթ. հայ իրականության երկու հատվածներում ու գաղթօջախներում սոցիալ-քաղաքական արմատական տեղաշարժերը սկզբնավորեցին հայ հասարակական-քաղաքական դաշտը: Հանդես եկան հասարակական-քաղաքական երեք հոսանքներ, որոնք փորձեցին ի մի բերել մեր ժողովրդի բազմադարյան քաղաքական փորձը և ինքնակազմակերպման ուղիներ նախանշեցին: Դա, նախ և առաջ, պետականության բացակայության պայմաններում դրսևորվում էր հայության ազգային ինքնության պահպանման հարցադրմամբ, ապա և հավաքականության ու համազգային նպատակի շուրջ համախմբվելու արտահայտմամբ:

Արևմտահայերի սահմանադրական շարժումը հայության ներքին կյանքը կազմակերպելու համար առաջադրեց թուրքական պետության ներսում հայկական օրենսդիր և գործադիր մարմինների՝ Ազգային ժողովի ու Ազգային կենտրոնական վարչության ստեղծման գաղափարը: Ինքնակազմակերպման սկզբունք հռչակվեցին հայկական առևտրական կապիտալի և տնտեսության զարգացումը, ինչպես նաև գաղթօջախների տնտեսական համագործակցությունը:

4. 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքում բարձրացվեց Արևմտյան Հայաստանի բարենորոգումների խնդիրը, որն ավարտվեց Հայկական հարցի՝ որպես միջազգային դիվանագիտության առարկայի, առաջացմամբ: Կ.Պոլսի Հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը հրաժարվեց *միայն* թուրքական կառավարության միջոցով բարեփոխումների հասնելու արմատացած գա-

ղափարից և 1877թ. հոկտեմբերի 21-ի Ազգային ժողովի նիստում որոշեց Հայկական հարցի լուծումը վստահել Ռուսաստանին, ինչն էլ և Հայկական հարցի միջազգայնացման մեկնարկ հանդիսացավ:

Հայկական պահանջներում շեշտվում էր «Արարատյան մարզ» ձևակերպումը և դրա կցումը Մեծ Հայքին (Արևմտյան Հայաստան), ինչը 1919թ. Փարիզում դարձավ երկու հայկական պատվիրակությունների բանակցությունների խնդրո առարկան:

5. Բեռլինի վեհաժողովին հայկական պատվիրակությունները ներկայացրել էին երկու փաստաթուղթ. ա) Ն. Վարժապետյանի «Ծրագիրը» պահանջում էր Արևմտյան Հայաստանի ինքնավարություն էրզրումի, Վանի, Դիարբեքիի, Խարբերդի վիլայեթներում ներառյալ Ռիզե նավահանգիստը, բ) Պողոս Նուբար փաշայի ծրագիրը մերժում էր ինքնավարությունը և բավարարվում էր բարենորոգումների պահանջով: Նշվում էր Երևանի նահանգի օրինակը, որտեղ Ռուսաստանին միանալուց 30 տարի անց Արևելյան Հայաստանի հայ բնակչության թվաքանակը կրկնապատկվել էր: Նա ընդունում էր հայ ժողովրդի երկու հատվածների միջև պատմականորեն առաջացած տարբերությունները, շեշտում էր, որ բարենորոգումների խնդիրը կապվում է միայն արևմտահայերի հետ և Բ. Դռանը խորհուրդ էր տալիս հետևել Ռուսաստանի օրինակին ու արևմտահայերի համար բարվոք պայմաններ ստեղծել: Ի դեպ, Մ. Խրիմյանը հակված էր ընդունելու Պ. Նուբարի ծրագիրը:

6. Բալկանյան պատերազմները վերաբացեցին հայկական բարենորոգումների խնդիրը: 1912թ. հոկտեմբերին Թիֆլիսում գումարված Ռուսական կայսրության հայաշատ կենտրոնների ներկայացուցիչների համագումարն ընտրեց Ազգային բյուրո: Կ.Պոլսում նույնպես ստեղծվեց նման մարմին՝ Ապահովության հանձնաժողով: Այս երկու մարմինները տարանջատված, սակայն համատեղ զբաղվելու էին Հայկական հարցով: Եվրոպայում գործող հայկական ազգային պատվիրակության նախագահ նշանակվեց Պողոս Նուբարը: Վերջինս մտադիր էր Ռուսաստանի միջամտությունը չհահարկելու համատեքստում պատվիրակությունը ձևավորել միայն արևմտահայերից:

7. 1915թ. մարտի 1-2-ը Ս. Էջմիածնում հրավիրվեց «գաղթականական» համագումար, որի նպատակն էր Արևմտյան Հայաստանի փախստականների օգնության համար միավորել բոլոր հայկական կազմակերպություններն ու բարեգործական ընկերությունները: Համագումարը Գևորգ Ե Ամենայն Հայոց կաթողիկոսի պատվավոր նախագահությամբ ընդունեց գործողությունների համակարգված ծրագիր: Որոշվեց դիմել մեծ տերությունների միջնորդությանը՝ պատերազմի հասցրած վնասի մասին միջազգային օրենքը հայ գաղթականության հանդեպ նույնպես կիրառելու նպատակով: Դաշնակից երկրների ընդունած հռչակագրի համաձայն՝ առաջարկվեց տեղեկություններ հավաքել թուրքական բարբարոսությունների մասին, բացահայտել մեղսակիցներին: Վերջում համագումարը որոշեց կրկին համաժողովի հավաքվել Երևանում կամ Թիֆլիսում:

8. 1916թ. մայիսի 10-13-ը կայացավ Պետրոգրադի Հայկական համագումարը: Թերևս, դա հայկական առաջին համաժողովն էր, որը հնարավորություն ունեցավ բացահայտել հայկական խնդիրները և բարձրաձայնել դրանց մասին: Համագումարն ի հայտ բերեց փորձի պակասը, նախապատրաստական կազմակերպության անկատարությունը, նախագահության անօգնականությունը, մի խոսքով, այն ամենը, ինչով անխուսափելիորեն ուղեկցվում են հասարակական մեծ գործի առաջին քայլերը: Միաժամանակ, համագումարը բացահայտեց մեկ այլ՝ առավել կարևոր հանգամանք. հայկական կազմակերպությունները ներկայացնող 150 պատգամավորների խորաթափանց վերաբերմունքը քննարկվող հարցերի նկատմամբ: Առաջին կարևոր արդյունքը եղավ այն, որ ռուս հասարակայնությունը տեղեկացավ հայ ժողովրդի մեծագույն տառապանքների մասին, ինչպես Թուրքիայում, այնպես էլ Ռուսաստանում, ուր ապաստան էր գտել արևմտահայ գաղթականության մի զգալի հատվածը: Այնուհետև քայլեր ձեռնարկվեցին հայանպաստ գործի միավորման համար, որոշվեց ձևավորել կենտրոնական համակարգող մարմին:

Հայկական համաժողովի ամենակարևոր նվաճումն այն էր, որ

դրա գումարման ընթացքում հայկական հասարակությանը բնորոշ կուսակցական տարածայնություններ գրեթե չառաջացան: Բոլորը լծված էին մեկ ընդհանուր գործի և գիտակցում էին, որ տվյալ պարագայում կուսակցական հակամարտությունը միայն խոչընդոտ կարող է դառնալ և ոչ էական տարածայնությունները կարող են անդառնալիորեն վարկաբեկել բոլորի համար թանկ նվաճումը: Մեծանուն հայագետ Ալեքսեյ Զիվելեգովի կարծիքով՝ «համատեղ աշխատանքը կայացավ. հարկավոր է ավելի վճռական քայլ՝ դեպի այդ ուղին: Այդ է պահանջում Հայաստանի շահը»:<sup>1</sup>

Պետրոգրադի Հայկական առաջին համագումարը կարևորվում է կազմակերպչական հարցադրումներով: Համագումարում որոշվեց ընտրել 9 հոգուց բաղկացած հանձնաժողով՝ Հայկական համագումարների կենտրոնական կոմիտե ստեղծելու համար: Վերջինս ինքնալրացման (կոոպտացիայի) սկզբունքով, ծայրի իրավունքով պետք է հրավիրեր արտասահմանյան ազգային կազմակերպությունների ներկայացուցիչների: Հայկական համագումարների կենտրոնական կոմիտեն ղեկավարվելու էր իր կանոնադրությամբ: Նաև «կոչ էր արվում համայն հայությանը, գիտակցելով ռուսի լրջությունը՝ միանալ ընդհանուր գործին և ազգային դատի լուծման խնդրին»:<sup>2</sup>

9. 1916թ. դեկտեմբերին Բաքվում հրապարակվում է «Հայերի ինքնօգնության կազմակերպումը» փաստաթուղթը, որն ամփոփելով համաշխարհային պատերազմի երկու տարիների արդյունքները և կանխատեսելով Ռուսաստանում հասունացող հեղափոխությունը՝ առաջադրում էր խնդիրներ և ուղիներ՝ դարակազմիկ մեծ ցնցումներին պատրաստ լինելու ուղղությամբ:

10. 1917 և 1919թթ. Երևանում հրավիրվեցին Արևմտահայ երկու համագումարները: Երկու խորհրդաժողովներն էլ Առաջին աշխարհամարտի, Մեծ եղեռնի, Հայկական հարցի նոր դրսևորումների օրինաչափ հետևանքն էին: Առաջին համագումարը հրավիրվեց Փետրվարյան հեղափոխությունից, իսկ երկրորդը՝ Հայաստանի Հանրապետության առաջացումից հետո:

1916թ. ապրիլին հայկական ազգային-դեմոկրատական ավանդական կուսակցությունների գործիչները, հետևելով Քևորգ Ե կաթողիկոսի և Պողոս Նուբարի միավորիչ նախաձեռնությանը, որոշեցին հրավիրել «Արևմտահայ մտավորականության և այլ հասարակական գործիչների համագումար»: Որպես ելակետային սկզբունք՝ ընդունվեց հայկական բոլոր կուսակցությունների հավասար մասնակցությունը: Որոշվեց Հայկական հարցը՝ «արտաքին գործը», հանձնել Պողոս Նուբարի Ազգային պատվիրակության, իսկ «ներքին գործը»՝ Անդրկովկասի ազգային-տարածքային խնդիրները, արևելահայության և կովկասահայության ներկայացուցչության իրավասությանը:

Արևմտահայերի առաջին համագումարը կայացավ Երևանում, 1917թ. մայիսի 2-11-ը: Այն ընտրեց Արևմտահայ Ազգային խորհուրդ և Ազգային ժողով: Համագումարի կենտրոնական որոշումներից մեկով Հայկական հարցի լուծումը վստահվում էր Եվրոպայում գործող հայկական պատվիրակությանը, որի կազմը պետք է համալրվեր արևմտահայերով: Առաջին համագումարում գլխավոր հակասությունների պատճառ դարձավ այն հարցը, թե արդյոք համագումարն իրավասո՞ւ է իրեն համարելու Արևմտյան Հայաստանի բոլոր հայերի կամքի և նպատակների արտահայտիչը:

Համագումարը բացահայտեց արևմտահայ և արևելահայ խորագող առձակատումը, ինչը դրսևորվեց Արևմտահայ ազգային խորհրդի ստեղծումով և այնտեղ ՀՀԴ գերակշռությամբ: Պարզ է, որ հայ իրականության մեջ, մասնավորապես ցարիզմի անկումից հետո, դաշնակցության հեղինակությունն ու ազդեցությունն օրինաչափ էր: Սակայն մյուս կողմից, վերջինիս հզորությունն առարկայորեն մեկուսացնում էր մյուս ազգային կազմակերպություններին՝ նրանց վերածելով անհաշտ հակառակորդների: Արտակ Դարբինյանն իր անհանգստությունն էր հայտնում Արամ Մանուկյանին՝ Անդրանիկի այն համոզման առթիվ, թե «կովկասահայ դաշնակցականները պիտի հակառակին Տաճկահայերու որևէ ձեռնարկին, եթե իրենք ղեկավարողի դերին մեջ չգտնուին»:<sup>3</sup> Ուշագրավ է, որ Արամը նույնպես հակված էր այն մտքին, թե կովկա-

սահայ դաշնակցականները չպետք է միջամտեն փախստականների գործերին, ավելին՝ նա գտնում էր, որ արևմտահայ դաշնակցականները նույնպես ուզում են անկախ մնալ կովկասահայ գործընկերներից:

Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Արևմտահայ ազգային խորհրդի իրավասությունները հիմնականում փոխանցվեցին Ա. Մանուկյանի նախաձեռնությամբ Երևանում ստեղծված Ազգային և Ապահովության խորհուրդներին, որոնք կազմակերպեցին և գլխավորեցին հայկական ինքնապաշտպանությունը, 1918թ. Մայիսյան հերոսամարտերը, այսպիսով նաև՝ Հայաստանի Հանրապետության առաջացման գործընթացը:

11. Արևմտահայերի երկրորդ համագումարը նախորդից առանձնանում էր նախ և առաջ նրանով, որ արտահայտում էր անկախություն հռչակած հայության մի հատվածի կամքը: Նոր համագումարը կազմկոմիտեի արևմտահայ գործիչների կողմից դիտվում էր որպես Հայաստանի Հանրապետության արևմտահայերի ներկայացուցչական, քաղաքական մարմին: Այդ հանգամանքը հաշվի առնելով՝ կազմկոմիտեն պատվիրակների ընտրությունն իրականացրեց ոչ կուսակցական, երկաստիճան սկզբունքով: 300-500 արևմտահայեր տեղերում պետք է ընտրեին շրջանային պատգամավորներ:

Արևմտահայերի երկրորդ համագումարը կայացավ 1919թ. փետրվարի 6-13-ը՝ Երևանում: Արևմտահայության վերաբերյալ մի շարք կենսական որոշումներին զուգահեռ, համագումարի կենտրոնական որոշումը վերաբերում էր «Ազատ և միացյալ Հայաստանի» անկախության հռչակմանը: «Քաղաքական բանաձևում» համագումարը վստահություն էր հայտնում «Ազատ և միացյալ Հայաստանի» առաջին վարչակազմին՝ Պողոս Նուբարի կաբինետին, հայտարարում էր միացյալ քաղաքական և պետական կամքի ու նպատակների միասնությունը, նորընտիր «Գործադիր մարմին» պարտավորեցնում էր հարաբերությունների մեջ մտնելու ՀՀ կառավարության հետ: Համագումարն ընտրեց նաև «Արարատյան հանրապետությունում բնակվող արևմտահայերի գործադիր մարմին»: Գործադիր

մարմինը պետք է ձևավորվեր պետական սկզբունքներով, նախագահը և անդամները հանդես էին գալու որպես նախարարներ:

1919թ. փետրվարի 25-ին ՀՀ կառավարությունը հավանություն տվեց այդ փաստաթղթին: ՀՀ Նախարարների խորհուրդը որոշում ընդունեց, ըստ որի Հայաստանի խորհրդի կազմը համալրվում էր արևմտահայ 12 ներկայացուցիչներով: 1878թ. Բեռլինի վեհաժողովից հետո Հայկական հարցն առաջին անգամ հանդես եկավ համահայկական քաղաքական ծրագրի տեսքով:

12. Խաղաղարար վեհաժողովի նախաշեմին 1919թ. Փարիզում հրավիրված հայկական Ազգային համագումարը նպատակ ուներ ի մի բերելու արևմտահայության և հայկական գաղթօջախների դիրքորոշումը միասնական ազգային պահանջների շուրջ և ընտրելու մի մարմին, որը կստանձներ դրա իրականացումը:

1918թ. հոկտեմբերի 15-ին և 1919թ. հունվարի 1-ին Պ. Նուբարը հանդես եկավ նամակ-շրջաբերականներով: Համագումարին մասնակցելու էին հրավիրվել 8 արևմտահայ, 8 արևելահայ (կովկասահայ) ու ևս 22 ներկայացուցիչ՝ 10 երկրներից: Նման ներկայացուցչության միջոցով Պ. Նուբարը ձգտում էր հրավիրել համահայկական համագումար, ստեղծել ավելի հեղինակավոր պատվիրակություն, կազմել հայկական պահանջների միասնական ծրագիր և ապա Փարիզում ձևավորել համահայկական կառավարություն:

Համագումարը բացվեց 1919թ. փետրվարի 24-ին, ունեցավ 43 նիստեր և փակվեց ապրիլի 22-ին: Մասնակից 38 պատգամավորների թվում էին Լևոն Շանթը, Միքայել Վարանդյանը, Գաբրիել Նորատունկյանը, Վահան Թեքեյանը, Արմեն Գարոն, Միհրան Տամատյանը, Վահան Փափազյանը, Հովհաննես Խան Մասեհյանը, Արշակ Չոպանյանը և ուրիշներ:

Ավ. Ահարոնյանը և Հ. Օհանջանյանը հրաժարվեցին ձայնի իրավունքով մասնակցությունից՝ նշելով, որ լիազորված են մասնակցելու միայն Հաշտության վեհաժողովին: Լիազորված կարգավիճակով արևելահայերի ներկայացուցիչների բացակայությունը

շատերին հնարավորություն չէր տալիս համագումարը համազգային կոչել: Այն հռչակվեց Ազգային և պետք է ներկայացներ արևմտահայությունն ու գաղթօջախները:

1919թ. ապրիլի 24-ին Ավ. Ահարոնյանը ՀՀ արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանին ուղղած նամակում հանրապետության հանդեպ արևմտահայ գործիչների, մասնավորապես Պ. Նուբարի վերաբերմունքը որակում էր որպես «վախի» արտահայտություն: Այդ «վախը» նախ բացատրվում էր նրանով, որ «Թուրքիոյ հայութիւնը կուլ կերթայ ռուսահայերին, քանի որ վերջիններս անելի ուժեղ են թուլ, տնտեսապես եւ իմացականութեամբ», այնուհետև այն հանգամանքով, որ ՀՀ-ը զուտ ընկերավարական է և իշխելու միտված, ապա և գլխավորը՝ Խորհրդային Ռուսաստանն ի վերջո հզորանալու և տիրանալու է Կովկասյան Հայաստանին, ուստիև ճիշտ չէ Արևմտյան Հայաստանը նրան միացնելը: Նախ՝ պետք է կազմակերպել Արևմտյան Հայաստանի պետությունը, որին և կմիանա կովկասահայ հանրապետությունը:<sup>4</sup>

Ռամկավարները չէին թերագնահատում նաև այն իրողությունը, որը բխում էր 1920թ. ապրիլին ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի հայտարարությունից: Վերջինս, ողջունելով Հայաստանի անկախությունը, նշում էր, որ ԱՄՆ-ի կառավարությունը վերջնական սահմանագծումը պատրաստվում է կատարել Ռուսաստանի հավանությանը և աշխատակցությանը: Այս մոտեցմամբ է, հիմնականում, բացատրվում «Միացյալ ազատ Հայաստանի» հռչակման նկատմամբ նրանց թերահավատությունը և խորհրդարանի կազմից դուրս գալը:

Արդյունքում՝ համագումարն Ազգային պատվիրակությանը հանձնարարեց Հայաստանի Հանրապետության կառավարության հետ լուծել Միացյալ կառավարության և խորհրդարան ձևավորելու հարցը: Վեհաժողովում Ազգային պատվիրակությունը ներկայացնելու էր արևմտահայերին, ՀՀ պատվիրակությունը՝ Հայաստանի Հանրապետությունը: Միաժամանակ, որոշվեց դրանք միավորել Ամբողջական Հայաստանի պատվիրակության մեջ:

1919թ. հոկտեմբերի կեսերին Ամբողջական Հայաստանի վարչա-

կազմի խնդրի լուծման համար երևան ժամանեց Ազգային պատվիրակության առաքելությունը՝ նախագահ Վ. Թեքեյանի գլխավորությամբ: Այս հարցը զուգահեռաբար քննարկում էր նաև ՀՀԴ 9-րդ ընդհանուր ժողովը: Պատվիրակությունը (Ն. Ստեփանյան՝ անկուսակցական, Ս. Հարությունյան՝ ՀԺԿ) մոտ մեկ ամիս բանակցեց ՀՀ կառավարության հետ և զիջումներ արեց Պ. Նուբարի հարցում՝ նրան թողնելով արտաքին գործերի նախարարի պաշտոնում: Սակայն այդ ամենն ապարդյուն էր: Ազգային պատվիրակության առաջարկները չընդունվեցին կառավարության ու դաշնակցության համագումարի կողմից:

1920թ. մարտի 25-ին կոալիցիոն կառավարություն ձևավորելու, համաձայնության եզրեր գտնելու փորձ արեց նաև Սամսոն Հարությունյանը՝ այս անգամ ներկայացնելով ոչ թե Փարիզի, այլ Թիֆլիսի կարծիքը: Սակայն պարզ դարձավ, որ ՀՀԴ-ն փոխել է իր վերաբերմունքը կոալիցիայի հանդեպ: Հակասություն էր առաջացել նաև Հայաստանի մանդատի հարցի շուրջ: Դաշնակցությունը դեմ էր այդ գաղափարին. «Ինչպես ստեղծինք այսօրուան անկախ Հայաստանը, այնպես ալ պիտի ստեղծենք միացեալ և անկախ Հայաստանը եւ պիտի պահպանենք»:<sup>5</sup>

Առջևում Սևրն էր և մեծ հիասթափությունը:

Մեր օրերում, Հայաստանի Հանրապետության անկախության վերականգնման ու Արցախի ազատագրման պատմական իրողության համատեքստում հայկական պահանջատիրությունը կրկին բախվում է հայության ինքնակազմակերպման խնդրի հետ, որը նոր, բազմաբնույթ լուծումներ է պահանջում: Այդ շարքում մեկնարկային դեր կարող է խաղալ Արևմտահայերի երրորդ համագումարի հրավիրումը և նրա միջոցով հայկական կարող ու լայնախոհ ուժերին համազգային գաղափարի շուրջ միավորելու հեռանկարը: Համաշխարհային հայությանը ուժացումից փրկելու, ինչու ոչ՝ նրան վերելքի նոր հանգրվանի հասցնելու գործընթացը նաև կարող է հայության և Հայաստանի Հանրապետության անվտանգության երաշխիք հանդիսանալ:

**Գագիկ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՅՈՒԹՅԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ**



**Տ**եղեկատվական գործունը արդի ժամանակաշրջանում որոշիչ դեր է ձեռք բերել անհատի, հանրության, պետության ու ազգի գործունեության գրեթե բոլոր ոլորտներում: Տեղեկատվության տիրապետումն է, որ հնարավոր է դարձնում հետևելու, ադեկվատ լինելու (համապատասխանելու) և արձագանքելու արագ փոփոխվող աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին: Այսօր տարաբնույթ տեղեկատվական գործողությունները, պատերազմները փոխադրվել են քաղաքական հարթություն և աշխարհաքաղաքականության, աշխարհատնտեսության և աշխարհագաղափարախոսության կարևորագույն գործիքներից մեկն են: Հայության կազմակերպման և անվտանգության տեսանկյունից՝ քաղաքական-տեղեկատվական այս նոր իրավիճակը պարունակում է և՛ մարտահրավերներ, և՛ նոր հնարավորություններ:



**Հայության տեղեկատվական անվտանգությունը.** Այսօր ազգերի, պետությունների ու քաղաքակրթությունների զարգացումը և մրցունակությունը միանշանակորեն պայմանավորված են ազգային անվտանգության (ԱԱ) վերաբերյալ նրանց պատկերացումների հայեցակարգային մակարդակով: Համաձայն փորձագիտական մոտեցումների՝ «ազգային անվտանգություն» հասկացությունը ներկայացնում է երեք բաղադրիչների՝ ռազմաքաղաքական անվտանգության, սոցիալ-տնտեսական անվտանգության և տեղեկատվական անվտանգության (SU) ամբողջություն: Այս ոլորտները փոխշաղկապված են, իսկ դրանցից յուրաքանչյուրն իր հերթին որոշակի, նույնպես կապակցված բաղադրիչների միասնություն է: Մասնավորապես՝ SU հասկացությունը ներառում է ոչ միայն տեխնիկական տեղեկատվական համակարգերի ապահովության խնդիրները, այլև այն ամենը, ինչ վերաբերում է քաղաքակրթական-մշակութային, հոգևոր-հոգեբանական, մտավոր-գիտելիքային և կազմակերպչական ոլորտներին: Կարելի է փաստել, որ SU հասկացությունը փոքր-ինչ ավելի անմիջականորեն, քան ԱԱ մնացյալ բաղադրիչները, կապված է մարդկային, հանրային և ազգային գործոնների հետ:

Ակնհայտ է, որ հայկական SU համակարգը պետք է ներառի ոչ միայն Հայաստանի (տեղեկատվական տեսանկյունից այս հասկացությունը ենթադրում է ԶԶ-ն, ԼՂԶ-ն և Ջավախքը), այլև ամբողջ Հայության տեղեկատվական խնդիրների համախումբը: Նշենք նաև, որ ԶԶ-ում ընդունված «Ազգային անվտանգության ռազմավարություն» փաստաթղթում փաստորեն ամրագրված են մեր ազգային անվտանգության երկու սուբյեկտները՝ Հայաստանը և Հայությունը:<sup>1</sup> Այսպիսով, Հայաստանի և Հայության SU ապահովման գործառույթները, բնականաբար, շաղկապված են և պետք է առնվազն հենված լինեն փոխլրացման, իսկ առավել ցանկալի է՝ սիներգետիկ սկզբունքի վրա:

Նկատենք նաև, որ Հայաստանի տեղեկատվական ոլորտի խնդիրներն այս կամ այն չափով հստակեցված են: Այսինքն՝ կարե-

լի է ենթադրել, որ փորձագիտորեն հիմնավորված գործադիր ու օրենսդրական որոշումներ ընդունելու դեպքում հնարավոր կլինի ձևավորել Հայաստանի SU արդյունավետ համակարգ և բարելավել տեղեկատվական առումով ոչ այնքան բարվոք իրավիճակը:<sup>2</sup> Համահայկական SU համակարգի ձևավորումը, անշուշտ, բարդ, բայց միանգամայն իրատեսական խնդիր է: Սակայն նախապես փորձենք խմբավորել տեղեկատվական ոլորտում Հայության հնարավորությունները և հիմնախնդիրները:

**Հայության հնարավորությունները և հիմնախնդիրները SU համատեքստում.** Հայության տեղեկատվական կազմակերպման տեսանկյունից առկա են հետևյալ հիմնարար նշանակության բարենպաստ գործոնները.

1. Հայրենիքի գաղափարը և ԶԶ ու ԼՂԶ առկայությունը,
2. հայկական ուրույն քաղաքակրթության գաղափարը,
3. ցեղասպանության հիշողությունը և Հայ դատի խնդիրը,
4. Ղարաբաղի հետ կապված ռազմաքաղաքական գործընթացները:

Այս վերջին երկու գործոններն այսօր վերածվել են գլոբալ քաղաքականության բաղադրիչի, ինչը Հայության համար նպաստավոր է տեղեկատվական ինտեգրման տեսանկյունից: Հայության SU համակարգի ձևավորման համար կարևորագույն դրական գործոն պետք է համարել տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացումը. այս ոլորտի հնարավորություններին մենք դեռ կանդորադառնանք: Որպես նպաստավոր միտում պետք է ընդունել նաև ազգային փոքրամասնությունների վերաբերյալ միջազգային և հատկապես եվրոպական կոնվենցիաների ընդունու-

մը. դրանք կարող են նպաստել, որպեսզի հայկական համայնքները տվյալ երկրի օրենսդրության շրջանակներում բարելավեն ազգային տեղեկատվական ոլորտը:

Միևնույն ժամանակ, Հայության *SU* համակարգի ստեղծման գործում առկա են լուրջ հիմնախնդիրներ: Փորձենք դասակարգել այդ *անբարենպաստ գործոնները*:

1. Արտերկրի Հայությունը թվով առնվազն 2 անգամ շատ է, քան Հայաստանում բնակվողները, այսինքն՝ Հայության տեղեկատվական ապահովությունն ավելի մեծածավալ խնդիր է, քան Հայաստանինը:

2. Հայությունն ըստ լեզվակրոնական հատկանիշների բաժանված է տարբեր հատվածների: Այս հիմնախնդիրը վերաբերում է ոչ միայն Թուրքիայի իսլամացած հայերին, այլև տարբեր երկրներում բնակվող մեր բազմաթիվ այլալեզու և այլադավան հայրենակիցներին:

3. Աշխարհագրորեն Հայությունը սփռված է մոտ 100 երկրներում, որոնք պայմանականորեն կարող են դասակարգվել ըստ հետևյալ քաղաքակրթական գոտիների.<sup>3</sup>

\* Հայաստան (հայկական ուրույն քաղաքակրթության տարածաշրջան),

\* սլավոնական – ուղղափառ քաղաքակրթական գոտի (այստեղ պետք է կարևորել հատկապես հետխորհրդային տարածքը),

\* անգլո-ամերիկյան քաղաքակրթական դաշտ (այստեղ ընդգրկված են, այսպես կոչված, անգլիախոս երկրները՝ ԱՄՆ, Կանադա, Մեծ Բրիտանիա, Ավստրալիա, Նոր Զելանդիա և այլն),

\* եվրոպական քաղաքակրթության գոտի,

\* իսլամական քաղաքակրթության գոտի (այստեղ առաջին հերթին պետք է կարևորել Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում բնակվող հայերին),

\* լատինական քաղաքակրթական դաշտ (Հարավային Ամերիկայի երկրներ, Իսպանիա և այլն):

Վերոնշյալ քաղաքակրթությունները որոշակի ազդեցություն են գործել և գործում են Հայության տարբեր հատվածների աշխարհընկալման, հոգեկերտվածքի, մշակութային, քաղաքական և սոցիալ-տնտեսական կողմնորոշումների վրա, ինչը հաղորդակցական բնույթի լուրջ խնդիրներ է առաջացնում: Ակնհայտ է նաև, որ քաղաքակրթական խոշոր գոտիների ներսում հայությունը նույնպես միատարր չէ. փորձենք համեմատել, օրինակ, հետխորհրդային տարածքի Սիբիրում և Մոլդովայում բնակվող հայերի աշխարհընկալումը:

Սակայն, բացի վերոնշյալ համգամանքներից, Հայության տեղեկատվական կազմակերպման գործում առկա են այլաբնույթ հիմնախնդիրներ:

*Գլոբալ զարգացումները, տեղեկատվական պատերազմները և Հայությունը.* Ինչպես հայտնի է, վերջին ժամանակաշրջանում անկախ պետությունների թիվն աճում է, և այդ գործընթացը դեռ շարունակվելու է: Սակայն փորձագիտական կանխատեսումների համաձայն՝ գոյություն ունեցող ազգերի և պետությունների մի մասը ռազմավարական հեռանկարում հնարավոր է, որ կորցնի էթնիկ-քաղաքակրթական ինքնությունը և վերածվի համաշխարհային քաղաքականության ու տնտեսության կրավորական սուբյեկտի: Նման միտումներ ուրվագծվում են մասնավորապես եվրոպայում: Սա հրատապ խնդիր է հատկապես ոչ մեծաթիվ ազգերի և փոքր պետությունների համար:

Ազգային ինքնության հարցում կարևոր նշանակություն ունի տեղեկատվական գործոնը: Նկատենք, որ այսօր ազգային ինքնության համար սպառնալիք են տվյալ հանրության-ազգի-պետության կողմից չվերահսկվող գլոբալ տեղեկատվական հոսքերն ընդհանրապես: Միևնույն ժամանակ, ինքնության կորուստը կամ վերափոխումը/վերասեռումը կարող են հետևանք լինել, այսպես կոչված, *Nation Building* տեխնոլոգիաների տարրեր պարունակող նպատակաուղղված ազիտացիոն-պրոպագանդիստական տեղեկատվական հոսքե-

րի: Նման ուղղորդված, նպատակային-փիրախային տեղեկատվական գործողությունների համախուժված ստացել է «տեղեկատվական պատերազմ» անվանումը, որի հայեցակարգային եզրաբանությունը մշակել է ամերիկյան *ՌԵՆՂ* «ուղեղային կենտրոնը»: Տեղեկատվական պատերազմների նպատակն է, մասնավորապես, «համալիր ներգործել հակառակորդի ազգային համակարգի և նրա ղեկավարության վրա, ինչը կարող է հանգեցնել հակառակորդի կողմից տեղեկատվական պատերազմ իրագործողի համար նպաստավոր որոշումներ ընդունելուն»: Նկատենք, որ Հայաստանը և Հայությունն այսօր տեղեկատվական պատերազմի սուբյեկտ են: Որպես պարզագույն օրինակ ներկայացնենք հետևյալ իրողությունը:<sup>4</sup>

2007թ. փետրվարի 23-ին թուրքական ցանցային *Takvim.com.tr* ռեսուրսը տեղեկատվություն տարածեց այն մասին, որ ԱՄՆ-ի 100 առաջատար գործարարներ, այդ թվում՝ Բիլ Գեյթսը և Ուորեն Բաֆեթը, նամակ են հղել նախագահ Ջորջ Բուշին՝ հայերի ցեղասպանությունը չճանաչելու կոչով: Թուրքերեն գրված այդ նյութը *Turkish Daily News*-ը վերահրատարակեց նաև անգլերեն: Դրանից հետո աղբյուրանական լրատվամիջոցներն ակտիվ շրջանառության մեջ դրեցին այդ «նորությունը», ինչից հետո այն ներկայացվեց գրեթե ամբողջ հայկական մամուլի կողմից՝ առանց աղբյուրները ստուգելու: *Microsoft* ընկերության հայկական ներկայացուցչությունը հարկադրված էր հանդես գալ պաշտոնական հերքմամբ, սակայն գործն արդեն արված էր:

Նշենք, որ այսօր Հայության համար առավել մեծ վտանգ են ներկայացնում *երկրորդ սերնդի* տեղեկատվական պատերազմները, որոնք հետապնդում են, մասնավորապես, հետևյալ նպատակները.

\* բարոյագուրկ, ոչ հոգևոր մթնոլորտի և մշակութային ժառանգության նկատմամբ բացասական վերաբերմունքի ստեղծում,

\* անվստահության և կասկածամտության սերմանում, կուսակցությունների միջև քաղաքական հարաբերությունների սրում և փոխոչնչացման դրդում,

\* ազգի և պետության միջազգային հեղինակազրկում, այլոց

հետ դրանց համագործակցության խաթարում,

\* քաղաքական, տնտեսական, պաշտպանական և այլ ոլորտներում պետության և ազգի կենսականորեն կարևոր շահերի վնասում:

Ինչպես տեսնում ենք, երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմներում առավել կարևորվում են հոգևոր-գաղափարական բնույթի գործոնները:<sup>5</sup> Այս առումով տեղին է նշել, որ վերոհիշյալ դրույթներն արտացոլվել են ներկայիս, այսպես կոչված, «գունավոր» հեղափոխություններում, ինչին մենք ականատես եղանք 2008թ. ՀՀ նախագահական ընտրությունների զարգացումներում: Կարելի է պնդել, որ տեղի ունեցածը նոր սերնդի տեղեկատվական պատերազմների դասական նմուշ է, երբ ներազդող կողմն իր առջև դրված խնդիրները լուծում է, մասնավորապես, անվստահություն և անհանդուրժողականություն սերմանելով Հայության տարբեր հատվածների միջև:<sup>6</sup> Այնուհայտ է, որ տեղեկատվական պատերազմներին դիմակայելու, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նախահարձակ լինելու համար, անհրաժեշտ են որոշակի տեղեկատվական ռեսուրսներ: Փորձենք գնահատել այդ ռեսուրսները Հայության կազմակերպման և *SU* տեսանկյուններից:

*Հայության ռեսուրսները.* Նկատենք, որ վերոնշյալ ազգային ռեսուրսների համակարգումը և դրանց գնահատումն ազգային ու, մասնավորապես, տեղեկատվական անվտանգության համակարգի կարևորագույն գործառնություններից են: Այդ իսկ պատճառով, առանց խնդիրը համապարփակ դիտարկելու հավակնությունների, համառոտակի և սխեմատիկորեն ներկայացնենք Հայության անվտանգության համար մեր կարծիքով անհրաժեշտ ռազմավարական ռեսուրսները և փորձ կատարենք գնահատել դրանք *SU* տեսանկյունից.

1. քաղաքակրթական կամ այլ խոսքով՝ ազգային, հոգևոր և մշակութային ոլորտին պատկանող ռեսուրսներ,
2. տեխնոլոգիական. այս եզրի տակ ենթադրում ենք մարդկային, մտավոր-ստեղծագործական, գիտատեխ-

նիկական և զուտ տեղեկատվական-լրատվական ռեսուրսները,

3. նյութական կամ արտադրական-առևտրային, ֆինանսական և այլ ձեռներեցային բնույթի կարողություններ,

4. կազմակերպչական, այսինքն՝ ինքնակազմակերպվելու կարողություններ, կենսունակ գործունեության համար անհրաժեշտ կառույցներ (այդ թվում՝ պետություն և համայնք, քաղաքական, հասարակական, տնտեսական ինստիտուցիոնալ բնույթի կազմակերպություններ ու այլ ձևաչափեր) ձևավորելու, ինչպես նաև նշված կառույցների միջոցով ազգային ուղղվածությամբ գործառույթներ և ծրագրեր իրագործելու կարողությունը:

Համառոտակի գնահատենք վերոնշյալ ռեսուրսները Հայության պարագայում.

\* Հայությունը միանշանակորեն տիրապետում է *քաղաքակրթական ռեսուրսների* և իրավամբ ունի ուրույն քաղաքակրթության կարգավիճակ,<sup>7</sup>

\* *տեխնոլոգիական ռեսուրսները* գրեթե բավարար են, սակայն պետք է հաշվի առնել, որ.

\* համեմատաբար սակավ են և հաշվառված չեն Հայության մարդկային ռեսուրսները (9-ից մինչև 12 մլն՝ ըստ տարբեր գնահատականների),<sup>8</sup>

\* համեմատաբար մեծ չեն, ինչպես նաև հաշվառված և համակարգված չեն մտավոր-ստեղծագործական<sup>9</sup> և զուտ տեղեկատվական ռեսուրսները (մոտ 2 – 5 հազար «հայկական» կայք ինտերնետում,<sup>10</sup> ուր շարունակաբար նորացվող կայքերի թիվը հասնում է 110 մլն-ի),

\* կարծես թե բավարար են, սակայն նույնպես հաշվառված չեն նյութական ռեսուրսները (հայկական կապիտալը աշխարհում, դատելով ՋԼՄ-ների հրապարակումներից, կազմում է առնվազն մի

քանի հարյուր միլիարդ դոլար):

\* համաձայն դիտարկումների արդյունքների՝ թերևս միանշանակ բավարար չեն կազմակերպչական ռեսուրսները: Հայությունը, ըստ մեզ, որոշակի խնդիրներ ունի մեներջմենթի ոլորտում (բավական է նշել, որ առ այսօր բացակայում է Հայության կազմակերպման հայեցակարգը):

Ինչպես տեսնում ենք, կենսունակության և մրցակցության համար անհրաժեշտ ռեսուրսների առումով Հայաստանը և Հայությունը յուրօրինակ կարգավիճակ ունեն: Տպավորությունն այնպիսին է, որ տիրապետելով կարծես թե որոշակի և անհրաժեշտ քաղաքակրթական, տեխնոլոգիական ու նյութական ռեսուրսների՝ Հայության կարգավիճակը գլոբալ աշխարհում կարող էր ավելի բարձր լինել, իսկ իրավիճակը՝ ավելի բարվոք: *Նման իրավիճակի պատճառը, մեր համոզմամբ, պետք է փնտրել կազմակերպչական ռեսուրսների հարթությունում: Հայտնի է նաև, որ թերացումն այդ բնագավառում կարող է լինիթավորել, սահմանափակել մնացած ոլորտների գործառույթների արդյունավետությունը:*

Թերևս, չարժե մանրամասն ներկայացնել կազմակերպչական գործոնի կարևորությունը: Հայտնի են բազմաթիվ փաստեր, երբ բարձր կազմակերպվածությունն այլ ռեսուրսների սակավաթիվ լինելու պարագայում հանգեցրել է լուրջ հաջողությունների և, հակառակը, դրա բացակայության հետևանքով այլ բնույթի հսկայական ռեսուրսների տիրապետողները միայն անհաջողություններ են արձանագրել: Հայությունը, անշուշտ, զուրկ չէ կազմակերպչական ունակություններից. եթե դրանք չլինեին, ապա մենք հազարամյակների պատմություն չէինք ունենա: Հիշատակենք թեկուզ մեր հաղթանակը Ղարաբաղյան հակամարտությունում: Համաձայն փորձագետների՝ դա տեղի ունեցավ, առաջին հերթին, կազմակերպչական-տեխնոլոգիական բնույթի առավելությունների շնորհիվ:

Սակայն տպավորությունն այնպիսին է, որ ոչ էքստրեմալ պայմաններում Հայությունը երբեմն ցուցաբերում է որոշակի անհոգություն, ինչը բացասական ազդեցություն է թողնում, մասնավորապես,

նրա տեղեկատվական կազմակերպման գործընթացների վրա:

Սակայն այս հիմնախնդրի լուծումն առաջին հերթին պահանջում է հստակեցնել և հնարավորինս համակարգել Հայության *ՏԱ* կազմակերպման խնդիրները, և միայն դրանից հետո հնարավոր կլինի մտածել այդ նպատակներին հասնելու ուղիների մասին:

*Հայության տեղեկատվական ոլորտի կազմակերպման խնդիրները*. Մեր պատկերացմամբ՝ այս ոլորտի բազմաթիվ խնդիրներից պետք է առանձնացնել հետևյալները.

1. Հայության տեղեկատվական ռեսուրսների գնահատումը և նորերի ձևավորումը, դրանց արդյունավետ ու անվտանգ գործունեության համակարգի մշակումը,
2. Հայության տեղեկատվական իրազեկման ապահովումը Հայաստանի և Հայության վերաբերյալ,
3. Հայության ազգային շահերից բխող խնդիրներ.

\* ներհայկական և արտաքին քարոզչության/հակաքարոզչության հայեցակարգային ու տեխնոլոգիական մշակումը և գործնական իրականացումը,

\* մեր ազգային շահերին համապատասխանող և Հայաստանի վերաբերյալ պատկերացումներին ներդաշնակ Հայության իմիջի մշակումը, վերջինիս, որպես գիտակցության բաղադրամաս, ներմուծումը Հայության ու այլ հանրությունների գիտակցության մեջ,

\* անհրաժեշտ տեղեկատվական շտեմարանների ձևավորումը,

4. Ժամանակակից տեղեկատվական քաղաքականության տարրերի (հանրային քաղաքականություն, *ճողաքաղաքականություն*, մեդիաքաղաքականություն, մորթյալ քաղաքականություն) կիրառումը Հայության պահանջատիրական-քաղաքական, ինչպես նաև տնտեսական, մշակութային և այլ ոլորտների խնդիրների լուծման գործում,

5. ուսումնական, գիտական, քաղաքական և այլ բնույթի համահայկական ծրագրերի իրականացումը,

6. համահայկական ցանցակենտրոն կազմակերպչական համակարգի հայեցակարգային մշակումը և դրա միջոցով Հայության միասնական տեղեկատվական դաշտի ձևավորումը:

Վերջին կետը պետք է ընդունել որպես ռազմավարական գերնպատակ: Արդի աշխարհում որպես կազմակերպման բարձրագույն ձև է ընդունվում, այսպես կոչված, *ցանցակենտրոն* կազմակերպչական ձևը, որում համակարգի տարրերը, լինելով ցրված, սակայն ունենալով *ինքնուրույնության* բարձր աստիճան և գործունեության լայն հնարավորություններ, գտնվում են *միասնական տեղեկատվական դաշտում՝ ցանցում*, ունեն միասնական ղեկավարություն և նպատակներ:<sup>11</sup> Հարկ է նշել, որ կազմակերպման *ցանցակենտրոն* համակարգն ընդունված է ԱՄՆ-ի և այլ տերությունների կողմից՝ որպես իրենց զինված ուժերի ղեկավարման կոնցեպտ: Ցանցակենտրոն ձևաչափն ունի մեծ կայունություն. համակարգի բաղադրիչներից մեկի շարքից դուրս գալու դեպքում մնացածներն *ինքնավարության* բարձր աստիճանի շնորհիվ կարողանում են արդյունավետ շարունակել իրենց գործունեությունը:

Տեղեկատվական արդի դարաշրջանն անգամ ոչ մեծ ռեսուրսներ տիրապետողներին հնարավորություն է տալիս ձևավորել ցանցային համակարգեր: Ցանցակենտրոն ռազմավարության կիրառումը Հայության կողմից կարող է խիստ արդյունավետ լինել և առանձնահատուկ նշանակություն ունենալ համազգային նախագծեր իրականացնելու պարագայում: Հատկանշական է, որ որոշ փորձագետների կարծիքով՝ ցանցային նման աշխատանքի արդյունքում կարող է ձևավորվել կոլեկտիվ-թիմային գերինտելեկտ,<sup>12</sup> ինչը հնարավորություն է տալիս լուծելու առանձին անհատներին անհասու գերդժվար խնդիրներ: Մասնավորապես, հայկական ցանցակենտրոն հա-

մակարգը կարող է պահպանել իր կենսունակությունը և կայունությունը նույնիսկ կառավարման կենտրոնի վերացման դեպքում, քանի որ համակարգի մնացյալ տարրերը կշարունակեն իրենց գործունեությունը՝ ելնելով այն ռազմավարական-գաղափարախոսական դրույթներից, որոնք դրված են կառավարման հենքում:

Բնորոշ է, որ որոշ հետազոտողների կարծիքով ապագայի գլոբալ հասարակարգը ներկայացնելու է ցանցային կառույցների մի համախումբ:<sup>13</sup> Այս ամենի առիթով պետք է շեշտել, որ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն ընդհանրապես նոր հնարավորություններ է ընծեռում Հայության կազմակերպչական ռեսուրսների բարելավման համատեքստում:

*Տեղեկատվական քաղաքականության որոշ մեթոդների շուրջ.* Գլոբալացվող աշխարհում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և տարածման հետևանքով քաղաքականությունում սկսել են կարևոր դեր ստանալ ոչ միայն պետական կառույցները, այլև առանձին կազմակերպություններ և անգամ անհատներ: Նման բնույթի տեղեկատվական քաղաքականությունն իրականացվում է, մասնավորապես, հետևյալ մեթոդներով:<sup>14</sup>

\* *Կիրենքաղաքականություն.* Համաձայն եզրի հեղինակ Դևիդ Ռոտկոպֆի (1998թ.), տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը հանգեցրել է այն բանին, որ քաղաքականության ավանդական սուբյեկտները՝ պետությունները, արդեն կորցրել են գիտելիքներին (տեղեկատվությանը) տիրապետելու իրենց մենաշնորհը: Նախկինում միայն հատուկ կառույցները և դիվանագետները գիտեին, թե ինչ է կատարվում աշխարհի այս կամ այն մասում, մինչդեռ այսօր ինտերնետից շարքային օգտվողը նույնպես կարող է իրազեկ լինել այդ տեղեկատվությանը և, հետևաբար, որոշակի դեր ունենալ տեղեկատվական-քաղաքական գործընթացներում:

\* *Նոորքաղաքականություն (գիտելիքների քաղաքականություն).* Ջոն Արքիլը և Դևիդ Ռոնֆելդը, 1999թ. հրատարակած իրենց աշխատությունում նույնպես փաստելով պետության դերի նվազման

հանգամանքը, գտնում են, որ քաղաքականության նոր սուբյեկտները՝ միջազգային կազմակերպությունները, ՁԼՄ-ները, անդրազգային տնտեսական ընկերությունները, ահաբեկչական և հանցավոր կառույցները, ձեռք են բերել գիտելիքային/տեղեկատվական ռեսուրսներ, ինչը նրանց թույլ է տալիս ինքնուրույն քաղաքականություն վարելու գլոբալ տեղեկատվական դաշտում:

\* *Մեղիաքաղաքականություն.* Այս եզրը 2001թ. շրջանառության մեջ է դրել Լի Էդվարդսը: Նա ապացուցել է, որ ինտերնետը և հեռուստատեսությունը վերածվել են քաղաքականության կարևորագույն գործոնի: Դրանք են, որ էական դեր են կատարում արտաքին և ներքին քաղաքականության ձևավորման գործում, այս կամ այն հիմնախնդրի վրա են հրավիրում հանրության և իշխանության ուշադրությունը:

Տեղեկատվական քաղաքականության թվարկված տեսակներին, ըստ մեզ, անհրաժեշտ է ավելացնել մի նոր հասկացություն, այն է՝ *մոբայլ քաղաքականությունը*: Վերջինս արտահայտում է *մոբիլ, բջջային հեռախոսների*, այսպես կոչված, երրորդ էկրանի (հեռուստացույցի և համակարգչի մոնիտորի) լայն տարածման և դրանց տեխնիկական հնարավորությունների զարգացման իրողությունը: Նման հեռախոսներից օգտվողները (որոնց թիվն այսօր միլիարդից անց է) հնարավորություն ունեն դիմամիկ, մոբայլ ռեժիմում տեքստային, աուդիո- և վիդեոտեղեկատվություն ստանալու, մշակելու և հաղորդելու՝ անկախ տեղակայման վայրից կամ աշխարհագրական կոորդինատներից: *Մոբայլ քաղաքականություն*ն այսօր վերածվել է կարևոր գործոնի ինչպես արտաքին (հիշենք 2006թ. արաբ-իսրայելական հակամարտությունը<sup>15</sup>), այնպես էլ ներքին ոլորտներում (նշենք 2008թ. ՀՀ նախագահական ընտրությունների հետ կապված զարգացումները, երբ ցուցարարների գործողությունները համակարգվում էին հիմնականում SMS հաղորդագրությունների միջոցով): Մոբայլ տեխնոլոգիաներն այսօր կարևոր դերակատարում ունեն նաև սոցիալական-տնտեսական ցանցերի ձևավորման գործընթացում: Կարծում ենք, որ Հայության

ստեղծած հասարակական և քաղաքական կազմակերպությունները հասու կլինեն առավելագույնս օգտագործելու վերոնշյալ քաղաքական-տեղեկատվական մեթոդները՝ Հայության կազմակերպման խնդիրներում:

*Կազմակերպության<sup>16</sup> տեղեկատվական մոտեցումների շուրջ.* Քանի որ գիտաժողովը գործնական է, ապա հարկ է անդրադառնալ նաև *Կազմակերպության* տեղեկատվական քաղաքականությանը: Քննարկումների ժամանակ հաճախ է հնչում այն միտքը, թե մեր գործունեության վերաբերյալ որևէ լրատվությունն ավելորդ է: Այլք կարծում են, թե նման լրատվությունը պետք լինի շատ զուսպ և բոլոր պարագաներում ուշադրություն չհրավիրի *Կազմակերպության* վրա: Անշուշտ, նման կարծիքները պայմանավորված են *Կազմակերպության* խնդիրները լավագույնս լուծելու մտահոգությամբ: Սակայն, թույլ են տալիս ամենայն պատասխանատվությամբ պնդել, որ նման մոտեցումները փորձագիտական քննադատության չեն դիմանում: Ակնհայտ է, որ մեր գործունեությունն արձանագրվում և վերլուծվում է այն բոլոր կազմակերպությունների և կենտրոնների կողմից, որոնց դա հետաքրքրում է թե՛ դրական և թե՛ բացասական տեսանկյունից: Սա նշանակում է նաև, որ անբարյացակամները *Կազմակերպությանը* վարկաբեկելու մեթոդներ և սցենարներ պետք է մշակեն, և այդպիսով փորձ կատարեն ձախողելու մեր շարժումը: Այսինքն՝ պահպանելով, այսպես կոչված, ռադիոլուրություն, մենք կարող ենք նմանվել ջայլամի, որը փակել է աչքերը և որին թվում է, թե այլք իրեն չեն տեսնում: Այստեղից հետևում է, որ մենք ուղղակի պարտավոր ենք ակտիվ տեղեկատվական քաղաքականություն վարել: Տեղեկատվական նման քաղաքականությունը պետք է ներառի նաև դրական բաղադրիչ, որն ուղղված կլինի մեր աջակիցներին: Մենք պարտավոր ենք *PR* գործողություններ իրականացնել՝ շարժումը գրավիչ դարձնելու և, այդպիսով, նոր համախոհներ ձեռք բերելու նպատակով: Բրիտանական փորձագետներն ասում են. «Ոչ միայն կառավարությունը պետք է արդյունավետ աշխատի, այլև բոլոր քաղաքացիները

պետք է համոզված լինեն, որ այն արդյունավետ է աշխատում»: Սա վերաբերում է նաև մեր կազմակերպությանը, որի գործունեության արդյունավետության մասին պետք է իրազեկ լինենք ոչ միայն մենք, այլև, առանց չափազանցության, ամբողջ Հայությունը:

Կազմակերպության առաջնահերթ գործնական տեղեկատվական խնդիրները, ըստ մեզ, հետևյալն են.

### 1. Տեղեկատվական այնպիսի ենթակառույցի ստեղծումը, որը պետք է.

- \* կազմակերպության ղեկավարի հետ միասին համակարգի ՁԼՄ-ների հետ տարվող *PR* գործընթացները,
- \* կազմակերպության անդամների միջև իրականացնի տեղեկատվության փոխանակում և ցանցային աշխատանք,
- \* ձեռք բերի Հայության հրատապ խնդիրներին առնչվող գրականություն ու պարբերականներ և իրականացնի դրանց նպատակային առաքումը,
- \* ստեղծի կանոնավոր գործող կայք, որն առաջին փուլում պետք է լինի եռալեզու (հայերեն, անգլերեն և ռուսերեն), իսկ հետագայում ավելացվեն նաև կայքի ֆրանսերեն և իսպաներեն-պորտուգալերեն վարկածները:

### 2. Հայկական վերկայքերի տվյալների համալիր շտեմարանի ձևավորումը:

### 3. Այլալեզու և այլադավան հայերի վերաբերյալ տեղեկատվական շտեմարանի ձևավորումը:

### 4. Սփյուռք ունեցող այլ ազգերի կազմակերպչական փորձի ուսումնասիրումը:

### 5. Հայ համայնքների, այլալեզու ու այլադավան հայերի խնդիրների վերաբերյալ գիտագործնական կոնֆերանսի կազմակերպումը:



**Խաչատուր  
ՂԱՂԱՅԱՆ**

**ՀԱՅՈՑ  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԲԱՂԱԴՐՅԱԼԸ ԵՎ  
ՖԻՆԱՆՍԱՆՅՈՒԹԱԿԱՆ  
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ**

Քաղաքական՝ չի նշանակեր յեղափոխություն,  
կուսակցություն կամ դիանագիտություն:

Հայ ժողովուրդին պահպանությունը քաղաքական գործ մըն է  
որուն նուիրուած են բոլոր հայերը:

Հայուն կրթական գործը քաղաքական է,  
վասն զի հայ քաղաքացին պիտի պատրաստենք հայու ազգային-քաղաքական  
կեանքին յարմար կրթութեամբ եւ դաստիարակութեամբ մը:

Հայուն տնտեսական կեանքը քաղաքական է,  
վասն զի անկէ կախուած է Հայաստանի յաջողութիւն:

*Բարկեն եպս. Կյուլեսերյան, 1920թ.*

Հայոց ցեղասպանության տնտեսական բաղադրյալը, ի տարբերություն քաղաքական, կրոնական, էթնիկական, գաղափարախոսական, մշակութաբանական, աշխարհաքաղաքական և այլ տեսանկյունների, ամենամանրավարար ուսումնասիրվածն է: Դա ունի իր պատճառները: Երբ անցյալ դարի 60-ականների կեսերին խորհրդահայ պատմաբանները (Մ. Ներսիսյան, Ծ. Աղայան, Յ. Ղազարյան և այլք) առաջին անգամ բարձրաձայ-

նեցին ցեղասպանության հիմնախնդիրը, ստիպված էին հաշվի նստել խորհրդային գաղափարախոսության հետ: Նրանք առավելագույնը կարող էին մասնակիորեն արծարծել արևմտահայ աշխատավորության նյութական կորստի խնդիրը, սակայն ի վիճակի չէին անդրադառնալու հայ կապիտալիստների հասարակախավին կամ, մարքսիստական եզրաբանությամբ ասած, ազգային բուրժուազիային, որին պատկանում էր արևմտահայության հավաքական ֆինանսանյութական կարողության որակյալ բացարձակ մեծամասնությունը: Իսկ Սփյուռքում հրատարակված հարյուրավոր աղբյուրներ նշված խնդրի առնչությամբ ունեին հիմնականում տեղային, նկարագրային, փաստագրական-տեղեկատվական բնույթ, ինչը Սփյուռքի տարանջատվածության պայմաններում անհնար էր դարձնում նյութի ժողովումը, համադրումը, համակարգումը և ամբողջական պատկերի ստացումը: Այնինչ կյանքը, ժամանակի ընթացքը, աշխարհի զարգացումներն ապացուցեցին, որ ցեղասպանության տնտեսական բաղադրիչը մղվել և մղվում է առաջնային դիրք. քանզի ունի ըմբռնելի գործնակիրառական նշանակություն:

Ինչի՞ մասին է խոսքը: Փորձենք, նախ, ընդհանուր, հպանցիկ պատկերացում տալ հայոց տնտեսական գործունեության վերաբերյալ:

«Քաղաքակիրթ» լեզվով՝ հունարեն, հայոց մասին առհասարակ առաջին հիշատակությունն ունի առևտրատնտեսական բնույթ: Ք.ծ.ա. V դարում համաշխարհային պատմագրության հայր Հերոդոտոսը նկարագրում էր Արմենիայից եփրատ գետով Բաբելոն լողացող կլոր, կաշեպատ նավակների մասին, որոնք տեղափոխում էին հացահատիկ ու զինի:<sup>1</sup>

Բոլորիս քաջածանոթ է Արարատի գագաթին Նոյ նահապետի պատսպարվելու Աստվածաշնչյան իրողությունը, սակայն Սուրբ գրքում հայոց մասին կա ևս մեկ հիշատակություն. Իեզեկիելի մարգարեության մեջ (ԻԷ, 14) նշվում է, թե ինչպես էին Թորգոմա տնից (իմա՝ Հայաստանից) արտահանվում ձիեր ու ջորիներ: Ինչը



մի շարք հետազոտողներ իրավամբ համարում են հայոց տնտեսական գործունեության արտահայտում:<sup>2</sup>

Հայտնի է, որ Հին աշխարհում առևտուրը և, մասամբ, արհեստները քաղաքակրթական ցուցիչներ էին, և վերոբերյալ փաստերը վկայում են, որ մեր հնամենի ժողովուրդը քաղաքակրթվածության լիիրավ կրող էր:

Սակայն մեր պարագայում առկա է առանձնահատկություն: Յուրաքանչյուր ժողովուրդ ունի պետականակազմիչ չորս հիմնական բաղադրյալ՝ ռազմական, քաղաքական, տնտեսական և հոգևոր-գիտամշակութային: Բազրատունյաց թագավորության անկումից և Կիլիկյան թագավորության վերացումից հետո հայոց պետականությունը փլուզվեց և դարերի ընթացքում գոյատևեց առանձին օջախների տեսքով: Կանոնավոր ռազմական բաղադրյալը գրեթե իսպառ վերացվեց և ստեպ-ստեպ զգալ էր տալիս ազգային-ազատագրական դրվագային պայքարի դրսևորմամբ: Եվ միայն հայոց տնտեսական գործունե էր, որը թե՛ հայրենի բնօրրանում, թե՛ օտար հողում ոչ միայն պահեց մշտատև գոյություն, այլև ժամանակին համընթաց առաջատար դիրքեր գրավեց ու սնուցեց մյուս երեք բաղադրյալները, այսինքն՝ ստանձնեց և իրականացրեց ազգապահպանական վիթխարի գործառույթ: Պատահական չէ, որ Մովսես Կորյունի «Վաճառականք»<sup>3</sup> եկեղեցույ շինողք եւ զարդարիչք, կրօնաւորաց օթեւանք եւ յանգուցիչք, առ աղքատս ողորմածք եւ դարմանիչք եւ օգնողք թագաւորաց»:<sup>4</sup> Ուր դարանց Մխիթարյան միաբան Ղուկաս Տէրտէրեանցը փաստում էր. «Ազգովին վաճառականութիւնը ձեռք առինք, որն որ կրնանք ըսել, թե ազգը պահպանեց ու բոլորովին ջնջվելէն պահեց»:<sup>5</sup>

Նմանատիպ դիտարկումներ ունեն մաթ Բազմաթիվ օտարերկրացիներ: Այսպես, 1748թ. անգլիացի ճանապարհորդ Ջոն Հարիսը գրում էր. «Հայերը վաճառականների ազգություն են և անում են ամենաընդարձակ առևտուրը, ավելի, քան որևէ այլ ժողովուրդ: Նրանք տարածվել են ամբողջ Արևելքում, արտակարգ մեծ առևտուր են վա-

րում Ռուսաստանում և իրենց ազգից ներկայացուցիչներ ունեն եվրոպայի առևտրական խոշոր քաղաքների մեծ մասում: Մի խոսքով, նրանք առևտրի մեջ հրեաների չափ նշանավոր են: Սակայն նրանց համբավին անհունորեն նպաստող հանգամանքը առևտրի իրենց կերպն է և միջնորդի իրենց գործելակերպը, որ նրանց նկարագիրը դուրյգն իսկ չի խաթարել՝ ժուժկալությունը և ուղղամտությունը, որովհետև նրանք եռանդուն են, համեստ և ինքնաբավ, համեստ շահով բավարարվում են և ծառայում են հավատարմորեն, եղբոր նման սիրում են մեկմեկու և իրենց հաստատված երկրներին չափազանց օգտակար են»:<sup>6</sup> Իսկ նույն դարում լեհ ճիզվիտ Յուդե Կրուչինսկին հավելում էր. «Առևտրի միջոցով ձեռք բերած հսկայական հարստությունները, ինչպես և իրենց կյանքը հայերը պատրաստ են պատեհ առիթի դեպքում օգտագործել իրենց համար անտանելի լուծը թոթափելու և իրենց թագավորությունների ժամանակ վայելած ազատությունը վերականգնելու համար»:<sup>7</sup> Այս համառոտ նախաբանի իմաստն է ցույց տալ, որ առևտուրը, կրկնենք, քաղաքակրթական արժեք էր, տնտեսական գործունեությամբ զբաղվող ժողովուրդը քաղաքակիրթ էր: Հայոց վաճառականությունը զանազան երկրներում, տարբեր ժամանակներում այլևայլ վերաբերմունքի է արժանացել, սակայն միայն Օսմանյան թուրքիայում և Արևմտյան Հայաստանում այդ օգտաբեր տարրը արմատախիլ արվեց ու բնաջնջվեց:

Ինչո՞ւ:

Դեռևս 1853թ. Ֆ. Էնգելսը իր «Թուրքական հարցը» աշխատությունում գրում էր. «...Ո՞վ է առևտուր անում թուրքիայում, համենայն դեպս՝ ոչ թուրքերը: Երբ նրանք դեռևս գտնվում էին իրենց նախնադարյան քոչվոր վիճակում՝ առևտուր անելու նրանց մեթոդը քարավանների թալանն էր. այժմ, երբ դարձել են որոշ չափով ավելի քաղաքակիրթ, վերածվել են ամենատարբեր կամայական ու բռնի յուրացնողների: Ծովային խոշոր նավահանգիստներում հիմնավորված հույները, հայերը, սլավոնները և արևմտաեվրոպացիները իրենց ձեռքում են պահում ամբողջ առևտուրը, և նրանք

բացարձակապես ոչ մի հիմք չունեն շնորհակալություն հայտնելու թուրք բեյերին ու փաշաներին՝ առևտրով զբաղվելու հնարավորության համար: Հեռացրեք Եվրոպայից բոլոր թուրքերին՝ առևտուրը դրանից բնավ չի տուժի»:<sup>8</sup>

Այս գնահատականից հետո Թուրքիայում ի՞նչ էր փոխվել. ներկայացնենք ցեղասպանությանը նախորդող ժամանակաշրջանում հայոց առևտրատնտեսական գործունեությանը վերաբերող մի հակիրճ համապատկեր:

1912թ. հրատարակված «Թուրքական տարեգրքում» զետեղված են յուրաքանչյուր բնակավայրում վաճառականների, սեղանավորների (ֆինանսիստներ), հանձնակատարների (միջնորդներ), ձեռնարկատերերի և որակյալ մասնագետների անվանացանկերը: *Անկարայում* տվյալները հետևյալն էին. այստեղ կային 44 մասնագետներ (ճարտարապետներ, իրավաբաններ, բժիշկներ, ճարտարագետներ և մտավորականության այլ ներկայացուցիչներ), որոնցից 5-ը հույն էին, 2-ը՝ հրեա, 10-ը՝ թուրք, 27-ը՝ հայ: Ֆինանսիստները և խոշոր միջնորդ-վաճառականները 53 էին, որոնցից հույներ՝ 9-ը, հրեաներ՝ 2-ը, թուրքեր՝ 3-ը, հայեր՝ 40-ը: Խոշոր ձեռնարկատերեր էին 77-ը, որոնցից 4-ը՝ հրեա, 10-ը՝ թուրք, 55-ը՝ հայ: Ի վերջո, քաղաքում առևտրային տներ ու մեծ խանութներ ունեցող վաճառականների թիվը 208 էր, որոնցից 27-ը՝ հույն, 8-ը՝ հրեա, 50-ը՝ թուրք և 123-ը՝ հայ:

Նույն թվականին, համաձայն Ֆրանսիայի երկու հյուպատոսների զեկուցագրերի, *Սերաստիայի* սանջակում ու վիլայեթում կային.

**Սանջակում**

	հայ	թուրք
Մանրածախ առևտրականներ	600	150
Արտահանողներ	45	5
Մանուֆակտուրային ձեռնարկությունների տերեր	19	1
Արհեստավորներ	1500	250
Ալրաղացների սեփականատերեր	4	4

**Վիլայեթում**

	հայ	թուրք
Վաճառականներ և արհեստավորներ	6800	2550
Արտահանողներ	127	23
Ներկրողներ	141	13

Այլ տվյալներով, 9.800 վաճառականներից, առևտրականներից և արհեստավորներից 6.800-ը հայեր էին, 3.000-ը՝ թուրքեր, 37 սեղանավորներից (ֆինանսաբանկային գործունեությամբ զբաղվողներից) 32-ը հայ էր, 5-ը՝ թուրք: 153 արտադրական ձեռնարկություններից 130-ը պատկանում էր հայերին, 20-ը՝ թուրքերին, 3 գորգագործական արհեստանոցները՝ օտարերկրացիներին: Այդ ձեռնարկություններում աշխատում էր 17.700 մարդ, որից 14.000-ը՝ հայ, 3.500-ը՝ թուրք, 200-ը՝ հույն և այլազգի: Այսինքն՝ հայերը ոչ միայն հիմնում, այլև հենց իրենք էլ աշխատում էին այդ ձեռնարկություններում, և ոչ մի խոսք չի կարող լինել մի ժողովրդի կողմից այլ ազգություններին շահագործելու մասին:<sup>9</sup>

Ըստ Ա.Ալպոյաճյանի, *Կեսարիայից արտահանվում էր* ապուխտ, բամբակ, բրդե մանածո, գորգեր, կարպետներ, կաշվեղեն և մորթեղեն, պղինձ, դեղին ներկ, չոր պտուղներ: 1890-ական թթ. արտահանումը գնահատվում էր 650 հազ. օսմանյան ոսկի կամ 15 մլն ֆրանկ: *Ներմուծվում էր* բամբակ, պղինձ, երկաթ և այլ մետաղներ, կոշիկ, ծխախոտ, բրինձ, շաքար, սուրճ, նավթ և ամերիկյան, անգլիական, ֆրանսիական արտադրության այլ ապրանքներ: Ներմուծումը տարեկան կազմում էր 400 հազ. օսմանյան ոսկի կամ 9 մլն ֆրանկ: Հեղինակի դիտարկմամբ՝ «Հայերը տիրում էին առևտրային շուկային և իրենց ձեռքում էին պահում ամբողջ առևտուրը: Թուրքն զբաղվում էր կողոպուտով և հափշտակությամբ, չնայած ուներ բազմաթիվ մենաշնորհներ և առավելություններ: Հայն իրավունք չունեի հողատեր դառնալ, ուստի զբաղվում էր առևտրով: Եվ սա էր պատճառը, որ առևտուրը փոխանցվում էր սերնդեսերունդ»:<sup>10</sup>

Կարինը Թուրքիայի արևելյան նահանգների առևտրական կենտրոնն էր: Պոլսից ներմուծվող ապրանքների կեսից ավելին բուրդ ու բամբակ էր, իսկ 40%-ը՝ ապակեղեն, կաշվեղեն, կարասիներ և այլն: Մարսելից և Տրապիզոնից բերում էին շաքար, նավթ, թեյ, սուրճ, երկաթեղեն, թուղթ: Հետազոտողի հաշվարկներով, «Ներմուծման և արտահանման 90%-ը հայերի ձեռքում էր»:<sup>11</sup>

Բավարարվենք այսքանով, չնայած նման տվյալներ ունենք Օսմանյան Թուրքիայի գրեթե բոլոր քաղաքների, սանջակների ու վիլայեթների վերաբերյալ, տվյալներ, որոնք վկայում են առևտրատնտեսական ոլորտում հայոց բացահայտ առաջատարության մասին: Ավելին, այստեղ գիտակցաբար չենք անդրադառնում պոլսահայոց գործունեությանը, քանզի դա խիստ ծավալուն և առանձին խոսակցության նյութ է: Կ.Պոլիսը արևմտահայության ոչ միայն կրոնական, կրթական, մշակութային, այլև տնտեսական մայրաքաղաքն էր: Նշենք միայն, որ բնիկ պոլսահայերը, ինչպես նաև ներքնագավառներից տեղափոխվածները ցեղասպանությունից հետո տարագրվեցին հիմնականում ԱՄՆ ու Ֆրանսիա և ներկայիս արևմտահայ կապիտալիստական հասարակախավի հիմնադիրներն են:<sup>12</sup>

Այժմ փորձենք ցույց տալ, թե որոնք էին ցեղասպանության տնտեսական դրդապատճառները կամ խթանիչները: Դրանք մի քանիսն էին: Նախ, հարկ է նշել, որ պատմականորեն հայոց առևտրատնտեսական բազմադարյա մրցակիցները եղել են հույներն ու հրեաները: Եթե հույների հետ մրցակցությունն ընթացել է միանգամայն քաղաքակիրթ հունով<sup>13</sup> և այստեղ, ըստ մեզ, էական նշանակություն ուներ կրոնական միևնույն պատկանելությունը, ապա հրեաների պարագայում իրադրությունն այլ էր: Պատմությանը հայտնի են բազմաթիվ փաստեր, երբ դեռևս սուլթանական Թուրքիայում, օգտվելով պատերազմներից ու երկրի ներսում ծագած ռազմաքաղաքական ճգնաժամներից, հրեաներն առաջին հերթին ձգտում էին տիրել հայերի ֆինանսանյութական հնարավորություն-

ներին: Դա նրանց հաջողվեց երիտթուրքերի օրոք, երբ հայոց ու մասամբ հունաց բնաջնջման ու տեղահանության արդյունքում հրեությունը ձերբազատվեց մրցակիցներից և, ըստ էության, եղավ միակ ոչ մահմեդական տարրը, որ կարողացավ կայուն ու կարևոր տնտեսական ներկայություն ապահովել Արևելքի և Արևմուտքի միջև:<sup>14</sup>

Երկրորդ պատճառը, եթե կարելի է այդպես արտահայտվել թուրքական ազգային հավաքական նախանձն էր (ի դեպ, մի երևույթ, ինչի հետ հայ վաճառականությունը հաճախ էր առնչվում տարբեր երկրներում): Պաշտոնյա, զինվոր ու խաշնարած թուրք մեծամասնությունը տեսնում էր հայ բարեկեցիկ փոքրամասնության մարդավայել ապրելակերպը (հիմնականում՝ քաղաքներում) և «բնական» ցանկություն ուներ դրան տիրելու:

Երրորդ, գլխավոր պատճառը հեշտությամբ հարստանալու, անաշխատ եկամուտ «վաստակելու» հնարավորությունն էր, ինչպես նաև՝ ցեղասպանության «գործի» ֆինանսավորումը, զանգվածային կոտորածներ իրականացնող մարդ-զազանների ամենատարրական վարձատրումը:

Հ. Ղազարյանը դեռևս 1968թ. Բեյրութում հրատարակած «Ցեղասպան թուրքը» գրքում հրապարակել է հայ բնակչության տեղահանման և գույքի բռնագրավման վերաբերյալ գաղտնի կառավարական օրենքներ, որոշումներ, շրջաբերականներ, հրամանագրեր, հեռագրեր և բանավոր կարգադրություններ: Միայն 1915թ. արձակվել է շուրջ մեկ տասնյակ այդպիսի օրենք, որոնցից մեկն ուներ 34 հոդված: Այդ օրենքների ու կարգադրությունների համաձայն, թուրքերը, քրդերը և այլ մահմեդական տարրերը յուրացրեցին հայոց շարժական և անշարժ գույքը, չհաշված ապահովագրված արժեքները, որոնք բռնագրավվեցին հետագայում:

Ըստ Ա. Ալպոյաճյանի՝ 1915թ. Կեսարիայում կար 180 հայ վաճառական, որոնցից 29 հոգի (մեկ առ մեկ թվարկել է անուն-ազգանուններով ու զբաղմունքի տեսակներով) սրի են քաշվել կամ կախաղան բարձրացվել, մնացյալը դարձել են ունեզուրկ տարագիրներ:<sup>15</sup>

Ուշագրավ է սպանդի մեխանիզմը: Կոտորածի ենթակա առաջին խումբը կազմում էին այսպես կոչված հեղափոխականները, մտավորականները և հոգևորականները: Երկրորդ խմբաքանակը, որպես կանոն, ունևոր դասն էր: Այս տեսակետից տիպական է Խարբերդում կատարվածը. 1915թ. հունիսի 15-ին «տեղափոխման» պատրվակով կազմվեց երկրորդ խմբի՝ 3.000 հոգուց բաղկացած հարուստների տեղահանությունը: Դա էպիկական, աներևակայելի պատկեր էր. տղամարդիկ, կանայք ու երեխաները հեծել էին ձիեր ու ջորիներ, կանայք կրում էին ֆրանսիական շրջագետներ, գլխներին պահել էին ասեղնագործ հովանոցներ, իսկ սպասավորները տանում էին կովեր, որպեսզի աղաների երեխաները ճանապարհին թարմ կաթ խմեն... Խարբերդից մի քանի կիլոմետր անց, հենց առաջին իսկ կիրճում բուլդոզեր սրախողխող արեցին, և սպանդի, մարդակերպ գազանների կողմից մարդկանց հոշոտման սահմակեցուցիչ տեսարաններն անհնար է վերաշարադրել: Արդյունքում՝ ոսկեղենը, թանկագին քարերը, փողը բաժին հասան բարձրաստիճան ջարդարարներին, իսկ շարքային մարդասպանները յուրացրեցին հագուստը, կահկարասին ու անասունները:

Սպանդի մեխանիզմը լավ կշռադատված ու մշակված էր. նախ ոչնչացվում էր ազգի ընտրանին, որից հետո ժողովրդի լայն զանգվածները հայտնվում էին լիակատար բարոյալքվածության, անտեր վիճակում, որի պատճառով ըմբոստության դրսևորումներ չկային:

Օգտվելով հանգամանքից, որ համաժողովը գիտագործնական է, ինչպես նաև ապագա լրջագույն համահայկական կառույցի ստեղծման նախապատրաստական փուլերից մեկը, ներկայացնում են մի քանի առաջարկներ:

Անհրաժեշտ է, որ մենք վերանայենք՝ նոր իմաստային լիցք հաղորդենք Հայ դատ և Պահանջատիրություն հասկացություններին և ցեղասպանության ճանաչմանն ուղղված մեր ջանքերին *գուգահեռ* արժարժենք հայոց ֆինանսանյութական փոխհատուցման խնդիրը: Փոխհատուցում, որը, անշուշտ, տարածքի, արյան գին չէ,

միլիոնավոր անմեղ զոհերի կյանքի փոխարժեքը չէ: (Աշխարհը նյութապաշտ է, բարոյական նորմերը դժվարությամբ է ընդունում, այնինչ նյութականության հարցերը նրա համար ընկալելի են): Դա պատմական արդարությունը վերականգնելու ուղղություններից մեկն է և առաջին հերթին պետք է մեզ. դրա համար մենք պարտավոր ենք եռանդ ներդնել ու մեր ժողովրդի ֆինանսանյութական կուրուստների պահանջատերը լինել:

Իրավաբանների միջազգային հանձնաժողովի (ԺՆԼ) ավագ իրավախորհրդատու Ֆեդերիկո Անդրեու-Գուզմանը հստակ գրել է. «Հայ ժողովրդի դեմ իրականացված հանցագործությունը դեռևս թուրքիայի պատասխանին է սպասում՝ ցեղասպանությունը պիտի ճանաչվի և վնասները պիտի փոխհատուցվեն: Սրանք ուտոպիական նպատակներ չեն: Որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդ, թուրքական պետությունն ունի միջազգային իրավական պարտավորություններ: Համաձայն միջազգային իրավունքի, հանցագործությունների համար պատասխանատվությունն ընկնում է դրանք իրականացրած երկրի, ինչպես նաև, ըստ շարունակականության և պատասխանատվության սկզբունքի, նրա իրավահաջորդի վրա»:<sup>16</sup>

Կխնդրեինք ուշադրություն դարձնել «Սրանք ուտոպիական նպատակներ չեն» մտքին: Իսկ որո՞նք են ֆինանսանյութական փոխհատուցման հասնելու իրատեսական ուղիները:

Պատկերացնենք մի այսպիսի ֆանտաստիկ իրավիճակ՝ վաղը ևեթ Թուրքիան ասում է՝ հաշիվ ներկայացրեք՝ վճարեմ: Այդպիսի ճշգրիտ, հավաստի վերջնաթիվ մենք այսօր չունենք, ունենք գանազան մարդկանց հաշվարկներ, որոնց ստուգությունը իրականությունից հեռու է:

Անցյալ դարի 60-70-ական թթ. Լ. Վարդանը Բեյրութում հրատարակել է բարդ ու խճողված հաշվարկներով գրքեր, որոնք սակայն ավելի տեղային բնույթ են կրում և վնասի ամբողջական պատկերը չեն տալիս:

1965թ. Ե. Խաթանասյանը գրում էր. «Ի՞նչ է գումարը Թուրքիա-

յի հայության այն հարստության անձնական, ազգային ու հավաքական (միությունների, ընկերությունների և կազմակերպությունների), որ Մեծ եղեռնի ժամանակ թուրք կառավարությունը գրավեց, կողոպտեց ու փչացրեց»:<sup>17</sup> Ապա հիմք ընդունելով այն փաստը, որ 1919թ. Հայոց Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը հանձնախումբ է ուղարկել, որի հաշվարկի համաձայն թուրքիայի յուրացրածը կազմել է 3 մլրդ 350 մլն դոլարի համարժեք ունեցվածք, ինքն է կատարել հաշվարկ՝ իրավացիորեն տարեկան ավելացրել է բանկային 5%<sup>18</sup> և 50 տարվա կտրվածքով ստացել 37 մլրդ 145 մլն 641.595 դոլար փոխհատուցային գումար: Հաշվարկը սկզբունքորեն ճիշտ է, սակայն մեկնարկային թիվը չի համապատասխանում իրականությանը (ինչը ստորև ցույց կտանք):

Հ. Ղազարյանը նշում է 5 մլրդ դոլար մեկնարկային թիվը,<sup>19</sup> ինչը ոչնչով չի հիմնավորվում:

Այս շարքում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Ա. Պապյանի վերոհիշյալ հոդվածը: Հիմնվելով պաշտոնական փաստաթղթերի վրա՝ հեղինակը գրում է. «...1919թ.-ի հունվարի 18-ին Փարիզում իր աշխատանքներն սկսեց Փարիզի խաղաղության վեհաժողովը (The Paris Peace Conference), որի նպատակն էր համապարփակ քննության ենթարկել պատերազմին առնչվող բոլոր հարցերը և նախապատրաստել խաղաղության պայմանագրերը: Կարևորագույն հարցերի թվին էր պատկանում պատերազմի հրահրման համար մեղավոր երկրների կողմից նյութական կորուստների փոխհատուցումը (reparations): Ըստ այդմ, Փարիզի վեհաժողովի կազմում կար հատուկ հանձնաժողով փոխհատուցումների հարցով (The Commission on Reparations of Damage (Valuation of Damage)): Գրեթե երկու ամիս տևած աշխատանքներից հետո պարզ դարձավ, որ նյութական կորուստներ են ունեցել ոչ միայն պատերազմին անմիջականորեն մասնակցած երկրները: Ուստի, մարտի 7-ին նշյալ հանձնաժողովը ձևավորեց առանձին մարմին՝ Հատուկ հանձնախումբ (Special Committee), որի նպատակն էր ի մի բերել հանձնաժողովում չներկայացված երկրների

և ժողովուրդների նյութական կորուստները և դրանց փոխհատուցմանը տալ պաշտոնական ընթացք (The Commission on Reparations of Damage, of the Preliminary Peace Conference, has charged a special Committee with the gathering together of claims which may be maid against the enemy Powers): ...Հանձնախմբի ձևավորման հաջորդ իսկ օրը՝ մարտի 8-ին, հանձնախումբը դիմեց Բուլիվիայի, Բրազիլիայի, Հինաստանի, Էկվադորի, Գվատեմալայի, Հայիթիի, Հեջազի (ներկայումս Սաուդյան Արաբիա), Լիբերիայի, Պանամայի, Պերուի, Սիամի (ներկայումս Թաիլանդ) և Հայաստանի Հանրապետության (Delegation of the Armenian Republic of the Conference of Peace) պատվիրակություններին խնդրելով տեղեկություններ կրած նյութական կորուստների վերաբերյալ: Մեկ ամսվա ընթացքում Հատուկ հանձնախումբն ամփոփեց պատվիրակությունների ներկայացրած, ինչպես նաև այլ աղբյուրներից հայթայթած փաստաթղթերը և 1919թ.-ի ապրիլի 14-ին (ընդգծումն իմն է – Խ.Դ.) ներկայացրեց իր նախնական զեկույցը: Թեև արևմտահայության և արևելահայության համար հաշվարկները կատարվել էին առանձին-առանձին, սակայն կորուստները ներկայացված էին միասնական վերջնական թվով: Ըստ այդմ, հայության ամբողջական նյութական կորուստը 1914-1919թթ.-ին 1919թ.-ի գներով կազմել է 19.130.982.000 ֆրանսիական ֆրանկ կամ 3.693.239.768 ԱՄՆ դոլար:<sup>20</sup> Ըստ զեկույցագրի, հայության նյութական կորուստներն ունեին հետևյալ պատկերը.

**1. Արևմտահայաստան (կամ ինչպես փաստաթղթում է գրված՝ Turkish Armenia).**

**Ընդամենը՝ 14.598.510.000 ֆրանկ**

**2. Հայաստանի Հանրապետություն և Կովկասի այլ հայաբնակ տարածքներ.**

**Ընդամենը՝ 4.532.472.000 ֆրանկ**

**Համընդհանուր նյութական կորուստները՝  
19.130.982.000 ֆրանկ:**

Փոխհատուցումների հարցով անհրաժեշտ է առանձնացնել մի կարևոր հանգամանք՝ ժամանակային գործոնը բնավ հիմք չէ նյութական պարտավորություններից խուսափելու համար: Ֆինլանդիան ԱՄՆ-ի նկատմամբ Առաջին համաշխարհային պատերազմից մնացած իր նյութական պարտավորությունների կատարումն ամբողջացրեց միայն 1969թ.-ին, Մեծ Բրիտանիան՝ միայն 1965թ.-ին.: Ներկայիս Ռուսաստանը դեռևս խնդիրներ ունի ցարական Ռուսաստանի նյութական պարտավորությունների առումով: Թուրքիայի Հանրապետությունն ինքը, չնայած հսկայական զիջումներին, Օսմանյան կայսրության պարտքը կարողացավ փակել միայն 1944թ.-ի հունիսին: «Նյու Յորք լայֆ» ապահովագրական ընկերությունն (NYLIC) իր 1875-1915թթ.-ի շահառուների ժառանգներին փոխհատուցման հանձնառության մասին հայտարարեց միայն 2004թ.-ի հունվարին, այն էլ երկարատեւ դատավարությունից հետո:

Սույն դատավարությունը թեև անմիջականորեն չի վերաբերում Հայոց ցեղասպանության ընթացքում մեր ընդհանրական նյութական կորուստների փոխհատուցմանը, այնուհանդերձ, խիստ կարևոր է: Այն դատական վճռով, նմանաբնույթ գործերի համար, ամրագրեց հաշվարկային փոխարժեքը, այն է՝ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի մեկ ֆրանսիական ֆրանկը ներկայումս հավասար է 2.17 ԱՄՆ դոլարի: Այսինքն՝ դատական նախադեպի կիրառմամբ, մենք կարող ենք հաշվարկել հայության նյութական կորուստների չափը Հայոց ցեղասպանության հետևանքով՝

$$19.130.982.000 \text{ ֆրանսիական ֆրանկ} \times 2.17 = 41.514.230.940 \text{ ամերիկյան դոլար:}$$

Այսպիսով, Թուրքիայի Հանրապետության, որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդի, փոխհատուցման պարտավորությունը ներկայիս Հայաստանի Հանրապետության նկատմամբ, որպես Հայաստանի առաջին հանրապետության իրավահաջորդի,

կազմում է առնվազն 41 միլիարդ 514 միլիոն 230 հազար 940 ամերիկյան դոլար»: (Խոսքը, հավանաբար, վերաբերում է մինչև 2007թ. ընկած ժամանակահատվածին):

Թվում է, ամեն ինչ փաստարկված է, ճշգրիտ, հավաստի ու հիմնավոր, սակայն թույլ տվեք այս թիվն էլ վիճարկել:

Նախ, հաշվարկի ժամանակ հաշվի չի առնվել 5% դրույքը, որն անհրաժեշտ էր ամեն տարի հավելել: Այդ տոկոսադրույքը շահութատոկոս չէ, դա փողի միավորի արժեզրկումից մայր գումարի ինքնապահպանման դրույք է, ինչը պարտադիր հարկ է հավելել:

Երկրորդ, Ա. Պապյանը նշում է. «Անհրաժեշտ է ընդգծել, որ այս թվի մեջ ներառված չեն հայերի 1920թ., 1921թ., և 1922թ. (համապատասխանաբար՝ Արևելյան Հայաստան, Կիլիկիա, Չմյուռնիա և այլն) նյութական կորուստները: Եթե հաշվառվեն նաև նշյալ ժամանակահատվածի կորուստները, ապա, բնականաբար, վերոնշյալ թիվն առնվազն պետք է 15-20%-ով մեծացվի»: Իրավացի դիտարկում է, բայց այս թվարկումից ու վերջնագումարից դուրս է մնացել 1918թ. բաքվահայության ցեղասպանության հետևանքով նրանց կրած ֆինանսանյութական փոխհատուցման գումարը: Ընդ որում, դա ժամանակին դուրս են թողել դիտավորյալ, ինչի մասին կուզենայինք ստորև խոսել:

1918թ. սեպտեմբերի 15 - նոյեմբերի 17-ը թուրք զինվորականության և թաթարական (իմա՝ ադրբեջանական) խուժանի կողմից Բաքվում ոչնչացվեց շուրջ 30.000 հայ և թալանվեց-յուրացվեց քաղաքի ամբողջ հայության, ինչպես և մասամբ այլ ազգությունների ունեցվածքը:<sup>21</sup>

Մուղրոսի զինադադարի կնքումից հետո (1918թ. հոկտեմբերի 30) թուրքական զորաբանակը Բաքվից հետ քաշվեց՝ թողնելով իր սվինների շնորհիվ ստեղծված թյուրքական երկրորդ պետությունը՝ Ադրբեջանի Հանրապետությունը: Նոյեմբերի 17-ին քաղաք մտան Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի ու Ֆրանսիայի ներկայացուցիչները՝ անգլիական զորախմբի ուղեկցությամբ: Ընդամենը 4 օր անց՝ նո-

յեմբերի 21-ին, բրիտանական զեներալ Թոմսոնը այսպիսի հեռագիր ուղարկեց Ելիզավետպոլում (Գյանջա, Գանձակ) գտնվող թուրքական բանակի հրամանատար Նուրի փաշային. «Բաքու ժամանելուն պես զեկույցներ են ստացվել օսմանյան զինվորների կողմից թալանի և ունեցվածքին հասցված վնասների մասին: Բաքվում Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Միացյալ Նահանգների ներկայացուցիչներից կազմվել է հանձնաժողով՝ ապացուցված վնասների ընդհանուր արժեքի գնահատումը հետաքննելու համար: Քանի որ ապագա գումարը պետք է փակվի Թուրքիայի հաշվին (ընդգծ. իմն է – Խ.Դ.), Ձեզ գրում եմ, որպեսզի հնարավորություն ունենաք վերադարձնելու ունեցվածքը: Հայտնում եմ Ձեզ, որ անհրաժեշտություն ծագելու դեպքում կծևավորվեն այլ հանձնաժողովներ՝ բողոքները քննարկելու համար: Այդ իսկ պատճառով նպատակահարմար է Ձեզ և Ձեր զեներալներին տեղեկացնել սույն մտադրության մասին»:<sup>22</sup> Ասված է պարզ ու հստակ՝ դաշնակիցները նյութական վնասի փոխհատուցման պատասխանատու էին ճանաչում Թուրքիային:

Արդեն 1918թ. դեկտեմբերին Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի կողմից Բաքվում ստեղծվեց «Դաշնակից տերությունների վերստուգիչ հանձնաժողով»: Այն իր բնույթով պաշտոնական էր, միջազգային, ինտերնացիոնալ, և 30 հոգուց բաղկացած կազմի մեջ ընդգրկված էին ընդամենը 7 հայեր: Հանձնաժողովը Բաքվի բնակչությանն առաջարկեց ներկայացնել ցուցակ-նախահաշիվներ՝ նյութական փոխհատուցում կատարելու նպատակով: Ապա սկսեց այդ ցուցակների իսկությունը ստուգել, 1919թ. ապրիլին (խնդրում ենք ուշադրություն դարձնել այս տարեթվին) վերջացրեց ու հրապարակեց ամփոփիչ տվյալները: *Օրինական վճարման ենթակա ճանաչվեց. հայերին՝ 453 մլն 184.126 ռուբլի, ռուսներին և այլ ազգերի ներկայացուցիչներին՝ 48 մլն 824.531 ռ., վրացիներին՝ 3 մլն 995.049 ռ., մուսուլմաններին՝ 2 մլն 226.822 ռ., հիմնարկ-ձեռնարկություններին՝ 83 մլն 871.114 ռ.:* Ընդ որում, յուրաքանչյուր ցուցակատիրոջ տրամադրվեց համապատասխան չեկ, որի դար-

ծերեսին տպագրված էր. «1. Обозначенная в сим удостоверении сумма подлежит выдаче по утверждению решения Контрольной Комиссии Парижской Мирной Конференцией и по установлении способа оплаты; 2. Сумма эта подлежит выдаче лицу или учреждению, обозначенному в удостоверении, или его законному преемнику, или же поверенному, уполномоченному надлежащей доверенностью»:<sup>23</sup>

Սակայն այս թվերը վեհաժողով չհասան: Բանն այն է, որ վեհաժողովի՝ փոխհատուցման գծով Հատուկ հանձնախումբն իր նախնական տվյալները ներկայացրեց ապրիլի 14-ին, այնինչ զեներալ Թոմսոնն ամփոփիչ տվյալները հրապարակեց միայն ապրիլի 20-ին: Նա դա արեց գիտակցաբար, դիտավորյալ. զեներալը միայն մեկ ցանկություն ուներ՝ պաշտպանել Բաքվի նավթարդյունաբերությունում անգլիական ներդրումները: Այդ իսկ պատճառով Թոմսոնը ոչ միայն նորընծա Ադրբեջանի Հանրապետության հորդորով Ղարաբաղին կոչ էր անում մտնել Ադրբեջանի կազմի մեջ, այլև Անգլիայի շահերից ելնելով չէր ցանկանում հարաբերությունները սրել Թուրքիայի հետ: Ահա թե ինչու նա ուշացումով հրապարակեց ամփոփիչ տվյալները:

Սակայն միջազգային իրավունքը հռչակում է Ex injuria non oritur jus (լատ.)՝ հանցագործը չպետք է վայելի իր հանցագործության պտուղները, այսինքն՝ erga omnes, հանցագործության հետևանքները չեն կարող ճանաչվել կամ օրինականացվել: Մենք կատարել ենք համապատասխան հաշվարկ,<sup>24</sup> համաձայն որի Թուրքիայի պարտքը բաքվաբնակ տարբեր ազգերի ներկայացուցիչներին, 2006թ. ներառյալ, կազմում է 4 մլրդ 552 մլն 032.960 ֆունտ ստերլինգ, որից բաքվահայությանը՝ 3 մլրդ 518 մլն 847.403 ֆունտ ստերլինգ: Ահա այս թիվը պետք է հավելվի 41 միլիարդ 514 միլիոն 230 հազար 940 դոլար + բաղադրյալ տարեկան 5% ստացված թվին, գումարած Արևելյան Հայաստանի, Կիլիկիայի, Ջնյունիայի կորուստները, և կունենանք ֆինանսանյութական փոխհատուցման ենթակա բավականին ճշգրիտ գումար:

Կցանկանայինք նշել նաև, որ բաքվահայությանը Թուրքիայի

պարտքն ունի մեկ այլ՝ ոչ պակաս կարևոր ածանցյալ. դա ներկայիս Ադրբեջանի պարտքն է ինչպես հայերին, այնպես էլ այլ թալանված-կողոպտված ազգերի ներկայացուցիչներին: Ինչպես հայտնի է, 1991թ. հոկտեմբերի 18-ին Բաքուն ընդունել է «Ադրբեջանական Հանրապետության սահմանադրական ակտը Ադրբեջանական Հանրապետության պետական անկախությունը վերականգնելու մասին», որի Հոդված 2-ում գրված է. «Ադրբեջանական Հանրապետությունը հանդիսանում է 1918 թվականի մայիսի 28-ից մինչև 1920 թվականի ապրիլի 28-ը գոյատևած Ադրբեջանական Հանրապետության ժառանգորդը»: Քանի որ բաքվահայության ցեղասպանությունը, առհասարակ բաքվաբնակների թալանը կատարվել է որպես պետական կազմավորում Ադրբեջանի առաջին Հանրապետության օրոք, ավելին՝ նրա անմիջական եռանդուն մասնացությանը, ապա ներկայիս Ադրբեջանը, որպես ժառանգորդ, պատասխանատու է իր նախնիների գործած հանցագործությունների համար, մասնավորապես՝ պետք է կրի ֆինանսանյութական պատասխանատվություն: Ըստ մեր հաշվարկների, *ներկայիս Ադրբեջանը 1918թ. Բաքվում սպանված կամ չսպանված, բայց թալանված բնակիչների ժառանգորդներին պարտք է 134 մլն 149.279 ֆունտ ստերլինգ, որից հայերին՝ 102 մլն 674.461 ֆունտ ստերլինգ, ռուսներին և այլ ազգերի ներկայացուցիչներին (գերմանացիներ, ավստրիացիներ, հրեաներ, լեհեր, չեխեր, ֆրանսիացիներ, լատվիացիներ և այլք)՝ 11 մլն 062.275, վրացիներին՝ 905.159, մուսուլմաններին (ադրբեջանցիներ, պարսիկներ, լեզգիներ և այլք)՝ 504.529, հիմնարկ-ձեռնարկություններին՝ 19 մլն 002.855.<sup>25</sup>*

Խոսելով ֆինանսանյութական փոխհատուցման հիմնախնդրի շուրջ, բնականաբար, հարց է ծագում, թե ով, որ մարմինը պետք է հանդես գա որպես պահանջատեր, իրավահաջորդ: Կասկածից վեր է, որ այդ մարմինը պետք է լինի լայն լիազորություններով օժտված ոչ պետական կառույց: Եվ լիահույս ենք, որ վերջինս կստանձնի այդ առաքելությունը՝ ունենալով հիմնախնդրով զբաղվող համապա-

տասխան հանձնախումբ (այն կարող էր կոչվել Տնտեսական կամ Իրավատնտեսական պատվիրակություն, որի կազմի մեջ կընդգրկվեին միջազգային իրավունքի, միջազգային տնտեսական իրավունքի ինչպես հայ, այնպես էլ օտարազգի պրոֆեսիոնալներ):

Այդ հանձնախումբը ո՞ւմ կողմից կարող էր ստանալ լայն լիազորություններ: Պատահական չէ, որ մենք մեր խոսքի բեռն ենք դարձրել ունևոր դասը: Նախ, կրկնենք, արևմտահայության ֆինանսանյութական ունեցվածքի որակական մեծամասնությունը պատկանում էր այդ հասարակախավին, երկրորդ, այդ դասը համեմատաբար փոքրաթիվ է, և մեր ձեռքի տակ կան բազում տեղեկություններ, թե նրանց ժառանգներն ուր են արտագաղթել, որտեղ են գտնվում: Հենց այդ մարդիկ կարող էին ապագա Տնտեսական պատվիրակության հետ հարաբերվել պայմանագրային հիմունքներով՝ հանձնախմբին տրամադրելով իրենց պահանջատիրությունը հետապնդող լիազորությունները: Ասվածը տեսանելի դարձնելու համար բերենք մեկ օրինակ: 1837թ. Արաբկիրից Խարբերդ է տեղափոխվում Գրիգոր Իփաքճյանը: Այստեղ նա ամուսնանում է և ունենում 5 տղա ու 5 աղջիկ: Սկսում է զբաղվել մետաքսագործությամբ: Ապա մեկնում է Անգլիա, 7 տարի այստեղ աշխատում է, ուսումնասիրում մետաքսագործությունը և վերադառնում Խարբերդ: Որդիների հետ ընդլայնում է գործը և ԱՄՆ-ից՝ Մասաչուսեթսի մահանգի Ուորսիսթեր քաղաքից բերում «Cropton and Knoweles Loom Work» ֆիրմայի տեքստիլի սարքավորումներ: Այս ժամանակվանից ժողովուրդը նրանց սկսում է անվանել ոչ թե Իփաքճյաններ, այլ Ֆաբրիկատորյաններ:

Հոր մահից հետո 5 զավակները՝ Մամասը, Ահարոնը, Տիգրանը, Կարապետը և Սամվելը, ընդլայնում են գործը՝ արտադրելով որակյալ ու ծաղկազարդ կերպասներ, որոնք սպառվում են ոչ միայն Թուրքիայում, այլև Ռուսաստանում, Եվրոպայում և այլ երկրներում:

Ըստ սովորության, ամուսնացած եղբայրները միասին էին ապրում՝ 27 հոգով: Մինչ եղեռնը նրանց գործարանում աշխատում էր



250-300 մարդ, իսկ կարողությունը հավասար էր 500 հազար օսմանյան ոսկու: Ցեղասպանության ժամանակ ամբողջ գերդաստանը բնաջնջվեց, իսկ գործարանը բռնագրավվեց: Ֆաբրիկատորյաններից փրկվեց միայն Ահարոնի դուստր Եսթեր Չիլինկիրյանը, որի անուսինը կարողացավ խոշոր կաշառք վճարել և մահապուրծ լինել:<sup>26</sup> Ահա Եսթեր Չիլինկիրյանի ժառանգները կարող էին լիազորել Տնտեսական պատվիրակությանը՝ ստանալու Ֆաբրիկատորյանների տեքստիլի բռնագրավված գործարանի փոխհատուցումը:

Ապագա լիազոր մարմինն առաջնահերթորեն պետք է զբաղվի ևս մեկ հարցով՝ լրջորեն ուսումնասիրի 2008թ. փետրվարի 26-ին Թուրքիայի նախագահ Ա. Գյուլի հաստատած «Համայնքային կալվածքների մասին» օրենքը և դրանից բխող հնարավոր հետևանքները: Այս օրենքը 20 օրվա բուռն քննարկումներից հետո ընդունվել է Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի փետրվարի 20-ի նիստում, իսկ Ազգայնական շարժման կուսակցությունը դա համարել էր «Սևրը վերակենդանացնելու» դրսևորում և կարծիք հայտնել, որ այդ օրենքով իշխանություններն իբր խախտում են Լոզանի պայմանագրի դրույթները:

Օրենքը թուրքական պետությանը պարտավորեցնում է առաջիկա 18 ամիսների ընթացքում ազգային փոքրամասնություններին վերադարձնել այն անշարժ գույքը, որը 1974-ին գերագույն դատարանի որոշումով առգրավվել և փոխանցվել էր պետական գանձարան:

Ո՞ր գույքի մասին է խոսքը: Դիցուք, պաշտոնաթող սպա Մկրտիչ Սանասարյանը 1886թ. հուլիսի 10-ին Սանկտ Պետերբուրգում կազմեց իր կտակը: Համաձայն դրա, հիմնական դրամագլուխն էր 60.000 ռուբլի, որից 29.000 ռ. կտակակատարները վճարեցին Կ.Պոլսում մի խան<sup>27</sup> գնելու ու նորոգելու համար: Առաջին աշխարհամարտի ժամանակ թուրքական կառավարության կողմից խանը բռնագրավվեց և վերածվեց «վազըֆի» (կալվածքի): 1919թ. հաշտությունից հետո վերադարձվել է Կ.Պոլսի խնամակալությանը, որն այն վարձով տվել է անգլիա-

կան մի առևտրային ֆիրմայի: Արդյո՞ք այս խանը հիմա ենթակա է վերադարձման: Ենթակա՞ է վերադարձման փոխարժեքը նույն մարդու կտակով կառուցված՝ Արևտահայաստանի լավագույն կրթօջախի՝ Կարինի Սանասարյան վարժարանի, որը 1915թ. զրկվեց սաներից, իսկ 1916-ին արդեն հիմնահատակ թալանվեց և ավերվեց:

Եվ կամ. թանկագին քարերի վաճառական, փարիզաբնակ Ռաֆայել Մարկոսյանը 1914թ. հոկտեմբերի 3-ին գրած կտակով թողել է 3 մլն ֆրանկի ֆինանսամյութական արժեք, որի մի մասը կազմում էր Սամսունում մի պանդոկ, մի խանութ և 4 տնակ: Առաջին աշխարհամարտի ժամանակ թուրքական կառավարությունն այս ամենը բռնագրավեց: Արդյո՞ք սա «Համայնքային կալվածքների մասին» օրենքով պետք է վերադարձվի: Ո՞ւն:

Ահա կոնկրետ հարցեր (և դրանք բազմաթիվ են), որոնցով հարկ է զբաղվել:

Առհասարակ, մեր կարծիքով, Թուրքիայի համար խիստ խնդրահարույց կարող է լինել մասնավոր անձանց կտակների հարցը: Բանն այն է, որ մարդու վերջին կամքը հարգվում է գրեթե բոլորի կողմից, և այդ իմաստով մենք ունենք մի ուսանելի նախադեպ: 1794թ. մայիսի 30-ի կտակով Կալկաթայում բնակվող Բաբաջանի որդի Մասեհը 80.000 ռուբլի կտակեց Նոր Նախիջևանի հայ համայնքին:<sup>28</sup> 1866թ. Միքայել Նալբանդյանը մեկնեց Յնդկաստան և կարողացավ որոշակի շահութատոկոս ստանալ: 1948թ. կտակի տոկոսն արդեն կազմում էր 320.000 ռուբլի: 1952թ., խորհրդային իշխանության օրոք, Սք. Էջմիածնին հաջողվեց այդ գումարից ստանալ 4000 անգլիական ֆունտ ստերլինգ, իսկ 1956-ին տոկոսաչափը կազմում էր շուրջ 20.000 ֆունտ ստերլինգ:<sup>29</sup>

Անշուշտ, հասկանալի է, որ ֆինանսամյութական փոխհատուցման հասնելը բարդագույն ու լուրջ հիմնախնդիր է, այն պահանջում է մտեռանդություն ու ջանադրություն, բայց եթե մենք շարունակենք ոչինչ չանել, ապա, առաջին հերթին, դավաճանած կլի-

նենք մեր նախնյաց հիշատակին և թույլ կտանք, որ հանցագործը շարունակի վայելել իր հանցագործության պտուղները:

Զեկուցումը կուզենայի ավարտել Գարեգին Փաստրմաջյանի՝ 1896թ. «Բանկ Օտտոմանը» գրաված, 1905թ. Թիֆլիսում թաթարական (ադրբեջանական) հրոսակախմբերին գլխովին ջախջախած, 1920թ. ԱՄՆ-ում Հայաստանի Հանրապետության առաջին դեսպան նշանակված, ժնկի գերեզմանատանը հանգչող Արմեն Գարոյի հետևյալ խոսքերով. «Դուք տեսաք եւ ձեր վրայ զգացիք, թէ ինչքա՛ն թանկ նստեց մեզ մեր ազատութիւնը: Աշխարհիս երեսին ոչ ոք վճարեց այդքան արիւն իր ազատ ապրելու իրաւունքը ձեռք բերելու համար:

Եւ քանի որ դուք էք լինելու անմիջական տէրը այդ թանկագին ժառանգութեան, երկու բան ունիմ ձեզմէն խնդրելիք, առաջին՝ չմոռնաք ձեր աչքերուն առաջ կատարուած դէպքերուն արժէքն ու նշանակութիւնը եւ զանոնք հաւատարմութեամբ փոխանցէք ձեր յաջորդ սերունդներուն, եւ երկրորդ՝ արժանի յաջորդները լինիք այն մեծ սերունդին, որ ձեզ համար պատրաստեց աշխարհիս բարիքներէն ամենաթանկագինը՝ Ազատ Հայրենիքը...

Եւ մեր բոյնն ալ շինուած է արագիլի բոյնին պէս ամենաբարձր տեղը, երկրագնդիս տանիքին վրայ: Չափազանց համեստ, ցախերով եւ չուլերով, բայց մեր բոյնն է այն, հազար անգամ վերաշինուած մեր պապերու ձեռքով: Այս հազար մէկերորդը մեզ է վիճակուած վերաշինութեան պարտականութիւնը, շտապենք մեր գործին, բայց այնպէս շինենք այս անգամ, որ մեր թշնամիները չկարողանան այլեւս քանդել»:<sup>30</sup>

Այո, հիմա՝ այս պահին, այստեղ մենք վերաշինում ենք մեր հազարմեկերորդ բույնը, որն այլևս ոչ մի թշնամի չի քանդի: Եվ մենք կպահպանենք ու հաջորդ սերունդներին կփոխանցենք այն մեծն գաղափարը, որի իրականացմանը, գուցեթե, մենք ականատես չլինենք, բայց կտեսնեն ապագա հայերը՝ փոխանցենք Ազատ և Միացյալ Հայաստան ունենալու գաղափարը:

### ԼՈՒԻՍ ԲԱՐԲԵՐԱ ՍԱՊԱՏԵՐՈ

Իսպանիայում  
Հայաստանի  
Հանրապետության  
պատվավոր հյուպատոս



### ԴՎԿԻԴ ԷԼԵՈՒՏԵՐԻՈ ԲԱԼԲՈՒԵՆԱ ՊԵՐԵՍ

Իսպանիայում  
Հայաստանի  
Հանրապետության  
պատվավոր  
հյուպատոսության  
փաստաբան

## ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

### Հայեցակարգ և Նախապատմություն

**XX** դարի ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների լույսի ներքո հեշտ չէ ճշգրիտ սահմանել, թե ինչ ասել է ցեղասպանություն կամ ավելի ճիշտ՝ ցեղասպանական արարքներ ու գործողություններ, որոնց ենթարկվել է մարդկությունը: Սա ամենևին նման վարքագծով պայմանավորված դաժանությունները շրջանցելու միջոց չէ: Հայեցակարգային խնդիրն ինչպես հասարակ լեզվի մի-

ջոցով ցեղասպանության որոշ մոտավոր և վերացական գաղափարների արտահայտման, այնպես էլ դրանք իրավական լեզվով արտահայտելու մեջ է, ինչն ինքնին զուրկ չէ բանավեճերից և ենթատեքստերից: Վերջիններս ցեղասպանության հայեցակարգը սահմանելու տարածայնությունների հետևանք են՝ անսահման վայրագություններն ինչ-որ կերպ արդարացնելու և դրանց օրինական տեսք հաղորդելու համար: Արդարացումն այս առումով արտահայտվում է այնպիսի փաստարկներով, ինչպիսիք են՝ բանակի կողմից «հրամանի կատարումը», հրահրված հայտարարություններ՝ «ոչ մի միջամտություն ներքին գործերին» սկզբունքով, կամ անհամատեղության փաստարկներ, ինչպես, օրինակ՝ «հանցանքներ են զուտ նրանք, որոնք դեմ են այն մարդկանց, ովքեր ոչ մի կապ չունեն հավաքական ոչնչացման հետ»:

Սակայն, ճիշտ է, որ 1998թ. հուլիսի 17-ի՝ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությամբ հնարավոր էր որդեգրել ցեղասպանության նոր, հայեցակարգային չափանիշ, որն ավելի կհամապատասխաներ մարդկության դեմ հանցագործությունների նոր իրավիճակներին, որոնք 1948թ. դեկտեմբերի 9-ի ՄԱԿ-ի Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժի մասին կոնվենցիայում ցեղասպանության հայեցակարգի ներառման արդյունք են: Այսպիսով, որոշակի խմբի անդամների զարշելի սպանությունների, անհետացումների և կտտանքների, ինչպես նաև բռնի տեղահանության բազում դեպքերը չեն ընկնում ցեղասպանության հանցակազմի ներքո, այն հիմնավորմամբ, որ մեծ արարքների նպատակը ոչ թե մարդկային խմբի ոչնչացումն է, այլ՝ «քաղաքական դրդապատճառները»: Այս հայեցակարգը ներառված չէ ոչ Իսպանիայի 1995թ. Քրեական օրենսգրքի, ոչ 1948թ. ՄԱԿ-ի Կոնվենցիայի և ոչ էլ՝ Միջազգային քրեական դատարանի կանոնադրության մեջ:

Անկասկած, այսպես կոչված՝ «խելացի պատերազմի» գովաբանումը, որը միայն «ռազմական թիրախների» դեմ է ուղղված, պար-

զապես մոլորություն է, վերը նշված դաժանությունները մոռացության մատնելու կործանարար և ավերիչ ձև՝ հասկացնել տալու, որ սպանելն արդարացված է՝ ռազմական նպատակներին հասնելու համար, կարծես թե սպանվողները մարդկային էակներ չեն:<sup>1</sup> Սա, անկասկած, բարբարոսության սոսկալի էֆեմիզմ է, որը մարդկային խմբերի, այսինքն՝ մարդկանց, սխտեմատիկ ոչնչացումն է: Որպես ակնառու օրինակ կարելի է բերել պատերազմը Բոսնիայում, որտեղ սերբ-բոսնիացիների հակահետևակային ականները վնասազերծելու հակամարդկային առանձնահատուկ մեթոդը մեծ սխալ է: Այս մեթոդի հիմքը հետևյալն էր. որոշակի տեղանքում հավաքել բոլոր երեխաներին ու հաշմանդամներին, պատահակաբար ընտրել նրանցից մեկին և հարկադրաբար մի քանի մետր քայլել տալով՝ սպանել: Երեխաներն ու հաշմանդամները սարսափով սկսում էին փախչել՝ փորձելով փրկել իրենց կյանքը և, ի վերջո, վազելով վերացնում են ականները: Սա ոչ թե «խելացի պատերազմ» է, այլ մարդկության դեմ իրագործված հանցագործություններից ամենաահավորը:

Ցեղասպանություն հասկացության հանցակազմը, անկասկած, պետք է վերանայվի, գոնե մասամբ: Ըստ իս, պետք է ուսումնասիրվի ցեղասպանական գործողությունների ամբողջականությունը, որպեսզի ուրվագծվի իրականությունը: Այսինքն՝ պետք չէ խուսափել բառի ստուգաբանությունից, որը ձևավորվել է հունարեն *genos* և լատիներեն *caedere* (սպանել) արմատներից: Սա բնութագրում է ռասայական կամ էթնիկ խմբի մարդկանց սպանողը:

Սակայն եկեք դիտարկենք այս հայեցակարգի պատմական հանգամանքները: Ինչպես նշում են Կարբոնել Մատեուն և Վիվես Անտոնը,<sup>2</sup> միայն Երրորդ Ռեյխի իրականացրած հետապնդումներն ու հավաքականության ոչնչացումը չէր, որ ապացուցեց մարդկային խմբերի ոչնչացման ձևի գոյությունը: Նյուրնբերգի<sup>3</sup> ու Տոկիոյի ռազմական դատարանների կանոնադրություններն իրենց 5-րդ և 6-րդ հոդվածներով, ինչպես նաև դատարանի դատավճիռներով

դատապարտեցին Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում կատարված հանցագործությունները և բոլորին հայտնի դարձավ մարդկության դեմ ուղղված հանցագործության այս ձևը, որի դեմ ի սկզբանե անհրաժեշտ էր պայքարել: Այդ պատճառով, 1948թ. դեկտեմբերի 9-ին ընդունված՝ Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին կոնվենցիայի երկրորդ հոդվածում օգտագործվում է ցեղասպանության այն հասկացությունը, որն ուղղակիորեն բխում է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1946թ. դեկտեմբերի 11-ին ընդունած 96(1) բանաձևից, որտեղ, լեհ իրավաբան Ռաֆայել Լեմկինի<sup>4</sup> առաջարկությամբ, գործածվեց «ցեղասպանություն» եզրույթը: Լեմկինին հանձնարարվեց խմբագրել մի նախագիծ՝ իրավաբաններ Վեսպասիանո Պելայի և Դոնադյո դը Վաբրի աջակցությամբ: Նախագծում արտահայտվեց քաղաքակիրթ աշխարհի կողմից ցեղասպանության դատապարտման իրավունքի վերաբերյալ մտադրություն: Այսպիսով, այն սահմանվում է որպես «սպանություն՝ ուղղված մարդկային խմբի ոչնչացմանը»: Այնուամենայնիվ, այս հասկացությունը չէր սպառում ուշադրության արժանի այն իրողությունը, որը տրվել էր հենց Լեմկինի կողմից՝ ավելի ընդարձակ բնութագրմամբ: Այս հասկացության մեջ ներառված էին ցեղասպանության չորս տարատեսակ. ֆիզիկական ցեղասպանություն, որն ուղղված է մարդկային խմբի ոչնչացմանը՝ բնաջնջման միջոցով. կենսաբանական ցեղասպանություն, որն իրականացվում է այնպիսի ձևերով, որոնք խոչընդոտում են տվյալ էթնիկ խմբի վերարտադրությանը. մշակութային ցեղասպանություն, որն ուղղված է ժողովրդի մշակութային, լեզվական կամ կրոնական արժեքների ոչնչացմանը, քաղաքական ցեղասպանություն, որն ուղղված է ոչնչացնելու տվյալ քաղաքական խմբին: Այնուամենայնիվ, 1948թ. կոնվենցիան նախատեսել է միայն ֆիզիկական և կենսաբանական ցեղասպանություններն իրենց առաջացրած վերոհիշյալ հետևանքներով:

Ըստ իս, դիտարկելով Լեմկինի առաջարկությունները՝ դիպուկ է

ցեղասպանության այն հասկացությունը, որը տալիս է Բելտրան Բալեստերը<sup>5</sup> այն համարելով իբրև «դաժան գործողություն, որը մարդուն զրկում է էական իրավունքներից և որն իրականացվում է բնակչության կամ նրա մի մասի ամբողջական կամ մասնակի ոչնչացմամբ՝ առնչվելով ռասայական, ազգային կամ կրոնական նկատառումներին»:

Իսպանիան միացել է Կոնվենցիային: 1968թ. սեպտեմբերի 13-ի և 1971թ. նոյեմբերի 15-ի բարեփոխված Քրեական օրենսգրքի 44-րդ հոդվածում շարադրվել են որոշակի մարդկային խմբերի ամբողջական կամ մասնակի ոչնչացման հետ կապված արարքները:

Նախկին Քրեական օրենսգրքի 137ա, 137բ և 137գ հոդվածներում բնութագրվում էր ցեղասպանության ոճիրը. կանոնակարգ, որի մեջ զգացվում էր պարզության և տեխնիկական լուսաբանման պակասը: Ինչպես արտահայտեց Իսպանիայի Գերագույն դատարանը,<sup>6</sup> պարզ էր այն, որ վերոհիշյալ հոդվածների կանոնակարգումը համապատասխանում էր 1948թ. կոնվենցիայում օգտագործված սկզբունքային չափանիշին: Այն ընդգծեց հեղինակի նպատակը՝ «ամբողջովին կամ մասամբ ոչնչացնելու ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խումբը»: Այսպիսով, անհրաժեշտություն է առաջանում ցեղասպանության սահմանման մեջ ընդգծել սուբյեկտիվ տարրը՝ մարդկային խմբերի ոչնչացման մտադրությունը:

Նախկին Քրեական օրենսգրքի վերոհիշյալ 137-րդ հոդվածը բարեփոխվել է 1995թ. մայիսի 11-ի 4/1995 օրենքով, որտեղ ավելացել են երկու նոր հոդվածներ՝ 137 բիս բ և 137 բիս գ: Նպատակն էր ցեղասպանությունը որակել ոչ թե որպես սադրանք, այլ առանձին վերցված հանցանք: Կանգ չեն առնի վերլուծելու այս հարցը, որքան էլ 1995թ. արդիական Քրեական օրենսգրքի իշխող նորմերը շարունակվեն այն նույն հայեցակարգով, որը հիմնված է արդեն ուսումնասիրված տեղեկությունների վրա:

1995թ. Քրեական օրենսգրքի 607-րդ հոդվածի նոր կանոնն ընդգծում է գլխավոր տեխնիկական պարզությունը, բայց ոչ՝ հայե-

ցակարգային ճշգրտությունը, որը, ըստ օրինականության սկզբունքի, օրենսդիրը չպետք է շրջանցած լինի: Եվ ոչ թե այն պատճառով, որ այն համառոտ է ներկայացվել խմբագրականում, այլ, որովհետև շրջանցվել է որոշակի ցեղասպանական գործողությունների նկարագրությունը, որոնք, ըստ իս, պետք է ներառված լինեին (օրինակ՝ քաղաքական ցեղասպանությունը):

Ե՛հիշտը՝ ցեղասպանության ընկալման պարզ սահմանումն է սուբյեկտիվ տարրով, քանի որ Քրեական օրենսգրքի 22.4<sup>7</sup> հոդվածով չզուգահիսվելը տեղիք է տալիս քրեական պատասխանատվության փոփոխվող հանգամանքի կիրառմանը:

### Իրավական շահ

Գիտության մեջ ընդգծվում է, որ ցեղասպանության հանցակազմի իրավունքով պաշտպանվող շահը միջազգային համագոյությունն է՝ համաձայն 24-րդ հոդվածի իրավական հղման պարբերական տեղադրման, որն անվանվում է «Միջազգային հանրության դեմ հանցագործություններ»: Ըստ իս, ամենահստակը օրենսդրի կամքն է՝ այս ոճիրը որակելու որպես «միջազգային հանցագործություն» և «հանցագործություն մարդկության դեմ»՝ հանցանքին տալով վերազգային բնույթ: Չի կարելի կասկածի տակ դնել ցեղասպանության ոճրի միջազգային կարևորությունը և ուշադրություն չդարձնել այն հանգամանքներին, ըստ որոնց ցեղասպանությունը միջազգային բնույթ կրող հանցանք է՝ և հենց ըստ այդմ էլ այն տեղ է գտել օրենքում: Վերազգային բնույթն ուրվագծում է տարածքայնության այն սկզբունքի բացառիկությունը, որը բացարձակ չէ, այլ, հիմնվելով անձնական, իրական, պաշտպանության կամ միջազգային արդարադատության սկզբունքների վրա՝ ներկայացնում է բացառություններ: Ահա այս վերջինիս վրա են ուզում հրավիրել ձեր ուշադրությունը, քանի որ, 1985թ. Դատական իշխանության մասին օրգանական օրենքի 23.4 հոդվածում գե-

տեղված է, որ իսպանական պետության իրավագործության տակ է ընկնում ցեղասպանության ոճիրների քննումը, եթե անգամ դրանք իրագործվել են իր սահմաններից դուրս: Քրեական օրենքի տարածքայնության սկզբունքի այս բացառիկությունը հայտնի է «արտատարածքայնություն» կամ, ինչպես նշում են այլ հեղինակներ՝ «ուլտրատարածքայնություն» անվանումներով:<sup>10</sup>

Այդուհանդերձ, ինչպես նշում են այլ հեղինակներ, ինչպես, օրինակ՝ Գոնսալես Ռուսը,<sup>11</sup> դատավոր կարող է լինել ոչ թե միջազգային հանրությունը, այլ «այն խումբը, որի գոյատևմանն են սպառնում»: Այս առումով, Ռոդրիգես Դևեսան և Սերանո Գոմեսը<sup>12</sup> նշում են. «ամենաանհատական դատավորը ոչ թե ֆիզիկական անձն է, այլ՝ հավաքական խումբը»:

Ըստ իս՝ քրեական օրենսդրությամբ պաշտպանվող արժանի իրավական շահ դիտվում է հենց մարդկային խմբի կամ կոլեկտիվի գոյությունը: Նման կարգի հանցագործությունն ամենասարսափելին է, որը կարող է հանդուրժել մարդկությունը, քանի որ այն սպառնում է որոշակի մարդկային խմբերի գոյությունը, որն արդեն դուրս է գալիս միջազգային խաղաղության խախտման շրջանակներից: Այդ պատճառով, կարծում են, ավելի ճիշտ է քննադատական բնույթ տալ այս հանցանքներին՝ չնոռանալով երկու կողմնորոշումների կարևորությունն ու նշանակությունը: Բայց, անկասկած, ես ավելի մեծ կարևորություն են տալիս Գոնսալես Ռուսի<sup>13</sup> կողմնորոշմանը և լիովին ճիշտ են համարում քննադատել վերոհիշյալ հանցանքը:

### Բնորոշ վարքագիծ

#### 1. Ցեղասպանություն

Ցեղասպանություն ոճիրը քննվում է 1995թ. Քրեական օրենսգրքի 607-րդ հոդվածում, որի բովանդակությունը հետևյալն է.

607.1 Նրանք, ովքեր որևէ ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խումբ անբողջությամբ կամ մասնակի ոչնչացնելու մտադրությամբ իրագործում են հետևյալ գործողություններից որևէ մեկը՝ պատժվում են.

1. տասնհինգից քսան տարի ազատազրկմամբ, եթե սպանվում է խմբի անդամներից որևէ մեկը, եթե առկա են երկու կամ ավել ծանրացուցիչ հանգամանքներ, ապա կկիրառվի մեկ աստիճան ավելի բարձր պատիժը,

2. տասնհինգից քսան տարի ազատազրկմամբ, եթե սեռական ոտնձգություն է կատարվում խմբի անդամներից որևէ մեկի նկատմամբ կամ սույն Օրենսգրքի 149-րդ հոդվածով նախատեսված որևէ մարմնական վնաս պատճառելու դեպքում,

3. ութից տասնհինգ տարի ազատազրկմամբ, եթե խումբը կամ դրա առանձին անդամները հայտնվում են իրենց կյանքի համար վտանգավոր կամ առողջությունը լրջորեն վնասող պայմաններում կամ 150-րդ հոդվածով նախատեսված մարմնական վնաս պատճառելու դեպքում,

4. ութից տասնհինգ տարի ազատազրկմամբ, եթե իրականացվում է խմբի կամ դրա անդամներից մեկի հարկադրական տեղահանությունը, նրանց կենսակերպի փոփոխությանը կամ այլ խումբ նրանց բռնի տեղափոխումը,

5. չորսից ութ տարի ազատազրկմամբ, եթե, բացի 2-րդ և 3-րդ կետերում նշվածներից, որևէ այլ մարմնական վնաս է հասցվում:

Հոդվածի բառացի բովանդակության մեջ տարբերակվում են երեք տեսակի ցեղասպանություն.

ա. *Ֆիզիկական ցեղասպանություն*. սա հասկացվում է որպես խմբի ոչնչացում՝ իր անդամների սիստեմատիկ ոչնչացման միջոցով: Այս տարբերակում ցեղասպանությունը չի սահմանափակվում սպանությամբ, այլ ներառում է մարդկանց դեմ կատարված բոլոր հանցանքները: Ինչ վերաբերում է 607.1 հոդվածում տեղ գտած «սպանել» բային, ապա այն աղերսվում է ինչպես մարդաս-

պանությանը, այնպես էլ՝ սպանությանը: Այսինքն՝ պատժելի վիրավորանքը չի դիտվում որպես չարությամբ լի հանգամանքների պատճառ, հանցանքի ծանրացում, գին, փոխհատուցում և խոստում, որոնք Քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածում նշված այն որակներն են, որոնք հանգեցնում են մարդասպանության, հետո վերածվում այլ պատկերի՝ սպանության: Այսպիսով, ինչպես նշում է Ֆեիխու Սանչեսը,<sup>14</sup> դրանցից մեկի առատությունը դիտվում է որպես ծանր հանգամանք: Միակ տարբերությունը, որը կարելի է քրեորեն գնահատել կամ արժևորել, այն կանխատեսումն է, որն իրագործվում է 607.1-1 հոդվածի 2-րդ պարբերությամբ: Այդտեղ, ըստ 22-րդ հոդվածի, տարբեր տեսակի վիրավորանքների կուտակման դեպքում ծանրացուցիչ հանգամանքներով պատիժը կարող է հասնել մինչև 30 տարվա բանտարկության: Յորկա Օրտեգայի խոսքով՝ «օրենսդիրը ցանկացել է առավելագույնը տալ երկու կամ ավելի ծանրացուցիչ հանգամանքներին՝ հասկանալու 66-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված: Անկիրառելի է վերոհիշյալ կետը և բացի այդ, ծանրացուցիչ հանգամանքները ոչ թե խստացնում են պատիժը, այլ ենթադրում են ինչ-որ տիպի պատիժ:<sup>15</sup> Այսինքն՝ բացի ծանրացուցիչների առատությունից՝ ավելանում են մեղմացուցիչ հանգամանքները: Վերջիններս ավելի կիրառելի են իրավական, վերացական շրջանակում, որը ծանրացուցիչ հանգամանքների կիրառման արդյունքն է և կկիրառվի 20-ից 30 տարվա ազատազրկման ընթացքում:

Մեծ խնդիրներ է առաջացնում չկանխամտածված սպանությունը: Համակարգված մեկնաբանությամբ՝ «սպանել» բայն օգտագործվում է միայն Քրեական օրենսգրքում՝ ցույց տալու մարդասպանության ցավոտ հանգամանքը և բացառելու չկանխամտածված սպանությունը: Այլ բան կլիներ, եթե օրենսգրքում վկայակոչվեր «մահվան պատճառը», որի մեկնաբանումն ավելի մեծ խնդիրներ կառաջացներ: Ամեն դեպքում, բացարձակապես ընդունելի չէ ցեղասպանության նմանատիպ անխոհեմ վարքը, այսինքն՝ որոշա-

կի մարդկային խմբի ոչնչացման կամ բնաջնջման մտադրությունը, ինչպես և անհնար է հասկանալ այս ոճրի իրագործումը՝ առանց սուբյեկտիվ տարրի առկայության: Նման նկատառումը չի համաձայնեցվում անխտեն արարքի հետ: Բացի այդ, զուտ քրեորեն, ճիշտ չէ բարձրացրած և չափազանցված պատիժը, որը պետք է տրվի ոչ բանական արարքի համար (15-20 տարի ազատազրկում):

Սուբյեկտիվ տարրը ներկա է այս հասկացության բոլոր ձևերում, ինչպես նաև 607-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերում: Ինչ վերաբերում է վնասներին, օրենսգիրքը վկայակոչում է 149-րդ և 150-րդ հոդվածներում նշված վնասները, ինչպես նաև նրանք, որոնք չեն ընդգրկվում 2-րդ և 3-րդ կետերում և որոնք ներառում են սույն հոդվածի 5-րդ կետը:

Ուշագրավ են սեռական ոտնձգությունների վերաբերյալ սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված դրույթները: Ըստ իս՝ բարդ է պատկերացնել, թե ինչն է այստեղ բնութագրվում որպես սեռական ոտնձգություններ: Միգուցե հարկ է դրանց անդրադառնալ որպես ցեղասպանություն հիշեցնող սեռական ոտնձգությունների՝ նկատի ունենալով 1999թ. ապրիլի 30-ի՝ 11/1999 օրենքի միջոցով Քրեական օրենսգրքի 8-րդ բաժնի բարեփոխումը՝ «խախտում» բառի վերականգնմամբ: Ավելի ճիշտ՝ պետք է դրանց անդրադառնալ որպես ցեղասպանական բնույթի սեռական հանցագործություններ: Ճիշտն այն է, որ օրենսդրի՝ սեռական ոտնձգության վկայակոչումը (այժմ նորից խախտում) սահմանափակվում է վավաշոտ արարքներով, որոնք են՝ մաշկային, բերանային, հեշտոցային և հետանցքային ներթափանցման ձևերը: Ինչպես նշում է Գոնսալես Ռուսը,<sup>16</sup> «Սեռական ոտնձգությունների կոնկրետ վկայակոչումը ներկայացնում է *nomen iuris* հատուկ հանցագործությունը, որը թույլ չի տալիս հասկանալու սեռական ոտնձգությունները»: Ի վերջո, այս վարքերը սահմանափակվում են Քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածով:

Ամեն դեպքում, դեռևս հեշտ չէ հայտնաբերել այնպիսի վարք, որն ուղղված լինի որոշակի մարդկային խմբի ամբողջական կամ

մասնակի ոչնչացմանը: Այդ իսկ պատճառով, կարելի է արդեն ուսումնասիրված համարել Քրեական օրենսգրքի 607.1-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված այն հնարավորությունը, որն, անկասկած, ենթարկվում է *in malem partem* համանման մեկնաբանությանը: Չնայած, ակնհայտ է, թե որն է օրենսդրի կամքը՝ սեռական բնույթ կրող և նողկալի արարքներին պատասխան առաջարկ տալու, և որքան էլ այդ արարքները պարբերաբար կատարվեն, կարող են իրականացվել ընդդեմ որոշակի խմբի: Ոչ թե խմբի գոյությունն է վտանգի ենթարկվում, այլ՝ նրա արժանապատվությունը: Որքան տառապի ստորացումից, միևնույն է՝ որոշակի խմբի մեջ ինտեգրված անձը պատկանում է այդ խմբին: Դրա ապացույցն է գործերի կողմից այս դարում նմանատիպ արարքների պարբերաբար իրականացումը: Դրա պատասխանը, ինչպես նշում է Տամարիտ Սումայան,<sup>17</sup> կարող էր գտնվել ավելի դիպուկ տեղում, որը նույն 24-րդ բաժնի 2-րդ գլուխն է և որտեղ ուսումնասիրվում են ռազմական մարդասիրական իրավունքի պատժի չափանիշները:

բ. *Կենսաբանական ցեղասպանություն.* ինչպես նշվում է Քրեական օրենսգրքի 607-րդ հոդվածի 4-րդ կետում, այն «վերաբերում է գործողությունների, որոնք ֆիզիկապես, բայց անուղղակիորեն խոչընդոտում են խմբի անդամների վերարտադրմանը»:<sup>18</sup> Այստեղ ենթադրվում է ամործատումը, ստերիլիզացիան կամ գենետիկ մանիպուլյացիայի հանցանքները՝ հասցնելով գենոտիպի խախտմանը, որն այս դեպքում պետք է գնահատվի և կիրառվի ըստ այս հոդվածի:

գ. *Մշակութային ցեղասպանություն.* ինքնուրույն տեղ չունի և ներառված է Քրեական օրենսգրքի 607.1-րդ հոդվածի 4-րդ կետում՝ կենսաբանական ցեղասպանություն խորագրի տակ: Մշակութային ցեղասպանությունը բնորոշվում է խմբի մշակույթի ոչնչացմամբ, ինչպիսին է՝ սեփական լեզվով հաղորդակցվելու խոչընդոտումը: Նմանատիպ վարքը նպատակ է հետապնդում թաքցնել խմբի սեփական ինքնության նշանները կամ մշակութային արժեքները և դրանք դարձնել մյուսի սեփականությունը:<sup>19</sup>

Քաղաքական ցեղասպանությունից, որի համար չի հաստատվել որևէ կանոնակարգում, ծագում են «քաղաքական նպատակներով» իրականացված հանցանքների վերաբերյալ մեկնաբանվող քննարկումներից շատերը: Բայց սա կքննարկվի ավելի ուշ:

Պարզ է միայն բռնության համակարգման բնույթը<sup>20</sup> ինչպես պատերազմի, այնպես էլ խաղաղության ժամանակ:

## 2. Ցեղասպանության ժխտումը և արդարացումը՝ Քրեական օրենսգրքի 607.2-րդ հոդվածը, ըստ որի՝

2.2 Որևէ եղանակով գաղափարների կամ ուսմունքների տարածումը, որոնք ժխտում կամ արդարացնում են սույն հոդվածի նախորդ կետում նշված հանցագործությունները կամ նպատակ են հետապնդում վերականգնելու այն վարչակարգը կամ հաստատությունները, որոնք սատարում են ցեղասպանության եղանակներին, պատժվում են մեկից երկու տարվա ազատազրկմամբ՝ մեզ ներկայացնում է անկախ հանցանք: Բովանդակությունն այն է, որ 1948թ. Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժելու մասին կոնվենցիայի 3.3 հոդվածը սահմանում է «ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրման» հանցակազմը: 1995թ. մայիսի 11-ի 4/1995 օրենքով բարեփոխված Քրեական օրենսգրքում նպատակների արտահայտման հարցում ասվում էր, որ նախքան նացիստական գաղափարախոսություն դավանող խմբերի՝ եվրոպական երկրներում իրականացրած ռասիստական և հակասեմիտական բռնության դեպքերի տարածումը, անհրաժեշտ էր սանձել բոլոր այն գործողությունները, որոնք ենթադրում էին նմանատիպ գաղափարների գովաբանումը:

Այն, ինչ իրականում պատժվում է, ոչ թե նախապատրաստական գործողություն է կամ սադրանքի ձև՝ ինչպես գովաբանումը հասկացվում է ներկայիս Քրեական օրենսգրքում, այլ այն, որ օրենսդիրն ուսումնասիրելով 615 հոդվածում սադրանքը և գովաբանումը՝

փորձում է նվազեցնել կարծիքի արտահայտումը:<sup>21</sup> Ինչպես Քրեական օրենսգրքի 18.2 հոդվածում նշվում է գովաբանման մասին, դա չի պահանջում, որ ցեղասպանություն իրագործելու համար ուղղակի հրահրում լինի: Բավական է, որ գաղափարների զուտ տարածումն ավարտվի, և դրանք «համաձայնվեն այնպիսի վարչակարգի ստեղծման, որը կհովանավորի համանման գործողությունները»:<sup>22</sup> Նման կարծիքն անհամատեղելի է Իսպանիայի Սահմանադրության 20 հոդվածի,<sup>23</sup> ինչպես նաև՝ գաղափարական ազատության հետ, որը հռչակված է դրա 16-րդ հոդվածում, որտեղ և լուրջ կասկածներ կան այս ընկալման սահմանադրականության վերաբերյալ: Գոնսալես Ռուսի<sup>24</sup> խոսքերով՝ եթե գաղափարների կամ ուսմունքների տարածումն ազդում է այլ իրավունքների վրա, ինչպիսին է, օրինակ, պատիվը՝ որպես արժանապատվությունից ծագած իրավունք, ապա արարքն այդ պատճառով կստանա սովորական դասակարգում, բայց չի արդարացնի հատուկ և անկախ դասակարգումը: Այս տեսակի իրավական բարիքների պաշտպանությունը, որը հովանավորվում է, չի պաշտպանվում քրեական իրավունքով: Ըստ Կուերդա-Արնաույի,<sup>25</sup> «սահմանադրական արժեքները պաշտպանվում են, բայց՝ հակաժողովրդավարական ձևով»: Բացի այդ, քրեական իրավունքի տեսակետից ամենազարմանալին այն է, որ օրենսդիրն առաջարկում է 607.2-րդ հոդվածով նախատեսված արարքի համար նախատեսել մեկից երկու տարի ազատազրկում, իսկ 615 հոդվածում նախատեսված հանցանքի համար՝ հանցանքի պատիժը կարող է հասնել մինչև տասնհինգ տարվա ազատազրկման, եթե խոսքը սադրանքի մասին է: Սա ևս մեկ անգամ վերահաստատում է 607.2 հոդվածի տարբերությունը և այն, որ վերջինս ավելի ընդարձակ է, քան նախապատրաստական գործողությունը, որը 18.2-րդ հոդվածի շրջանակներում չի կարող համարվել որպես գովաբանում և սադրանքի միջոց: Օրենսդիրը, գիտակցելով, որ կրճատում էր կարծիքի արտահայտումը, նշանակալիորեն նվազեցրել է մեղքը, ինչն անընդունելի է իրավական տեսակետից: Ֆեիխու Սանչեսն<sup>26</sup> այս տեսա-



կի գործողություններն անվանել է իբր-գովաբանական: Այսպես կոչված «Չենդիսայդ» գործոնով, ըստ որի՝ ինչ-որ ամսագրում հրատարակվել էին պատմություններ հրեաների նկատմամբ նացիստական համակենտրոնացման ճամբարներում տեղի ունեցած իրադարձությունների, ինչպես նաև անմարդկային և ստոր վերաբերմունքի, նվաստացումների մասին, Ստրասբուրգի Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր 1976թ. դեկտեմբերի 7-ի վճռում սահմանեց, որ «այդպիսի համատեքստում առկա է վիրավորական վերաբերմունք ամբողջ մի ժողովրդի՝ հրեաների նկատմամբ»: Սահմանադրական դատարանն իր՝ 1991թ. նոյեմբերի 11-ի և 1995թ. նոյեմբերի 11-ի որոշումներով հաստատում է ցեղասպանական արարքների գովաբանման, Ողջակիզման փաստերի ժխտման, հրեաների դեմ հեզմանքով արտահայտվելու և սարսափելի անցյալը կասկածի տակ դնելու պատժամիջոցի սահմանադրականությունը:<sup>27</sup> Ըստ դատարանի, «ո՛չ գաղափարական ազատությունը, ո՛չ էլ արտահայտման ազատությունը չեն հասնում ցույցերին, ռասիստական կամ ազգատյաց արտահայտությունների վրա ազդելու իրավունքին, քանի որ, ինչպես նշվում է 20.4-րդ հոդվածում, գոյություն չունեն սահմանափակ իրավունքներ, և դա հակասում է ոչ միայն տուժածների պատվի իրավունքին, այլև՝ մարդկային արժանապատվության սահմանադրական իրավունքին (Իսպանիայի Սահմանադրության հոդված 10):<sup>28</sup>

Այս առումով նշանակալից է Բարսելոնայի մարզային դատական ատյանի երրորդ բաժանմունքի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանի 2007թ. նոյեմբերի 7-ի որոշումը հակասահմանադրականության վերաբերյալ 5152-2000 գործով, որն առնչվում է Քրեական օրենսգրքի 607-րդ հոդվածի երկրորդ պարբերությանը: Նաև, մասամբ հակասահմանադրական և անվավեր է ճանաչել «ժխտում են, կամ» արտահայտության ներառումը՝ Քրեական օրենսգրքի 607.2-ի հոդվածի առաջին մասում, որը պատժում է տարածումն այն գաղափարների և ուսմունքների, որոնք ժխտում կամ

արդարացնում են ցեղասպանություն ոճիրը և որոնք մեկնաբանված են վերոհիշյալ որոշման 9-րդ իրավական հիմքում:

## Սուբյեկտներ

Այս ոճրի պասիվ սուբյեկտը՝ ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խումբն է և, վերջին հաշվով, մարդկային խումբը: Հենց այստեղ է, որ, ըստ իս, ծագում է այն խնդիրը, թե ինչ ենք հասկանում մարդկային խումբ ասելով: Չնայած կասկած չկա, որ դա վերաբերում է էթնիկ, ռասայական կամ կրոնական խմբին, նույնը չի կարելի ասել ազգային խմբի համար: Ազգային խումբը ոչ այլ ինչ է, քան երկրում բնակվող բնակչություն եզրույթի հոմանիշը: Բայց այդ խումբը պետք է մեկնաբանել չափանիշի ոգով, ցեղասպանության էությանը: Մարդկային խումբը հոմանիշն է այն խմբի, որը տարբերվում է առանձնահատկություններով ու տարրերով, որոնք նրան առանձնացնում են մյուս խմբերից: Ինչպես նշել են Գուտիերես Կոնտրերասը<sup>29</sup> և Վիլեգաս Դիասը, ազգային խումբը չի կարող հասկացվել որպես երկրում բնակվող մարդկանց խումբ, այլ՝ պետք է տարբերվի մյուսներից: Այդ պատճառով էլ, ըստ իս, պետք է ներառել քաղաքական խմբերին հենց միայն նրա համար, որ իրարից տարբերվում են: Այսպես կարելի է հասկանալ կամ ուսումնասիրել քաղաքական ցեղասպանության իմաստը: Դրա պայմանական մեկնաբանումը թույլ կտար ցեղասպանությունը չորակել որպես ահավոր և գարշելի գործողություն, ինչպիսիք են՝ մեծահասակների, հաշմանդամների կամ ՁԻԱՀ-ով, բորոտությամբ տառապողների համակարգված ոչնչացումը:

Այս առումով, ինչպես նշել է Գոնսալես Ռուսը,<sup>30</sup> հանցանքի իրագործումը մշտապես ուղղված է խմբի և ոչ թե անհատների դեմ, որոնք սոսկ հանցագործության առարկան են: Ռուսը նշում է, որ «անհատական իրավունքներին հարվածներն օգտագործվում են որպես գործառույթ՝ հաջորդականությամբ հասնելու վերջնական նպատակին, որն է՝ հավաքական ոչնչացումը»:

Սակայն, հանցանքն ավարտված է համարվում, երբ նախատեսված հետևանքներն առաջանում են խմբի մեկ անդամի մոտ: Նման պնդումը կարող է տարօրինակ թվալ, բայց բառացիորեն բացարձակապես այդպես չէ 607.1 հոդվածի 1-ին և 2-րդ կետերում, որտեղ խոսվում է «անդամներից մի քանիսի» կամ «անդամներից որևէ մեկի» մասին: Նույն կերպ պետք է մեկնաբանվի նույն հոդվածի 4-րդ կետը:

Հենց սա է հատուկ կարևորությունը, որ տրվում է սուբյեկտիվ տարրին: Վերջինս տեղիք է տալիս տարակարծության, թե պատմականորեն ինչ է հասկացվում ցեղասպանություն ասելով և ինչպես էր այն դիտարկվում կոնվենցիան կնքելու պահին: Եթե տուժած անձնավորությանը սպառնում է խմբի գոյության վտանգը, ապա կունենայինք այնքան ընդլայնված մեկնաբանություններ, որ չէր լինի Քրեական օրենսգրքի 23-րդ հոդվածի 4-րդ ծանրացուցիչ հանգամանքը, որի կիրառումը բավարար կլիներ պատժելու այդ արարքները:<sup>31</sup> Այնուամենայնիվ, սուբյեկտիվ տարրը պետք է մեկնաբանել այնպես, որ միայն գնահատվի, թե ինչպես են արարքները սպառնում մարդկանց կյանքին կամ խմբի մի մասին, չնայած թվում է, թե մի հոգի է տուժած: Միայն կլինի Քրեական օրենսգրքի 23-րդ հոդվածի 4-րդ կետը, որը, որպես ծանրացուցիչ հանգամանք հանցագործության կատարումը, սահմանում է ռասիստական, հակասեմիտական կամ էթնիկ կամ ազգային ծագման, կամ տուժողի փոքրամասնություններին պատկանելու սեռական կողմնորոշման, գաղափարախոսության, կրոնի կամ հայացքների դրոշմապատճառներով: Ի վերջո, չի լինի այս ծանրացուցիչ հանգամանքի կիրառումը տվյալ ցեղասպանության ոճրում, քանի որ այն վարկաբեկումը, որը դիտարկում է բարեփոխված հանգամանքը, մնում է օգտագործված և, անկասկած, դրա կիրառումը կպարունակի *ne bis in idem* խոցելիությունը:

Ինչ վերաբերում է ակտիվ սուբյեկտին, ապա օրենսդրի ենթադրությունը հավաքականությանը մտածելու տեղիք է տալիս կիրառվող բռնության կազմակերպման պայմանի մասին, որը խմբի ոչնչացմանն ուղղված համակարգված բռնությունն է:

## Դրսևորման ձևերը և եղանակները

Անկասկած, գոյություն ունի ցեղասպանության հանցափորձ: Քանի դեռ կա սուբյեկտիվ տարրը, կարելի է խոսել ցեղասպանության հանցափորձի մասին: Ինչպես նշել է Տամարիտ Սումայան, «փորձը հնարավոր է, երբ լինի նախատեսված արդյունքը՝ որպես գործողության հետևանք»:<sup>32</sup> Հրահրումը, դավադրությունը, նախապատրաստական աշխատանքները և հանցանքի կատարման առաջարկը պատժվում են Քրեական օրենսգրքով, որի բովանդակությունն է.

615. Սույն բաժնում նախատեսված հանցագործության հրահրման, դավադրության և այն կատարելու առաջարկի համար նշանակվում է համապատասխան հողվածներում նշվածներից մեկ կամ երկու աստիճան ավելի ցածր պատիժ:

607.2 հոդվածը մեզ ներկայացնում է լուրջ խնդիր, որտեղ ցեղասպանության գովաբանումը պատժվում է անկախ կերպով, որը հետո կվերլուծենք:

Այս նախապատրաստական գործողությունների դատապարտումը նախկին Քրեական օրենսգրքի համեմատ նորություն է, քանի որ նախկինում հանցանք կատարած անձինք մնում էին անպատիժ, օրինակ՝ նրանք, ովքեր ունեին անօրինական ճանապարհով ստացած զենք ու պայթուցիկներ՝ ցեղասպանություն իրագործելու համար:<sup>33</sup> Սակայն, չպետք է մոռանալ, որ Քրեական օրենսգրքի 515.5 հոդվածը դա դիտարկում է անօրինականություն այն միավորումների հանդեպ, որոնք ռասիստական, հակասեմիտական դրոշմապատճառներով իրենց առջև նպատակ են դնում խտրականություն, ատելություն, բռնություն ցուցաբերել ընդդեմ մարդկանց, խմբերի կամ միավորումների, ինչպես նաև այն մարդկանց հանդեպ, որոնք պատկանում են այս կամ այն խմբին:

Ինչ վերաբերում է հանցագործությունների համակցությանը, ապա դա խմբի կամ խմբերի բազմաթիվ զոհերի համակցությունն է, եթե նույնիսկ միայն մեկ զոհ կա: Ծիշտ չէր լինի ցեղաս-

պանության բազմաթիվ հանցանքները համեմատել մարդասպանության, վնասվածք հասցնելու և այլ ձևերի հետ:<sup>34</sup> Տարբեր տեսակի ցեղասպանություններին անդրադառնալը կրկնողություն է, որը չի կարելի ընդունել իրավական տեսանկյունից, քանի որ աղավաղում է այն, ինչ հասկանում ենք ցեղասպանություն ասելով: Ամեն դեպքում, ճիշտ չէ չափանիշների կուտակումը, երբ վնաս է հասցվում տարբեր անհատական, սուբյեկտիվ իրավունքներին: Դա կնշանակեր ժխտել այն, որ գործողության վարկաբեկումը չի ամբողջացնում կամ դիտարկում անարդարության արժեքը: Այսինքն՝ արդարացված չէր լինի հանցանքի ճիշտ դատը վերոհիշյալ պայմաններով:<sup>35</sup> Այնպես որ, երբ խմբի անդամները կրում են տարբեր վնասներ, բայց հաշվի են առնվում ոչ թե տարատեսակ ցեղասպանությունները, այլ վնասներից մեկը՝ 607-րդ հոդվածի 1-ը, դա ցեղասպանություն է, իսկ մյուսները՝ 607-րդ<sup>36</sup> հոդվածով հանցանքների իդեալական կուտակում են դառնում:

Եթե նույն փաստը տարբեր գործողություններում կամ 607-րդ հոդվածում տեղ գտած տարբեր հետևանքներում է, ապա կիրառվում է այն ընկալումը, որը, ըստ Քրեական օրենսգրքի 8-րդ<sup>37</sup> հոդվածի նորմի նախատեսում է ամենամեծ պատիժը:

### Վաղեմության ժամկետների չկիրառում

Գիտակցելով ցեղասպանության ոճրի լրջությունը և լինելով կատարված ամենասարսափելի ոճրագործություններից մեկը՝ իրականությանը համապատասխանող և բացարձակապես չչափազանցված՝ 1995թ. Քրեական օրենսգրքի մեջ օրենսդիրը ներառեց 131.4 հոդվածում ցեղասպանության հանցագործության նկատմամբ վաղեմության ժամկետներ չկիրառելու վերաբերյալ դրույթը: Ցեղասպանության հանցագործության նկատմամբ վաղեմության ժամկետ ոչ մի դեպքում չի կիրառվի:

### Ցեղասպանության համար պատասխանատվության նկատմամբ վաղեմություն չի նախատեսվում

Այս ինստիտուտի նախադեպը կարող ենք գտնել 1968թ. նոյեմբերի 27-ի՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի շրջանառության մեջ դրած Պատերազմական և մարդկության դեմ հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետներ չկիրառելու վերաբերյալ կոնվենցիայի նախագծում: Իսպանիան երեսուցեց ձեռնպահ երկրներից էր:<sup>38</sup> Սակայն պետք է սպասեր 1995թ. Քրեական օրենսգրքին, որպեսզի այս սկզբունքն ամրագրվեր օրենքում, քանի որ նույն թվականի մայիսի 11-ի նախկին Քրեական օրենսգրքի բարեփոխումը չէր ներառում վաղեմության ժամկետների չկիրառման վերաբերյալ դրույթը, և օրենսգրքի բոլոր մասերի համար կիրառվում էր վաղեմության վերաբերյալ հիմնական ռեժիմը:

### Իրավագորություն

1889թ. Քաղաքացիական օրենսգրքի 8.1 հոդվածում և 1985թ. Դատական իշխանության մասին օրգանական օրենքի 23.1 հոդվածում ամրագրված տարածքայնության սկզբունքը սահմանագծում է այն տարածքը, որի վրա տարածվում է պետության ինքնիշխանությունը: Այս սկզբունքն ունի երկու կողմ. մեկը դրական, իսկ մյուսը՝ բացասական:<sup>39</sup> Առաջինն ուղղակիորեն ծագում է վերոհիշյալ հոդվածների դրույթներից, որտեղ հռչակվում է Իսպանիայի իրավագործությունը իր տարածքում տեղի ունեցած հանցանքների և հանցավոր անգործության համար և մյուս կողմից՝ բոլոր պարտականությունների կատարումը: Երկրորդը՝ քրեական արդարադատության տարածումն է երկրի տարածքից դուրս կատարված արարքների նկատմամբ:<sup>40</sup> Այսինքն՝ այս սկզբունքը սահմանափակում է պետության պատժամիջոցներ կիրառելու լիազորությունը տարածքային առումով: Սակայն

այս սկզբունքն ունի բացառություններ՝ հիմնված այլ սկզբունքների վրա, այսինքն՝ անհատի, իրական կամ համընդհանուր իրավագործության սկզբունքների պաշտպանությունը: Ելնելով տվյալ թեմայից՝ այս սկզբունքի կարևորությունը բխում է Դատական իշխանության մասին օրգանական օրենքից: Դրա 23.4 հոդվածում նշվում է, որ ցեղասպանության հանցագործությունը կարող է հետապնդվել Իսպանիայի իրավապահների կողմից, եթե նույնիսկ այն կատարվել է իր տարածքից դուրս: Այս դրույթն արտահայտում է միջազգային հանրության կամքը՝ հետապնդելու ոճրի գործողությունները:

Միջազգային հանրության ընդհանուր շահը և հատուկ իրավական շահերի որոշակի վնասների հետապնդումն<sup>41</sup> այնպես է անում, որ այդ սկզբունքը վերահաստատի այս հանցանքի չափն ու լրջությունը: Այս սկզբունքը տեղիք է տալիս, որ խոսվի քրեական օրենքի արտատարածքայնության և միջազգային քրեական իրավունքի հասկացության մասին (որը տարածվում է երկրի սահմաններից դուրս) և ամրապնդում է միջազգային համագործակցությունը: Չնայած սա չի դադարում խնդիրներ ստեղծել՝ կապված Միջազգային իրավունքի հետ, ամենաբախումնալիցը միշտ էլ եղել է այսպես կոչված պետության ներքին գործերին «չմիջամտելու» սկզբունքը,<sup>42</sup> որն ինքնիշխան պետությանը խոչընդոտում է այլ երկրների հանդեպ իրագործած հանցանքների հետապնդումը: Այս հասկացությունը ևս ծագում է Նյուրնբերգից և Տոկիոյից: Պատմության ընթացքում ստեղծվել են ad hoc մարմիններ՝ դատելու այնպիսի հանցանքներ, ինչպիսիք են նախկին Չարավալալիայում և Ռուանդայում կատարվածները: Կուտակված փորձը թույլ տվեց 1998թ. հուլիսի 17-ին Հռոմում կնքված Միջազգային քրեական դատարանի կանոնադրության մեջ սահմանել համընդհանուր իրավագործության սկզբունքը: Վերջինս առավելագույնս արտահայտում է քրեական օրենքի արտատարածքայնությունը և ծագում է միջազգային քրեական իրավունքից, որը կոչվում է Քրեական իրավունք առանց սահմանների:

## Եզրակացություններ

Պարզ է, որ այն սահմուկեցուցիչ իրադարձությունները, որոնց միջով մարդկությունը ստիպված է եղել անցնելու վերջին տասնամյակների ընթացքում, միջազգային հանրությանը ստիպել է նորից այնպիսի հարցեր դնել, որոնք վերաբերում են մարդու իրավունքների պաշտպանությանը: Ողջակիզման դաժան փորձառության հետևանքով և նմանատիպ հանցանքներից խուսափելու գիտակցությամբ ստեղծվում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը և հիշատակված՝ Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժելու մասին կոնվենցիան: Բայց անհրաժեշտ էր տեսնել, թե մինչև ուր կհասներ մարդկությունը, որպեսզի միջազգային հանրությունը ստեղծեր այս համաձայնագրերը: Ինչ մտածվեց այդ ժամանակ, այն էր, որ նմանատիպ հանցանքները չեն կրկնվում և որ դրանց վերջ տալու ընդհանուր կամքի արտահայտմամբ՝ մարդկությունն այլևս ստիպված չի լինի վերապրելու այդ իրադարձությունները: Կարծես թե մարդկությունը հասել էր դաժանության, խաբեության և ստորությունների գագաթնակետին: Սակայն իրականությունը ժամանակի ընթացքում հակառակը ցույց տվեց: Պարադոքսն այն է, որ որոշ մարդիկ գիտակցում են, որ ցեղասպանությունը պատժելի է, պետք է պայքարել մարդու իրավունքների ոտնձգությունների դեմ և արդյունքում ստեղծել համապատասխան իրավական չափանիշներ, բայց, այնուամենայնիվ, կա գիտակցական տգիտություն, որը ենթադրում է նշանակալի հետընթաց անպատժելիության դեմ պայքարի գործում: Կարծես թե չափանիշի ստեղծման պես կրավարարվեն իրականության պահանջները և այնքան բարձր աստիճանի կլինի բավարարվածությունը, որ գիտակցական տգիտությունը նույնիսկ չի հասցնի մարդկանց մոտ վերածվել գիտակցության:

Չնայած այդ ամենին, քաղաքացիական հասարակության դրական զարգացումը և 1998թ. հուլիսի 17-ին Հռոմում ընդունված Մի-

ջազգային քրեական դատարանի կանոնադրությունը դրա արդյունքն են: Սակայն տարօրինակն այն է, որ նորից ստիպված ենք տեսնելու, թե ինչպես էին իրագործվում, առաջընթաց ապրում, հովանավորվում և հանդուրժվում ամենասարսափելի հանցագործությունները: Չնայած դրան, շարունակում ենք ընդունել ցեղասպանության մի ընկալում, որը չի համապատասխանում ներկա իրականությանը:

Միջազգային քրեական դատարանի կանոնադրության 6-րդ հոդվածը տալիս է ցեղասպանության հետևյալ հասկացությունը.

«Հոդված 6. Ներկա կանոնադրության համաձայն, «ցեղասպանություն» բառը նշանակում է հետևյալ գործողություններից ցանկացածը՝ կատարված ազգային, էթնիկական, ցեղական կամ կրոնական որևէ խումբ, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ.

- ա) այդ խմբի անդամների սպանությունը,
- բ) այդ խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր վնաս պատճառելը,
- գ) որևէ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը,
- դ) այդ խմբի միջավայրում մանկածնությունը կանխելուն միտված միջոցների իրականացումը,
- ե) երեխաների բռնի փոխանցումը մարդկային մի խմբից մյուսին»:

Այս հոդվածը, ըստ էության, կրկնում է 1948թ. կոնվենցիայի ցեղասպանության հասկացությունը՝ կրկին բացառելով Լենկինի<sup>43</sup> առաջարկած քաղաքական ցեղասպանությունը: Ցեղասպանության այս ավերիչ հասկացությունը ենթադրում է, որ պետությունները ցեղասպանության դեմն առնելու համաձայնության գան: Այս հասկացությունը չի ներառում այն, ինչ տեղի ունեցավ Կամբոջայում, որ-

տեղ սխտեմատիկ բնաջնջվեց երկու միլիոն մարդ՝ զուտ քաղաքական նպատակներով: Դա մեկ խմբի տարբերությունն էր մյուսների նկատմամբ: Բացարձակապես անհասկանալի է այս տեսակի գործողությունների բացառումը ցեղասպանության հասկացությունից, և կարիք կա այն դասակարգելու: Թվում է, թե ուզում են հավատացնել, որ արդարացված է քաղաքական նպատակներով սպանելը:

Այս իրական փոխզիջումը շատ դրսևորումներ ունի: Օրինակ՝ տեսնում ենք, թե ինչպես Միացյալ Նահանգների նման երկրները ոչ միայն չեն վավերացնում կանոնադրությունը, այլև՝ չեն ստորագրում:<sup>44</sup> Մյուս կողմից, այլ երկրներ էլ, թեև իրենց ստորագրությունը տված հարյուր քսան երկրների շարքում են, դեռևս այն չեն վավերացրել, ինչպես և Իսպանիան: Պարզ է, որ ամեն դեպքում անհրաժեշտ է սահմանել քրեական և ընթացակարգային ելակետ, որը կարող է հաղթահարել արդարադատությանը սպառնացող խոչընդոտները: Այս օղակը, անկասկած, Միջազգային քրեական դատարանն է:

Ըստ իս պարզ է նաև այն, որ Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունում ամրագրված ցեղասպանության հասկացությունն անբավարար է, թույլ, զուսպ և սահմանափակ: Ուստի անհրաժեշտ է այն վերանայել: Առաջինն ու ամենահրատապն այն է, որ կանոնադրությունը վավերացվի բոլոր ստորագրող պետությունների կողմից, որպեսզի երկրների թիվը հասնի գոնե վաթսուհի, որպեսզի այն ուժի մեջ մտնի:<sup>45</sup> Երկրորդն այն է, որ վերանայվի և բարեփոխվի կանոնադրության 6-րդ հոդվածում նշված ցեղասպանության հասկացությունը, որը ֆիզիկական, կենսաբանական, մշակութային ցեղասպանությունների հետ կներառի քաղաքական ցեղասպանությունն առանց հավելյալ ենթատեքստերի, հապաղումների և տատանումների: Ըստ իս՝ որպեսզի դա հարատև չլինի, կա դրա իրագործման մի ձև այն, որ կնքվի ևս մի արձանագրություն, որը գոնե վավերացրած երկրներին կթույլատրի արտահայտել<sup>46</sup> իրենց կամքը՝ զնալու այդ իրական փոխզիջմանը, առաջ տանելու պայքարը ցեղասպանության դեմ և ընդհանրապես՝ մարդու իրավունքների համար:

**Գևորգ  
ՊՈՂՈՍՅԱՆ**

**ՀԱՅ ՍՓՅՈՒՌԻ  
ԵՐՐՈՐԴ ՍԵՐՆԴԻ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ**



Հայոց սփյուռքը Մեծ եղեռնից հետո իր գրեթե հարյուրամյա պատմության մեջ զարգացման մի քանի փուլեր է անցել: Սփյուռքի պատմությունը հատվածաբար ուսումնասիրված է բավականին մանրամասն: Սակայն կարծում ենք, որ այն ընդհանրացման և ամբողջական իմաստավորման կարիք ունի: Այստեղ մենք կփորձենք դիտարկել միայն մի քանի հայեցակարգային կետեր:

**Հայ սփյուռքի առաջին սերնդի հիմնական խնդիրն էր ֆիզիկապես վերապրել ու ամրապնդվել նոր բնակատեղերում:**

Թեև հայկական գաղթօջախները գոյություն ունեին շատ վաղուց, երբ Հայաստանը կորցրեց իր պետականությունը, սակայն դրանք ընդլայնվեցին Հայոց ցեղասպանությունից հետո: Մեկուկես միլիոն հայեր ոչնչացվեցին, մյուսներին հաջողվեց փախչել և բնակություն հաստատել Արևելյան Եվրոպայի, բալկանյան և միջինարևելյան տարբեր երկրներում: Բազմահազար հայեր հիմնավորվեցին

Արևմտյան Եվրոպայում, ինչպես նաև Հյուսիսային ու Հարավային Ամերիկաներում: Զգալի թվով հայկական համայնքներ գոյություն ունեն նաև Ռուսաստանում, ինչպես նաև Կենտրոնական Ասիայի նախկին խորհրդային հանրապետություններում: Հայկական համայնքներ կարելի է գտնել նաև Հնդկաստանում, Ավստրալիայում, Նոր Զելանդիայում, Աֆրիկայում (Եթովպիայում, Սուդանում և Հարավային Աֆրիկայում), ինչպես նաև ավելի հեռավոր արևելքում, օրինակ՝ Սինգապուրում, Մյանմարում, Հոնկոնգում:

Տարբեր փորձագիտական գնահատականների համաձայն՝ հայերի թիվն աշխարհում այսօր հասնում է 8 միլիոնի:

Այսօր հայերի մեծ համայնքներ կան Ռուսաստանում, որը, ըստ համայնքների մեծության, առաջին տեղում է, այնուհետև Միացյալ Նահանգներում, Ֆրանսիայում, Իրանում (թեև 1970-ականներից սկսած՝ համայնքի հայերի թիվը նվազել է), Լիբանանում, Վրաստանում, Սիրիայում, Արգենտինայում, Կանադայում և Ուկրաինայում:

Երկիրը	Հայերի թիվը
Հայաստան	3,215,800
Ռուսաստան	1,130,491 (2002թ. տվյալներ)
ԱՄՆ	1,000,000
Ֆրանսիա	500,000
Իրան	400,000
Վրաստան	248,900 (2004թ. տվյալներ)
Սիրիա	190,000
Լիբանան	140,000
Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն	138,000
Արգենտինա	130,000
Ուկրաինա	99,894 (2001թ. տվյալներ)
Լեհաստան	92,000
Թուրքիա	40,000 - 70,000 (համշենահայերը ներառված չեն)
Հորդանան	70,000
Ուզբեկստան	70,000
Գերմանիա	42,000 - 60,000

Կանադա	40,505 (2001թ. տվյալներ) (մի քանիսը նշում են 60,000)
Հունաստան	35,000 - 55,000)
Բրազիլիա	40,000 - 50,000)
Ավստրալիա	45,000
Արխանգիա	44,869 (2003թ. տվյալներ)
Իսպանիա	42,000
Թուրքմենստան	30,000
Բուլղարիա	30,000
Քելառուս	25,000
Ղազախստան	25,000
Իրաք	20,000
Ուրուգվայ	19,000
Անգլիա	18,001
Հունգարիա	15,000
Քելզիա	10,000
Չեխիա	10,000
Իսրայել	9,800
Եգիպտոս	8,200
Մոլդովա	7,000
Նեդեռլանդներ	6,000
Տաջիկստան	6,000
Լատվիա	5,000
Շվեյցարիա	5,000
Շվեդիա	5,000
Քուվեյթ	5,000
Ղրղըզստան	3,285
Սիացյալ Արաբական Էմիրություններ	3,000
Ղանիա	3,000
Ավստրիա	3,000
Նիկարագուա	2,907
Էկվադոր	2,800
Կիպրոս	2,740 (1987թ. տվյալներ)
Վենեսուելա	2,500
Լիտվա	2,500
Իտալիա	2,500
Եստոնիա	2,000
Ռումինիա	1,780

Նորվեգիա	1,000
Ֆինլանդիա	1,000
Չիլի	1,000
Սուդան	1,000
Թաիլանդ	1,000
Հոնդուրաս	900
Նոր Զելանդիա	600
Մեքսիկա	560 - 10,000
Ալբանիա	500
Հնդկաստան	500
Կոլումբիա	250-300
Մոնակո	200
Հարավաֆրիկյան Հանրապետություն	200
Կատար	150
Կուբա	100
Եթովպիա	100
Դոմինիկյան Հանրապետություն	75
Իռլանդիա	50
Կոստա Ռիկա	40
Սինգապուր	35
Պերու	35
Զիմբաբվե	28
Ինդոնեզիա	20
Պակիստան	20-200
Ճապոնիա	20-100
Գվատեմալա	20-50

Իրաքի հայ համայնքը նվազել է 2003թ. Սիացյալ Նահանգների Իրաք ներխուժելուց հետո:

Սակայն սրանք շատ ընդհանուր տվյալներ են: Հասկանալի է, որ սփյուռքահայության թվաքանակը, նրա ներուժը և աշխարհի բազմաթիվ երկրներում զբաղեցրած դիրքն ու դերն անհրաժեշտ է լրջորեն ու գիտական մեթոդներով ուսումնասիրել: Իրական պատկերն ստանալու համար անհրաժեշտ է անցկացնել մարդահամարի կարգի ուսումնասիրություն բոլոր այն երկրներում, ուր հայության թիվը հասնում է զգալի չափերի, օրինակ՝ ԱՄՆ-ում, Ռուսաս-

տանում, Կրաստանում, Ֆրանսիայում, Լիբանանում, Իրանում և այլուր: Սա ամենևին էլ ոչուրին գործ չէ: Այն սոսկ ցանկությունից իրականություն դարձնելու համար անհրաժեշտ է համախմբել սփյուռքի և Հայաստանի Հանրապետության ջանքերը:

Նման համահայկական մարդահամարի անցկացումը կարելի է դիտել որպես համազգային առաջին ծրագիր: Եվ այսպիսի համազգային ծրագրերը կարող են մի քանիսը լինել: Այսօր հայության միայն մեկ երրորդն է բնակվում Հայաստանում:

### Երկրորդ սերունդը հիմնադրեց սփյուռքում գործող բազմաթիվ կառույցներ:

Ժամանակի ընթացքում ցեղասպանությունից փրկված հայերը սփյուռքում հիմնավորվեցին՝ կառուցելով եկեղեցիներ, դպրոցներ, մշակութային, համայնքային կենտրոններ և այլն: Այնտեղ, որտեղ հայերի զգալի քանակ կար, սկսեցին գործել զանազան քաղաքական կուսակցություններ և բարեգործական միություններ, ինչպիսիք են՝ Հայ Հեղափոխական Դաշնակցությունը, Ռամկավար Ազատական կուսակցությունը, Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցությունը և Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ):

Հայերը, ինչպես հայտնի է, ունեն երկու կաթողիկոս: Նրանցից մեկին, որի նստավայրը գտնվում էր Էջմիածնում, սատարում էին խորհրդային իշխանությունները, հնչակները և ռամկավարները: Մյուս կաթողիկոսարանին, որը գտնվում էր Անթիլիասում (Լիբանան), աջակցում էին դաշնակցականները: Եգիպտոսում և Սիրիայում՝ պան-արաբիզմի, Իրանում՝ իսլամիզմի և Լիբանանում քաղաքացիական պատերազմի հետևանքով տասնյակ հազարավոր հայեր Միջին Արևելքից գաղթեցին ու հիմնավորվեցին ԱՄՆ-ում, Կանադայում, Ֆրանսիայում և այլ վայրերում: Այնտեղ նրանք հիմնադրեցին լոբբիստական կազմակերպություններ՝ Հայաստանի Հանրապետությանն աջակցելու և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման

գործն ընդլայնելու նպատակով: Ստեղծվեցին նաև քաղաքական կազմակերպություններ, որոնցից են Իրավունքի և դեմոկրատիայի եվրոպական հայկական միությունը, Ամերիկայի հայկական ազգային կոմիտեն, Հայոց հարցի պաշտպանության կոմիտեն, Հայոց ցեղասպանության ճանաչման արշավը, Կանադայի Հայկական ազգային կոմիտեն, Միջին Արևելքի հայկական ազգային կոմիտեն:

Նոր, երրորդ սերնդի խնդիրները, մեր կարծիքով, կապվում են սփյուռքի անելիքների, տեղի ու նրա պատմական դերի լուրջ ուսումնասիրության հետ: Անհրաժեշտ է սփյուռքում գործող նոր կառույցներ հիմնել. ասել է թե, ժամանակակից «think tank» կոչված մտածողական կենտրոններ հիմնադրել, որոնք գիտականորեն կուսումնասիրեն իրավիճակը, հետազա անելիքներն ու զարգացման ծրագրերը:

Հայությունն այսօր աշխարհին ներկայանում է իր երեք հատվածներով՝ Հայաստանի Հանրապետություն, Արցախի Հանրապետություն և սփյուռքահայություն: Ընդ որում, այս երեք հատվածները ներկայացնում են ժամանակակից աշխարհում գոյություն ունեցող միջազգային հարաբերությունների կարևորագույն սուբյեկտներ՝ անկախ պետություն, չճանաչված պետություն (կամ տարածք) և միջազգային շարժում (տվյալ դեպքում՝ էթնիկական կամ ազգային շարժում):

Այսօր աշխարհն ավանդական պատկերացումներից շատ է հեռացել: Այն սոսկ անկախ պետությունների ընտանիք չէ միայն, այլ շատ ավելի բազմազան ու բազմադեմ է: Այսօր այն հանդես է գալիս նաև որպես տարաբնույթ կառույցներ՝ միջպետական, վերպետական ու անդրպետական, ինչպես նաև չճանաչված պետական գոյացումներ, ոչ պետական, ոչ պաշտոնական շարժումներ ու միավորումներ: Այսպիսով, հայությունն աշխարհին այսօր ներկա-



յացված է պետական, չճանաչված պետականության ու միջազգային անդրպետական շարժման երեք ձևերով:

Այս հանգամանքը կարելի է օգտագործել որպես մեծ առավելություն, եթե այդ երեք հատվածները գործեն համակարգված ու նպատակաուղղված: Այլ կերպ ասած, եթե նրանք դիտարկվեն որպես ընդհանուր համազգային ծրագրերի իրագործման կատարողներ: Ժամանակակից հայության այս երեք հատվածների փոխհարաբերությունները, նրանց ներդաշնակ ու ազգանպաստ զարգացումը և դերակատարության ու մասնաբաժինների հայեցակարգային զաղափարախոսության մշակումը կարող են դիտարկվել որպես ևս մեկ համազգային գիտական ծրագիր:

Ավանդաբար սփյուռքահայության գործողություններն ուղղորդվել են Հայ Առաքելական եկեղեցու, Հայ Կաթոլիկ եկեղեցու, Ավետարանչական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների (դաշնակցություն, ռամկավար-ազատական, հնչակյան), մշակութային ու հայրենակցական միությունների և բարեգործական հաստատությունների կողմից: Սակայն վաղուց արդեն ժամանակն է, որպեսզի պատմականորեն կյանքի կոչված այս կառույցները համակարգվեն ու միավորվեն մեկ համազգային ընտրովի մարմնի կողմից, որը կիրականացնի նաև ներկայացուցչական գործառույթներ: Արդեն կայացած սփյուռքահայ կառույցները յուրօրինակ «նախարարությունների» դեր են կատարել սփյուռքի համար, որոնք չունեն և չեն էլ կարող ունենալ *պետության կառուցվածք*:

Եթե համեմատությունը պետության հետ տեղին կլինի, ապա կարելի է ասել, որ սփյուռքի «նախարարությունները» վաղուց արդեն ապացուցել են իրենց կենսունակությունն ու արդյունավետությունը: Այսօր խոսվում է այն մասին, թե ժամանակն է մտածել սփյուռքի կառույցները համակարգող մարմին՝ Համազգային ժողով կամ Պառլամենտ ստեղծելու մասին, որն իր օրենսդիր որոշումներով կուղղորդի դրանց գործունեությունը: Անկասկած, դրա ժամանակն արդեն վաղուց է հասունացել և նույնիսկ այդ մա-

սին խոսվում է մեծ ուշացումով: Ամենևին հարցականի տակ չդնելով այս կարևոր խնդրի լուծումը՝ հարկ է նկատել, որ սփյուռքը, այնուամենայնիվ, պետության կառուցվածք չունի և չի կարող ունենալ: Սփյուռքին, հատկապես Հայ սփյուռքին, հատուկ է ցանցային համակարգի կառուցվածքը, և այս ուղղությամբ պետք է այնպայման մտածել՝ *ցանցային կառույցին համապատասխան* միավորների հիմնելու համար:

Սփյուռքի ներդրումը ՀՀ-ի տնտեսության մեջ բավականին մեծ է: Այդ են վկայում սփյուռքից ստացվող ուղղակի ներդրումների չափերը. Ռուսաստանից՝ 29%, ԱՄՆ-ից՝ 17%, Իրանից՝ 14% ([www.crrc.am](http://www.crrc.am)): Մենք գնահատում ենք սփյուռքի ֆինանսական օգնությունը: Սակայն այժմ ակնհայտ է, որ Հայաստանը ավելի շատ սփյուռքի մտավոր ներուժի կարիքն ունի, քան սոսկ ֆինանսական ներդրումների:

Հայաստանի Հանրապետությունը սփյուռքահայության հետ նախածեռնել է մի շարք արժեքավոր մեծածավալ միջոցառումներ. Հայաստան-Սփյուռք համաժողովները (1999, 2002, 2006թթ.), համահայկական օլիմպիական խաղերը (1999, 2001, 2003, 2007թթ.) և տարբեր մարաթոնները («Մեկ ազգ՝ մեկ մշակույթ», «Ոսկե ծիրան» և այլն): Վերջապես, 2005թ. ՀՀ Սահմանադրության նոր խմբագրումը նախատեսեց երկքաղաքացիության օրենսդրական հիմքերը, իսկ 2007թ. Ազգային ժողովն ընդունեց համապատասխան օրենք: ՀՀ կառավարությունը նախատեսել է 2008թ. աշնանը սփյուռքի նախարարություն ստեղծել:

Ամեն մի հայ պետք է գիտակցի, որ համազգային նշանակություն ունեցող միջոցառումները շատ ավելի կարևոր են, քան մասնակի ու առանձին ընտանեկան կամ անձնական տոնախմբությունները: Այսինքն՝ մենք պետք է հասնենք այն բանին, որ հայ մարդկանց գիտակցության մեջ արմատական փոփոխություններ տեղի ունենան: Քանի դեռ Կալիֆորնիայի հայերի հարսանիքներն ու կնունքներն ավելի շքեղ են կազմակերպվում, քան աշխարհասփյուռ հայության կենսական կարևորության հարցերին նվիր-

ված խորհրդակցությունները, կարող ենք փաստել, որ հայերի պատմական և քաղաքական գիտակցությունը լուրջ բուժման խնդիր ունի: Սեփական ազգի նպատակներն ու գործերը հայերը պետք է ավելի բարձր դասեն իրենց մասնավոր նպատակներից (այդ թվում՝ ընտանեկան ու անձնական գործերից):

Ցանկացած ազգ, որը պետություն է կազմել, ունի նաև սփյուռք: Այլ կերպ ասած, ցանկացած պետություն միավորում է տվյալ (կամ, այսպես կոչված, հիմնական) ազգի զգալի մասը և, որպես կանոն, տվյալ ազգի որոշ թվով ներկայացուցիչներ բնակվում են այդ պետության սահմաններից դուրս՝ արտերկրում: Սա օրինաչափ երևույթ է և, ինչպես ցույց է տալիս փորձը, աշխարհի գրեթե բոլոր ազգային պետություններում բնակվում է այդ ազգի ներկայացուցիչների ճնշող մեծամասնությունը, իսկ պետությունից դուրս՝ տվյալ ազգի փոքր մասը: Այդ մասը երբեմն շատ փոքր ու աննշան է լինում, իսկ երբեմն էլ կազմում է տվյալ ազգի 15-20%-ը և նույնիսկ ավելին: Սակայն Հայաստանի դեպքում գործ ունենք մի բացառիկ երևույթի հետ, երբ հայ ազգի մեկ երրորդն է բնակվում Հայաստանի Հանրապետությունում, իսկ երկու երրորդը՝ հանրապետությունից դուրս՝ բազմաթիվ այլ երկրներում: Սա մի բացառիկ երևույթ է, երբ սփյուռքն իր թվով երկու-երեք անգամ գերազանցում է տվյալ պետության հիմնական բնակչությանը: Այստեղ համեմատություն կարելի է անցկացնել միայն հրեաների և իռլանդացիների հետ: Ոչ մի այլ ազգության պարագայում նման երևույթ չի արձանագրվում: Սակայն հայերի բացառիկությունը չի սահմանափակվում միայն սրանով: Պարզվում է, որ երկրի ներսում նույնպես հայոց պետությունն ազգային կառուցվածքի միատարրության առումով բացառիկ պատկեր է ներկայացնում: Բանն այն է, որ Հայաստանի Հանրապետության բնակչության 97%-ը կազմում են հայերը: Սա նույնպես բացառիկ երևույթ է, և աշխարհում ընդամենը մի քանի պետություններ կան, որոնց բնակչությունն այս աստիճան միատարր է:

Հայաստանի Հանրապետության բնակչության միայն 3%-ն են կազմում այլ ազգությունների ներկայացուցիչները: Հիմնականում դրանք քրդերն (եզդիներն) են ու ռուսները: Կան նաև այլ ազգային փոքրամասնություններ ներկայացնող փոքրաթիվ խմբեր: Համաշխարհային փորձը վկայում է, որ տարբեր ազգային պետություններում ազգային փոքրամասնությունները կազմում են, որպես կանոն, բնակչության 10-25%-ը, երբեմն ավելի շատ՝ մինչև 50-60%-ը:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունը թե՛ ներքին ազգային կառուցվածքով, թե՛ իր մեծամասնություն կազմող սփյուռքով մի բացառիկ երևույթ է: Այս բացառիկության պատմական պատճառները հիմնականում պարզ ու հասկանալի են: Դրանք բացատրվում են հայոց պետականության ստեղծման, ցեղասպանության ու սփյուռքի ձևավորման պատմական գործընթացներով: Սակայն այս բացառիկության հետևանքներն ու հայոց պետականության հետագա զարգացման հեռանկարները դեռ բավարար ուսումնասիրված չեն: Կարելի է նույնիսկ ասել՝ բնավ ուսումնասիրված չեն:

Հայաստանի Հանրապետությունում գործող Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի նմանությամբ անհրաժեշտ է հիմնել սփյուռքի միջազգային հետազոտական կենտրոն-ինստիտուտ: Հզոր մի հետազոտական կառույց՝ «think-tank», որը կունենա մշտական աշխատողներ և հնարավորություն՝ տարբեր երկրներից հրավիրելու բազմաթիվ գիտնականներ (ոչ միայն հայազգի), որոնք պայմանագրային կարգով կհամագործակցեն նշված ինստիտուտի հետ: Մեկ րոպե անգամ չեն կասկածում, որ սփյուռքը և ցեղասպանությունը մեկ հարցի՝ Հայկական հարցի փոխկապված խնդիրներ են: Պարզապես, Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ուսումնասիրությունների կենտրոնում պատմական անցյալն է, իսկ սփյուռքի ինստիտուտը հայացքը պետք է ձգի ապագային:

Մեր կարծիքով՝ սփյուռքի վերաբերյալ գիտական ուսումնասիրությունները և, ընդհանրապես, գիտական մոտեցումները շատ են ուշացել: Սակայն չմոռանանք, որ դրա պատճառը խորհրդային գաղափարախոսությունն էր: Մենք բոլորս շատ լավ գիտենք, որ կոմունիստները երկար տարիներ արգելում էին ոչ միայն ցեղասպանության վերաբերյալ գիտական ուսումնասիրությունները, այլև նույնիսկ ցեղասպանության հիշատակումը: Այս առումով, խորհրդային Միությունը թուրք ցեղասպանների մեղսակիցն էր: Այժմ մենք նախաձեռնում ենք այն, ինչը պետք է արվեր նախորդ սերունդների կողմից, 50-80 տարի առաջ: Ցեղասպանության ազատ ուսումնասիրություններն սկսվել են, կարելի է ասել, ընդամենը 20 տարի առաջ (նույնիսկ ոչ 1965 թվականից): Այսինքն՝ նշանակում է, որ մենք շատ ժամանակ չունենք, պետք է շտապենք և լրացնենք լռության տասնյակ տարիների ընթացքում գոյացած բացը: խորհրդային Միությունն ամեն ինչ արեց, որպեսզի Հայոց ցեղասպանությունը մոռացության մատնվի: Բայց դա նրան չհաջողվեց:

Վերադառնալով գիտական ուսումնասիրություններին՝ պետք է լավ գիտակցենք, որ խնդրի իրավաբանական խորազնին մշակումը չափազանց կարևոր է, բայց դրան զուգահեռ պարզապես խիստ անհրաժեշտ է փնտրել հարցի ոչ ավանդական, նորարարական լուծումներ: Մենք պետք է գնանք բոլոր հնարավոր ճանապարհներով:


Որքան ավելի մոտենանք Հայկական հարցի ճիշտ ու արդյունավետ լուծմանը, այնքան ավելի են աճելու թուրքական պետության ազդեցությունն ու գործակալական ակտիվությունը, ընդհուպ մինչև Հայաստանում հեղաշրջում կազմակերպելու փորձերը:

*Մենք չպետք է գերազնահատենք մեր հակառակորդներին, քանզի դա կանխելու է մեր համարձակությունը: Սակայն ավելի վտանգավոր կլինի, եթե մենք թերազնահատենք նրանց, քանի որ դա կձախտղի մեր գործը:*

**Կարեն  
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

**ՀԱՅԿԱԿԱՆ  
ՊԱՀԱՆՁԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ**

**Գաղափարախոսություն,  
քաղաքականություն  
Հայկական հարցը՝  
երեկ և այսօր**



**Միջազգային քաղաքական կյանքում ինքնուրույն հայկական գործոնի ձևավորմանը նպաստող ժամանակակից հայկական ազգային-պետական, քաղաքական մտածողության վրա հիմնված հայկական քաղաքական դոկտրինի մշակման թեզիսներ**

**Ռ**են հայոց պատմության մեջ Կիլիկիայի հայոց թագավորության անկումից հետո և, հատկապես, վերջին 150 տարիների ընթացքում պարտություններ ու կորուստներ, ցավոք, ավելի շատ են եղել, քան հաղթանակներ ու ձեռքբերումներ, հայ պատմագրության և գրականության մեջ առավել մեծ տեղ է հատկացվել ազգի հերոսական արարքները և ինքնազոհության դրվագները ներկայացնող պատմություններին:

Մի կողմից, դա բացատրվում է դարերի ընթացքում արտաքին կործանարար ուժերի դեմ գոյատևման պայքարում դաժանագույն փորձությունների ենթարկված ազգի ոգին աննկուն պահելու անհրաժեշտությամբ:

Սակայն, մյուս կողմից, պատմությունն անկողմնակալ շարադրելու, սեփական անհաջողությունները, պարտություններն ու կորուստներն անկանխակալ, գիտականորեն ու քննադատաբար վերլուծելու համար անհրաժեշտ է այլ մշակույթ, որը հիմնվում է ազգային պետականության առկայության, սեփական ճշմարտացիության մեջ համոզվածության, ինչպես նաև այդ հանգամանքը միջազգային հանրությանը հասանելի դարձնելու համար անհրաժեշտ ինստիտուտների և լծակների առկայության վրա: Անհրաժեշտ է քաջություն, ոգու հզորություն և ինքնաբավություն ունենալ՝ ճանաչելու պարտությունների և կորուստների համար սեփական մեղքի մասը:

Հատորներ են գրվել թշնամիների նենգության և դաժանության, դավաճանության, դրսից օգնության բացակայության մասին և այլն: Սակայն ո՞ր է պարտությունների և կորուստների պատճառների անաչառ ու գիտական վերլուծությունը, հատկապես ազգային առաջնորդների մտածողության ու վարքի, ազգային և քաղաքական գիտակցության մակարդակի, ազգային-ազատագրական շարժման ընտրության ռազմավարության և գործելակերպի վերիմաստավորման վերաբերյալ, այսինքն՝ այն ամենի, ինչը հանգեցրեց բավական տխուր հետևանքների: Իսկ ազգի պատմության բարենպաստ, լուսավոր էջերը գրեթե հայտնի չեն, պատկերավոր չեն ներկայացված: Էլ չենք խոսում հնագույն պատմության, ինչպես նաև հայկական վերջին թագավորության, Հայոց Կիլիկիայի ու կիսանկախ քաղաքական կազմավորումների մասին թե՛ Արևմտյան (Սասուն) և թե՛ Արևելյան (Խամսայի մելիքություններ, Արցախի, Սյունիքի, Գեղարքունիքի սղնախներ և այլն) Հայաստանում:

Իհարկե, հերոսական դիմադրությունները, նույնիսկ եթե պարտությամբ են ավարտվել, վկայում են ազգի ոգու հզորության, նրա առաջնորդների անձնուրացության մասին: Սակայն պարտությունների ու կորուստների հերթագայությունը, դրանց պատճառների անաչառ գիտական վերլուծության (հատկապես, սեփական ա-

րարքները գնահատելու և պարտությունից դասեր քաղելու համար) բացակայությունը ժողովրդի մեջ ձևավորում են դատապարտվածության բարդույթ, նրան զրկում սեփական ուժերով իր շահերի պաշտպանության հնարավորության հանդեպ հավատից և պատմական իրադարձությունների նկատմամբ այլընտրանքային վերաբերմունք ցուցաբերելու ճկունությունից:

Անհրաժեշտ է հսկայական ծավալի հետազոտական աշխատանք կատարել՝ գտնելու և ընթերցողների դատին ներկայացնելու համոզիչ փաստարկներ, օրինակ, այն մասին, որ 1915-1923թթ. ցեղասպանությունը կանխորոշված ու անխուսափելի չէր՝ գոնե այդպիսի աղետալի չափերով և հետևանքներով: Կամ էլ ապացուցել, որ չէր օգտագործվել ազգի ամբողջ ներուժը՝ 1918-1920թթ. Հայաստանի Հանրապետության անկախությունը պաշտպանելու համար և այլն: Այս ամենը պետք է անել համոզվելու համար, որ անցյալում նույնպես եղել են պատմության ավելի բարենպաստ էլքի այլընտրանքներ: Այսօր էլ համաշխարհային հայությունն ունի թե՛ պայմաններ և թե՛ բավականաչափ ռեսուրս: Միայն անհրաժեշտ է դրանք դրսևորել, վերածել ուժի՝ ընդունակ ոչ միայն պաշտպանելու սեփական շահերը, հայությանը զերծ պահելու նորանոր պարտություններից ու կորուստներից, այլև պահպանելու ու զարգացնելու 1992-1994թթ. ձեռքբերումները:

Այդ ռեսուրսն աշխարհի բազմամիլիոն հայության (մեծամասամբ Սփյուռքում) լիարժեք ներդրումն է հայկական պետականության կայացման և զարգացման գործում: Վերջինս հայության (անկախ բնակության վայրից) պատասխանատվության զգացման գիտակցումն է սեփական հողի չզավթված հատվածների ճակատագրի նկատմամբ: Հայերին հրաշքով հաջողվեց պաշտպանել իրենց շահերը ադրբեջանցիների փոքր կայսրության կողմից 1991-1994թթ. սանձազերծված նվաճողական պատերազմում, երբ փլուզման եզրին կանգնած խորհրդային չարիքի կայսրությունն այլևս ի վիճակի չէր սատարելու նվաճողին՝ նրա ապարտելի

քաղաքականություն վարելու գործում: Համազգային նպատակ պետք է դառնա ոչ միայն պարտությունների և կորուստների կրկնությունից ամեն գնով խուսափելը, այլև վերջին տարիների հաջողությունների պահպանումը և զարգացումը, հայ ժողովրդի ու պետականության վերածննդի, կայացման, ապահով և հեռանկարային զարգացման համար ամուր հիմքերի ստեղծումը:

Հայկական ազգային-պետական քաղաքական ժամանակակից մտածողության ձևավորումը հայկական քաղաքական դոկտրինի մշակման հիմք կհանդիսանա, ինչն իր հերթին միջազգային հարաբերություններում հզոր հայկական ինքնուրույն գործոնի ի հայտ գալու նախապայմաններ ու մեխանիզմներ կստեղծի: Դա իր ճակատագիրն ինքնուրույն կերտելու հնարավորություն կընձեռի ազգին:

Սակայն հայերի այսօրվա քաղաքական մտածողությունն արտացոլում է քաղաքական հայագիտության այն վիճակը, որն ստեղծվել է ազգային պետականության երկարատև բացակայության պայմաններում: Պետականության շրջանակներում համապատասխան կրթական, գիտահետազոտական, պետական ու հասարակական կառույցների, կուսակցությունների, հրատարակությունների, զանգվածային լրատվամիջոցների և այլնի միջոցով բնականորեն կարող էր մշակվել ու իրականացվել ազգային-պետական ուսմունքը: Մինչև քաղաքական կուսակցությունների հայտնվելն այդ դերը կատարում էր հայոց եկեղեցին, որի ջանքերի շնորհիվ հայերը դարեր շարունակ գոյատևել են Օսմանյան ու Ռուսական կայսրություններում և գաղթօջախներում մինչև 1915-1923թթ. աղետը՝ պահպանելով բոլոր հնարավորությունները (տարածքային, նյութական և մարդկային ռեսուրսները) ավելի լավ ապագայի համար:

Համազգային աղետի իրական պատճառների բացահայտումն այսօր քաղաքական հայագիտության առաջնահերթ խնդիրն է, առանց որի անհնարին է ազգային-պետական արդյունավետ շինարարության համար համազգային համաձայնության և միասնության ձեռքբերումը: Ազգային, պետական, քաղաքական մտածողության

հասունացման ճանապարհը պատմության (հատկապես վերջին 150 տարիների) նկատմամբ հասարակական գիտակցության մեջ տիրող կուսակցական միաբևեռ, գաղափարականացված հայացքների հաղթահարումն է: Հայ պահպանողական պատասխանատու մտածողները պիտակավորվում էին որպես հետադիմական գործիչներ (Գաբրիել Այվազյանց, Մաղաքիա Օրմանյան և այլք), մինչդեռ Միքայել Նալբանդյանի և նրա հետևորդների պես անպատասխանատու ռոմանտիկները հայտարարվում էին ազգային հերոսներ:

Ցավոք, այդ հայացքների հաղթահարման լուրջ և հիմնավոր փորձերը հիմնականում սահմանափակվում են Նիկողայոս Ադոնցի նվազ հայտնի հոդվածներով և Լեոյի (Առաքել Բաբախանյան) մատենագիտական հազվագյուտություն դարձած հետազոտություններով («Անցյալից» և «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը»), որոնք, սակայն, ունեն միտումնավոր խորհրդայնամետ կողմնորոշում, ինչն արտացոլում է 1915-1923թթ. աղետի արդյունքում առաջացած հավատի ու հույսերի խորտակումը: Հուսախաբության և անելանելիության կնիք է կրում Հովհ. Քաջազունու հոգու վերջին ճիչը: Նա միամտորեն հույս էր տածում, որ խորհրդային վարչակարգը կարող է թույլ տալ հայ կոմունիստ-հայրենասերների ի հայտ գալը, որոնք կպաշտպանեին վարչակարգի նպատակներից տարբերվող ազգային շահերը: Ինչպե՞ս կարող էր ազգի և Դաշնակցության ազնվագարն ներկայացուցիչներից մեկն «անգործունեության» կոչ անել այն ժամանակ, երբ անհրաժեշտ էր տարագրության մեջ պահպանել կառավարությունը, նախապատրաստվել մեղքերը քավելու՝ պարտությունների ու կորուստների համար՝ վերիմաստավորելով անցած ողբերգական ուղին, ընդունելով ազգային-ազատագրական շարժման ռազմավարության և գործելակերպի ընտրության գործում թույլ տրված ճակատագրական սխալները: Ազգի համընդհանուր անպատրաստությունն ակնառու դարձավ պատմության ճակատագրական ժամանակահատվածում, երբ փլուզվեցին կոմունիզմի գաղափարախոսությունը և ԽՍՀՄ-ը:

Խորհրդային դարաշրջանի վերջում հայ առանձին պատմաբաններ անցյալի վերինաստավորման փորձեր արեցին, սակայն չհասցրեցին ավարտել գործի իրենց մասը, առավել ևս՝ աշխատել երիտասարդ համախոհների ապագա կոլեկտիվում:

Խնդիրն ամբողջությամբ ծանրանում է հայ երիտասարդ մտավորականության, պատմաբանների, իրավագետների և քաղաքագետների ուսերին:

Չույս ունենք, որ այդ ուղղությամբ կարևոր ներդրում կհանդիսանա «Չայոց պատմությունը սկզբից մինչև մեր օրերը» աշխատությունը, որը տպագրության է պատրաստվում համահեղինակների խմբի կողմից՝ Էդվարդ Դանիելյանի ընդհանուր խմբագրությամբ:

Սփյուռքում կան բազմաթիվ հրատարակություններ, մասնավորապես ճակատագրական ժամանակներում գործող անձանց հիշողություններ, բազմաթիվ չօգտագործված արխիվային նյութեր, որոնց վերլուծական ուսումնասիրությունը տեղեկատվական և ճանաչողական առումով արժեքավոր աղբյուր կհանդիսանա: Ազատությունը (նաև՝ մտքի), որն աստիճանաբար մուտք է գործում ԳԳ ժողովրդավարական հասարակության ձևավորման պայմաններում, ինչպես նաև Սփյուռքի համայնքային կյանքի վերակազմակերպումը, որը կսկսվի Արևմտյան Չայաստանում ջարդերից և տեղահանություններից փրկված հայերի սերունդների լիազոր ներկայացուցչական մարմինների ստեղծումով, երաշխիք կհանդիսանան, որ անաչառ գիտական քաղաքական հայագիտությունը նպաստի հայկական քաղաքական ժամանակակից մտածողության ձևավորմանը:

1. Չայոց հազարամյակների պատմության ընթացքում ազգը միշտ չէ, որ զարգանում էր սեփական պետականության սահմաններում և պայմաններում: Երբեմնի փթթող հայկական մշակութային, քաղաքական կենտրոնները՝ Վանը, Տիգրանակերտը, Արտաշատը, Դվինը, Անին, Սիսը, վերածվել են ավերակների: Պատմության ընթացքում հայկական քաղաքակրթությունը, հայերի հոգևոր, ազգային, մշակութային կյանքը հիմնականում զարգանում և ըն-

թանում էր այս կամ այն կայսրության (հռոմեական, բյուզանդական, պարսկական, օսմանյան, ռուսական) սահմաններում ու պայմաններում, կամ էլ՝ հայկական գաղութներում: Անհրաժեշտ է ընդունել այս ճշմարտությունը՝ խուսափելու համար այն վտանգավոր մտայնությունից, թե Սփյուռքն իբր դատապարտված է ուժացման, թե իբր իսկական հայերը նրանք են, ովքեր ապրել են Խորհրդային Չայաստանում (այժմ՝ ԳԳ-ում), ինչպես նաև չդառնալու արատավոր, այսպես կոչված, երևանակենտրոն մտածողության զոհը, ինչը վտանգավոր կերպով նվազեցնում է ազգի հնարավորությունները:

2. Չայկական պետականության աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական առումով բարդ տեղադրությունը Չայկական լեռնաշխարհում հակամարտող ուժերի ընդհարման խաչմերուկում, բարբարոսների և զավթիչների արշավանքների, ազդեցության ոլորտների համար մղվող պայքարի թատերաբեմում, դարձավ դարերով պետականության կորստի և ամբողջ աշխարհում հայության սփռվելու հիմնական պատճառներից մեկը: Եվ, այնուամենայնիվ, չնայած այս անբարենպաստ պայմաններին, բոլոր ժամանակներում ժողովրդի մեջ անշեջ էր սեփական պետականությունը, անկախությունը և ազատությունը վերականգնելու հավատը: Անկախ ամենից, այս հավատն ամրապնդվում էր այն փաստով, որ չնայած հալածանքներին, մինչև 1915-1923թթ. աղետը՝ Մեծ եղեռնը (Չայոց ցեղասպանությունը), հայերը Չայկական լեռնաշխարհի բնիկներն էին և չորս հազարամյակ համախմբված բնակվում էին իրենց պատմական բնօրրանում:

3. Մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը հայերին չհաջողվեց մշակել ազգային գոյատևման ու զարգացման ռազմավարություն և գործելակերպ («թուրքահայ հեղափոխության գաղափարաբանության» փոխարեն), հավատարիմ մնալ այն ծրագրին, որի գերխնդիրը պետք է լիներ պատերազմի ընթացքում ունենալ հնարավորինս նվազագույն կորուստներ, ինչը թույլ կտար խոչընդոտել ջարդարարների ծրագրերի իրականացմանն ու խուսափել մեծ աղետալի կորուստներից: Չի կարելի ընդունել այն տարած-

ված տեսակետը, թե իբր աղետն ի սկզբանե անխուսափելի էր, և հայերի կամքից ու վարքից գրեթե ոչինչ կախված չէր: Կար այլընտրանք, և ժամանակն է, որ պատմաբանները պատմությունից դասեր քաղելու նպատակով հիմնովին զբաղվեն դրա բացահայտմամբ: Առաջին համաշխարհային պատերազմում նվազագույն կորուստներ կրելու պարագայում XX դարը կարող էր դառնալ հայերի ազգային կյանքի բուռն ծաղկման ժամանակաշրջան. այդ թվում՝ Արևմտյան Հայաստանում բարեփոխումներ իրականացնելու իրական հեռանկարով, ինքնավարության ձեռքբերումով, իսկ հետագայում՝ գաղութային կայսրությունների փլուզման և աշխարհում նոր կարգերի ձևավորման ժամանակաշրջանում, նաև ազգային պետականության վերականգնման հնարավորությունով: Նման հեռանկարների նախադրյալ կարող էին հանդիսանալ այն ձեռքբերումներն ու ներուժը, որոնք հայերի կողմից մինչ այդ կուտակվել էին Օսմանյան և Ռուսական կայսրություններում, ինչպես նաև հայկական գաղութներում:

4. Սակայն 1915-1923թթ. աղետն ամբողջացավ, երբ Հայաստանի Հանրապետության դեմ ուղղված բոլշևիկյան-քեմալական նվաճողական քաղաքականությունը կործանարար հարված հասցրեց հայերին: Հանրապետությունը մասնատվեց և բռնի խորհրդայնացվեց: Նույնիսկ Եղեռնից, Արևմտյան Հայաստանի հայաթափումից, ռուսական բանակի հեռանալուց և ռազմաճակատն անպաշտպան թողնելուց հետո, 1920թ. վերջին հայերը վերահսկում էին Կարսի, Երևանի, Նախիջևանի, Ջանգեզուրի, Արցախի, Ջավախքի շրջանները: Պատերազմից հետո Փարիզյան խաղաղության վեհաժողովի ժամանակ հայկական պետականության վերականգնման ուղիներ էին որոնվում բացի Արևելյան Հայաստանի շրջաններից նրա կազմում ներառելով Արևմտյան Հայաստանի չորս նահանգներ: Այդ ժամանակ դեռևս հնարավորություն կար այս կամ այն կարգավիճակով պահպանելու Հայկական Կիլիկիան:

5. Հայերի պարտությունների ու կորուստների օբյեկտիվ պատճառներից բացի (բոլշևիկյան-քեմալական հարձակողականություն-

նը, Հայկական հարցին դրական լուծում տալու հարցում Անգլիայի և Ֆրանսիայի անտարբերությունը, ԱՄՆ-ի Կոնգրեսի կողմից Հայաստանի մանդատի ստանձնման մերժումը), ջարդեր ու տեղահանություն վերապրած աշխարհասփյուռ հայերը չկարողացան բավական ուժեր կենտրոնացնել՝ հակահարված տալու հարձակումներին, պաշտպանելու իրենց ազատությունը, ինչպես դա արեցին, օրինակ, լեհերն ու ֆինները՝ կասեցնելով Կարմիր բանակի հարձակումը: Բոլշևիկյան-քեմալական նվաճողականության դեմ պայքարում պարտությունը հայերին ոչ միայն զրկեց Սևրի պայմանագիրը կյանքի կոչելու գործում ուժային աջակցությունից, այլև դարձավ Արևելյան Հայաստանում տարածքային հետագա կորուստների հիմնական պատճառը (թույլ դիվանագիտության հետ մեկտեղ): 1921թ. փետրվարյան ժողովրդական տարերային ապստամբությունը՝ ուղղված բոլշևիկյան բռնապետության ու տեռորի դեմ, զրկված լինելով արտաքին աջակցությունից, խեղդվեց արյան ծովում, փշրելով ազգային և պետական մոտալուտ վերածննդի հույսերը:

6. Ազգային պետականության դարավոր բացակայության պայմաններում ազգի պաշտպանական գործառույթներն իրականացնում էր Հայոց եկեղեցին: Հայկական քաղաքակրթության պահպանումն ու շարունակականությունը, հայրենի հողում ապրելու հնարավորությունը, այդ հողը մշակելու, դրա վրա սեփականություն ունենալու, իրավունքները պահպանելու և ընդլայնելու հնարավորությունը (որքանով դա թույլ էին տալիս պայմաններն ամենամաքարենպաստ ժամանակներում), իսկ պատմական հուշարձանների ու մշակութային կենտրոնների պահպանումը, մինչև վերջերս նոր տաճարների ու կենտրոնների ստեղծումը Կիլիկիայից մինչև Կուրգետն ընկած տարածքներում և այլուր, հայ հոգևոր այրերի իմաստուն և հաջողակ գործունեության ապացույցն են:

7. Չնայած դարերի ընթացքում կրած կորուստներին՝ ազգի գոյատևումն ու զարգացումը (հոգևոր, մշակութային, հասարակական-սոցիալական) հայոց պատմության ամենամաքարենպաստ

ժամանակներում (ընդհուպ մինչև XIX դ. 60-ական թվականները) մեծ մասամբ պայմանավորվում էին հայ քրիստոնյայի հոգևոր ու բարոյական արժեքների, ինչպես նաև հասարակական-քաղաքական մտածելակերպի ու գործելակերպի միասնությամբ:

8. XIX դ. երկրորդ կեսին ի հայտ եկած հասարակական կազմակերպություններն ու կուսակցությունները չկարողացան ստեղծել ազգային համակարգող մի կառույց, որն իր գործունեությունը համաձայնեցնելով եկեղեցու հետ, ընդունակ կլիներ արտահայտելու ազգի հավաքական միտքն ու կամքը, դառնալու նրա հուսալի պաշտպանը: Տեղի ունեցավ հակառակը. մրցակցող և մեկմեկու թշնամի այդ կազմակերպությունները հակադրվեցին ըստ իրենց հետադիմական-պահպանողական եկեղեցուն, որը համաձայն չէր վերջիններիս անպատասխանատու, անհեռատես, անհամբեր և վտանգավոր գործելակերպին: Արդյունքում՝ ազգը հայտնվեց այնպիսի վիճակում, որ պատրաստ չէրավ դիմակայելու դժվար փորձություններին ու ժամանակի մարտահրավերներին: Օրհասական պահին եկեղեցին նույնպես թուլություն ցուցաբերեց՝ ենթարկվելով այն ուժերի ազդեցությանը, որոնք հույսը կապում էին ոչ թե պաշտպանական և քաղաքական խուսավարման սեփական ռեսուրսների, այլ ինքնակա, մինչև վերջ չմտածված ուժային գործողությունների, արտաքին օգնության և ինքնապաշտպանության հուսալի համակարգի բացակայության պայմաններում փրկության գաղափարի հետ:

9. Հայոց նորագույն պատմության մեջ առաջին մարտահրավերը եղավ արևմտահայության, Արևմտյան Հայաստանի՝ Հայկական լեռնաշխարհի մեծ մասի նկատմամբ ռազմավարության ու գործելակերպի ընտրության հարցը: XIX դ. վերջին և XX դ. սկզբին Պարսկաստանում և Ռուսական կայսրությունում հայերն ապրում էին համեմատաբար ազատ պայմաններում, և նրանց գոյությունը վտանգված չէր: Ավելին, արևելահայության (ռուսահայության) մշակույթի, լեզվի, գրականության, արվեստի աննախադեպ ծաղկումը տեղի ունեցավ հենց այդ ժամանակաշրջանում: 1375թ. Կիլիկիայի հայկական

թագավորության անկումից, 1555թ. Պարսկաստանի և Օսմանյան կայսրության միջև Հայաստանի առաջին բաժանումից հետո մինչև 1915-1923թթ. աղետը Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջաններում հայերն ամենատարբեր ձևերով ստեղծում և պահպանում էին ազգի գոյատևման ու զարգացման անհրաժեշտ պայմաններ: Օրինակ՝ Ձեյթունի հայերը, սկսած 1626թ., Մուրադ III-ի ֆիրմանով, ազատվել էին խարաջ վճարելուց՝ փոխարենը պարտավորվելով վճարել տարեկան 15000 դուրուշ՝ Այա-Սոֆիա մզկիթի օգտին: Սկսած այդ ժամանակից մինչև 1862թ. զեյթունցիներն օգտվում էին կիսահինքնավարությունից և նույնիսկ ինքնավարությունից, ինչպես նաև զարգացման որոշակի պայմաններից: Պարսկաստանում և Ռուսաստանում ևս հայերն օգտվում էին նման պայմաններից:

10. Օսմանյան կայսրության անխուսափելի փլուզմանը զուգընթաց, արևմտահայերի վիճակը դառնում էր սպառնալիքներով լեցուն և օրհասական: Հույների, սլավոնների ու արաբների ազգային-ազատագրական շարժման արդյունքում կայսրությունը կարող էր զրկվել իր նվաճած ծայրամասային տարածքներից: Իսկ արևմտահայերի ազգային-ազատագրական շարժումը, վերջինիս ձևավորման ընթացքը Բեռլինի Կոնգրեսից հետո, այսինքն՝ Հայկական հարցի լուծումը արտաքին գործոնի օգնությամբ, Ռուսաստանի և այլ հզոր տերությունների միջամտությամբ, Արևմտյան Հայաստանում բարեփոխումների նախատեսմամբ, ինքնավարության ձեռքբերմամբ, ինչը ապագայում պետք է հանգեցներ նրա անկախությանը, թուրքերի համար նշանակում էր իրենց մետրոպոլիայի՝ Անատոլիայի (ինչպես նրանք էին անվանում Հայկական լեռնաշխարհը) տրոհում Կիլիկիայից մինչև Տրապիզոն, Երզնկայից մինչև Վան:

11. Այս իրավիճակում հեռատես և իրատես հայերն առաջարկում էին ընտրել ազգային զարգացման ռազմավարության այն ուղին, որը երկար ու դժվար էր, սակայն անվտանգ: Այդ ռազմավարությունը ենթադրում էր ամբողջ Օսմանյան կայսրության բարեփոխումը և վերակառուցումը: Դրա առաջին քայլը եղավ երիտթուրքերի (նույ-



նիսկ իրենց բոլոր արատներով) հեղափոխությունը, որին ակտիվ մասնակցեցին հայերը: Ձարգացման այս ճանապարհին առաջարկում էին հայ ազգային վերնախավի պահպանողական ներկայացուցիչները՝ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Մաղաթիա Օրմանյանը և այլք: Նույն կոչով հայերին էր դիմում Մ. Լորիս-Մելիքովը, որը Կոստանդնուպոլիս էր այցելել 1859 և 1860 թվականներին: Ինչպես ցույց տվեց պատմությունը, արևմտահայության հեղափոխական և արագ ազատագրման նախադրյալներ չկային: Հայդուկային դիմադրությունն ի գորու չէր ավ կասեցնելու զանգվածային ջարդերը հայ հեղափոխականների կողմից՝ կազմակերպված Սասունի, Վանի, Ջեթունի ընթոստությունների ժամանակ: Առաջին աշխարհամարտի սկզբին կազմավորված հայկական փոքրաթիվ կամավորական ջոկատները ոչ միայն չկարողացան ինքնուրույն լուրջ պաշտպանություն կազմակերպել, այլև էական ազդեցություն չունեցան առաջին վեց ամիսների ընթացքում ռուսական զորքերի կողմից Արևմտյան Հայաստանի «կայծակնային ազատագրումն» ապահովելու գործում, և ինչպես միամտաբար կարծում էին շատերը, դրանով իսկ կանխել 1915-1923թթ. ցեղասպանությունը: Վանում, Մուսա լեռում և այլուր հերոսական դիմադրությունները չկարողացան փրկել իրավիճակը: Ինքնաբուխ, մինչև վերջ չհաշվարկված զինված պայքարի պատմությունը, սկսած Ս. Կուկունյանի արշավանքից մինչև Կիլիկիայում հայկական լեգեոնի պարտությունը, Ջեթունի ապստամբության պարտությունից մինչև Կարսի հանձնումը, 1918թ. մայիսյան հերոսամարտերից մինչև 1921թ. փետրվարյան ապստամբության պարտությունը, ցույց է տալիս, թե ինչքան վտանգավոր են այն գործողությունները, որոնք իրականացվում են սեփական ճակատագիրն ինքնուրույն տնօրինելու ընդունակ ազգի միահանուռ ուժի բացակայության պայմաններում:

12. Մինչ օրս հայոց քաղաքական պատմության (մասնավորապես վերջին հարյուր տարիների) մեջ քննադատաբար վերլուծված չեն մեր սեփական ծրագրերի ու գործողությունների փնտրտուքի փորձերը, ո-

րոնք կկարողանային երաշխավորել ազգի ապահով և հեռանկարային զարգացումը: Հայ պատմագիտական գրականության մեջ, ինչպես նաև ճակատագրական իրադարձությունների մասնակիցների մասին հուշագրություններում գերիշխում է առասպելաստեղծությունը կամ էլ Օսմանյան կայսրությունում հանուն ազատության և արդարության առանձին զինված ելույթների դեմ իշխանությունների դաժան գործողությունների բացահայտումը: Ներկայացվում է, թե ինչպիսի բարբարոսությամբ են թուրքերը վարվել մեզ հետ, թե ինչպես ոմանք դավաճանել են, իսկ մյուսներն օգնության չեն հասել և այլն: Մի խոսքով, ամեն ինչում մեղավորը մեր «սև բախտն» է կամ էլ «մենք խաբված էինք ազգովի»: Սակայն իրադարձություններն անաչառ և գիտականորեն շարադրելու համար բազմաթիվ փաստեր ու նյութեր կան, որոնցից ակնառու կդառնա, որ Մեծ եղեռնն անխուսափելի և կանխորոշված չէր, չնայած թուրքական իշխանությունների մտադրություններին, որոնց գործողություններն արդարացման ենթակա չեն: Համենայնդեպս, կարելի էր խուսափել նման մասշտաբի կորուստներից, եթե ընտրվեր ազգային-ազատագրական շարժման այլ ռազմավարություն և գործելակերպ, որոնց իրականացման համար, կախված ժամանակից ու հանգամանքներից, պետք է հաշվի առնվեին ազգային անվտանգության ապահովումը և ազգային գոյատևման ու զարգացման հնարավոր բարենպաստ պայմանների որոնումը:

13. Դեռևս 1912թ., եթե ոչ ավելի վաղ, մինչև արտաքին օգնության և միջամտության վերաբերյալ առաջին հայցումները, հնարավորություն կար խորհելու և մտահոգվելու հիմնականում անվտանգության, ինքնապաշտպանության (լայն իմաստով) մասին, հատկապես սեփական քաղաքական մեթոդներով: 1912թ. հայկական տարբեր քաղաքական ու գաղափարական ուղղությունների առաջնորդները Թիֆլիսում փորձեցին ստեղծել ազգային մի մարմին, որն ընդունակ կլիներ հաշվի առնելու ու գնահատելու հայության վիճակի տարբեր կողմերն ու կշռադատված որոշումներ կայացնելու գործողությունների իրականացման վերաբերյալ. ստեղծվեց Հայոց ազգային բյուրոն:

Առաջին իսկ ժողովի ժամանակ, 1912թ. նոյեմբերին, չհաջողվեց նույնիսկ օրակարգի մեջ ընդգրկել «թուրքահայության ինքնապաշտպանության» կազմակերպման հարցը: Բյուրոն իր գործունեությունը սահմանափակեց բացառապես «դիվանագիտական գործողություններով»՝ դիմումներ հղելով հզոր տերություններին, առաջին հերթին ռուսաց թագավորին՝ արևմտահայությանը պաշտպանելու համար օգնություն հայցելով: Ձայների մեծամասնությամբ հաղթեցին նրանք, ովքեր հետագայում, պարտություններից ու կորուստներից հետո, իրենց հուշերում գրեցին, որ «ազգովի սխալվեցինք, խաբվեցինք»: Փոքրամասնության մեջ էին պահպանողականներ Լեոն և Յովհաննես Թումանյանը, որոնք հետագայում լքեցին Բյուրոն՝ այդպիսով իրենց ազատելով ճակատագրական որոշումներ կայացնելու պատասխանատվությունից: Պարզվեց, որ իրավացի էին նրանք, ովքեր առաջնահերթ էին համարում անվտանգության և պատասխանատու գործողությունների սեփական համակարգի ստեղծումը: Պետքական պահին ոչ միայն բավարար ուժեր չգտնվեցին արևմտահայության ինքնապաշտպանության համար, այլև ավելի ուշ չստեղծվեց բանակ, որը կկարողանար վերահսկել Արևմտյան Հայաստանի տարածքները՝ 1917թ. հոկտեմբերյան հեղաշրջման և ռազմաճակատի կազմալուծման արդյունքում ռուսական բանակի հեռանալուց հետո: 1920թ. աշնանը չկային բավարար ուժեր, չէին ընդունվում պատասխանատու որոշումներ և չէին իրականացվում համաձայնեցված գործողություններ՝ Հայաստանի առաջին Հանրապետությունը բուլշևիկյան-քեմալական համատեղ նվաճողականությունից փրկելու համար:

14. Ցեղասպանությունից, Արևմտյան Հայաստանի հայաթափումից, Արևելյան Հայաստանի մի մասը կորցնելուց հետո հայերի երկու երրորդը հայտնվեց իր պատմական հայրենիքից դուրս, ինչի արդյունքում և ձևավորվեց Սփյուռքը:

Ցեղասպանությունից և տեղահանությունից հետո կենդանի մնացած հայերը ժամանակի ընթացքում արտաքին սփյուռքում ամոքեցին իրենց վերքերը, և չնայած ուժացման «սպիտակ ցեղասպանութ-

յան» արդյունքում անխուսափելի կորուստներին, կառուցեցին եկեղեցիներ, դպրոցներ, ակումբներ, թատրոններ, մարզադաշտեր, հիմնեցին հասարակական կազմակերպություններ, հրատարակչություններ, մամուլ, աշխուժացրին քաղաքական կուսակցությունների գործունեությունը, ստեղծեցին հոգևոր հայրենիքի ինստիտուտը, պահպանեցին ու զարգացրեցին ազգային ինքնագիտակցության զգացումը, կորցրածը վերականգնելու և հայրենիք վերադառնալու կամքը: Չնայած այն հանգամանքին, որ 1946-1948թթ. հայրենադարձությունը կազմակերպվեց հանցավոր կերպով, շուրջ 90 հազար հայեր վերադարձան իրենց նախնիների հողը:

15. Իսկ ներքին սփյուռքում խորհրդային ժամանակներում կորսվեցին հայկական կյանքի այնպիսի հզոր կենտրոններ, ինչպիսիք էին Թիֆլիսը, Շուշին, Բաքուն, Նախիջևանը, Նոր Նախիջևանը և այլն: Փակվեցին եկեղեցիներ, դպրոցներ, մամուլը, Ներսիսյան դպրոցը Թիֆլիսում, Լազարյան ինստիտուտը Մոսկվայում և այլն: Այս ամենը կործանարար հետևանքներ ունեցավ:

Հայաստանի առաջին Հանրապետության անկումից և տրոհումից հետո, հայտնվելով նրա մի հատվածում՝ խորհրդային Հայաստանում, տասնամյակներ շարունակ զրկված լինելով Սփյուռքի հետ ազգային, հոգևոր և քաղաքական կապերից, խորհրդային հայերը պատրաստ չեղան ժամանակի նոր մարտահրավերներին՝ ԽՍՀՄ-ի փլուզմանը (1991թ. ԱԴՊԿ - ԴԿԿՊ հեղաշրջումից հետո): Չունենալով քաղաքականապես և ֆինանսապես պատշաճ կազմակերպված սփյուռք, ինչպես նաև ազգային-քաղաքական վարդապետությանը համապատասխան մշակված գործողությունների ծրագիր՝ հայերը չկարողացան օգտագործել բարենպաստ հեռանկարները և հաշվի չառան ԽՍՀՄ անխուսափելի փլուզման հնարավոր վտանգները: Ակնհայտ է, որ այդ պայմաններում ոչ լավագույնս օգտագործվեցին նաև հետխորհրդային շրջանի հնարավորությունները: Ինքնուրույն գործելու անկարող խորհրդային տնտեսության շուտափույթ վերակառուցման, արագընթաց զար-

գացման, Սփյուռքի օգնությամբ հայրենադարձության կազմակերպման, համաշխարհային հայության ջանքերի միավորման, երկրի վերականգնման փոխարեն ունեցանք քայքայված տնտեսություն, ազգային ոգու անկում, բնակչության արտահոսք:

16. Երկրում և Սփյուռքում տրամադրությունների վերլուծությունը ի ցույց է հանում այն մտահոգությունը, տագնապը և մտքերի խառնաշփոթը, որոնք տիրում են հայերի խնդիրների ու նպատակների շուրջ: Այդ մտահոգության պատճառը հայկական քաղաքական բառապաշարում հայտնի «Դեպի Երկիր» նշանաբանի հռչակումն է՝ որպես Սփյուռքի կողմից իրականացվելիք գործողությունների ծրագիր Արևելյան Հայաստանի այն հատվածի նկատմամբ, որն այսօր հետխորհրդային Հայաստանի Հանրապետության տարածքն է: Մինչդեռ «Երկիր» հասկացությունը միշտ վերաբերել է Արևմտյան Հայաստանին, այսինքն՝ պատմական Հայաստանի մեծ հատվածին: Իսկ ԽՍՀՄ փլուզման հետևանքով նախկին Խորհրդային Հայաստանի տարածքում անկախության հռչակումը, ինչպես նաև Արցախի և դրան հարակից որոշ տարածքների ազատագրումը Հայկական հարցի մասնակի լուծման սկիզբն են (հիմնականում անկախ հայության կամքից, որը կազմակերպված և պատրաստ չէր այդ հարցն ինքնուրույն լուծելու): 1918թ. Արևելյան Հայաստանի մի հատվածը, տասներկու հազար ք. կմ մակերեսով, Հայաստանի Հանրապետություն կոչելը հապշտապ և չմտածված քայլ էր, ինչը հայերի առջև ծառայած նպատակների և խնդիրների շուրջ խառնաշփոթ առաջացրեց: Երբ 1919թ. պառլամենտի՝ անկախության առաջին տարեդարձին նվիրված նիստում, Հայաստանը հռչակվեց Ազատ, Անկախ և Միացյալ, հայերը վերահսկում էին Արևելյան Հայաստանի շրջանների մեծ մասը, և շատերը դեռ հավատում էին Արևելյան ու Արևմտյան Հայաստանների մոտալուտ միավորմանը (գոնե Արևմտահայաստանի չորս նահանգների սահմաններում, իսկ Հայկական Կիլիկիայի հարցն ընդհանրապես հանված չէր օրակարգից մինչև տեղացի հայերի պարտությունը և

Ֆրանսիացիների հեռանալը): Եվ նախքան Սևրի պայմանագրի որոշումները կյանքի կոչելն այդ հռչակումը եղավ չմտածված ու անժամանակ: Արևմտահայության (Հայկական ազգային պատվիրակությունը՝ Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ) և արևելահայության (Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը՝ Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ) ներկայացուցիչների միջև առավել խորացան տարածայնություններն ու անհամերաշխությունը՝ գործողությունների կազմակերպման գործում:

17. Մեծ եղեռնը վերապրողների սերունդների լիազոր ներկայացուցչական համապատասխան մարմինների առայժմ բացակայության պայմաններում, ինչպես նաև ՀՀ իշխանությունների, Հայկական ազգային կոմիտեի և Ամերիկայի հայկական համագումարի կողմից գործողությունների պատշաճ ծրագրման ու համակարգման բացակայության պարագայում Հայկական հարցի լուծման նման միակողմանի, երևանակենտրոն քաղաքական դիրքորոշումն անտեսում էր և այսօր էլ անտեսում է ամբողջական Հայ դատի (Հայկական հարցի, որի նպատակն է համաշխարհային հանրության կողմից հայերի ցեղասպանության ճանաչումը, արևմտահայության տարածքային, նյութական ու բարոյական փոխհատուցումը) խնդրի առաջնահերթության անհրաժեշտությունը:

18. Լիարժեք ազգային ոգու տասնամյակներ տևած ոչնչացումը՝ ազգային պետական-քաղաքական մշակված վարդապետության (դոկտրինի) բացակայության պայմաններում, ԽՍՀՄ գոյության ավարտին խորհրդային հայերիս ազգային շահերի պաշտպանության միջոցների ընտրության հարցում աջակցություն ցուցաբերելու Սփյուռքի անպատրաստակամությունը, իսկ տարածաշրջանից խորհրդային բանակի հեռանալուց հետո պատերազմ սանձադրձած ադրբեջանցիների դեմ լիարժեք հաղթանակ տանելու գործում ռազմական գործողությունների ճակատագրական պահին մասնակցություն ցուցաբերելու Սփյուռքի անպատրաստակամությունը, այս բոլորը հայերին թույլ չտվեցին հասցնել ռազմաքաղաքական հաջո-

ղությունը այնպիսի մակարդակի (այն է՝ ազրեսորի հետապնդումը, ոչ միայն բուն հայկական տարածքների՝ մինչև Կուր ազատագրումը, այլև անվտանգություն ապահովելու համար ազերիներին (կովկասյան թաթարներին) պատկանող հողերի գրավումը, որը իրավացի և հնարավոր կդարձներ քաղաքական առևտուրը «հող՝ խաղաղության փոխարեն» և որը կապահովեր հայերի ոտնահարված իրավունքների անվերապահ ճանաչումն Արևելյան Հայաստանում:

Ազգային պետական-քաղաքական մշակված հիմնորոշիչների բացակայության պայմաններում ազգային ոգու տասնամյակներ տևած ոչնչացումը, ազգային ինքնագիտակցության թուլացումը և խորհրդայնացումը՝ ԽՍՀՄ գոյության ավարտին ազգային շահերի պաշտպանության եղանակների ընտրության հարցում քաղաքական և այլ օժանդակություն ցույց տալու, իսկ տարածաշրջանից խորհրդային բանակի հեռանալուց հետո ռազմական գործողությունների ճակատագրական պահին պատերազմ սանձազերծած ադրբեջանցիների դեմ հաղթանակ տանելու հայոց սփյուռքի անպատրաստությունը, հայերին թույլ չտվեցին ռազմաքաղաքական հաջողությունն այնպիսի մակարդակի հասցնել, որը հնարավոր կդարձներ քաղաքական առևտուրը «հող՝ խաղաղության փոխարեն» և կապահովեր համաշխարհային հանրության կողմից հայերի ոտնահարված իրավունքների ճանաչումն Արևելյան Հայաստանում:

Խորհրդային բռնապետական իշխանության տարածքային և այլ անօրինությունների թեկուզ մասնակի շտկման նպատակով Նախիջևանն ապօրինաբար Ադրբեջանին հանձնելու հարցի բարձրացումը, Ադրբեջանում Հայոց ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու պահանջը Ադրբեջանի ծայրահեղական ղեկավարներին կստիպեր հրաժարվել հայերի ազատագրած հողերը վերադարձնելու մտքից, Հայաստանի Հանրապետության նկատմամբ տարածքային ազրեսիվ այլ հավակնություններից և նրանց կզրկեր արտաքին օժանդակությունից:

19. Առկա իրադրությունում ակնհայտ է, որ Ադրբեջանի հետ բա-

նակցություններ կարող են վարվել ռազմական գործողությունները դադարեցնելու Բիշքեկյան համաձայնագրերը ստորագրելուց, պատերազմում նրանց պարտվելուց հետո միայն հաշտության պայմանագիր կնքելու և դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին: Հայաստանի տարածքային ամբողջականությունը վերականգնելու մասին բանակցությունները համապատասխանաբար կարող են վարվել Ռուսաստանի Դաշնության Խորհրդային Ռուսաստանի, ԽՍՀՄ իրավահաջորդի հետ (տե՛ս «ՀՀ-ի և ՌՍՖՍՌ-ի միջև խաղաղության մասին համաձայնագիր», 10 օգոստոսի 1920թ., և 1920թ. հոկտեմբերի 28-ի «ՌՍՖՍՌ-ի և ՀՀ-ի միջև խաղաղության պայմանագրի» նախագիծը, որը չստորագրվեց Հայաստանի բռնի խորհրդայնացման պատճառով, “Армянский вестник”, 2002, թիվ 1 և 2): Բանակցությունները կարող են վարվել Արցախը Հայաստանի հետ վերամիավորվելու ճանաչման, 1920թ. սեպտեմբերին Կարմիր բանակի կողմից ժամանակավորապես օկուպացված Նախիջևանի ճակատագրի մասին, որի կարգավիճակը (վիճելի այլ տարածքների թվում) պետք է որոշվեր միայն Ռուսաստանի և Հայաստանի միջև բանակցությունների միջոցով՝ 1920թ. օգոստոսի 10-ի համաձայնագրի հիման վրա: Այդ համաձայնագիրն այսօր էլ միակ և վերջին միջազգային իրավական փաստաթուղթն է և անմիջականորեն հարաբերվում է Հայաստանի և նրա հավակնոտ հարևանի միջև տարածքային խնդիրներին, մասնավորապես Արցախին ու Նախիջևանին, որոնք ժողովրդի կամքին, միջազգային նորմերին հակառակ՝ Հայաստանի Հանրապետության մնացորդների բռնի խորհրդայնացումից հետո հանցագործ խորհրդային վարչակարգի կողմից ապօրինի միացվեցին Ադրբեջանին:

20. Եվ միայն արցախահայերի հերոսական պաշտպանությունն արդեն մեր օրերում հայերին փրկեց նոր աղետներից ու կորուստներից, ճիշտ այնպես, ինչպես 1918թ. Սարդարապատի ճակատամարտը վերջ դրեց թուրքերի կողմից Արևելահայաստանի ասպատակությանը, իսկ Գարեգին Նժդեհի և նրա քաջարի զինվորների

սխրանքը Ջանգեզուրը փրկեց Արցախի, Նախիջևանի և Ջավախքի ճակատագրից: Այդ ժամանակ ահա, ցեղասպանության արդյունքում դաժան կորուստներից հետո ճակատագրական և աղետալի պահին հայության անպատրաստվածությունը և պատշաճ կազմակերպվածության բացակայությունը (հենց միայն Անդրամիկի հետ քաշվելը նեղացկոտության պատճառով և մեր շատ ու շատ հայրենակիցների անհոգությունն ու անմասն մնալը) արգելակեցին իրենց շահերի պաշտպանությունը և Սարդարապատից 2,5 տարի հետո՝ 1920-1921թթ. հայերին թույլ չտվեցին արժանի հակահարված տալու թուրք-բուլղարիկյան համատեղ ներխուժմանն ու Արևելյան Հայաստանը փրկելու մասնատումից, բռնի խորհրդայնացումից և անկախության կորստից: Արևմտահայության ցեղասպանությունից հետո Հայկական հարցի լուծման դժվարին ճանապարհին սա երկրորդ աղետալի հարվածն էր համայն հայությանը:

21. Վաղուց ժամանակն է դադարեցնել կորուստների ու պարտությունների հիմնական պատճառների որոնումները մեզնից դուրս: Իսկ այն հարցին, թե ինչու 1914-1921թթ. աղետալի և 1985-1991թթ. ճակատագրական իրադարձություններին նախորդած տասնամյակների ընթացքում հայությունը դեպքերի նմանօրինակ ընթացքի չէր պատրաստվում, քաղաքական հայագիտությունը դեռևս պատասխան չի տվել: Պատասխաններն անհրաժեշտ են, որպեսզի սխալները չկրկնվեն, և այսօր-վաղը պատրաստ լինենք նոր փորձությունների: Եվ մեր օրերում էլ միայն հրաշքը փրկեց հայերին: ԱԴՊԿ-ի ծախողված խռովությունը նրանց փրկեց նոր կորուստներից ու պարտություններից, քանի որ «Կոլցո» գործողության հաջող ու վերջնական անցկացման արդյունքում (անձնագրային ռեժիմի ստուգումներ և հայաթափություն) Արցախից կմնար այն, ինչ մնաց Շուշիից և Հայաստանի Հանրապետությունից՝ 1920թ. պարտությունից հետո:

22. Համաշխարհային հանրության մեջ հասարակական կարծիքի ձևավորման խնդիրները, տարբեր մակարդակների դաշնակիցներ ձեռք բերելը, լոբբիստական և լրատվական աշխատանքը ֆինանսա-

կան և մտավոր ահռելի ջանքեր են պահանջում: Այդ նպատակով Հայկական ազգային կոմիտեից և Ամերիկայի հայկական համագումարից բացի (դրանք էլ առանց պատշաճ համաձայնեցվածության և գործողությունների ծավալայնության) առայժմ սփյուռքում համասփյուռքային մակարդակի ոչ մի լուրջ բան կազմակերպված չէ:

23. Արևմտյան Հայաստանում հայերի ցեղասպանությունից և 1921թ. Արևելյան Հայաստանի տարածքի անդամահատումից տասնամյակներ անց, վերջին ժամանակներս սկսել են ավելի հաճախ խոսել համաշխարհային հայության, նրա կազմակերպվածության և հայկական պետականության ստեղծման ու զարգացման, Հայկական հարցի լուծման գործում հայության տարբեր մասերի մասնակցության և տեղի մասին: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել լայնորեն տարածված խառնաշփոթությանն ու խճճվածությանը, որ գոյություն ունի «համաշխարհային հայություն», «համաշխարհային հայության կազմակերպություն» հասկացությունների բնորոշման մեջ: Առ այսօր չկա համաշխարհային հայությանը կազմակերպելու եղանակների, նպատակների և խնդիրների համընդհանուր հավանության արժանացած տեսակետ, թե ինչպես պետք է բաժանվի աշխատանքը և կազմակերպվի համագործակցությունը նրա տարբեր մասերի միջև, ինչպես պետք է մշակվեն և իրականացվեն համահայկական ծրագրեր և նախագծեր:

24. Ազգային համաձայնության բացակայության հիմնական պատճառներից մեկը (որը Հայաստանի Հանրապետության և սփյուռքի քաղաքական վերնախավի շրջանակներում արտահայտվում է սուր, անհաշտ, երբեմն նույնիսկ թշնամական առճակատման բնույթ ստանալով), համազգային կամքի թուլության, ժամանակի, շրջապատի և ազգային խնդիրների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և ազատագրված տարածքների սրընթաց ու դինամիկ զարգացման պահանջներին համապատասխանող ջանքերի բացահայտ անբավարարության, համազգային պետական մակարդակով գիտակցված և ընդունված քաղաքական

վարդապետության (դոկտրինի) բացակայությունն է: Այն պետք է ձևավորվի հատկապես վերջին 100 տարիների պարտությունների ու կորուստների անաչառ վերլուծության հիման վրա: Դա պետք է արվի ոչ թե բարեկամների ու թշնամիների ուխտադրությունը մերկացնելու, փոխադարձ մեղադրանքների, մեր մեջ խորապես արմատացած մեր «սև բախտը» լացելու, այլ այդ պարտություններում պատասխանատվության մեր բաժինը գտնելու և նոր, անուղղելի կորուստներից ու սխալներից խուսափելու համար:

25. Այսօրվա Հայաստանի Հանրապետությունը խորհրդային Հայաստանի շարունակությունն է ոչ միայն իր անկլավային սահմանափակ տարածքով, արդյունաբերությամբ ու տնտեսական պոտենցիալով, որ նախատեսված է միայն խորհրդային տնտեսակարգի պայմաններում գործելու համար, այլև շատ բաներում դեռևս չհաղթահարված իր ազգային ինքնագիտակցության խեղվածությամբ, որ տասնամյակներով աճեցվել է խորհրդային կրթական, հասարակական և դաստիարակչական միջավայրում: Այդ պատճառով չէ՞, որ ոչ ոք երբեք քննարկման (առավել ևս համաժողովրդական) չի դրել և չի գնահատել խորհրդային Հայաստանի կամ թե 1918-1920թթ. Հայաստանի Հանրապետության իրավահաջորդը լինելու այլընտրանքային գաղափարի դրական ու բացասական կողմերը: Չի արել ո՛չ այն ժամանակ, երբ 1991թ. Անկախության հռչակագիրն էր ընդունվում, ո՛չ էլ հետո: Հայկական ոչ մի քաղաքական կազմակերպություն, ինչպես և 1918թ., ո՛չ տեսականորեն, ո՛չ գործնականում պատրաստ չէր աղետալի իրադրությունում ինքնուրույն, գիտակցված, պատասխանատու գործողությունների: Եվ փառք Աստծո, որ այսօր գոնե ունենք այն, ինչ ունենք: 1991թ. հետո ընկած ժամանակներն էլ բարենպաստ եղան, և հետխորհրդային երիտասարդ հայերին ու նրանց հետևորդներին դեռևս հաջողվում է վերահսկել իրադրությունը: Իրադարձությունների հետագա ընթացքը, որ ազգի ապագայի համար կարող է և՛ դրամատիկ, և՛ ճակատագրական լինել, կախված կլինի ամբողջ հայության հոգևոր, բանական և նյու-

թական ուժի վրա հիմնված միջազգային կյանքում ինքնուրույն հայկական գործոնի ձևավորումից:

26. Հայկական ժամանակակից ազգային քաղաքական միտքը ոչ միայն հայոց մտքի կենտրոններ թիֆլիսում, Կոստանդնուպոլսում, Էջմիածնում, Շուշիում, Նոր Նախիջևանում, Մոսկվայում, Փարիզում, Բեյրութում, Բոստոնում և այլուր գոյություն ունեցող հայկական աշխարհի ժառանգորդը և Հայաստանի առաջին Հանրապետության իրավահաջորդը չէ, այլև չի համապատասխանում ժամանակակից աշխարհի պահանջներին և ազգի առաջ ծառայած խնդիրներին՝ դրանցից բխող գործնական ու գաղափարական բնույթի հետևանքներով հանդերձ:

27. Հարկ է ելնել այն ակնհայտ փաստից, որ այսօր համաշխարհային հայության միայն մոտ 1/3-ն է բնակվում Պատմական Հայաստանից մնացած տարածքներում. դրանք Հայաստանի Հանրապետության, Արցախի ու Ջավախքի հայերն են:

28. Նախքան 1914թ.՝ Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը, դեռ պահպանվում էր Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու հնարավորությունը: Մինչև 1921թ.՝ նույնիսկ ցեղասպանությունից և ողջ մնացած հայերին Արևմտյան Հայաստանից բռնագաղթեցնելուց հետո էլ քննարկվում էր Հայաստանի վերականգնման հարցը՝ Արևելյան Հայաստանը (Հայաստանի Հանրապետության տարածքը) միացնելով Արևմտյան Հայաստանի հետ (չորս վիլայեթների սահմաններում):

29. Խորհրդայնացման սկզբում հայերը կորցրին Կարսը, խորհրդային ժամանակ՝ Նախիջևանը, Գանձակը, Գարդմանը, Լոռվա մի մասը, զրկվեցին Բաքվում զանգվածային ներկայացվածությունից, խիստ թուլացավ վրացահայությունը: Լիովին քայքայվեցին Ռուսաստանում հայկական կյանքի երբեմնի ծաղկուն կենտրոնները: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո նույնը տեղի ունեցավ Կարմիր բանակի զավթած Ռումինիայում, Բուլղարիայում և այլուր: Այսօր հերթի է և փորձության է սպասում

այն, ինչ խորհրդային ժամանակ մնացել է վիրահայերից: 1923թ. Լոզանի վեհաժողովից հետո, որի ընթացքում Թուրքիան կտրականապես մերժեց բռնազավթված Արևմտյան Հայաստանի տարածքում «հայկական ազգային օջախ» ստեղծելու հարցի քննարկումն անգամ, Հայկական հարցը դադարեց արծարծվել միջազգային ասպարեզներում: Հայ գործիչներին չհաջողվեց պահպանել ու զարգացնել Ազգային համագումարի գործունեությունը Փարիզում և Հայկական ազգային պատվիրակության գործունեությունը՝ որպես արևմտահայերի ներկայացուցչական մարմին:

30. Անհրաժեշտ է հստակ գիտակցել, թե Կոստանդնուպոլսից, Թիֆլիսից և այլ տեղերից ինչ հաջողվեց «տեղափոխել» Երևան: Ի՞նչ ուժ ու ոգի հաջողվեց կուտակել անկախության երկուսուկես տարիների ընթացքում: Այդ ամենը բավարա՞ր էր բոլշևիկյան-քեմալական հարձակմանն ու խորհրդայնացմանն առճակատելու համար: Իսկ ի՞նչ ունենք այսօր՝ տասնամյակների խորհրդային քայքայումից, ազգային ոգու և բարոյականության ոչնչացման փորձերից հետո: Բավարա՞ր են դրանք, հատկապես քաղաքական ոլորտում, երբ հիմնված են արցախահայության «ինքնորոշման» հայեցակարգի վրա, որը մեզ պարտադրվեց ղարաբաղյան իրադարձությունների վաղ և տարերային փուլում, այսօրվա քաղաքական, դիվանագիտական առճակատման և արդի հայկական պետականության տարածքային ամբողջականության մասամբ վերականգնման, պահպանման և կայացման համար: Չի՞ պահանջվում արդյոք առողջ ազգային ինքնագիտակցությունից ելնող ավելի աշխատունակ հիմնադրույթ, որը թույլ կտա գիտակցելու սեփական իրական անվիճելի իրավունքները, ազգային շահերը, չլուծված Հայկական հարցի իրավահաջորդությունը, որը միջազգային ասպարեզից դուրս մղվեց (հույս ունենք՝ ժամանակավորապես) բռնի խորհրդայնացման, զավթման և Հայաստանի տարածքների անդամահատման հետևանքով:

31. Հայերի առջև այսօր հետևյալ հարցերն են կանգնած: Ինչպի-

սի՞ և որքա՞ն ազգային ակունքներ հաջողվեց պահպանել ու կուտակել արևելահայության խորհրդային դաժան տասնամյակների պատմության ընթացքում: Ի՞նչ կիրառություն ունի կուտակածն այսօր և ինչպե՞ս զարգացնել այն: Իրենից ի՞նչ է ներկայացնում և ինչի՞ է ընդունակ հայության ազգային ներուժի ավելի քան 2/3-ը ներկայացնող սփյուռքն այսօր: Ինչքանով հաջողվեց ուշքի գալ 1915-1923թթ. աղետից և 1920թ. Հայաստանի Հանրապետության պարտությունից ու տարածքների անդամահատումից, խորհրդային տարիների ազգային հիշողության կորստից ու հայության երկու մասերի արհեստականորեն պարտադրված առճակատումից հետո:

32. Ի՞նչն է այսօր իրավաբանորեն խանգարում Արցախի և Հայաստանի Հանրապետության միացմանը: Նպատակահարմար, օրինաչափ չի՞ լինի նոր ձևավորվող հայկական անկախ պետությունը վերանվանել Արևելյան Հայաստանի Հանրապետություն՝ ամբողջական Հայաստանի հարցը թողնելով ապագա սերունդներին: Իրականությունն ու երևույթները կոչելով իրենց անուններով, նայելով ճշմարտության աչքերին, ազատվելով խորհրդային թերաթեքություններից ու առասպելներից՝ կարելի է հասնել համաշխարհային հայության առանձին մասերի միջև խնդիրների ու աշխատանքների բաժանման անհրաժեշտության հասկացողության ու համաձայնության: Ինչո՞ւ մինչ այժմ բացակայում է չլուծված Հայկական հարցին, ամբողջ հայության ճակատագրին վերաբերող արմատական հիմնադրույթային հարցերի բաց և պատասխանատու հասարակական-գիտական բանավեճը:

33. Անհրաժեշտ է վերջապես, որ հայերն իրենք համազգային մակարդակով գիտակցեն և համաշխարհային հանրությանը համոզեն, որ չկա ղարաբաղյան առճակատում, իսկ առճակատման էությունն այն է, որ այն դեպքում, երբ Արևմտյան Հայաստանը և Նախիջևանը դեռևս զավթված են, Թուրքիան ու Ադրբեջանն ամեն կերպ ձգտում են զավթումը տարածել նաև Արցախի, Ջանգեզուրի վրա և ավելի հեռու: Հայերի նկատմամբ զավթողական քաղաքականությունը շա-

րունակվում է Ադրբեջանի կողմից տրանսպորտային շրջափակման և զանգվածային կեղծ քարոզչության տեսքով, ուր ամեն կերպ ներմուծվում են «տարածքների փոխանակություն», «խաղաղություն տարածքների փոխարեն», «ԼՂՀ-ի կարգավիճակի որոշում» պրովոկացիոն գաղափարները, ինչպես և թշնամական այլ ակցիաներ, այդ թվում՝ պատերազմի վերսկսման սպառնալիքներ:

34. Այսօր Հայաստանի Հանրապետությունն ու Արցախը կազմակերպված են ինչքան հնարավոր է և հայկական պետականության վերականգնման ու զարգացման հիմքն ու միջուկն են: Ջավախքի հայերին ծանր պայքար է սպասվում ինքնակառավարման իրենց իրավունքի ամրապնդման համար հնարավոր դաշնային ժողովրդավարական վրացական պետությունում, որտեղ կարող են հարգվել մարդու և ժողովուրդների իրավունքները, եթե այդ միևնույնությունն պետությունը չի ուզում կրկնել ԽՍՀՄ-ի և Հարավսլավիայի ճակատագիրը:

35. Հետևաբար, խոսքը պետք է լինի մնացած հայության, նրանձն ձևի սփյուռքի համայնքների կազմակերպական վերակառուցման և համայնքային կազմակերպությունների միավորման հիմքի վրա համասփյուռքային կազմակերպություն ձևավորելու մասին: Կուսակցական, եկեղեցական, մշակութային, բարեգործական հիմքի վրա գոյություն ունեն բազմաթիվ համասփյուռքային, նույնիսկ համահայկական կազմակերպություններ, որոնցից են հայկական երեք ավանդական կուսակցությունները, Համազգային մշակութային միությունը, Թեքեյան մշակութային միությունը, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, Համազգային մարմնամարզական ընդհանուր միությունը և այլն:

36. Ակնհայտ է, որ միջհամայնքային համասփյուռքային լիարժեք միության ստեղծումը հնարավոր է միայն համահամայնքային ներկայացուցչական կազմակերպություններ ունենալու դեպքում, օրինակ՝ Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Լիբանանի հայերի ազգային խորհրդի, կոնգրեսի կամ միության: Սակայն, ցավոք, հայկական համայնքներում նմանօրինակ կառույցներ գոյություն չունեն:

Ապարդյուն փորձեր եղան ստեղծելու Լիբանանահայերի ազգային խորհուրդ, Ամերիկյան հայկական համագումար, որոնք օժտված լինեին համայնքային ներկայացուցչական գործառույթներով և գործող բոլոր կազմակերպությունների ընդգրկման հիման վրա ներգրավելին համայնքի անդամների ամբողջ զանգվածը:

37. Թեև Ռուսաստանում մոտ 2,5 միլիոն հայեր են ապրում, սակայն հարկ չկա գերազանհատելու ռուսահայերի ներկա հնարավորությունները: Միաժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել վերջին տասնամյակում (խորհրդային տարիներին նույնպես) Ռուսաստանում գտնվող հայերի կողմից իրենց հարազատներին ու բարեկամներին ցույց տրվող նյութական օգնության լուրջ ծավալները: Ապագայում (վերածնված ավանդույթներով, ազգային, հոգևոր, մշակութային կյանքի համապատասխան կազմակերպմամբ) ծաղկող, առաջադեմ Ռուսաստանի պայմաններում ռուսահայությունը կարող է նշանակալի դեր խաղալ համաշխարհային հայության ճակատագրում (ինչպես մինչև 1917թ. հոկտեմբերն էր), ինչպիսի դեր այժմ խաղում են ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Լիբանանի ու Իրանի հայկական համայնքները: Սակայն առայժմ ռուսահայության վերածննդի գործում առաջին քայլերն են արվում. այնքան էլ շուտ չի վերականգնի իր գործունեությունը Մոսկվայի Լազարյան ինստիտուտը, Դոնի Ռուստովի Պրոլետարական շրջանի ավերակների վրա այնքան էլ շուտ չի վերականգնվի Նոր Նախիջևանը: Լավ կլիներ, որ վերականգնվեր Հայկական բանկը, որի բացումը Ջամգարովի, Մանթաշովի, Լիանոզովի և այն ժամանակվա մի քանի հայ բանկիրների ու ձեռնարկատերերի կողմից նախատեսված էր 1917թ. սկզբներին: Բանկը պետք է օժանդակեր Ռուսական կայսրության հայկական մարզերի զարգացմանը: Խորհրդային տարիներին ռուսահայության աղետի մասշտաբները պատկերացնելու համար բազմաթիվ այլ բաների հետ հարկ է իմանալ Նոր Նախիջևանի հայերի ազգային ինքնագիտակցության մակարդակը, Ռուսական կայսրությունում ազգային մշակութային ինքնավարության շրջանակներում նրանց կազմա-



կերպվածության աստիճանը (տե՛ս «Статут Нахичеванской на Дону Армянской общины», որը գործում էր մինչև երկրամասի լիակատար բոլշևիկացումը) և այն, թե ինչ է մնացել այսօր Նոր Նախիջևանից, նրա հայությունից:

38. Հայերի վիճակը Ռուսաստանում խնդրառու կմնա, իսկ հայ-ռուսական հարաբերությունները՝ իրական դաշնակցայինից հեռու, քանի դեռ Ռուսաստանը լիակատար չի ապախորհրդայնացվել, ռուսներն իրենց ազգային շահերը չեն գիտակցել, չեն դատապարտել 1918թ. Բրեստ-Լիտովսկի և 1921թ. Մոսկվայի պայմանագրերը, որոնք ընդհատեցին Հայկական հարցի լուծումը: Ակնհայտ է, որ եթե մոտ ժամանակներս Ռուսաստանն իր հանցավոր խորհրդային անցյալի բեռից ազատվելու իրական քայլեր չձեռնարկի, չիրաժարվի իր՝ ըստ էության պարտվողական ու հարմարվողական, ձևով ու ճոռոնությամբ՝ կեղծկայսերական, կեղծմեծապետական քաղաքականությունից. իր նպատակը հայտարարելով մասնավորապես ժողովուրդների (աբխազների, օսերի, լեզգիների, մերձդնեստրովցիների, դրինցիների) հակազաղութային պայքարի պաշտպանությունը մինիկայսրությունների՝ ԽՍՀՄ գաղութային համակարգի մնացորդների դեմ, բացահայտորեն չպաշտպանի բոլշևիկների մասնատած Հայաստանի տարածքային ամբողջականության վերականգնումը, էությամբ հակաարևմտյան նոր ռազմաքաղաքական միություններ (ԱՊՀ երկրների միությունը, Սլավոնական, Եվրասիական միություններ) ստեղծելու անպտուղ ջանքերի փոխարեն իրական քայլեր չձեռնարկի եվրոպական ու եվրաստլանտյան համակարգերում ինտեգրվելուն, իր նպատակը չհայտարարի Ռուսաստանի տարածքային ամբողջականության վերականգնումը, ոչ մեկի կողմից լրջորեն չվիճարկվող բանական սահմաններում (Բելովեժյան համաձայնագրերի վերանայման խաղաղ բանակցությունների ուղիով), ապա հարկ է, որ հայերն ավելի պատասխանատու, արդյունավետ ու վճռական արտաքին քաղաքականություն վարեն, քան այժմյան այսպես կոչված կոմպլեմենտար քաղաքականությունն է:

39. Նրանց համար, ովքեր հետաքրքրվում կամ զբաղվում են հայության կազմակերպման խնդիրներով, ուսանելի կլինեն հետազոտել ներկայացուցչական մարմինների ձևավորման նպատակով հայկական համագումարների կազմակերպման ու անցկացման փորձը, ինչպես, օրինակ, 1912թ. Թիֆլիսում հայերի Ազգային բյուրոն, 1917թ. սեպտեմբեր-հոկտեմբերին Թիֆլիսում անցկացված ռուս-հայերի համազգային համագումարը, որտեղ Ռուսաստանի հայկական 33 կենտրոններից 228 լիազոր պատգամավորներն ընտրեցին ներկայացուցչական մարմիններ՝ Արևելյան հայերի (ռուսահայերի) Ազգային ժողով և ազգային խորհուրդ, որոնք էլ 1918թ. մայիսին Հայաստանի առաջին Հանրապետության ղեկավար կառույցների հիմքը դարձան Երևանում: 1917 և 1919թթ. Երևանում կայացած արևմտահայերի առաջին և երկրորդ համագումարները, ինչպես նաև ազգային համագումարը Փարիզում (1919թ. փետրվարից մինչև 1920թ. հուլիս), նպատակ ունեին միջազգային կազմակերպություններում պաշտպանել ջարդերից մազապուրծ, ճարահատյալ արտագաղթած կամ ավելի վաղ երկիրը ստիպողաբար լքած արևմտահայերի իրավունքները: Այդ հարուստ փորձի հետազոտությունը ցրում է այն տարածված ու արմատացած կարծիքը, թե հայերն ի բնե կազմակերպվածության ընդունակություն չունեն, որն էլ իբր թե հայության միավորման գործընթացներն արգելակող գլխավոր խոչընդոտներից է (տե՛ս «Համահայկական խորհրդակցություններ (1912-1920թթ.) փաստաթղթերի և նյութերի ժողովածու», Երևան, 2004):

40. Այս տեսակետից իրատեսական և հեռանկարային է թվում Նախածեռնող խմբի նախատեսած ծրագիրը՝ մոտ ապագայում Փարիզում անցկացնել արևմտահայերի ներկայացուցիչների համագումար՝ տարագրության մեջ լիազոր ներկայացուցչական մարմիններ ձևավորելու համար (տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 25 հոկտեմբերի 2006թ. և «Հայաստանի Հանրապետություն», 16 հունվարի 2007թ.): Համագումարի նախապատրաստման ու անցկացման համար Նախածեռնող խմբի ջանքերի

շնորհիվ ձևավորվում է Կազմակերպական կոմիտե, որը Փարիզում գրանցվել է որպես միջազգային հասարակական կազմակերպություն: Լիազոր ներկայացուցչական մարմինների՝ Արևմտահայերի ազգային ժողովի և Արևմտահայերի ազգային խորհրդի ձևավորումն իր անմիջական նպատակներից բացի կարող է ծառայել միջազգային կազմակերպություններում և դատական ատյաններում արևմտահայերի սերունդների շահերի և իրավունքների ձևակերպմանն ու պաշտպանությանը՝ տարածքային, նյութական և բարոյական վնասների փոխհատուցման, նրանց կողմից թուրքիային առաջադրվող պահանջների և հավակնությունների ներկայացման համար: Այն նաև կարող է գործուն մեխանիզմ դառնալ համասփյուռքային հզոր ու դինամիկ կազմակերպություն ձևավորելու գործում, որը պետք է ստեղծվի ժողովրդավարական հիմքի վրա՝ սփյուռքի անհատականությունների և բոլոր ազդեցիկ կազմակերպությունների ակտիվ մասնակցությամբ: Նման կազմակերպության ֆինանսական հնարավորությունները մի քանի անգամ կգերազանցեն ներկա Հայաստանի բյուջեն և համահայկական ծրագրերի ու նախագծերի մշակման, իրականացման պայմաններ կստեղծեն: Դրանք կօժանդակեն ծաղկուն Հայաստան ստեղծելուն և ամբողջ աշխարհում կպաշտպանեն հայերի ազգային շահերը:

41. Արդեն շատերն են սկսում հասկանալ, որ առանց անհրաժեշտ ձևով կազմակերպված Սփյուռքի՝ զարգացման հայկական գլխավոր ռեսուրսի, առանց նրա ֆինանսական ու մտավոր ուժի, առանց ամբողջ հայության հավաքական կամքի ու մտքի ներգրավման հայերին նոր պարտություններ ու կորուստներ կսպառնան: Առանց դրանց հայերին չի հաջողվի միջազգային կյանքում ստեղծել ինքնուրույն հայկական հզոր գործուն, որն ունակ կլինի իր ձեռքը վերցնել ազգի ճակատագիրը, ապահովել կորցրածի աստիճանական հնարավոր վերադարձը և կազմակերպել ազգի անվտանգ զարգացման պաշտպանությունը:

## Հավելված

### ՈՒՂԵՐԶ ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՈՆԸ ՎԵՐԱՊՐԱԾՆԵՐԻ ԺԱՌԱՆԳՆԵՐԻՆ ՏԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԵԼՈՒ ՀԱՍԱՐ

#### Նկատի ունենալով, որ

- թյուրքական ցեղերի կողմից Հայաստանի նվաճումից հետո, հարյուրամյակներ շարունակ, հատկապես՝ սուլթան Համիդի կառավարման ժամանակաշրջանում, հայերը, ենթարկվելով դաժան հալածանքների և զանգվածային ջարդերի, հարկադրաբար թողել են իրենց հայրենիքը և ապաստանել աշխարհի տարբեր երկրներում,

- հայերի վիճակը հետզհետե դառնում էր ավելի սպառնալի, և հայ ժողովրդի առաջնորդների օգնության կոչերը սկսում էին հասնել համաշխարհային հասարակայնությանը,

- օսմանյան կառավարությունը վերջիվերջո ստիպված էր, արտաքին ճնշումներին տեղի տալով, համաձայնվել բարենորոգումներ անցկացնել Արևմտյան Հայաստանում, որոնց իրականացումը Ռուսաստանի, Ֆրանսիայի, Անգլիայի վերահսկողության պայմաններում Հայկական հարցի խաղաղ լուծման հնարավորություն էր ստեղծում,

#### հաստատելով այն փաստը, որ

- չնայած Հայաստանի բռնազավթման բազմադարյա ժամանակաշրջանին, դաժան հալածանքներին, հայերը մինչև Առաջին համաշխարհային պատերազմը կենտրոնացած բնակվում էին Արևմտյան Հայաստանի հիմնական շրջաններում, մնալով Հայկա-

կան բարձրավանդակի հիմնական բնիկ բնակչությունը հազարամյակների ընթացքում,

- հայերն իրենք չկարողացան ստեղծել իրենց հուսալի ինքնապաշտպանությունն ու ազգային անվտանգությունն ապահովող կառույցներ, հատկապես ճգնաժամային պահերին՝ ապավինելով մեծ տերությունների օգնությանը: Սակայն այդ տերությունների միջև հակասություններից բխող պայմաններում հայերը հայտնվեցին անպաշտպան վիճակում՝ դիմադրելու ժամանակի հրավերներին,

- օգտվելով պատերազմական իրավիճակից՝ թուրքական իշխանությունները իրականացրին ժամանակակից պատմության մեջ առաջին ցեղասպանությունը, որը մեկուկես միլիոն հայերի կյանք խլեց,

- իրենց պատմական հայրենիքում մնացած հայերի ճշգրիտ թիվը հայտնի չէ: Որոշ տվյալներով՝ Արևմտյան Հայաստանում ապրում են բռնի թուրքացված և մահմեդականացված հայերի՝ երկուսից երեք միլիոն հետնորդներ, իսկ արևմտահայերի բուն ժառանգներն աշխարհում հաշվվում են մինչև յոթ միլիոն,

- նույնիսկ ցեղասպանությունից հետո պահպանվում էր դրա կազմակերպիչներին պատժելու և հայերի ազգային ու պետական զարթոնքի համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը: Թուրքիան պարտություն էր կրել, Կոստանդնուպոլսում դատարանը երիտթուրքերի պարագլուխներին դատապարտել էր մահապատժի: Սևրի հաշտության պայմանագրով 1920թ. օգոստոսի 10-ին Թուրքիան, ինչպես դա արել էին դաշնակից պետությունները, ճանաչեց Հայաստանի անկախությունը Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթների սահմաններում, ելքով դեպի Սև ծով՝ ԱՄՆ-ի նախագահին վերապահելով սահմանների վերջնական ճշգրտումն ու հարակից թուրքական տարածքների ապառազմականացման խնդիրը,

- արևմտահայության ներկայացուցիչներն իրենց իրավունքների պաշտպանության համար 1917 և 1919թթ. Երևանում անցկացրին երկու համագումար: Հակառակ կատարված որոշ աշխատանքների, այնուհանդերձ, չհաջողվեց կազմել հայոց միացյալ կառավարություն՝ բաղկացած արևելահայերի և արևմտահայերի ներկայացուցիչներից: Հայաստանի Հանրապետության իշխանական կառույցների շրջանակներում իրենց խնդիրները լուծելու

համար երկրորդ համագումարի փետրվարի 13-ի նիստում ստեղծված գործադիր մարմնի ընտրած 12 արևմտահայ պատգամավորներ տեղ գրավեցին Հայաստանի Հանրապետության խորհրդարանում,

- հոկտեմբերյան հակահեղափոխական հեղաշրջումը Ռուսաստանում, նրա խորհրդային ղեկավարների կողմից սեփական ազգային շահերի և դաշնակցային պարտավորությունների հանդեպ դավաճանությունը, մեծ տերությունների անսկզբունքայնությունը, Ազգերի լիգայի թուլությունը, հայկական ինքնուրույն, հզոր գործոնի բացակայությունը թուրքերին թույլ տվեցին խուսափել պատասխանատվությունից: Ավելին, Թուրքիայում իշխանությունը վերցրած ռևանշիստական ուժերը բուլղարիկների օգնությամբ վիժեցրին Սևրի համաձայնագրի՝ հայերին վերաբերող որոշումների կատարումը: Քեմալ Աթաթուրքը վերազավթեց Արևմտյան Հայաստանը: Ապա թուրքերը, բուլղարիկները և կովկասյան թաթարները (ադրբեջանցիները) իրար միջև բաժանեցին Արևելյան Հայաստանը՝ Նախիջևանը, Կարսը, Ղարաբաղը, որպես խորհրդային Հայաստան հայերին թողնելով միայն Երևանի նահանգի մի մասը:

- Հայկական հարցը թեկուզ մասամբ լուծելու վերջին փորձը տապալվեց Լոզանի կոնֆերանսում, երբ թուրքերը մերժեցին տարածքներ տրամադրել արևմտահայ փախստականների վերադարձի համար,

- մի շարք երկրներ և կազմակերպություններ պաշտոնապես ճանաչեցին հայերի ցեղասպանության փաստը, իսկ Եվրախորհրդարանը 1987թ. հուլիսի 18-ի որոշմամբ Եվրախորհրդից պահանջեց «ներկա թուրքական կառավարության վրա ճնշում գործադրել 1915-1917 թվականներին կազմակերպված հայերի ցեղասպանությունն ընդունել տալու նպատակով և նպաստել Թուրքիայի ու հայության լիազոր ներկայացուցիչների միջև երկխոսություն հաստատելուն»,

## Ելնելով այն հանգամանքից, որ

- որոշակի առարկայական և ենթակայական պատճառների հետևանքով արևմտահայերին չհաջողվեց, դժբախտաբար, ժամանակին հիմնել և պահպանել իրենց օրինական շահերը ներկայացնող լիազոր ներկայացուցչությունը,

- համայն հայության հատվածների միջև պարտականությունների և գործողությունների դերաբաշխումը կնպաստի ազգային խնդիրների լուծման արդյունավետությանը, կօգնի իր հարևանների հետ Հայաստանի Հանրապետության փոխհարաբերությունների կարգավորմանը, ինչը, իր հերթին, կնվազեցնի նրա կախումը աշխարհաքաղաքական հակամարտության հնարավոր հետևանքներից,

- ներկայիս Հայաստանի Հանրապետությունը, որը կազմավորվել է խորհրդայնացված Ռուսական կայսրության երկրորդ փլուզումից հետո՝ Արևելյան Հայաստանի մի մասում՝ Խորհրդային Հայաստանի տարածքում, որը երկու անգամ փոքր է Հայաստանի առաջին Հանրապետության տարածքից, դե յուրե իրավահաջորդը չէ առաջին հանրապետության, լիազորված չէ արևմտահայերի ներկայացուցչական մարմինների կողմից ներկայացնել իրենց շահերը և ի վիճակի էլ չէ ստանձնելու Արևմտյան Հայաստանի և արևմտահայության ժառանգների ճակատագրին և ապագային առնչվող յուրահատուկ խնդիրների լուծման առաքելությունը,

- այսօրվա Հայաստանի Հանրապետության իշխանություններից առայժմ անհնարին է ակնկալել իրենց ուժերից վեր և իրենց բուն պարտականությունների (հանրապետության անվտանգության ու բարգավաճման ապահովումը, Արցախի և հայկական այլ տարածքների նկատմամբ Ադրբեջանի հավակնությունների դիմադարձումը) ուղրտից դուրս խնդիրների լուծումը.

*Նախաձեռնող խումբը համարում է հրամայական (ուշացած) անհրաժեշտություն Արևմտյան Հայաստանի ջարդերից փրկված հայերի ժառանգների լիազոր ներկայացուցչական մարմինների (Ազգային ժողով, Ազգային խորհուրդ, հանձնաժողովներ) հիմնադրումը արևմտահայերի Համագումար հրավիրելու միջոցով:*

*Նախաձեռնող խումբը, հիմնվելով սույն ուղերձի ակնկալիք արձագանքների վրա, կհրավիրի կազմակերպիչ հանձնաժողովի առաջին նիստ 2006թ. դեկտեմբերի 9-10-ը Փարիզի արվարձան Սևրում:*

Կազմակերպիչ հանձնաժողովը կմշակի նախապատրաստական համագումարի պատգամավորների ընտրակարգը, օրակարգը, ընդունվելիք փաստաթղթերի նախագծերը, կորոշի համագումարի վայրը և ժամանակը:

Նախապատրաստական համագումարը կընտրի ժամանակավոր Ազգային խորհուրդ իր հանձնաժողովներով: Ժամանակավոր Ազգային խորհուրդը կկազմակերպի պատգամավորական ընտրություններ արևմտահայերի հնարավոր բոլոր բնակավայրերում, որպեսզի ժողովրդավարական ընտրություններով առաջադրված պատգամավորներից կազմված հաջորդ համագումարում կյանքի կոչվի ազգընտիր լիազոր ներկայացուցչական արևմտահայերի Ազգային ժողով, որն իր հերթին կընտրի արևմտահայերի Ազգային խորհուրդ՝ իր անհրաժեշտ հանձնաժողովներով:

Արևմտյան Հայաստանի ջարդերից փրկված հայերի ժառանգների լիազոր ներկայացուցչական մարմինների նպատակների և խնդիրների որոշման համար նպատակահարմար ենք համարում ներկայացնել հետևյալ դրույթները, որ առաջարկվում են նախաձեռնող խմբի կողմից քննարկման կարգով.

- համահայկական այնպիսի ծրագրեր և նախագծեր մշակել և իրագործել, որոնք կնպաստեն ներկա հայկական պետականության, ներառյալ՝ Արցախի, արագընթաց զարգացմանը և հզորացմանը, ժողովրդի կենսամակարդակի բարգավաճմանը, իրավական ազատ ժողովրդավարության լիակատար կայացմանը, հայրենադարձության կազմակերպմանը և համաշխարհային մակարդակի վրա հայերի իրավունքների ու շահերի պաշտպանությանը,

- անմիջականորեն ներկայացնել արևմտահայության օրինական իրավունքները և պահանջները միջազգային կազմակեր-

պություններում, բանակցել թուրքական իշխանությունների և այլ շահագրգիռ կողմերի հետ՝ հասնելու Հայոց ցեղասպանության փաստի ճանաչմանը, դատապարտմանը, վնասների հատուցմանը և Արևմտահայաստանի բռնագրավյալ տարածքների վերադարձմանը,

- ապահովել արևմտահայության ժառանգների անարգել և անվտանգ վերադարձը իրենց պատմական հայրենիք՝ Արևմտյան Հայաստան,

- նպաստել սփյուռքում արևմտահայության ազգային նկարագրի և ազգային ինքնագիտակցության պահպանմանը,

- հետամուտ լինել Արևմտյան Հայաստանում հայկական մշակույթի հուշարձանների պահպանմանը և վերականգնմանը,

- նպաստել ժամանակակից հայկական քաղաքական մտածողության ձևավորմանը, որը հենված կլինի հատկապես վերջին հարյուրամյակի հայերի քաղաքական պատմության իրատես և գիտական վերազնահատման վրա, որ կարտացոլի ինչպես պարտությունները և կորուստները, այնպես էլ հաղթանակները և ձեռքբերումները Օսմանյան, Ռուսական, խորհրդային կայսրություններում և սփյուռքում, և որը հիմք կհանդիսանա դրսևորել նոր իրատես, պատասխանատու մտածելակերպ և գործելակերպ, մշակել և որդեգրել ժամանակակից հայկական քաղաքական վարդապետություն՝ խուսափելու նոր պարտություններից և կորուստներից, ապահովելու հայ ոգու և կամքի նոր սխրանքներ,

- նպաստել միջազգային կյանքում ինքնուրույն հայկական գործոնի ձևավորմանը, որ կարտացոլի այն ֆինանսաքաղաքական ուժերի առաջացումը՝ հենված ազգային կապիտալի և ազգային մտավորականության միության վրա, որ կապահովի արտերկրի հայերի զանգվածային մասնակցությունն այդ գործոնի ձևավորմանը, և որը վերջապես հնարավորություն կընձեռի ազգին իրեն՝ տնօրինելու իր ճակատագիրը:

## Նախաձեռնող խումբ

- Աբրահամյան Նարեկ
- Աշճյան Ժիրայր
- Գեյվանդով Էդուարդ
- Դանիելյան Անուշավան (անձնական կարգով)
- Դեմոյան Հայկ
- Զարգարյան Իգոր
- Զարգարյան Ռուբեն
- Զեյթունցյան Պերճ
- Թաշճյան Վարդան
- Կապուտիկյան Սիլվա
- Կյուրեղյան Ժան Վարուժան
- Հայկազյան Էդուարդ
- Ճգնավորյան Արշալույս
- Մազոյան Նունե
- Մարաշյան Վարդան
- Մելիքյան Վահան
- Միքայելյան Կարեն
- Մկրտումյան Արամ
- Շիրիկյան Արտաշես
- Պետրոսյան Վաչագան
- Ջիգարխանյան Արմեն
- Սարաֆյան Գևորգ
- Սարգսյան Սոս
- Սրապյան Ժան Վարուժան
- Տարասով Արտյոմ
- Տատրյան Վահագն
- Քերքիաշարյան Հակոբ
- Քոթանջյան Հայկ (անձնական կարգով)
- Քոչարյան Ժիրայր

«Հայաստանի Հանրապետություն»,  
25 հոկտեմբերի 2006թ.

Վլադիմիր ԶՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

**ՍԵՎՐԻ 1920Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 10-Ի ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՊԱՀԱՆՋԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

1. Стѹ Действующее международное право. В трех томах. Том второй. М., 1997, с. 576.
2. Версальский мирный договор. Полный перевод с французского подлинника. Под ред. проф. Ю. В. Ключникова и А. В. Сабанина. М., 1925, с. 83.
3. *Շավարշ Թորիկեան*, Հայկական հարցը եւ միջազգային օրենքը, Պէյրուս, 1976, էջ 22:
4. Մեջբերումն ըստ *Vahakn N. Dadrian*. The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus. Providence, Oxford: Berghahn Books, 1995, p. 303.
5. Стѹ *Vahakn N. Dadrian*, նշվ. աշխ., էջ 304-305:
6. Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне. Полный перевод с французского подлинника. Под редакцией проф. Ю. В. Ключникова и А. В. Сабанина. М. 1927, с. 67.
7. Стѹ *Vahakn N. Dadrian*, նշվ. աշխ., էջ 309-310:
8. Տե՛ս Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի: Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Գ. Փափազյանի: Երևան, 1988, էջ 14-16:
9. Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 36-53:
10. Տե՛ս նույն տեղում, էջ 19:
11. Տե՛ս Զ. *Կիրակոսյան*, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (1915-ից մինչև մեր օրերը), Գիրք երկրորդ, Երևան, 1983, էջ 207:

Վլադիմիր ՎԱՐԴԱՆՅԱՆ

**ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ (դրանց հավանական ազդեցությունը հայերի դեմ իրագործված ցեղասպանության համար միջազգային իրավական պատասխանատվության վրա)**

1. Стѹ Я. А. *Островский*. Практика Международного уголовного трибунала по Руанде – преступление геноцида. Материалы Международного курса по МГП для государственных служащих и представителей академических кругов. М., 2003, с. 195.
2. Order on Request for the Indication of Provisional Measures in Case Concerning Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Yugoslavia), 1993 ICJ (April 8).
3. Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Yugoslavia v. NATO), 1999 ICJ (April 29).

4. Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Croatia v. Yugoslavia), 1999 I.C.J. (July 2).
5. Մասնավորապես, անգլերեն բնօրինակում օգտագործվում է *confirm* (հաստատել), իսկ ռուսերենում՝ *подтверждают* (հաստատում են) եզրույթները:
6. Reservations to the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, Advisory Opinion, ICJ Reports (1951), pp. 15-69. See: *Diane F. Orentlicher*. Genocide. – Crimes of War. Editors: Roy Gutman and David Rieff. New York, 1999, pp. 153-157. *Joe Verhoeven*. Le Crime de Génocide. – Revue belge de droit international, vol. XXIV, 1991, pp. 5-26.
7. Official Records of the General Assembly: Fifty-sixth Session, Supplement No. 10 and corrigendum (A/56/10 and Corr. 1).
8. Commentaries to the draft articles on Responsibility of States for internationally wrongful acts adopted by the International Law Commission at its fifty-third session (2001), p. 188. Official Records of the General Assembly: Fifty-sixth session, Supplement No. 10 (A/56/10), chp. IV. E.2.
9. Case concerning the Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro), Judgment, ICJ, p. 58, para. 152 <http://www.icj-cij.org/docket/files/91/13685.pdf>
10. Նույն տեղում, էջ 60, կետ 160:
11. Նույն տեղում:
12. Նույն տեղում, էջ 63, կետ 166 <http://www.icj-cij.org/docket/files/91/13685.pdf>
13. Նույն տեղում, էջ 64, կետ 168:
14. Նույն տեղում, էջ 140-141, կետ 392 <http://www.icj-cij.org/docket/files/91/13685.pdf>
15. Military and Paramilitary Activities in and against Nicaragua (Nicaragua v. United States of America) Merits, Judgment, ICJ Reports, 1986, p. 62-64.
16. Case concerning the Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro), Judgment, ICJ, p. 142-143, para. 392 <http://www.icj-cij.org/docket/files/91/13685.pdf>
17. <http://www2.ohchr.org/english/bodies/ratification/1.htm> 02.05.2008.
18. Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro), ICJ Judgments – Preliminary Objections – 11 July 1996, para. 27.
19. Նույն տեղում, կետ 29:
20. Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969թ. մայիսի 23-ի կոնվենցիայի հոդված 28:
21. “The Applicability of the United Nations Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide to Events which occurred during the Early Twentieth Century”: Legal Analysis Prepared for the International Center for Transitional Justice, p. 5. Available at [http://www.armenian-genocide.org/files/ICTJ\\_Memorandum.pdf](http://www.armenian-genocide.org/files/ICTJ_Memorandum.pdf), p. 7.
22. Նույն տեղում, էջ 7-8:
23. *Alfred de Zayas*. Memorandum on The Genocide against the Armenians 1915-1923 and the Application of the 1948 Genocide Convention. Available at <http://www.anca.org/docs/deZayas-fullreport.pdf>
24. Նույն տեղում:
25. *Alfred de Zayas*. The Genocide against the Armenians 1915-1923 and the relevance of the 1948 Genocide Convention. Available at [http://alfreddezayas.com/Law\\_history/armlegopi.shtml](http://alfreddezayas.com/Law_history/armlegopi.shtml)

## Արա ՊԱՊՅԱԼ

### **ՀԱՅՈՑ ՊԱՀԱՆՁԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՈՆԱԿԱՐՆԵՐԸ**

1. Manual of Terminology of Public International Law (by Isaac Paenson). United Nations, New York, 1983, p. 38.
2. *Luzius Wildhaber*. Treaty Making Power and Constitution. Basel and Stuttgart, 1971, p. 150.
3. Vienna Convention on the Law of Treaties, 1969. United Nations, New York, 2005, Article 52.
4. Survey of International Affairs 1924 (comp. by Arnold J. Toynbee). London, 1926, p. 491.
5. *J. B. Moore*. Digest of International Law. Vol. I. Washington, 1906, p. 73.
6. *D. P. O'Connell*. State Succession in Municipal Law and International Law. Vol. I. Cambridge, 1967, p. 211.
7. *Branimir M. Jankovic*. Public International Law. New York, 1984, p. 302.
8. The Treaties of Peace, 1919-1923. Vol. I. New York, 1924, p. xxxii.
9. Manual of Terminology of Public International Law, pp. 588-590.
10. *Luzius Wildhaber*, նշվ. աշխ., էջ 98:
11. Manual of Terminology of Public International Law, pp. 693-694.
12. A Dictionary of Arbitration and its Terms (Ed. by Katharine Seide). New York, 1970, p. 27.

## Հարություն ՄԱՐՈՒԹՅԱԼ

### **ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄՆԵՐԸ ՀՐԵՈՒԹՅԱԼԸ (ձևավորումը, գործընթացը, ներկա վիճակը)**

1. Մանրամասն տես <http://www.jewishagency.org>
2. Մանրամասն տես <http://www.jewishagency.org/JewishAgency/English/Home/Jewish+Agency+Resources/JAFI+WZO+Related+Sites/WZO/>, նաև <http://www.jewishvirtuallibrary.org/jsource/Zionism/wzo.html> և այլն:
3. Մանրամասն տես <http://www.claimscon.org/>
4. Մանրամասն տես <http://www.claimscon.org/?url=history> և <http://www.claimscon.org/index.asp?url=history2> Հրեաներին վերաբերող հատվածն ամբողջությամբ տես *Ian S. Lustick*. Negotiating Truth: The Holocaust, *Lehavdel*, and *al-Nakba*. [http://arts.mcgill.ca/mcpp/new\\_prrn/research/papers/lustick.htm](http://arts.mcgill.ca/mcpp/new_prrn/research/papers/lustick.htm)
5. Հմնտ. Илья Гирин. Vae victis или унижение? - <http://berkovich-zametki.com/2007/Zametki/Nomer3/Girin1.htm>
6. Մանրամասն տես Илья Гирин, նշվ. աշխ.:
7. Մանրամասն տես <http://www.claimscon.org/index.asp?url=germany/BEG>
8. Մանրամասն տես <http://www.usdoj.gov/fsc/holocaustclaims.htm>
9. Մանրամասն տես <http://www.claimscon.org/?url=article2/overview%206>
10. Մանրամասն տես <http://www.claimscon.org/?url=ceef/overview>
11. Մանրամասն տես <http://www.claimscon.org/?url=hardship/overview>

12. Մանրամասն տես <http://www.claimscon.org/index.asp?url=news> 2005 Ֆինանսական տարվա հաշվետվությունը (Summary of Financial Statements Year Ended December 31, 2005) տես [http://www.claimscon.org/forms/Financial\\_Summary\\_05.pdf](http://www.claimscon.org/forms/Financial_Summary_05.pdf) Խնդրի շուրջ առկա որոշ զարգացումների շուրջ տես նաև, օրինակ. "Holocaust '2nd Generation' Seeks German Reparations" (17 հուլիսի 2007թ.) նյութը - <http://archive.newsmax.com/archives/fc/2007/7/17/120230.shtml>, ինչպես նաև. *Anshel Pfeffer*. Israel Seeks Fresh Holocaust Reparations Deal with Germany - <http://www.haaretz.com/hasen/spages/922252.html> Տես նաև 2007թ. նոյեմբերի 22-ին «Աստիճանի վրեժ» գործակալության տարածած հաղորդագրությունը. "Germany Tells Israel: No More Holocaust Reparations" - <http://www.foxnews.com/story/0,2933,312579,00.html>

## Աշոտ ՄԵԼՔՈՆՅԱՆ

### **ԱՐԵՎԱՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՕՍՄԱՆՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԿՎԱԿԱՆ ՔԱՎԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (XVI դար - XX դարի սկիզբ)**

1. Օսմանյան կայսրության վարչական բաժանումը մանրամասն տես *A. Birken*. Die Provinzen des Osmanischen Reiches. Wiesbaden, 1976.
2. *Ա. Մելքոնյան*, Ջավախքը 19-րդ դարում ~ 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 76-82 և Գյուլըջիստանի վիլայեթի մեծ դավթարը, գիրք 2, Թբիլիսի, 1941 (վրացերեն):
3. *Հակոբ Կարմեցի*, Շինուած Կարմոյ քաղաքին.- Մանր ժամանակագրություններ, հ. 2, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 550-551:
4. *I. Miroglu*. XVI. Yüzylda Bayburt Sancagi. Istanbul, 1975.
5. *K. Koch*. Wanderungen im Oriente während der Jahre 1843 und 1846. Weimar, 1846.
3. *Տաշեան*, Հայ բնակչությունը Սեւ ծովէն մինչեւ Կարին, Վիեննա, 1921, էջ 3-20:
6. Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 565:
7. Նույն տեղում, էջ 554:
8. *Ղ. Ինժիճեան*, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 93:
9. Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 567:
10. *Ատրպետ*, ճորդիսի ավազանը, Երևան, 1934, էջ 110:
11. Մատենադարան, ձեռ. թիվ 6332, էջ 552:
12. *Արախան Կրետացի*, Պատմություն, Երևան, 1973, էջ 67:
13. *Ղ. Ինժիճեան*, նշվ. աշխ., էջ 123: Այն տեսակետը, ըստ որի տաճիկների թուրքերի զգալի մասը նախապես եղել են ոչ միայն վրացիներ, այլև հայեր, պաշտպանում է պրոֆ. Պ. Հակոբյանը. «Ախլցխայի ...իին գիւղերում ապրում էին նաև թուրք ընտանիքներ,- գրում է նա,- որոնք ամենայն հաւանականութեամբ, երբեմնի հայեր էին եւ բռնութեամբ հաւատափոխ էին դարձել երկրամասի իսլամացման շրջանում»: Տես Պ. *Յակոբեան*, Հրաւր որջմտութեան, Ս. Էջմիածին, 1993, էջ 88: Նույն կարծիքին է նաև արևելագետ Ավետիս Փափազյանը: Տես *Ա. Փափազյան*, Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16-19-րդ դարեր), Երևան, 1999, էջ 27:
14. Այդ ժամանակաշրջանում Ջավախքի երեք լիվաներում (Ախալքալաք, Խերթվիս և Չլդր) հիշատակվող գյուղերի անունները տես Գյուլըջիստանի

- վիլայեթի մեծ դավթարը, գիրք 2, (վրացերեն), էջ 7-21, 332-386, 393-402: Տե՛ս նաև Զլրրի էլայեթի ջարթ դավթարը, Թբիլիսի, 1979 (վրացերեն), էջ 106-199:
15. Ղ. Ինճիճեան, նշվ. աշխ., էջ 102:
  16. Տե՛ս նույն տեղում:
  17. Տե՛ս Յ. Տաշեան, նշվ. աշխ., էջ 77-79 և «Փորձ», հունվար, էջ 144:
  18. Տե՛ս Յ. Տաշեան, նշվ. աշխ., էջ 78-82:
  19. Ղ. Ինճիճեան, նշվ. աշխ., էջ 396:
  20. Յ. Տաշեան, նշվ. աշխ., էջ 34:
  21. Ղ. Ինճիճեան, նշվ. աշխ., էջ 396:
  22. Տե՛ս Յ. Տաշեան, նշվ. աշխ., էջ 78-82:
  23. Տե՛ս K. Koch, նշվ., աշխ., էջ 57-59:
  24. Նույն տեղում:
  25. Троттер. Мало-азийские курды. – Известия Кавказского отдела, т. VII, Тифлис, 1873, с. 1-3.
  26. Ղ. Ինճիճեան, նշվ. աշխ., էջ 97:
  27. Անդրանիկ, Դերսիմ, Թիֆլիս, 1900, էջ 149:
  28. Տե՛ս Պ. Նաթանեան, Արտուր Չայաստանի կամ տեղագիր Բալուայ, Քարբերդու, Չարսանճազի, ճապաղջուրի և Երզնկայու, Կ. Պոլիս, 1883, էջ 159:
  29. Նույն տեղում:
  30. Սելեան, Տաճկա-Չայաստանի ազգաբնակչությունները, «Մուրճ», 1895, հուլիս, էջ 959:
  31. Տե՛ս L. Սարգսեանց, Այց Թուրքաց Չայաստանին, «Մուրճ», 1889, դեկտեմբեր, էջ 123-123:
  32. Ա. Մելքոնյան, Երզրում. Երզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դ. առաջին երեսնամյակին, Երևան, 1994, էջ 115-117:
  33. Ա. Էփրիկեան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1902, էջ 492: Տե՛ս նաև E. Smith. Researches of the rev. E. Smith and rev. H.G.O. Dwigth in Armenia. Vol. 2. Boston, 1833, p. 306.
  34. Акты Кавказской археографической комиссии, т. XII, Тифлис, 1904, с. 313.
  35. Նույն տեղում, էջ 1389:
  36. Մատենադարան, Ջանազան հեղինակների արխիվ, թղթ. 54, վավ. 13<sup>1</sup>, 2,3, 4:
  37. Ա. Մելքոնյան, Երզրում, էջ 113-117, 158 և Ա-Դո, Վանի, Բիթլիսի և Երզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 226:
  38. Մատենադարան, Մկրտիչ Խրիմյանի արխիվ, թղթ. 101, վ. 1, 137, 248, թղթ. 102, վավ. 639, թղթ. 103, վավ. 429:

## Ուրբեն ՄԵԼՔՈՆՅԱՆ

### ՀԱՅՎԱԿԱՆ ԷԹՆԻԿ ՏԱՐՐԻ ՆԵՐՎԱՅԻՍ ՎԻՃԱԿ ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. Սույն զեկույցում չի խոսվում ավելի վաղ իսլամացված համշենահայության, ինչպես նաև մինչև 1915-1923թթ. ցեղասպանությունը տեղի ունեցած բռնի իսլամացումների արդյունքում կրոնափոխված հայերի խմբերի մասին:

2. I. E. Atmur. Türkiye'de Ermeni kadınları ve çocukları meselesi (1915-1923). Ankara, 2005, s. 56-57, 66-67.

3. U. Umit. Conversion and rescue: survival strategies in the Armenian Genocide. To be published in: Claire Andrieu & Jacques Semelin (eds.). Rescue Practices Facing Genocides. Comparative Perspectives, Paris: Les Presses de Sciences Po, 2008.

4. Այս մասին մանրամասն տե՛ս Ռ. Մելքոնյան, Ներքին ամուսնությունների սովորույթը Թուրքիայի ծպտյալ հայերի շրջանում. - «Հանրապետական», 2008, թիվ 5 (58), էջ 6-9:

5. "Армянский дух все еще жив на этой земле": интервью с заведующим кафедры иранистики ЕГУ, профессором Гарником Асатрянном. – "Голос Армении", 15 сентября 2007г.

6. Այս մասին մանրամասն տե՛ս Ռ. Մելքոնյան, Ծպտյալ հայերի կրոնադարձությունը (ըստ թուրքական աղբյուրների). - «Հանրապետական», 2007, թիվ 3 (45), էջ 5-10:

7. Սամվել Կարապետյանի հարցազրույցը Ջավախք-ինֆոյին տե՛ս <http://www.javahk.net/forum/lofiversion/index.php/t748.html>

8. 1942թ. Թուրքիայում իշխող ժողովրդահանրապետական կուսակցության 9-րդ բյուրոն (որը պատասխանատու էր փոքրամասնություններին առնչվող հարցերի համար) պատրաստել է մի զեկույց, որից պարզորոշ երևում է պետական ապարատի վերաբերմունքը ոչ մուսուլմանների նկատմամբ: Չեկույցում մասնավորապես հայերի մասին տեղ են գտել հետևյալ տեսակետները. «Հայեր. Անատոլիայում վերածվել են կամաց-կամաց սակավացող փոքր համայնքի և քաղաքական ինչ-որ եղանակով ձգտում են ավելացնել իրենց թվաքանակը: Հայերին նախ և առաջ Անատոլիայից «մաքրելով» պետք է տեղափոխել Ստամբուլ, այսպիսով հնարավոր կլինի վերահսկողության տակ վերցնել նաև բնակչության աճը»: Չեկույցում, հենվելով պատմական փորձի վրա, նշվում է հայերին Ստամբուլ տեղափոխելու համար մի հիմնավորում ևս. «Այս եղանակով և՛ նրանց թվաքանակի աճը կկանխվի, և՛ վաղը, անհրաժեշտության դեպքում, նրանք ավելի հավաքական ձևով կլինեն պետության աչքի առաջ և ձեռքի տակ»: Ըստ այդ զեկույցի, հայերը մի խումբ են, որ չեն ձուլվում, ուստի առաջարկվում է նրանց թվաքանակը պակասեցնել կամ բնակչության փոխանակման, կամ էլ այլ երկրներ նրանց զաղթը ոյուրացնելու միջոցով: Տե՛ս R. Akar. Aşkale yolcuları (Varlık vergisi ve çalışma kampları). İstanbul, 2006, s. 190-191:

9. Հետաքրքիր է, որ Թուրքիայի վարչապետ Երդողանը, վերջերս խոսելով Գերմանիայի թուրքական համայնքի ինտեգրման խնդիրների շուրջ, անդրադարձել է նաև բռնի ձուլման երևույթին. «Ձուլումը մեղք է մարդկության դեմ: Ոչ մի մարդուց, ոչ մի հասարակությունից չես կարող պահանջել մոռանալ իր լեզուն, կրոնը, մշակույթը, սովորույթները: Եթե պահանջես, ապա դա մեղք է մարդկության դեմ»: Տե՛ս Hüriyet, 3.IV.2008.

10. Հրանտ Դիմքն այս միտքն արտահայտել է 2006թ. ԱՄՆ-ում հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ, և այն ընդգրկված է ռեժիսոր Հրանտ Հակոբյանի նկարահանած «Հրանտ Դիմք» կարճամետրաժ ֆիլմում:

11. Ռ. Մելքոնյան, Ծպտյալ հայերը թուրք գիտնականների ուշադրության կիզակետում. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի «Գլոբուս» վերլուծական տեղեկագիր, Երևան, 2007, թիվ 12:

12. Այս մասին տե՛ս Ռ. Մելքոնյան, Ծպտյալ քրիստոնյաները Թուրքիայի կրթական համակարգում. - «Հանրապետական», 2008, թիվ 3 (56), էջ 5-8:



13. E. Basyurt. Ermeni evlatliklar. Istanbul, 2006 (2-inci baski), s. 83-100.

14. Տե՛ս Ռ. Մելքոնյան, Թուրք պատմաբանը իսլամացված հայերի մասին. - «ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների», 2007, թիվ 3, էջ 96-104:

15. Խոսելով Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ժխտման մասին՝ ազգագրագետ Հ. Մարությանը դա պայմանավորում է նաև «Տասնամյակներ շարունակ ժխտողականության հիմքի վրա ձևավորված ազգային ինքնության հնարավոր խաթարման վախով, ինչը կարող է հանգեցնել ոչ միայն քաղաքացիական, այլ նաև էթնիկ երանգ ունեցող մեծ հուզումների, որ վտանգավոր է դիտվում պետության միասնականության համար՝ առկա բազմէթնիկության պարագայում»: Տե՛ս Հ. Մարության, Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում, Երևան, 2006, էջ 60:

16. H. Dink, D. Lokmagözyan, Sabiha-Hatunun sirri. Agos, 6.II.2004.

17. «Օրակարգ», Գլենդել, 10 հունվարի 2007թ.:

## Ուրեմն ՍԱՖՐԱՍՏՅԱԼ

### ԹՈՒՐԻԱՅԻ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԱՆՉՄԱՆ ՈՒ ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ԴԵՄ ՆԵՐԿԱ ՓՈՒԼՈՒՄ. ՆՈՐ ՄԻՏՈՒՄ

1. Sabah, 30.09.2000.

2. Radikal, 30.09.2000.

3. Hürriyet, 28.10.2000.

4. *Gündüz Aktan*. Comments and Analysis. - Turkish Daily News, 28.10.2000.

5. *Gündüz Aktan*. Armenian Problem and International Law. - The Armenians in the Late Ottoman Period. TTK Press, Ankara, 2001, p. 313.

6. Տե՛ս, օրինակ, Radikal, 20.05.2002.

7. *Sadullah Özcan*. Ermeni Üst Kurulu oluşturuldu, başkanı Devlet Bahçeli. - Zaman, 18.05.2002.

8. Այդ ժամանակ Բ. Էջևիթի կոալիցիոն կառավարությունում փոխվարչապետի պաշտոնը զբաղեցնում էր ծայրահեղ ազգայնամոլական ու պանթուրքիստական Ազգայնական շարժում կուսակցության (ԱՀԿ) առաջնորդ Դ. Բահչեվին, որը և դարձավ ՑՎԱՊԴԴԻՄ-ի առաջին նախագահը:

9. *Mehmet Zarif*. Kompozisyon genelgesinin sir yönetmeliği. - BIA Haber Merkezi, Istanbul, 10.12. 2003: <http://www.bianet.org/bianet/siyaset/27272-kompozisyon-genelgesinin-sir-yonetmeliği>

10. *Utku Çakırözer*. Ermenistan yerine Fransa'yi dava edelim. - Milliyet, 16.11.2006.

11. Ermeni iddialarına karşı titiz çalışma. - Hürriyet, 15.11.2006.

12. Նույն տեղում:

13. *Utku Çakırözer*. Ermeni hamlesi. - Milliyet, 15.11.2006.

14. *Utku Çakırözer*. Ermenistan yerine Fransa'yi dava edelim. - Milliyet, 16.11.2006.

15. Նույն տեղում:

16. *Adalet Divanına Gidelim*. - Haberalemi, 25.01.2007: [http://www.haberalemi.net/haber\\_detay.php?haber\\_id=16483](http://www.haberalemi.net/haber_detay.php?haber_id=16483)

## Վահան ՄԵԼԻՔՅԱՆ

### ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՒ ՓՈՒԼԵՐԸ

1. Армянский вестник (Москва), 22 мая 1916г. Հղվում է ըստ. *Дж. Киракосян*. Алексей Дживилегов и его историко-публицистическое наследие. Ереван, 2007, с. 157-159.

2. Համահայկական խորհրդակցություններ (1912-1920թթ.), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2004, էջ 122-123:

3. *Արտակ Դարբինյան*, Հայ ազատագրական շարժման օրերն յուշեր 1890-1940, Երևան, 2003, էջ 208:

4. Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 282, ց. 1, գ. 56, թ. 18-19:

5. *Արտակ Դարբինյան*, նշվ. աշխ., էջ 253:

## Գագիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

### ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՏԵՐԵԿԱՏՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություն, Երևան, 2007:

2. *Գագիկ Հարությունյան*, ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում, Երևան, 2003: *Նույնի*, Տեղեկատվական անվտանգության որոշ խնդիրների շուրջ. - «Տարածաշրջան». «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տեղեկագիր, 2005, էջ 3: *Նույնի*, ՀՀ տեղեկատվական անվտանգության խնդիրների շուրջ. - «Հանրապետական», 2008, թիվ 3 (65), էջ 1:

3. Տե՛ս, օրինակ. *Самюэль Хантингтон*. Столкновение цивилизаций. Москва, 2003. *Գագիկ Հարությունյան*, Քաղաքակրթական գործոնը տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրների համատեքստում. - «21-րդ դար», 2006, թիվ 2 (12), էջ 3:

4. *Самвел Мартиросян*. Некоторые вопросы информационной безопасности Армении и Армянства, <http://www.noravank.am/ru/?page=analytics&nid=679>

5. *Գագիկ Տեր-Հարությունյան*, Հոգևոր անվտանգությունը որպես տեղեկատվական անվտանգության բաղադրամաս. - «Տարածաշրջան». «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տեղեկագիր, 2005, էջ 29:

6. Տեղեկատվական համատեքստում ուշադրության արժանի են, մասնավորապես, ընտրական գործընթացում «ղարաբաղցի»-«հայաստանցի» հասկացության սերմանունը և դրան բացասական քաղաքական երանգ հաղորդելը, որոշ հայ համայնքների ընտրական իրողություններին ոչ ադեկվատ արձագանքելը և արտերկրում ՀՀ-ի (հետևաբար՝ նաև Հայության) բացասական իմիջի ձևավորելը:

7. *Գագիկ Հարությունյան*, Քաղաքակրթական գործոնը տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրների համատեքստում. - «21-րդ դար», 2006, թիվ 2 (12), էջ 3: *Տիգրան Սարգսյան*, Հայկական քաղաքակրթությունը որպես բեկունջային նախագիծ. - «21-րդ դար», 2006, թիվ 2 (12), էջ 19:

8. «Չայ սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003: *Միջայել Մալխասյան*, Չայերն աշխարհում, Երևան, 2007: Նկատենք, որ հրապարակում եղած գնահատականները չեն ընդգրկում այլալեզու-այլադավան հայերին վերաբերող տվյալները: Այսինքն՝ Չայության ճշգրիտ հաշվառումը նույնպես կազմակերպչական հրատապ խնդիր է:

9. *Գազիկ Չարությունյան*, Չայաստանը գլոբալ աշխարհում. - «21-րդ դար», 2007, թիվ 2 (17), էջ 3: Նշենք նաև, որ գիտության խորհրդային համակարգի փլուզումը Չայության համար լրջագույն կորուստ էր: Չայտնի է, որ այսօրվա ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան գտնվում է ճգնաժամային իրավիճակում, իսկ այլ երկրներում գիտության ոլորտում գործող Չայության ներկայացուցիչներն առայժմ ազգային գիտական համակարգ չեն ձևավորել:

10. Համաձայն «Նորավանք» հիմնադրամի Չայագիտական կենտրոնի փորձագիտական գնահատականների: Չայության տեղեկատվական ռեսուրսների մասին տես նաև *Կարեն Վրթանեսյան, Սամվել Մարտիրոսյան*. Համացանցը և մենք. վերլուծական ակնարկ, «Ռազմավարության և անվտանգության հարցեր» ժողովածու, Երևան, 2007, էջ 205:

11. *Cebrowski and Garsika*. Network Centric Warfare. US NS Proceedings, 1998, p. 28.

12. *Сергей Гриняев*. Интернет как супермозг, от гипотезы до модели. - "21-й Век", 2003, N 1, с. 142.

13. *Տիգրան Սարգսյան*, Պետության վախճանը. - «21-րդ դար», 2008, թիվ 1 (19), էջ 3:

14. *Сергей Гриняев*. Поле битвы – киберпространство. Минск, Харвест, 2004; *Washington Profile*, 2005, N 47 (564), 05.05.

15. *Гагик Арутюнян*. "Промежуточная" война. - "21-й Век", 2006, N 2 (4), с. 3.

16. Նկատի ունենք Արևմտահայերի ազգային համագումարի նախապատրաստման միջազգային կազմակերպչական կոմիտեն:

## Խաչատուր ՂԱՂԱՅԱՆ

### **ՀԱՅՈՑ ԾԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՂԱՂՐՅԱԼԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՆՅՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ**

1. *Հերոդոտոս*, Պատմություն ինը գրքից, Երևան, 1986, էջ 79-80:

2. Տե՛ս, մասնավորապես. *Վ. Վրդ. Ինգլիզեան*, Չայաստան Սուրբ Գիրքի մէջ, Վիեննա, 1947:

3. Այստեղ հարկ ենք համարում խոսել մի եական եզրաբանական հարցի շուրջ: Մեր լեզվում և պատմագրության մեջ մշտապես, դարեր շարունակ գործածվել է *վաճառական* բառը, ինչը համիմաստ է ներկայիս անգլերեն *businessman* և ռուսերեն *купец* հասկացություններին: *Վաճառականության* լավագույն բնութագիրը տվել է Կ. Սոլախեանը. «Վաճառական կհամարվին անոնք, որոնք առևտրական գործ հաստատելով առուձախով կգրադին, սեղանաւորութեամբ կամ փոխանակագրի գործով զբաղուողները, ինչպէս նաեւ ապրանքը ուրիշին վարձու տուողները, գոյք, ապրանք եւ պարենի վրայ գործառնութիւն անողները, գործարանապետութեամբ, յանձնակատարութեամբ (քոմիսիոն) զբաղուողները, ցամաքով կամ թէ ծովով ապրանք փոխադրողները, որևիցէ տեղում ուտեստ կամ ապրանք տալու համար յանձնառութիւն ստանձնողները, վաճառականութեան մէջ սրա-նրա

գործակալութիւն անողները, աճուրդի համար յատուկ տեղ հաստատուողները, միջնորդութիւն անողները, ծովային գործերում գործառնութիւն անողները եւ բանկ (դրամատուն) ունեցողները»: Տես *Կ. Սոլախեան*, Վաճառականի մը ընթացքը, Կ.Պոլիս, 1905, էջ 8-9: *Առևտրական* եզրը բնութագրել է մանրավաճառներին, ստորին կարգի վաճառականներին և համագոր է անգլերեն *trader*, ռուսերեն *торговец* հասկացություններին: Իսկ ներկայիս *գործարար* եզրը մեր լեզվում նշանակել է *սարդ, սարդոստայն գործող*: Տե՛ս «Եղիա Մուշեղյանը առակագիր» (հրապարակում *Բ. Լ. Չուգասյանի*), ՊԲՀ, 1984, թիվ 1, էջ 193:

4. *Գ. Մանուկյան*, Արիստակես Լաստիվերցի, Երևան, 1977, էջ 24:

5. *Ղ. Տրտրեանց*, Գիտութիւն վաճառականութեան, Վիեննա, 1848, էջ 182:

6. *John Harris*. A Collection of Voyages and Travels (1744-48). London, 1745, Vol. I, p. 119. Հղվում է ըստ *Յարութիւն Քյուրտեան*, Սիւրբ հայ վաճառականութեան պատմութեան համար: Հում մետաքսի վաճառականութիւնը եւ հայերը, «Չայրենիք» ամսագիր (ա. տ. և թ.) (Մատենադարանի գրադարան, գրքաթիվ 30569)

7. Տե՛ս *Մ. Չուլայան*, Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, Երևան, 1990, էջ 190:

8. <http://lugovoy-k.narod.ru/marx/09/04.htm>

9. Ավելի մանրամասն տես *Օ. Инджикян*. Буржуазия Османской империи. Ереван, 1977.

10. *Ա. Ալպոյաճեան*, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Կահիրե, 1937, էջ 1470:

11. Տե՛ս *Հայկ Մանգասարեան*, Կարնոյ վաճառականութիւնը. 1890-1914, էջ 123: Հղվածը զետեղված է հետևյալ աշխատությունում. *Ղազար Չարրզ*, Յուշամատեան Բարձր Չայքի. Կարինապատում, Բեյրութ, 1957:

12. Արդի սփյուռքահայ կապիտալն ունի երեք պատմական ձևավորիչ բաղադրյալ. 1. *արևմտահայեր*, 2. *պարսկահայեր* (նորջուղայեցիներ, թավրիզցիներ, թեհրանցիներ, շիրազցիներ ևն, որոնք զանազան բերումներով հաստատվել են Եվրոպայում), 3. *արևելահայեր* (թիֆլիսցիներ ու բաքվեցիներ, բուլշևիկյան հեղափոխությունից հետո Մոսկվայից, Պետերբուրգից, Ռուսաստանի հարավից տարագրվածներ, որոնք բացարձակ մեծամասնությունը բնակություն է հաստատել Եվրոպայում):

13. Օրինակ, XIX դ. կեսերին Եգիպտոսում հայերն ու հույները համաձայնություն կայացրեցին և փոխանակեցին բիզնեսները. հայերը հույներից վերցրեցին ծխախոտարդյունաբերությունը փոխարենը տալով ոսկերչությունը:

14. Ավելի մանրամասն տես, օրինակ. *Ա. Ակինեան*, Յաղթանակի ճամբան, Ստամբուլ, 1963: *Օ. Инджикян*. Буржуазия Османской империи. Ереван, 1977.

15. Տե՛ս *Ա. Ալպոյաճեան*, նշվ. աշխ.:

16. Տե՛ս *Ա. Պապյան*, Հայ ժողովրդի նյութական կորուստները հայոց ցեղասպանության ժամանակ. - «Ազգ» օրաթերթ, 24 ապրիլի 2007թ.:

17. *Յ. Խաթանասեան*, Հայոց թիւը, Բոստոն, 1965, էջ 23:

18. Ըստ համաշխարհային բանկային պրակտիկայի, եթե կողմերի միջև գոյություն չեն ունեցել պայմանագրային հարաբերություններ, ապա դրույք է համարվել 5%-ը:

19. Տե՛ս *Գ. Ղազարյան*, Ցեղասպան թուրքը, Բեյրութ, 1968:

20. Այս թիվը համեմատեք Ե. Խաթանասյանի մեկնարկային թվի հետ և տեսեք տարբերությունը:

21. Ավելի մանրամասն տես *Բ. Իշխանեան*, Բագուի մեծ սարսափները,

Թիֆլիս, 1920 և *Խ. Դադայան*, Հայերը և Բաբուն (1850-ական թթ. - 1920 թ.), Երևան, 2006:

22. Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 200, ց. 1, գ. 39, թ. 50:

23. «1. Սույն վկայագրում նշված գումարը ենթակա է վճարման Փարիզի հաղադրության վեհաժողովի կողմից Վերստուգիչ հանձնաժողովի որոշումը հաստատելու և վճարման կարգը սահմանելու պարագայում. 2. Սույն գումարը ենթակա է վճարման վկայագրում նշված անձին կամ հաստատությանը, *կամ նրա օրինական ժառանգորդին, և կամ համապատասխան լիազորագրով հավաստված վստահորդին*»:

24. Տե՛ս *Խ. Դադայան*, նշվ. աշխ., էջ 213-216:

25. Խոսքը վերաբերում է 1918-1920 և 1991-2006թթ. ժամանակաշրջանին, և նկատի ենք ունեցել միայն 1918թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին կատարված թալանը և յուրացումները:

26. *Մ. Ծիզմեճեան*, Խարբերդ եւ իր զավակները, Ֆրեզնո, 1955, էջ 92:

27. *Խանը* պահեստարանի, վաճառատեղիի և շուկայատեղիի մի յուրօրինակ համադրում էր:

28. Այս գումարի մասին պատկերացում կազմելու համար ասենք, որ Մասեի Բաբաջանի կտակի գրման թվականին Հնդկաստանում անգլիական բանակի զինվորի ամսական ռոճիկը 7 ռուբլի էր:

29. Հայոց կտակներին առնչվող խնդիրների մասին ավելի մանրամասն տե՛ս *Խ. Դադայան*, Համազգային կտակները հայոց պահանջատիրության համա-տեքստում, <http://noravank.am/?page=analitics&nid=573>

30. *Արմեն Գարո*, Ապրուած օրեր, Բոստոն, 1948, էջ 3, 204:

#### Լուիս Բարբերա ՍԱՊԱՏԵՐՈՒ, Դավիդ Էլեուտերիո Բալբուենա ՊԵՐԵՍ

#### **ՅԵՂԱՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ**

1. Կոսովոյի ցեղասպանության ժխտումը:

2. *Vives Antón y Carbónell Mateu*. Comentarios al Código Penal de 1995. Vol. II. Valencia: Tirant Lo Blanc. 1995

3. Estatuto de Londres del tribunal Internacional Militar de Nuremberg, de 8 de agosto de 1945.

4. *Raphael Lemkin*. Axis rule in occupied Europe, 1944; *Genocide: a new international crime*, en Revista Internacional de Derecho Penal, 1946; *El genocidio como crimen de derecho internacional*, en Tribuna Israelita, 1948.

5. *Beltrán Ballester*. El delito de genocidio, en Cuadernos de Política Criminal, 1978.

6. STS 6 de Julio de 1983 – Ponente Hijas Palacios.

7. *Feijoo Sánchez*. Comentarios al Código Penal, Dir. Rodríguez Mourullo. Madrid: Civitas 1997.

8. *Vives Antón y Carbonell Mateu*, op. cit.

9. *Miaja de la Muela*. *El genocidio, delito internacional*, en Revista Española de Derecho Internacional, IV, 1951.

10. *Cobo del Rosal y Vives Antón*. Derecho Penal, parte general. Valencia: Tirant Lo Blanc, 1999.

11. *González Rus*. Curso de Derecho Penal, parte especial. Vol. II, Dir. Cobo del Rosal. Madrid 1997.

12. *Rodríguez Devesa y Serrano Gómez*. Derecho Penal Parte Especial. Madrid: Dykinson, 1995.

13. *González Rus*, op.cit.

14. *Feijoo Sánchez*. Reflexiones sobre los delitos de genocidio (artículo 607 del Código Penal), en Revista Jurídica La Ley, núm 4693.

15. *Llorca Ortega*. Manual de determinación de la pena. Valencia: Tirant Lo Blanc, 1998.

16. *González Rus*, op.cit.

17. *Tamarit Sumalla*. Comentarios al nuevo Código Penal. Coord. Valle Muñiz, Aranzadi 1996.

18. *Feijoo Sánchez*. Comentarios al Código Penal.

19. *González Rus*, op. cit. También en este sentido *Feijoo Sánchez*, Reflexiones a los delitos de genocidio.

20. Սույն տեղում:

21. En el sentido del texto, *Feijoo Sánchez*, en Reflexiones sobre los delitos de genocidio.

22. En este sentido *González Rus*, op cit.

23. *Tamarit Sumalla*, op cit.

24. *González Rus*, op cit.

25. *Cuerda-Arnau*, ML, en Boletín de información del Ministerio de Justicia e Interior, núm. 1757.

26. *Feijoo Sánchez*, Reflexiones al delito de genocidio.

27. Արտահայտել կասկածներ գազասենյակների վերաբերյալ՝ հետևյալ հայտարարություններով. «Եթե այդքան հրեաներ կան, ապա դժվար է հավատալ, որ նրանք ողջ են դուրս եկել դիակիզարաններից», կամ՝ «ուզում են լինել զոհերը, հավերժ հետապնդվողները. եթե թշնամի չունեն, ապա իրենց համար ստեղծում են»:

28. STC 214/1991 de 11 de noviembre.

29. *Gutiérrez Contreras, J. C. y Villegas Díaz, M. R.* Desaparecidos en dictaduras militares, en Derecho Penal Implicaciones Internacionales; Coord. Diego Díaz-Santos, MR y Sánchez López, V., Salamanca 1999.

30. *González Rus*, op cit.

31. En el sentido del texto, *Feijoo Sánchez*, op cit.; *Beltrán Ballester*. El delito de genocidio, en Cuadernos de política Criminal, n° 6, 1978; *Córdoba Roda*. Comentarios al Código Penal, vol. III, Ariel 1992.

32. *Tamarit Sumalla*, op. cit.

33. En el sentido del texto, *Rodríguez Devesa y Serrano Gómez*, op. cit.

34. En el sentido del texto, *Tamarit Sumalla*, op. cit. Señala este autor que “carece de sentido hablar de varios genocidios”.

35. En este sentido, *Córdoba Roda*. Comentarios al Código Penal, Vol III, Ariel, 1992. Հեղինակը հաստատում է, որ եթե հասկանալի չլինեն հանցանքների համակցության գոյությունը, «պետք է հաշվի առնվեր քրեաիրավական հետևանքների սահմանումը, ինչպես նաև սուբյեկտի գործունեության էական կողմերը»:

36. *Feijoo Sánchez*. Reflexiones.

37. *Tamarit Sumalla*, op.cit. Հեղինակն առաջարկում է հարկադրական տեղափոխությունների և սպանության օրինակները, որոնք երկուսն են դրա հետևանքներից կիրառել ավելի ծանր պատիժ:

38. Նախագիծը վերջապես քվեարկությամբ ընդունվեց մեծամասնության

կողմից՝ 36 ձեռնպահ և 5 դեմ: Դեմ քվեարկողներն էին ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Հարավային Աֆրիկան, Սալվադորը, Հոնդուրասն ու Ավստրալիան:

39. *Cobo del Rosal y Vives Antón*, op cit.

40. Երկրի տարածքը ներառում է ոչ միայն թերակղզային ու կղզային տարածքները, այլ նաև տարածքային ծովը, գետերը, օդային տարածությունը, նավերը, օդանավերը: En este sentido, *Diez de Velasco*. Instituciones de Derecho Internacional Público, Tecnos, 1997.

41. En este sentido, *Carbonell Mateu*. Derecho Penal. Concepto y principios constitucionales, Tirant Lo Blanc, 1996. «Հասնել համաշխարհային հետապնդման հարցում միջազգային փոխզիջումների, քանի որ բոլորը հետաքրքրված են իրավական շահերի պաշտպանությամբ և դրանք կկիրառեն հիմնականում արտասահմանում գտնվող քաղաքացիները»:

42. Resolución 2625 (XXV) de la Asamblea General de Naciones Unidas.

43. *Raphael Lemkin*. Genocide: a new international crime.

44. Ձարմանալին այն է, որ ԱՄՆ-ը հրաժարվում է ստորագրել Կանոնադրությունը՝ բերելով այնպիսի քիչ համոզիչ և կեղծ փաստարկներ, ինչպիսիք են՝ արդարացումները, թե արտասահմանում կան ամերիկյան զինվորներ, որոնց կյանքը վտանգի տակ կդրվեր:

45. Չնայած կանոնադրությունը կվավերացվի առանց հակազդեցության, ըստ նույն կանոնադրության 22-րդ հոդվածի, հռչակվում է Nullum crimen sine lege սկզբունքը: Բացի այդ, կանոնադրության 24-րդ հոդվածը նախատեսում է *ratione personae* հետադարձ ուժի արգելման սկզբունքը: Ըստ հոդվածի, 1948թ. Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մասին կոնվենցիայի ընդունված օրվանից մինչև օրս կատարված ցեղասպանության ոճիւրները կարող էին դատապարտվել՝ հաշվի առնելով, որ դրանք արդեն հիմնարար հանցանքներ են նախքան կանոնադրության ուժի մեջ մտնելը: Մյուս կողմից, 24-րդ հոդվածի դրույթը դրա կիրառումն անհնար է դարձնում:

46. Վավերացնող երկրները պարտավոր չեն վավերացնել վերոհիշյալ հավելյալ արձանագրությունը:

## Գևորգ ՊՈՂՈՍՅԱՆ

### ՀԱՅ ՍՓՅՈՒՌԷԻ ԵՐՐՈՐԴ ՍԵՐՆԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Օգտագործված գրականություն

«Հայ սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003:

«Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002:

*Ռ.Հովհաննիսյան*, Հայաստանի Հանրապետություն. հ.1, Առաջին Տարին, 1918-1919թթ., Երևան, 2005:

*L. Abrahamian, N. Sweezy* (Editors). Armenian Folk, Arts, Culture and Identity. Bloomington and Indianapolis: Indiana University Press, 2001.

*Մ. Հերզոյան, Ա. Մակարյան*, Սփյուռքի դերը արտասահմանյան ուղղակի ցերդրումներ առաջացնելու մեջ: Տես [www.ev.am](http://www.ev.am), [www.crrc.am](http://www.crrc.am)

[www.wikipedia.org](http://www.wikipedia.org)

[Armeniandiaspora.com](http://Armeniandiaspora.com)

## ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

### ՎԱՂԻՄԻՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ սահմանադրական դատարանի անդամ, Միջազգային իրավունքի հայկական ընկերակցության խորհրդի նախագահ, Միջազգային իրավունքի Ռուսաստանի Դաշնության ընկերակցության գործադիր կոմիտեի անդամ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ:

Հեղինակ է 40 գիտական հոդվածների և մեծագրությունների, այդ թվում.

Միջազգային պայմանագրերի կնքման և կատարման տեսական և գործնական մի քանի հարցեր, Երևան, 2001:

Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Գործունեության առանձնահատկությունները, վճիռների իրավաբանական բնույթը և գանգատների ներկայացման կարգը, Երևան 2002:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանություն: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, Երևան 2005 (համահեղինակությամբ):

### ԱԼՖՐԵԴ ՂԸ ԶԱՅԱՍ

Մարդու իրավունքների կոմիտեի նախկին քարտուղար, պատմագիտության և իրավագիտության դոկտոր, Ժնևի դիվանագիտության դպրոցի միջազգային իրավունքի պրոֆեսոր:

Հեղինակ է մի շարք աշխատությունների, այդ թվում.

Heimatrecht ist Menschenrecht. Universitas Verlag. München, 2001.

The Genocide Against the Armenians 1915-1923 and the Relevance of the UN Genocide Convention. Brussels, Geneva, 2005.

Die Nemesis von Potsdam. Herbig Verlag, 14th revised edition. München, 2005.

Die deutschen Vertriebenen. Ares Verlag, 5th revised edition. Graz, 2006.

50 Thesen zur Vertreibung. Inspiration Verlag, London/Berlin, 2008.

Rainer Maria Rilke, Larenopfer. Bi-lingual commented second edition, Red Hen Press, Los Angeles, 2008.

## ՎԱՆԴԻՄԻՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի իրավախորհրդատվական ծառայության (վարչության) միջազգային պայմանագրերի բաժնի վարիչ, ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու (միջազգային հանրային իրավունք):

Հեղինակ է մի շարք աշխատությունների, այդ թվում.

Resolution 106: the Juridical Essence and Political and Legal Contents. – Regional Security Issues: 2007. Collection of Articles. Editor G. Novikova. Yerevan: Amrots Group, 2007, pp. 95-101.

Strengthening of the Democratic Structures and Rule of Law. – Starting ENP Some Priorities of Armenia. Editors: G. Novikova and S. Sargsyan. Yerevan: Amrots Group, 2007, pp. 24-46.

Преступление геноцида в Статуте Международного уголовного суда. – Российский ежегодник международного права. 2003. Специальный выпуск. СПб., 2003, с. 187-194.

## ԱՐԱ ՊԱՊՅԱՆ

“Modus Vivendi” քաղաքագիտական կենտրոնի տնօրեն, 2000-2006թթ. ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Կանադայում, 1999-2000թթ. ՀՀ արտգործնախարարության խոսնակ:

Հեղինակ է մի շարք աշխատությունների, այդ թվում.

Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները. հոդվածների ժողովածու, Երևան, 2007 (արևելահայերեն), Թորոնթո, 2008 (արևմտահայերեն):

The Arbitral Award on Turkish-Armenian Boundary (Historical Background, Legal Aspects and International Dimension). – Iran and Caucasus. Vol. 11, Nov. 2007, pp. 255-294.

Հայ-թուրքական իրավական (de jure) սահմանը. – «Դրոշակ», օգոստոս, 2007.

Սևրի և Լոզանի պայմանագրերի իրավական փոխյարաբերությունները. – France Arménie, N 300, 16-31 juillet 2007.

## ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի «Հայագիտական կենտրոնի» ղեկավար, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր, Այրեքս (1998) և Ֆուլբրայթ (2003-2004) ծրագրերի շրջանավարտ:

Հեղինակ է 90 գիտական հոդվածների և հինգ գրքերի (երեքը՝ համահեղինակությամբ), այդ թվում.

Ցեղասպանության հիշողությունը՝ որպես նոր ինքնության ձևավորիչ (1980-ական թվականների վերջ-1990-ական թվականների սկիզբ). – «Պատմա-բանասիրական հանդես», 2005, թիվ 1, էջ 55-66:

Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում. տեսական հարցադրումներ, Երևան, 2006:

Iconography of Historical Memory and Armenian National Identity at the end of the 1980-s. – Representations on the Margins of Europe. Politics and Identities in the Baltic and South Caucasian States. Editors: Ts. Darieva and W. Kaschuba. Frankfurt/Main: Campus Verlag / Chicago: Chicago University Press, 2007, pp. 89-113.

Ցեղասպանությունների շարքեր. պատմական յիշողությունը եւ ինքնությունը տարբերում ու տեղանուններում (ըստ Ղարաբաղեան շարժման միւթերի). – «Հայկազեան հայագիտական հանդես», հ. ԻԷ (27), Պէյրուք, 2007, էջ 233-284:

## ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Հեղինակ է 150 գիտական հոդվածների և ինը գրքերի, այդ թվում.

Էրզրում. Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Երևան, 1994:

Հայոց պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 1998 (համահեղինակությամբ):

Ձավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Երևան, 2003:

## ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԱՍՅԱՆ

ԵՊՀ տեսական փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի վարիչ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Հեղինակ է մի շարք աշխատությունների, այդ թվում.

Методологические принципы объективности научного знания и единство науки. Ереван, 1984 (второе издание 2002).

Ղարաբաղյան ազատամարտը հայոց քաղաքական գիտակցության հայելում, Երևան, 2003:

Карабахский конфликт: ключевые понятия и хроника. Ереван, 2007.

## ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱԼ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի փորձագետ, ԵՊՀ թուրքագիտության ամբիոնի ավագ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու:

Չեղինակ է մի շարք աշխատությունների, այդ թվում.

Թուրքիայի իսլամացված հայերի խնդիրը. ընդհանուր պատկերի ուրվագծման փորձ. - «21-րդ դար», 2008, թիվ 2:

Թուրք պատմաբանը կրոնափոխ հայերի մասին. - «ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների», 2007, թիվ 3:

«Ունեցվածքի հարկը» կամ տնտեսության «թուրքացման» քաղաքականությունը հանրապետական Թուրքիայում. - Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ.Վ, Երևան 2007:

## ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱԼ

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Չեղինակ է երեք գրքերի և հարյուրից ավելի հոդվածների: Վերջին տարիների հրապարակումներից են.

Die armenischen liberalen und die konstitutionelle Bewegung im Osmanischen Reich, 1867–1876. – Osmanismus, Nationalismus und der Kaukasus: Muslime und Christen, Türken und Armenier im 19. und 20. Jahrhundert. Hg. von Fikret Adanir und Bernd Bonwetsch. Wiesbaden: Reichert Verlag, 2005, S. 153 – 164.

A Test of Maturity: The Genocide Factor in Armenia's Foreign Policy. – “In Depth Analysis” Policy Papers of Center for Strategic Analysis “Spectrum”, Issue No. 2, Yerevan, 2005, 10 p.

Օսմանյան կայսրության 1915թ. «Տեղահանության օրենքը». - «Պատմաբանասիրական հանդես», 2007, թիվ 2, էջ 72 - 81:

Օսմանյան կայսրություն. ցեղասպանության երկու ծրագիր (1876 և 1915թթ.): Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2007:

## ՎԱՅԱՆ ՄԵԼԻՔՅԱԼ

Հայ-ռուսական (սլավոնական) պետական համալսարանի Համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ:

Չեղինակ է երկու մենագրության և 40 գիտական հոդվածների, այդ թվում.

1917թ. Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Երևան 1997:

Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերը. - «Հայկական բանակ», 1998, թիվ 2 (16), էջ 49-62:

Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 (քաղաքական կյանքը). փաստաթղթերի ժողովածու (համահեղինակ), Երևան, 2000:

Արևմտահայերի համագումարները և Հայկական հարցի փուլերը 1917-1923թթ., Երևան, 2007:

## ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱԼ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրեն:

Չեղինակ է մի շարք աշխատությունների, այդ թվում.

ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում, Երևան, 2003:

Цивилизационный фактор в контексте проблем информационной безопасности. – “21-й век”, 2006, N 1 (3).

Многополярная и асимметричная “холодная война”. – “Вестник академии военных наук”, 2007, N 4 (21).

Армения 2006: адекватность глобальному миру. – Ежегодник кавказского института СМИ. Ереван, 2008.

## ԽԱՉԱՏՈՒՐ ՂԱՂԱՅԱԼ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի փորձագետ, հայ տնտեսագիտության պատմաբան, հայոց ազգային կապիտալի հետազոտող, Արվեստի և զրականության «Վահագն» համահայկական մրցանակի դափնեկիր (2002):

Չեղինակ է մի շարք աշխատությունների, այդ թվում.

10 կապիտալիստ, Երևան, 2003:

Հայեր և բանկեր, Երևան, 2005:

Հայերը և Բաքուն, Երևան, 2006 (ռուսերեն՝ 2007):

Վաճառականական պատմություններ, Երևան, 2007:

## ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրեն, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: Հեղինակ է մի շարք աշխատությունների, այդ թվում.

Migration Processes in Armenia. Yerevan, 2003.

Современное армянское общество. Особенности трансформации. М., 2005.

Հայ հասարակությունը XXI դարակգրին, Երևան, 2006:

## ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Հրապարակախոս, հասարակական գործիչ: Հրատարակել է «Հայություն» (Երևան), “Всемирный Армянский Конгресс” (Սիմֆերոպոլ), “Армянский вестник”, “Гражданин” (Մոսկվա) պարբերականները:

Հետազոտությունների և հրապարակումների հիմնական առարկան՝ Հայկական հարց, քաղաքական հայագիտություն, քաղաքական ռուսագիտություն:

Առավել հայտնի հրապարակումներից են.

Համաշխարհային Հայկական Կոնգրես. - «Հայություն», թիվ 3, 17 մարտի 1992թ.

Прерванная миссия. – “Независимая газета”, 29 февраля 1996г.

Две группы задач мирового армянства. – “Голос Армении”, 21 декабря 2004г.

Արևմտահայերի Երրորդ Համագումար. - «Երկիր», 13 մայիսի 2005թ.:

Переговоры следует вести с Россией. – “Голос Армении”, 21 июля 2007г.

Как усилить позиции армян в деле защиты своих национальных интересов. – “Ноев ковчег”, апрель, 2008г.

Капкан Беловежских соглашений. – “Ноев ковчег”, май, 2008г.

Армянский фактор в международной жизни. – “Голос Армении”, 17 июля 2008г.

**ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**Անուշավան ԴԱՆԻԵԼՅԱՆ,  
Կարեն ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

ՀԱՅՈՑ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԻՐԱԿԱՆ ԼԻՆԵԼ, ԵՐՔ  
ՁԵՎԱԿՈՐԿԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՀԱՅՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ.....3

**Լեդա ԿՈՐՍՈՒՄԲԱ**

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ.....15

**Վլադիմիր ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՍԵՎՐԻ 1920Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 10-Ի ՀԱՇՏՈՒԹՅԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ.....20

**Ալֆրեդ դը ՋԱՅԱՍ**

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ  
ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ.....41

**Վլադիմիր ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ  
ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ.....54

**Արա ՊԱՊՅԱՆ**

ՀԱՅՈՑ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ  
ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ.....75

**Հարություն ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՀԻՐԵՈՒԹՅԱՆԸ  
(ձևավորումը, գործընթացը, ներկա վիճակը).....91

**Աշոտ ՄԵԼՔՈՆՅԱՆ**

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅՎԱՏԱՆՈՒՄ ՕՍՄԱՆՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ  
(XVI դար – XX դարի սկիզբ).....107

**Ալեքսանդր ՄԱՆԱՍՅԱՆ**

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԻԲԵՋԱՆԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ.  
ՋՈՒԳԱՀԵՌՆԵՐ ՈՒ ԱՌԱՆՋՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
(հիմնախնդրի քաղաքական իմաստավորման փորձ).....121

**Ռուբեն ՄԵԼՔՈՆՅԱՆ**

ՀԱՅՎԱԿԱՆ ԷԹՆԻԿ ՏԱՐԻԻ ՆԵՐՎԱՅԻՍ ՎԻՃԱԿԸ  
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅՎԱՏԱՆՈՒՄ.....138

**Ռուբեն ՍԱՖՐԱՍՏՅԱՆ**

ԹՈՒՐԹԻԱՅԻ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՄԱՆ ՈՒ ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ԴԵՄ  
ՆԵՐԿԱ ՓՈՒԼՈՒՄ. ՆՈՐ ՄԻՏՈՒՄ.....150

**Վահան ՄԵԼԻՔՅԱՆ**

ՀԱՅՎԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ  
ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻԻ ՓՈՒԼԵՐԸ.....156

**Գագիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ.....167

**Խաչատուր ԴԱՂԱՅԱՆ**

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՅԱԼԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱ-  
ՆՅՈՒԹՎԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ.....182

**Լուիս ԲԱՐԲԵՐԱ ՍԱՊԱՏԵՐՈ,**

**Դավիդ ԷԼԵՈՒՏԵՐԻՈ ԲԱԼՔՈՒԵՆԱ ՊԵՐԵՍ**  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ.....203

**Գևորգ ՊՈՂՈՍՅԱՆ**

ՀԱՅ ՍՓՅՈՒՈՔԻ ԵՐՐՈՐԴ ՍԵՐՆԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....226

**Կարեն ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

ՀԱՅՎԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ.....237

**Հավելված**

ՈՒՂԵՐՁ ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՈՆԸ ՎԵՐԱՊՐԱԾՆԵՐԻ  
ԺԱՌԱԳՆԵՐԻՆ ՏԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԼԻԱԶՈՐ  
ՆԵՐՎԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ.....267

Ծանոթագրություններ.....274

Զեկուցումների հեղինակները.....287



ԱՐԵՎՄՏԱԴԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅԱՆՋԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտական գեկուցումների ժողովածու

Գիտական խմբագիրներ՝ ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ  
պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ  
պատմ. գիտ. դոկտոր

Կազմողներ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՐՇԱԿՅԱՆ  
պատմ. գիտ. թեկնածու  
ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ  
իրավ. գիտ. թեկնածու

Թարգմանիչներ՝ Ն. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ  
բան. գիտ. թեկնածու  
Ս. ԱՄԻՐԻԿՅԱՆ  
Շ. ՄԽԻԹԱՐՅԱՆ  
Թ. ՊԱՍԿԵՎԻՉՅԱՆ  
Ա. ՄԵԼԻՔ-ԱՂԱՋԱՆՅԱՆ  
Ս. ԲԱՐՈՅԱՆ

Սրբագրիչ՝

Տեխնիկական խմբագիր՝ Խ. ՔԱՐԱՌԴԼԱՆՅԱՆ

Էջադրում և ձևավորում՝ Ա. ԲԱՐԻՇՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱԴԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՄԱՆ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

[www.wancongress.org](http://www.wancongress.org)

e-mail: [mail@wancongress.org](mailto:mail@wancongress.org)

[warmenia@noravank.am](mailto:warmenia@noravank.am)